


**Այս ուսումնասիրությունն իրականացուել է ԱՄՆ Նիւ-Եորք
քաղաքում հիմնադրուած Հայ Օգնութեան Ֆոնդի (ՀՕՖ)
Գիտութեան եւ Կրթութեան Հայկական Ազգային հիմնադրամի
տրամադրած դրամաշնորհով**

This work was made possible by a research grant from the
Armenian National Science and Education Fund (ANSEF) based in
New York, USA

**Գիրքը լոյս է տեսել ՀՀ ԳԱԱ
«Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող
համահայկական հիմնադրամի» աջակցութեամբ**

The book is published with the support
of the NAS RA's "All Armenian Foundation
Financing Armenological Studies"



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

VERA SAHAKYAN

The original texts are published by the efforts of Vera Sahakyan and Haykanush Mesropyan, Doctor of Sciences in Philology. The English translation of the original texts by Lusine Minasyan

**THE ARMENIAN-POPULATED VILLAGES OF MUSH'S BULANYK
PROVINCE ACCORDING TO THE LETTERS ADDRESSED TO
MKRTICH I KHRIMIAN CATHOLICOS**

Volume I

The book is dedicated to the 200th anniversary
of Mkrtich I Khrimian Catholicos

Yerevan
2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԱ ՍԱՀԱԿԵԱՆ

*Բնագրերը հրատարակում են Վերա Սահակեանի եւ բանասիրական գիտութիւնների
դոկտոր՝ Հայկանուշ Մեսրոպեանի աշխատասիրութեամբ: Բնագրերի անգլերէն
թարգմանութիւնը՝ Լուսինէ Մինասեանի*

ՄՇՈՅ ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱԻԱՌԻ ՀԱՅԱՔՆԱԿ ԳԻՒՂԵՐՆ
ԸՍՏ ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ

Գ Ի ր ք I

**Նուիրում է Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի
ծննդեան 200-ամեակին**

Երեւան
2021

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Ս 150

*Հրատարակում է Մեսրոպ Մաշտոցի անուան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագիր՝ պատմական գիտությունների
թեկնածու Յակոբ Մուրադեան*

Սահակեան Վերա

Ս 150 Մշոյ Բուկանըք գաւառի Հայաբնակ գիւղերն ըստ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների / Վ. Սահակեան.-Եր., 2021: Մատենադարան, 2021. – 396 էջ:

Ուսումնասիրութիւնը նուիրուած է Մշոյ Բուկանըք գաւառին: Օսմաներէն նորայայտ աղբիւրների միջոցով անդրադարձ է կատարուում գաւառի կազմաւորմանը: Մաշտոցեան Մատենադարանում պահուող՝ Հայ գաղթականների 1893–1896 թթ. Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների հիման վրայ այբբենական կարգով կազմուել է գաւառի Հայաբնակ գիւղերի ցանկ՝ ընդարձակ նկարագրութիւններով եւ ծանօթագրութիւններով: Ամեն գիւղին նուիրուած բաժնում գետեղուած են տուեալ գիւղի բնակիչների նամակները:

Գիրքը Հասցէագրուած է պատմաբաններին, ցեղասպանագէտներին, տեղանուանագէտներին, ինչպէս նաեւ իրենց տոհմածառով եւ արմատներով հետաքրքրուող Հայութեանն առհասարակ:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-9257-3-8

© Սահակեան Վերա, 2021

© Մաշտոցի անուան Մատենադարան, 2021

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան.....	7
ԳԼՈՒԽ I. ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ	13
1. 1. Մշոյ Բուլանըք գաւառի կազմաւորումը, դիրքը եւ սահմանները	13
1. 2. Բուլանըք գաւառի հայ բնակչութիւնը	27
1. 3. Բուլանըք գաւառը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանութեան տարիներին	35
1. 4. Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերի աղիւսակներ՝ քաղուած տարբեր աղբիւրներից	40
Երգ Մշեցոց	54
ԳԼՈՒԽ II. ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐԽԻԻԸ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅԱԲՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՍԿՋԲՆԱՂԲԻՐ	57
2. 1. Մշոյ Բուլանըք գաւառի հայ բնակչութեան նամակների բնոյթն ու կարեւորութիւնը	57
Աբրի գիւղ (Ներքին Բուլանըք)	71
Ալագեազ գիւղ (Ներքին Բուլանըք)	76
Ատկոն գիւղ (Ներքին Բուլանըք)	78
Բլուր գիւղ (Վերին Բուլանըք)	85
Բոստաքեանդ գիւղ (Ներքին Բուլանըք)	87
Եօնշալու գիւղ (Վերին Բուլանըք)	91
Եօթնշուր գիւղ (Վերին Բուլանըք)	118
Թէղուտ գիւղ (Վերին Բուլանըք)	123
Լաթար գիւղ/Դալար, Դալարիկ, Թալարիս (Վերին Բուլանըք)	134
Լիզ գիւղաքաղաք/Լիծ/Լիծն (Ներքին Բուլանըք)	139
Խարաբաշար գիւղ/Հայկաշէն (Վերին Բուլանըք)	154
Խօշգեալդի գիւղ (Ներքին Բուլանըք)	157
Կաղանջ գիւղ	162
Կողակ գիւղ (Ներքին Բուլանըք)	163
Կոփ գիւղաքաղաք (Վերին Բուլանըք)	167

Համգաշնչիս գիւղ (Վերին Բուլանըք)	178
Մէջիթլու գիւղ (Վերին Բուլանըք).....	184
Մերալար գիւղ (Վերին Բուլանըք).....	189
Մալաքեանդ գիւղ/Ջորագիւղ (Ներքին Բուլանըք).....	192
Նորադի գիւղ (Վերին Բուլանըք).....	197
Շեխ Յաղուբ գիւղ (Վերին Բուլանըք)	200
Շիրվանշեխ գիւղ (Վերին Բուլանըք)	207
Պագրան գիւղ.....	213
Ռոստամ-Գետիկ գիւղ	215
Փիօնք գիւղ (Ներքին Բուլանըք).....	218
Փրկաշէն/Բրգաշէն գիւղ (Ներքին Բուլանըք).....	222
Քարաաղլլ գիւղ (Վերին Բուլանըք).....	227
Քաքաուլու գիւղ (Վերին Բուլանըք).....	240
Բուլանըքի գուլթաներգ	260
Summary.....	263
Անճնանուններ	345
Տեղանուններ.....	369
Համառօտագրութիւններ ու հապաւումներ.....	382
Օգտագործուած գրականութեան ցանկ	383

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում պահուում է Ամենայն Հայոց 125րդ կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանի (1893–1907) արխիւի մի մասը՝ շուրջ 8.000 միատր վաւերագիր: Ի սկզբանէ այս արխիւը պահուել է Սուրբ Էջմիածնում: Հետագայում, Կաթողիկոսական դիւանից առանձին, իբրեւ անհատական արխիւ, բերուել է Մաշտոցեան Մատենադարան: Վաւերագրերի 17 թղթապանակներում ի մի են բերուած մեծամասամբ հայ գաղթականութեան կողմից Խրիմեան Հայրիկին ուղղուած նամակներ, խնդրագրեր, վկայագրեր, Սուրբ Էջմիածնում ապաստանած գաղթականների ցուցակներ:

Այս վաւերագրերը կարեւոր մանրամասներ են հաղորդում Օսմանեան կառավարութեան վարած հայահալած քաղաքականութեան, արեւմտահայութեան տնտեսական, սոցիալական (ընկերային) դրութեան մասին: Յատկապէս արժեքաւոր են Հայոց ցեղասպանութեան հետեւանքով հայաթափուած բնակավայրերի հայկականութեան հաստատման, հայաբնակ լինելու, հայ բնակչութեան քանակի եւ տեղաշարժերի, տեղանունների, տեղի բարբառների ու խօսուածքների քննութեան ուսումնասիրման համար:

2017ին մեզ յանձնարարուել էր ուսումնասիրել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Մատենադարանում պահուող վաւերագրերը¹: Ուսումնասիրուող նիւթի շրջանակներում, ի թիւս այլոց, առանձնացրինք Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի արխիւը: Նախ խմբաւորեցինք վաւերագրերն ըստ գաւառների: Այնուհետեւ, հրատարակուելիք առաջին գրքի համար առանձնացրինք Մշոյ Բուլանքը գաւառին վերաբերող նիւթերը: Ընտրուածներն արտագրեցինք: Հենուելով նամակներում նշուած բնակչութեան հասցէներին՝ կատարեցինք Բուլանքը գաւառին եւ նրա մէջ ընդգրկուած հայաբնակ բնակավայրերին նուիրուած ուսումնասիրութիւն:

Առհասարակ, Օսմանեան շրջանում որեւէ հայաբնակ գաւառին պատկանող գիւղերի թուաքանակի, նրանց անունների առնչութեամբ բաւական մեծ անհամապատասխանութիւն կայ: Այս երեւոյթը պայմանաւորուած է մի կողմից Օսմանեան կայսրութիւնում կրկնուող վարչական վերաբաժանումների, միւս կող-

¹ Սահակյան Վ., Մատենադարանի՝ Հայոց Ցեղասպանութեան մասին արխիւային վաւերագրերը (Օսմանեան վաւերագրեր), Բանբեր Մատենադարանի, հմր. 25, Երեւան, 2018, էջ 291–340:

մից՝ արխիւային փաստաթղթերի անհասանելիութեան, ոչ բաւարար սկզբնաղբիւրների առկայութեամբ:

Մեր կատարած հետազոտութեան շրջանակներում, գիտական լայն հանրութեան դատին յանձնելով պատմագիտութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող շուրջ 200 վաւերագիր նամակ, միեւնոյն ժամանակ հայկական, օտար եւ օսմանեան աղբիւրներից օգտուելով իրականացրել ենք Բուլանըք գաւառի անուան, ձեւաւորման եւ տեղագրութեան հարցի քննութիւն, յստակեցրել յատկապէս Բուլանըք եւ Մանազկերտ գաւառների սահմանները, նրանց մէջ ընդգրկուած գիւղերը: Նամակների ուսումնասիրման ընթացքում գտել ենք այնպիսի գիւղերից գրուած նամակներ, որոնք օտար աղբիւրներում համարուած են զուտ քրդաբնակ կամ զուտ չերքէզաբնակ, իսկ հայկական աղբիւրներում այդ գիւղերի հայկական կամ հայաբնակ լինելու մասին տեղեկութիւններ գրեթէ չկային:

Մեր կողմից արտագրուած վաւերագրերի լեզուն եւ ուղղագրութիւնը տարբեր է: Վերին Բուլանըքի արեւմտեան գիւղերը եւ քիչ բացառութեամբ ամբողջ Ներքին Բուլանըքի բնակչութիւնը Բշէրիմի, Սասնայ, Մօտկանայ եւ Տարօնի գաւառների նախկին բնակիչներն են: Նրանց լեզուն պատկանում է Տարօնայ եւ Մշոյ գաւառաբարբառին: Ըստ այդմ՝ բուլանըքցի նամակագիրներից շատերի հաղորդակցութեան լեզուն պատկանում է բարբառների արեւմտեան խմբակցութեան Մուշ-Տիգրանակերտի կամ հարաւ-կենտրոնական բարբառախմբին եւ բնորոշում է նշուած բարբառի հնչիւնական, քերականական, շարահիւսական եւ լեզուաոճական մի շարք յատկանիշներով: Մուշ-Տիգրանակերտի բարբառը կը ճիւղի բարբառ է: Խօսուել է Մշոյ դաշտի հայաբնակ տարածքներում, Ալաշկերտում, Բուլանըքում եւ յարակից այլ վայրերում: Բարբառին բնորոշ են երկբարբառային արտասանութիւնը, շնչեղ ձայնեղներով քառաշարք բաղաձայնական համակարգը, որոշ խօսւածքներում՝ հ>խ անցումը, զ նախդրի առկայութիւնը, մի անորոշի ետադաս գործածութիւնը, միավանկ բայերի ի նախայաւելուածը եւ այլ յատկանիշներ: Նամակներում արտացոլուած են բարբառային նշուած իրողութիւնները: Բաւական մեծ թիւ են կազմում հնչիւնափոխուած, աղաւաղուած ձեւերը, առկայ են տառասխալներ: Այս ամենով հանդերձ կան նաեւ գրաբարեան հայերէնով գրուած նամակներ եւս:

Մեր ընտրած նամակները, խնդրագրերն ու վկայականները որպէս սկզբունք հրապարակել ենք բնագրերին եւ արխիւային նիւթերի պահանջներին համապատասխան՝ կատարելով հետեւեալ տեխնիկական միջամտութիւնները.

յատուկ անունները, որոնք մեծամասամբ փոքրատառերով էին, գրել ենք մեծատառերով: Փոխարէնը՝ մեծատառերով գրուած շատ եզրեր դարձրել ենք փոքրատառ: «Ձեր», «ձեզ», «դուք» դերանունների յարգական ձևերը նոյնպէս դարձրել ենք մեծատառ: Մեր վերականգնած տառերն ու բառերը նշել ենք ընդունուած ուղիղ փակագծերով ([I]), աւելորդ տառերը, կրկնուող բառերը՝ չափերտներում (< >), կասկածելի ընթերցուած բառերի մօտ գրել ենք (°) նշանը:

Ուղղագրական խոտորումները, եթէ խօսքը տառասխալներին է վերաբերում, ներկայացրել ենք հիմնականից տարբերուող ձեւով՝ շեղելով տառը, ինչ վերաբերում է զուգաձեւութիւններին՝ դրանք պահպանել ենք, օրինակ՝ կրօն-կրօն, խօսել-խոսիլ: Բարբառային բառերը շեղել ենք ամբողջութեամբ, օրինակ՝ պայտիս, ընձի: Կրճատ գրուած բառերն ամբողջացրել ենք՝ ներառելով ուղիղ փակագծերի ([I]) մէջ: Միասին գրուած օժանդակ բայերն առանձնացրել ենք: Այսպէս, այդպէս, այնպէս դերանունները գրուած են հիմնականում առանձին-առանձին: Բնագրերը միօրինակութեան բերելով՝ արտագրել ենք միասին: Հայրիկ եւ Սուրբ բառերը բոլոր նամակներում դարձրել ենք մեծատառ: Եւ-ը արտագրել ենք -եւ- տարբերակով:

Անհրաժեշտութեան դէպքում միջամտել ենք նաեւ կէտադրական նշանների հարցում՝ յաւելելով (երբեմն նաեւ անտեսելով) բովի, ստորակէտ կամ վերջակէտ՝ ժամանակակից գրական հայերէնում ընդունուած պահանջներին համապատասխան: Երբեմն, բնագրի մտքի թելադրանքով պայմանաւորուած, շարունակել ենք նոր տողից: Այն նամակները, որոնք ունեցել են մասնակի կամ ամբողջական կրկնութիւն, ներկայացրել ենք յղումների մէջ՝ հեղինակի անուն-ազգանուն հետ միասին: Աշխատանքային այս ձեւաչափը առանձնապէս կարեւորել ենք, քանի որ հայութեան իւրաքանչիւր մասնիկ այսօր փնտրում է իր նախնիներին, իր պապերի հայրենի ուստանը: Անձնանունների եւ տեղանունների զետեղմամբ ջանացել ենք օգտակար լինել իրենց արմատներն ու տոհմածառը փնտրող հայութեանը: Նամակների վրայ եղած մակագրութիւնները, որոնք հիմնականում բովանդակութեան սղագրութիւններ են, բաց ենք թողել՝ աշխատանքը չծանրացնելու մտայնութեամբ:

Միեւնոյն նամակում, կրկնուող տեղանունը կամ անձնանունը՝ նամակի սկզբնամասում եւ նամակի վերջում յաճախ տարբեր է: Մենք արտագրել ենք այնպէս՝ ինչպէս գրուած է եղել²:

² Տե՛ս օրինակ՝ Մաշտոցեան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), Մկրտիչ Ա. Խոյմեան կաթողիկոսի ֆոնդ (այսուհետ՝ Խկֆ), թղթ. 104, վաւ. 2:

Բացի անձամբ Մկրտիչ Ա. Խրիմեանին ուղղուած նամակներից, արտագրել ենք նաեւ որոշ վկայականներ, որոնք, գրուած լինելով տեղական համայնքների կողմից, տրուել են բուլանըքցի գաղթականներին՝ որպէս նրանց՝ գաղթական, չքաւոր, տնանկ լինելու մասին հաւաստող փաստաթուղթ՝ կաթողիկոսին ներկայացնելու համար:

Քանի որ մեր ուսումնասիրութիւնը հասցէագրուած է նաեւ իրենց արմատները փնտրող լայն հանրութեանն առհասարակ, նամակների մի մասը թարգմանել ենք անգլերէն, որպէսզի աշխարհասփիւռ հայութիւնը հնարաւորութիւն ունենայ գտնելու եւ կարդալու բուլանըքցի իր ազգականի խօսքը: Անգլերէն թարգմանութիւնների մէջ գործածել ենք յատուկ տեղանունների համար նախատեսուած տառադարձման սանդղակը³: Տառադարձել ենք այնպէս՝ ինչպէս գրուած է նամակում, Պուլանըխ՝ Pulanykh, Քաքաուլու՝ K'ak'arlu:

Հարկ է նշել նաեւ, որ յաւելուածաբար զետեղել ենք մեր արտագրած նամակներից մի քանիսի լուսապատճէնները, Թուրքիայի Ազգային արխիւից (Devlet Arşivleri Başbakanlığı) Բաղէշ նահանգի ձեռագիր քարտէզը, Մաշտոցեան Մատենադարանում, ինչպէս նաեւ Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանում պահուող Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի մի քանի լուսանկար:

Բացառութեան կարգով արտագրել եւ ծանօթագրել ենք «Բուլանըխի գութաներգ» եւ «Երգ Մշեցոց» բանաստեղծութիւնները, որոնք Մշոյ դաշտի երբեմնի շէն հայկականութեան կնիքն ունեն իրենց վրայ:

Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին հասցէագրած նամակների ուսումնասիրման եւ արժեւորման հիմքն արդեն գրուած է, արուել է բաւական բծախնդիր եւ ծանր աշխատանք: Մենք նպատակ ունենք յաջորդ հատորներով գաւառ առ գաւառ իրականացնել նաեւ միւս հայաբնակ բնակավայրերի ուսումնասիրումը՝ շարունակելով տեսակով, բնոյթով, վաւերագրերի լեզուով եւ բովանդակութեամբ եզակի այս նամակների հանրահռչակումը:

Թէպէտեւ այս հատորը նուիրուած է Մկրտիչ Խրիմեանի ծննդեան 200-ամեակին, մենք չենք անդրադարձել Խրիմեան Հայրիկի կեանքին, նրա հայրապետական շրջանի գործունէութեանը, գրական, գիտական ժառանգութեան արժեւորմանը: Բազմալսատակ Հայրիկի մասին գրել են անուանի հայագէտներ

³ https://en.m.wikipedia.org/wiki/BGN/PCGN_romanization

եւ մտաւորականներ⁴: Սոյն ուսումնասիրութեամբ հայ եւ օտար ընթերցողը հնարատրութիւն է ստանում կարգալու Մշոյ Բուկանքը գաւառի հայութեան պարզ խօսքը, կիսելու նրա ցաւը, զգալու Հայոց Հայրիկի եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ հայի անսահման հաւատն ու նուիրումը, Ամենայն Հայոց հայրապետի գործադրած ջանքերն՝ ուղղուած Հայաստան աշխարհի շէնացմանը, հայ գաղթականութեան փրկութեան եւ հայապահպանման գործին:

Մեր ուսումնասիրութիւնն իր լրումին հասցնելու համար մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Հայկական Ազգային Գիտակրթական Հիմնադրամի (ANSEF) հոգաբարձուների խորհրդին, աղօթք եւ օրհնութիւն գիտ-խորհրդի նախագահ պարոն Երուանդ Թերզեանի անմար յիշատակին: Ցաւօք, նա չհասցրեց հրատարակուած տեսնել մեր կատարած աշխատանքը:

Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Մատենադարանի տնօրէնութեանը՝ յարգարժան պարոն Վահան Տէր-Ղեւոնդեանին՝ ցուցաբերած յարատեւ օժանդակութեան համար, Մատենադարանի Արխիւային բաժնին՝ մեզ համար ամէն դիւրութիւն ապահովելու համար, Մաշտոցեան Մատենադարանի Թուայնացման բաժնին՝ նիւթերը ժամանակին եւ արագ մեզ տրամադրելու, տեխնիկապէս աջակցելու համար, Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանի տնօրէն՝ պարոն Կարօ Վարդանեանին, նկարների տրամադրման եւ արխիւային նիւթերի սպասարկման համար: Շնորհակալ եմ Մատենադարանի եւ յատկապէս Արեւելագիտութեան բաժնի գործընկերներին:

Շնորհակալ եմ գրքի խմբագիր՝ պատմական գիտութիւնների թեկնածու պարոն Յակոբ Մուրադեանին՝ բժախնդրօրէն կարգալու եւ քանիցս կարեւոր գիտողութիւններն ինձ ուղղելու համար: Շնորհակալ եմ անգլերէնի սրբագրիչ տիկին Ռեբեկկա Էմենաքերին, որ իր սուղ ժամանակից մեծահոգաբար յատկացրեց նամակների սրբագրման դժուարին աշխատանքին: Շնորհակալ եմ իմ

⁴ **Աճէմեան Հ.**, Խրիմեան Հայրիկ, Ծննդեան հարիւրամեակի առթիւ. 1820–1920, Ս. Էջմիածին, 1920; **Զօպանեան Ա.**, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 112–135; **Գուշակեան Թ. Ե.**, Խրիմեան Հայրիկ, Իր ծննդեան հարիւրամեակին առթիւ, Փարիզ, 1925; **Աճէմեան Հ.**, Հայոց Հայրիկ «Նուագող վշտից հայրենեաց հայոց»: Կենսագրութիւն, հտ. I, Թարիզ, 1929; **Կոստանդյան Է.**, Մկրտիչ Խրիմյան, հասարակական-հաղափական գործունեությունը, Երեւան, 2008; Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԻԲ, (Մկրտիչ) Ա. Խրիմյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1820–1892–1907), մաս Բ., փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ **Ավագյան Գ.**, խմբ.՝ **Վիրաբյան Ա.**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020:

ղեկավարած խմբի նուիրեալներին՝ տիկին Հայկանուշ Մեսրոպեանին եւ Լուսինէ Մինասեանին՝ իրենց բազմաշարչար եւ նուիրուած աշխատանքի համար:

Անցնող տարուայ ընթացքում, երբ հրատարակութեան էինք պատրաստում գիրքը, թագավարակի պատճառով բոլոր գրադարանները փակ էին: Այս գրքի պատրաստման մէջ շնորհակալութեան մի մեծ բաժին ունի Ամերիկահայ մտաւորական պարոն Գէորգ Պ. Յակոբեանը: Նա մեր տրամադրութեան ներքոյ է դրել անհրաժեշտ ամբողջ գրականութիւնը, պարբերաբար կարդացել, կատարել իր շտկումները, դիտողութիւններն ու սրբագրումները:

Երախտապարտ եմ դասախօսիս՝ Ռուզաննա Շաբոյեանին՝ գրաբարի առնչութեամբ ծագած հարցերին սիրայօժար պատասխանելու համար: Շնորհակալ եմ «Քաշաթաղի՝ Գուրգէն Մելիքեանի անուան բազմազաւակ ընտանիքների հիմնադրամին»՝ համալսարանական կրթութիւնս ապահովելու համար, Մարիամ Բրուտեանին՝ սրտանց ու նուիրումով աշխատելու համար:

Երախտապարտ եմ ամուսնուս՝ Յուրի Յարութիւնեանին, ընտանիքիս՝ զաւակներիս, քոյրերիս, եղբօրս, մօրս՝ Անիկ Արամի Սահակեանին եւ վաղամեռիկ հօրս՝ Գուրգէն Տէր Անանիայի Սահակեանին՝ հայրենասէր զաւակներ դաստիարակելու համար:

Խունկ եւ օրհնութիւն Մատենադարանի նախկին տնօրէն պարոն Հրաչեայ Թամրազեանին, որի օրօք սկսել եմ աշխատել Մաշտոցի անուան Մատենադարանում:

ԳԼՈՒԽ I

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1. ՄՇՈՅ ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱՒԱՌԻ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ, ԴԻՐՔԸ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

«Մշոյ Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերն՝ ըստ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների» վերնագրուած ուսումնասիրութիւնը կենտրոնացած է Մշոյ Բուլանըք գաւառի (քաղա) կազմաւորման եւ հայաբնակ գիւղերի քննութեան վրայ: Հետազօտութիւնը շարադրել ենք՝ ելնելով հետեւեալ հարցադրումներից. ե՞րբ եւ պատմական ի՞նչ հանգամանքների ներքոյ է ստեղծուել Բուլանըք գաւառը, Մեծ Հայքի ո՞ր վարչատարածքային միաւորների հիման վրայ է ձեւաւորուել, որո՞նք են եղել Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերը Մկրտիչ Ա. Խրիմեանի կաթողիկոսութեան շրջանում:

Խնդրոյ առարկայ գաւառի ուսումնասիրման համար մեր գործածած հետազօտական գրականութեան մաս են կազմել մի շարք հրապարակումներ, ուսումնասիրութիւններ, քարտեզներ⁵: Յատկապէս կարեւորել ենք Մանուէլ Միրախորեանի եռահատոր ուղեգրութեան Գ. հատորը⁶, Ա.-Դօի⁷

⁵ Map of Armenia and adjacent countries/by **H. F. B. Lynch & F. Oswald**. The material compiled by W. Shawe. 1901, London, 1:1000.000; Asia Citerior, Berlin, by **Heinrich Kiepert, Dietrich Reimer** (E. Vohsen)..., 1901, c1892. Berlin, Coordinates (E 23°10'00"--E 43°20'00"/N 42°20'00"--N 29°30'00"). 1 map: hand col.; 31 x 42 cm); Karte von Kleinasien in 24 Blatt ... Bearbeitet von **Dr. Richard Kiepert**, Berlin, 1913, zweite berichtige ausgabe, Masstab, 1:400,000; Erkân-i Harbiye-i Umumiye (Aydın, Bergiri, Divriği, Erzurum, Giresun, Harput, Hasankale, Hınıs, Karahisarı Şarki, Kiği, Malatya, Reşadiye, Rize, Sivas, Ünye, Van) 1:200.000, 1914–1915 (1332); Codex Kultur-Atlas, Türkei, Teil 9, Fr. Fritz, Codex-Verlag. 7761 Gundholzen-38/41-38/42; Codex Kultur-Atlas, Türkei, Teil 10, Fr. Fritz, Codex-Verlag 7761 Gundholzen-39/41-39/42; **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը եւ հարեան երկրները 855–953 թթ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», (Փորձ VII դարի հայկական ֆաւտեգի վերականգնւոյթյան ժամանակակից ֆաւտեգագրական հիմքի վրա), Երեւան 1963; **Բաղդայան Գ.**, Բիթլիսի նահանգ, Գեոֆարտ, ՊՈԱԿ, 2015:

⁶ **Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տանկաստանի, հտ. Գ., Կ. Պոլիս, 1885:

⁷ **Ա.Դօ** (**Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան**), Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, 1912; **Ա.Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում, 1914–1915 թուականներին, Երեւան, 1917:

(Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), ժողովրդագէտ Բենսէի (Սահակ Մովսիսեան) ուսումնասիրութիւնները⁸, Նազարէթ Մարտիրոսեանի վիճակագրական աղիւսակը⁹, Ատրպետի «Բուլանըկ» յօդուածը¹⁰, Յովհաննէս (Ռայմոնդ) Գէորգեանի եւ Փոլ Պ. Փապուճեանի համատեղ ուսումնասիրութիւնը, որից քաղել ենք Պոլսոյ պատրիարքարանի կազմած մարդահամարի տուեալները¹¹: «Houshamadyan.org» էլեկտրոնային էջի Բուլանըք գաւառին նուիրուած բաժինը¹², Գեղամ Բաղալեանի յօդուածաշարքը¹³, Հայաստանի Ազգային արխիւի հրապարակած եռահատոր ժողովածուի Բ. հատորը¹⁴: Օսմանեան աղբիւրներից օգտուել ենք 1556ին կազմուած Խնուսի լիւայի մանրամասն տեղեկագրից (դաֆթար)¹⁵:

Գաւառի հայ բնակչութեան թուաքանակի համար կարելորդ աղբիւր են Բիթլիսի եւ Էրզրումի նահանգների (վիլայէթ) սալնամեները¹⁶, ուսական շտաբի գնդապետ Վլադիմիր Յիլիպովի ուսումնասիրութիւնները¹⁷: Օգտուել ենք անգլիացի հայագէտ, աշխարհագրագէտ, ճանապարհորդ, հասարակական-քաղաքական գործիչ՝ Հենրի Յինիս Լինչի¹⁸ եւ Փրանսիացի հետազօտող Վիտալ Քինեի աշխատութիւններից¹⁹: Մկրտիչ Ա. Խրիմեանին

⁸ Բենսէ (Սահակ Մովսիսեան), Հարֆ (Մշոյ Բուլանըխ), Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտ. 3, Երեւան, 1972; Բենսէ, Բուլանըխ կամ Հարֆ գաւառ, Թիֆլիս, 1901:

⁹ Մարտիրոսեան Ն., Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը, Վան-Տոսպ, հմր. 14, 1916, էջ 7:

¹⁰ Ատրպետ, Բուլանըկ, «Մշակ», հմր. 213, 214, 1915:

¹¹ Kévorkian R. and Paboudjian P., Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du génocide, Paris, 1992; Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History, Published in 2011 by I. B. Tauris & Co Ltd, New York, Pdf.

¹² <https://www.houshamadyan.org/>, Պոլանըխի ֆազա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

¹³ Բաղալեան Գ., Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագրութիւնը Մեծ եղեռնի նախօրեին, մաս վեցերորդ, Բիթլիսի նահանգ, «Վէմ», Ը. (ԺԳ) տարի, թիւ 3 (55), հոկտեմբեր, 2016, հավելված, էջ I-XXXVI:

¹⁴ Հայոց Ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ, Փաստաթղթերի ժողովածու, հեղինակ եւ կազմող Վիրաբյան Ա., Ավագյան Գ., Բիթլիսի նահանգ, հտ. II, Երեւան, 2012:

¹⁵ 294 Numaralı Hınıs Livâsı Mufasssal Tahrîr Defteri (963/1556), Defteri Hâkânî Dizisi: VI, yayına hazırlayan Özkılıç A., Coşkun A., Sivridağ A., Yüzbaşıoğlu M., Ankara, 2000.

¹⁶ Salname-i Vilayet-i Bitlis 1310; Okcu N., Akdağ H., Salname-i vilayet-i Erzurum (1287/1870–1288/1871–1289/1872–1290/1873): Erzurum il yillığı, Erzurum, Atatürk Üniversitesi İlahiyat Fakültesi, 2010.

¹⁷ Филиппов В. Н., Военное обозрение Азиатской Турции, Санкт-Петербург, 1881.

¹⁸ H. F. B. Lynch, Armenia: Travels and Studies, volume 2: The Turkish Provinces, London, New York, Longmans, Green, & Co., 1901.

¹⁹ Vital Cuinet, La Turquie d'Asie: géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure, tome deuxième, Paris 1892.

ուղղուած նամակներում հանդիպած տեղանունները բաղդատելու եւ ճշգրտելու առումով մեզ համար օգտակար աղբիւր է եղել Սեւան Նիշանեանի կազմած տեղանունների առցանց շտեմարանը²⁰:

Օսմանեան վերջին շրջանում Բուլանըք գաւառը Մանազկերտի, Վարդօյի, Մշոյ դաշտի եւ Սասունի գաւառների (միայն մէկ փոքր մաս) հետ միասին կազմում էր Բիթլիսի (Բաղէշ) նահանգի Մշոյ կոնսակալութիւնը (սանջաք): Ըստ տեղագրութեան այն ընկած էր Մուշի սանջաքի հարաւարեւելեան մասում: Հիւսիսից սահմանակից էր Մանազկերտի գաւառին, որին պատկանելով մինչեւ 1881 թ. բաժանուել եւ վերածուել էր առանձին քաղաքի²¹: Բուլանըքը արեւելքից եւ հիւսիս-արեւելքից սահմանակից էր Մանազկերտի գաւառին (քաղա), հիւսիս-արեւմուտքից՝ Էրզրումի նահանգի Խնուսի գաւառին, հարաւ-արեւելքից՝ Խլաթին, իսկ արեւմուտքից եւ հիւսիս-արեւմուտքից Վարդօյի եւ Մուշի գաւառներին:

Բանասէր եւ աշխարհագրագէտ Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեանը Բուլանըք գաւառի անուան ծագումը կապում է Բուլանըք լճի (Պուլանըք կէօլ, պղտոր լիճ) անուան հետ, որի ջրերը տարին բոլոր պղտոր կարմրագոյն են²²: Այս կարծիքն է կիսում նաեւ Վիտալ Քինեն²³: Կարծում ենք՝ տեսակէտը աւելի քան հենուած պէտք է լինի ժողովրդական ստուգաբանութեան վրայ²⁴: Ինչպէս օրինակ Բլէջան լեռների անուան ծագումը կապում են Հայկի եւ Բէլի աւանդադրոյցի հետ, որտեղ Բէլն աւանդել է իր հոգին՝ Բէլայ ջան²⁵:

Եթէ գաւառի անուան ծագումը կապուած է եղել լճի արտաքին նկարագրութեան հետ, ապա ե՛ւ Օսմանեան շրջանի քարտէզներում, ե՛ւ 1556ին կազմուած տեղեկագրում առնուազն այս լիճը պէտք է կոչուեր բացառապէս Բուլանըք: Մինչդեռ այն եղել, եւ այսօր եւս շարունակւում է կոչուել Խաչլուայ, Խաչլու, Խաղանայ լիճ²⁶:

²⁰ <https://nisanyanmap.com/>

²¹ Vital Cuinet, La Turquie d'Asie..., էջ 588:


²² Իճճիճեան Ղ., Աշխարհագրութիւն Զորից Մասանց աշխարհի, Ասիա, հտ. Ա., Վէնէտիկ, 1806, էջ 199–200:

²³ Vital Cuinet, La Turquie d'Asie..., էջ 588:


²⁴ Նման աւանդադրոյցներ պատմում էին նաեւ Բուլանըքից գաղթած հայերը: Տե՛ս Հայրենիք տարեգիրք-տօնացոյց, 1946, էջ 37; տե՛ս նաեւ Հայ ժողովրդական նեփաթներ, կազմեց եւ ծանօթագրեց Տարոնցի Ս., Երեւան, 1967, հտ. 10, էջ 473:

²⁵ Բենալ, Բուլանըք կամ Հարֆ, էջ 10:

²⁶ <https://www.kulturportali.gov.tr/turkiye/mus/gezilecekyer/hacli-bulanik-golu>



Խնուսի եւ շրջակայքի ֆիզիկական քարտեզ (Օսմանեան
Թուրքիայի ռազմական նախարարութիւն
1332 (1913-1914) 1:200.000



Քենտ (Սահակ Մովսիսեան), «Հարք (Մշոյ Բուլանըխ)», Հայ ազգագրութիւն
 եւ բանահրաւորութիւն, հտ. 3, Բուլանըք գաւառի քարտէզը, հեղինակ՝ Վ. Միրզոյեանց:



Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին և նոր աշխարհագրաց փորձագրեալ
'ի Վենետիկ, յամի տ[եառ]ն 1751:

Պէտք է նկատի առնել, որ Բուլանըք վարչատարածքային միաւորը օսմանեան աղբիւրներում արձանագրուած է بولانق ձեւով: Եթէ առաջնորդւենք յուշագրութիւններով, բանահիւսական նիւթերով, ապա նկատելի է, որ տարածուած են եղել գաւառի՝ Բուլանըխ կամ Պուլանըխ, Բուլանըգ-Պուլանըգ, Բուլանըղ-Պուլանըղ տարբերակները: Եթէ հետեւենք տառադարձման կանոններին, պէտք է տառադարձենք Բուլանըք կամ Պուլանըք: Արեւմտահայ մասնագիտական գրականութեան մէջ տեղանունը բերւում է բացառապէս Պուլանըք ձեւով²⁷, իսկ արեւելահայ մասնագիտական գրականութեան մէջ՝ Բուլանիք²⁸ եւ Բուլանըխ ձեւերով:

Ինչպէս նկատելի է վերեւում տեղադրուած քարտէզից, Հարքից արեւելք Հայոց Տուրուբերան նահանգի Պալունիք (Բալունիք) գաւառն է, Պալունեաց երկիրը կամ Պալունեաց նահանգը²⁹, որի կենտրոնն էր նոյնանուն գիւղը³⁰: Ուսումնասիրողներից ոմանք գաւառի ծագումը կապում են հենց Պալունիք գաւառի անուան հետ³¹: Բուլանըք տեղանունն ծագումը կամ ստուգաբանութիւնը թողնելով համապատասխան մասնագետներին, սոյն ուսումնասիրութեան մէջ մենք գործածելու ենք Բուլանըք (Պուլանըք) տարբերակը, որպէս օսմանեան տեղեկագրերում նշուած տեղանունն (بولانق) գիտական տառադարձում:

²⁷ **Է. Եփրեմ Վ. Պօղոսեան**, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Հանդէս Ամսօրեայ, ԿԹ. տարի, 1955, Յունուար-Փետրուար, թիւ 1–2, էջ 57–73, էջ 69; **Թեղիկ**, Ամէնուն Տարեցոյց, Կ. Պօլիս, 1911, էջ 391; **Օրմանեան Մ. արք.**, Ազգապատում, հտ. Ա., 2001, էջ 611; **Քերովեան Գ.**, Աւանդական պատմութիւն հայոց, Իսթանպուլ, 1968, էջ 16; **Հիւբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները**, Հանդէս Ամսօրեայ, թիւ 1, Յունուար, իննետասաներորդ տարի, Վիեննա, 1905, էջ 248–249; Երկամեայ Տեղեկագիր 1908–1910 շրջաններու, Կ. Պօլիս, 1911, էջ 33:

²⁸ **Աղանց Ն.**, Հայաստանի Պատմութիւն, Ակումբներ X–VI դդ. մ. թ. ա., Երեւան, 1972, էջ 85; **Սաֆրաստյան Ա.**, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի եւ Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Թարգմանություն թուրքական բնագրերից, հտ. Բ., Երեւան, 1964, էջ 36:

²⁹ **Վաւերաբանութիւն**, Արեւելեան Մամուլ, Հանդէս ամսեայ, Երկուսասաներորդ տարի, Զմիւռնիս, ԺԲ տարի, 1882, մարտ, 129–144, էջ 139:

³⁰ Հայ մատենագրութեան մէջ յայտնի է նաեւ Կուսու կամ Կըւսու անուններով: Տե՛ս **Հ. Ղուկաս վրդ. Ինճիկեան**, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, ի Վէնետիկ, 1822, էջ 105, 212: Այս բնակավայրը **Ս. Երեմեանը** «Հայաստանը ըստ Աշխարհացոյցի» ուսումնասիրութեան մէջ նոյնացնում է Թուրքիայի Կիրակի գիւղ բնակավայրի հետ: Տե՛ս **Երեմյան Ս.**, նշ. աշխատանք, էջ 61:

³¹ **Կանայեանց Ստ.**, Անյայտ գաւառներ Հին Հայաստանի, Էջմիածին, 1914, էջ 145; **Մովսիսեան Ս.**, *Տաճկահայեր*, «Համբաւաբեր», թերթ, Թիֆլիս, 1916 թ., հմբ. 12 էջ 3; **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1889, էջ 33:

Հետազոտողների մի մասի կարծիքով Բուլանըք գաւառը համապատասխանում է պատմական Հարք գաւառին, ոմանց կարծիքով՝ Ապահունիքին³²: Պէտք է նկատի առնենք, որ Օսմանեան կայսրութիւնում պարբերաբար կրկնուող վարչական վերաբաժանումների պատճառով, դժբախտաբար, հին հայկական անուններով անհնար է վերականգնել ժամանակակից նահանգների ճշգրիտ ամբողջութիւնն ու սահմանները:

Գաւառի ճիշտ տեղագրութեան համար առաջնորդում ենք Վանայ լճից հիւսիս ընկած Նազիկ եւ Խաչի/Խաչլուայ կոչուած լճերով: Ապա հենւում ենք երկու հնագոյն բնակավայրերի՝ Կոփ եւ Լիզ աւանների կամ գիւղաքաղաքների տեղագրական նկարագրութիւններին:

Օսմանեան կայսրութեան շրջանում Բուլանըք գաւառը բաժանուած էր երկու մասի՝ Վերին Բուլանըք եւ Ներքին Բուլանըք: Ներքին Բուլանըք կոչուած գիւղախմբի (նահիյէ) վարչական կենտրոնը Մեծ Հայքի հայաշատ Լիզ գիւղաքաղաքն էր, որը Օսմանեան շրջանում միւղիւրի՝ գաւառակի առաջնորդի նստավայրն էր: Այս գիւղախումբը Մկրտիչ Ա. Խրիմեանին ուղղուած նամակներում յաճախ յիշատակուած է Լզա-Բուլանըք ձեւով³³: Ներքին Բուլանըքը հիւսիսից սահմանակից էր Խոյլի-Բաբայ կոչուած սարին, արեւմուտքից՝ Զանէր եւ Խանդրէզ գաւառակներին, հարաւից՝ Տարօնին:

Վերին Բուլանըք ձեւով արձանագրուած գիւղախմբի վարչական կենտրոնն էր Կոփ գիւղաքաղաքը: Նրա սահմանները հիւսիսարեւելեան մասից եզերում են Մանազկերտ գաւառը, արեւմուտքից՝ Զեռնակի լեռնաշղթան եւ Խամուր բերդի սարը, իսկ հարաւից՝ Խլաթ եւ Բզնունիք գաւառները: Խրիմեանին ուղղուած նամակներում այս գիւղախումբը յիշատակուած է Կոփա-Բուլանըք կամ Բուլանըք ձեւով: Ա. Բերտրանդի ուսումնասիրութեան մէջ նոյնպէս հանդիպել ենք Լզա-Բուլանըք (District de Boulanik Liz) եւ Կոփա-Բուլանըք (District de Boulanik Koub) անուանաձեւերին³⁴:

³² Տե՛ս յատկապէս Գիւրգ Թղթոց, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 223; **Զենոբ Գլակ Ասուրի**, Պատմութիւն Տարօնոյ գոր թարգմանեաց Զենոբ Ասուրի, երկրորդ տպագրութիւն, ի Վենետիկ, յամի 1889, էջ 40; **Զ. Եփրեմ Զաքրեան**, Պատմութիւն Հայոց Հայկազանց տէրութեան սկսելէն մինչեւ մեր ժամանակը, Վիէննա, 1851, էջ 309; **Հիւքշման Է.**, Հին Հայոց տեղոյ անունները, 248–249; Հարց գաւառի տեղագրութեան մասին տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Տավրոսբերան (Տուրոսբերան) աշխարհն ըստ «Աշխարհացոյցի», Պատմա-բանասիրական հանդես, 1999, հմր. 2–3, էջ 147–166:

³³ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 18:

³⁴ **Bertrand A.**, (ed.), Voyage dans la Turquie d'Europe: description physique et géologique de la Thrace, Tome Premier, Paris, 1868, էջ 129:

Անդրադառնանք այն հարցին, թե՞ ե՞րբ եւ պատմական ի՞նչ հանգամանքների ներքոյ է ձեւաւորուել գաւառը, ե՞րբ եւ ինչո՞ւ է այն բաժանուել երկու մասի, Մեծ Հայքի վարչատարածքային ի՞նչ միաւորներ է ներառել:

Սեֆեան Իրանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ 1555ի մայիսի 29ին կնքուում է Ամասիայի հաշտութեան պայմանագիրը, որի համաձայն որոշուում է երկու երկրների սահմանը: Այս պայմանագրով Արեւելեան Հայաստանն անցնում է Սեֆեան Իրանի, իսկ Արեւմտեան Հայաստանն՝ Օսմանեան կայսրութեան գերիշխանութեան ներքոյ³⁵:

1556ին (Հիջրայի 963 թ.) կազմուում է Խնուսի գաւառի մանրամասն մատեանը (Tahrir Defteri): Այս մատեանի մէջ Խնուս, Վարդոյ, Խանդրէզ, Սուլէհիւր, Գեոքսու, Էլմալը, Բուլանըք, Բլէջան եւ Մանազկերտ շրջանները կազմում են Խնուս կենտրոնական գաւառակով Խնուսի սանջաքը՝ Էրզրու-մի էյալեթի կազմում³⁶:

1556ի Խնուսի գաւառի մանրամասն մատեանում կան երկու գաւառակներ (նահիլէ)՝ Բլէջան եւ Բուլանըք: Եթէ առաջնորդուենք այստեղ յիշատակուած Կոփ տեղանուամբ, կարելի է նկատել, որ Բուլանըք անունով նշուած գիւղախումբը նոյնանում է աւելի ուշ շրջանում Վերին Բուլանըք կոչուած գիւղախմբին: Կոփի տեղակայումով առաջնորդուելով նկատում ենք, որ այն համապատասխանում է Մովսէս Խորենացու³⁷ եւ Փաւստոս Բուզանդի³⁸ յիշատակած Հացեաց Դրախտ կոչուած բնակավայրին: Հետագայ դարերում օտար հեղինակների կողմից եւս Կոփի շրջակայքը յաճախ յիշատակուել է Հացեաց Դրախտ կամ Հացեաց գաւառ ձեւով³⁹: Բացառապէս Հացեաց գաւառ ձեւով ենք հանդիպում նաեւ Երեմիա Տեւկանցի «Տոհմային Յիշատակարանում» նոյնպէս⁴⁰:

1556ի Խնուսի գաւառի մանրամասն մատեանը արժէքաւոր է ոչ միայն գաւառի կազմաւորման ժամանակաշրջանի մասին տեղեկութիւնների, այլեւ, յատկապէս Բուլանըք կոչուած գիւղախմբում արձանագրուած հետեւեալ 53 անուն գիւղերով, որոնք կարեւոր են գաւառի տեղագրութեան հարցի ճշգրտման համար:

³⁵ Հայ ժողովրդի պատմություն, հտ. 4, Երեւան 1972, էջ 85:

³⁶ 294 Numaralı Himis Livâsi..., էջ 2:

³⁷ Մովսէս Խորենացի, Ազգաբանութիւն Տոհմին Յաբեթեան, ի Վենետիկ, 1752, էջ 302:

³⁸ Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս, Վենետիկ, 1832, էջ 38, 43:

³⁹ Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Խալաթեանց Բ., Վիեննա, 1919, էջ 12:

⁴⁰ Երեմիա Տեւկանց (Տէր-Սարգսեանց), Տոհմային Յիշատակարան, Գիւր Ը. (1868–1872 թթ.), Աշխատասիրությամբ Հ. Ղ. Մուրադյանի, Երեւան, 2018, էջ 30, 58, 90:

Այդ գիւղերն են՝

1. Աջլսու/Acısu
2. Աղջա-վիրան/Agca-viran
3. Ահմեդ-վիրանը/Ahmed viranı
4. Ահրագոմ/Ahragom
5. Աքփընար/Akpınar
6. Աք-վիրան/Ak-viran
7. Ալագեոզ/Էլգեոզ/Elgöz
8. Ալի Փաշա/Ali-Paşa
9. Ալփաւուդ/Alpavud
10. Արու մաղարասը/Aru-mağarası
11. Բոյաջը/Boyacı
12. Բոզվանք/Bozvank
13. Չամուրլու-Չամուշլու/Çamurlu-Çamuşlu
14. Չիւքիւս/Çüküs
15. Դէդէ Վիրան/Dede-viran
16. Դըրավի/Dıravı
17. Էլբիս/Elbis
18. Ռըբաթ/Rıbat
19. Գեոլլիւջէ/Göllüce
20. Խաչլու/Haçlu
21. Հարբուզիկ/Harbuzik
22. Իրքենդափ/İrkendap
23. Գանձիկ/Kanzik
24. Քարա-քուփա/Kara-kupa
25. Քաւաքլու/Kavaklu
26. Քեքրելու/Kekrelü
27. Քելադիք/Keladik
28. Քէրդէ Փիրհոզ/Kerde-Pirhoz
29. Քիլիսէ վիրանեսի/Kilise viranesi
30. Քոնդու/Kondu
31. Կոփ/Kop

32. Լաթար/Latar
33. Լեշքերլիշ/Leşkerliş
34. Մաղարա/Mağara
35. Մաղարագոմ/Mağaragom
36. Մարնիկ/Marnik
37. Մեսջիդլիլ/Mescidlü
38. Մեշհեդլիլ/Meşhedlû
39. Մեխիկ/Mihik
40. Մոնլա Հասան/Monla Hasan
41. Օդունչոր/Odunçor
42. Փլլուր/Pulur
43. Փլլուր-վանք/Pulur vank
44. Ռեբաթ/Ribat
45. Սաջլու/Saclu
46. Սաթը գիւնբեթի/Satı Günbeti
47. Սօդիլթլիլ/Söğütlü
48. Թէղուտ/Teğut
49. Թոփրաք-Աքփրնար/Toprak-Akpınar
50. Թորթուլթ/Tortut
51. Թիւրքեն-Բուլաղը/Türken Bulağı
52. Եալ-վիրանը/Yal viranı
53. Եօնջալու/Yoncalu

1556ին կազմուած այս մատեանում նշուած է մէկ այլ գիւղախումբ եւս, որն արձանագրուած է Բլէջան անունով: Առաջնորդուելով այս գիւղախումբում յիշատակուած Լիզ տեղանունամբ, որը, ինչպէս վերեւում նշեցինք տեղագրութեան հարցում առաջնորդող տեղանուններից էր, կարող ենք ասել, որ նշուած գիւղախումբը համապատասխանում է Ներքին Բուլանք կոչւած վարչատարածքային միաւորին: Լիզ տեղանունից զատ Բլէջան գիւղախմբի մէջ արձանագրուած են հետեւեալ գիւղերը.

1. Աբրի/Abri
2. Ատկոն/Adgön
3. Ալի Էքրեք/Ali-Ekrek
4. Չամուրլու/Çamurlu
5. Գանձիկ/Ganzik (Bulanık ve Bilecan)
6. Քերդէ Փըրխոզ/Kerde Pirhoz (Bulanık ve Bilecan)
7. Լիզ/Liz
8. Մարնիկ/Marnik
9. Մեսիժիժլի/Mescidlü
10. Մեվլանա Մեհմեդ Քենթի/Mevlana Mehmed Kendi
11. Փիյոնք/Piyonk
12. Փիւրքաշին/Փիւրնաշին/Pürkaşin/Pürnaşin

Ինչպէս նկատելի է ցանկից, գաւառակի տեղագրութեան համապատասխանեցման հարցում Լիզից բացի ուղղորդող են դառնում Աբրի, Ատկոն, Մէջիթլու, Փիյոնք, Փիւրքաշին տեղանունները եւս:

1639ի թուրք-պարսկական երկրորդ դաշնագրից յետոյ իրականացւում է երկրորդ վարչական վերաբաժանումը: 1642ի գլխահարկի մասին կազմուած մատեանի (Avârız Defteri)⁴¹ համաձայն արդէն Բուլանըքը (պէտք է հասկանալ միայն Վերին Բուլանըքը, Վ. Ս.) եւ Վարդոյ գաւառակները ներկայացուած են որպէս Խնուսին ենթակայ գիւղախմբեր, իսկ Խնուսը ներկայացուած է որպէս Էրզրումի էյալէթի մէջ մտնող գաւառ: 1642ին կազմուած մատեանի համաձայն Բուլանըք գիւղախմբում ընդգրկուած է ընդամենը 14 գիւղ⁴²:

17-րդ դարի օսմանեան պատմագիր եւ աշխարհագրագէտ Քյաթիբ Չելեբու (Հաջի Խալիֆայ) «Ջիհան-Նիւմա» աշխատութեան համաձայն, Խնուսը՝ Բազա, Բուլանէ, Խենդերէս գաւառակների հետ միասին մըտնում էր Վանի էյալէթի մէջ⁴³:

Ամբողջութեամբ տարբեր սահմաններ են ներկայացուած 1714ին կազմուած «Icmal defter»-ի⁴⁴ մէջ: Այս մատեանի համաձայն՝ Խնուսը եւ Մանազկերտը

⁴¹ <https://islamansiklopedisi.org.tr/avariz--vergi>

⁴² 294 Numaralı Himis Livâsı..., էջ 5:

⁴³ Թուրքական աղբիւրներ..., հտ. Բ., էջ 45:

⁴⁴ Պետութեան սեփականութիւնը դարձած հողատարածքի կամ անշարժ գոյքի արձանագրութեան տոմար, որի հիման վրայ ճշտում էր կալուածահարկի քանակը եւ գանձումը:

առանձին գաւառներ են, իսկ նախկինում Բուլանքը եւ Բլէջան գաւառակների բնակավայրերը ընդգրկուած են Մանազկերտի կազմի մէջ⁴⁵:

Մեծ վեզիր Ահմեդ Միդհատ փաշայի (1822–1883) կառավարման շրջանում տեղի ունեցան վարչական, ներսահմանային նոր վերաձեւումներ, որոնց համաձայն էրզրումին կապուած նահանգները վերածուեցին անկախ նահանգների: Պատմական Տուրուբերանն ու Աղձնիքը միասին կազմեցին մէկ նահանգ՝ կառավարական կենտրոն ունենալով Բիթլիսը (Բաղէշ): Նահանգի մէջ ընդգրկուեցին Խլաթ, Մանազկերտ, Բուլանք, Բիթլիս, Սասուն, Մշոյ դաշտ, Վարդոյ, Գենջ, Ճապաղձուր, Սղերդ եւ Խիզան շրջանները: Խնուսը, որ Տուրուբերանի անբաժան մասն էր, կցուեց էրզրումին, իսկ Սղերդը, որ մեծամասամբ քրդաբնակ էր՝ Բիթլիսին⁴⁶:

1864ի տարեգրքի (salname) համաձայն Բուլանքը գիւղախումբը Մանազկերտի եւ Վարդոյի հետ միասին պատկանում են Մշոյ կուսակալութեանը (սանջաք), որն էլ իր հերթին ենթարկւում էր էրզրումի էյալէթին (վիլայէթից աւելի մեծ միաւոր)⁴⁷: Ա. Բերտրանդի խմբագրութեամբ հրատարակուած Եւրոպական Թուրքիայի ֆիզիկաաշխարհագրական նկարագրութեան համաձայն, էրզրումի էյալէթն ունէր 5 լիւա (Չըլդըր, Կարս, Բայազէտ, էրզրում, Մուշ) եւ 48 քաղա⁴⁸:

1871 թուականից սկսած միւս բոլոր տարեգրքերում Խնուսը ընդգրկուած էր էրզրումի սանջաքի կազմում, իսկ Վարդոն եւ Բուլանքը ենթարկւում էին Մշոյ սանջաքին՝ Բիթլիսի նահանգի (վիլայէթ) սահմաններում: 1871ի սալնամեի համաձայն Մանազկերտը պատկանում էր Բուլանքին⁴⁹:

1888ին կազմուած տարեգրքի համաձայն Բիթլիսի նահանգը, որ ընկած էր դէպի հարաւ՝ Սղերդ տանող կիրճի մէջ՝ շրջապատուած Խիզանի ու Մօտկանի ամեհի լեռնաշղթաներով, ունէր 4 սանջաք՝ Բիթլիս, Մուշ, Սղերդ, Գէնջ, որոնք ունէին ընդհանուր 18 քաղա⁵⁰:

⁴⁵ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 5:

⁴⁶ Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի Աշխարհի, Պէրոպ, 1957, էջ 27: Մեծ եղեռնի հերոսապատում, 1915 թի ինֆնապաշտպանական հերոսամարտեր, Թեհրան, 1982, էջ 341:

⁴⁷ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 5:

⁴⁸ Bertrand A., (ed.), Voyage dans la Turquie d'Europe: description physique et géologique de la Thrace, Tome Premier, Paris, 1868, էջ 129:

⁴⁹ Որպէս առանձին քաղաք Բուլանքն առանձնանում է 1881ին:

⁵⁰ Vital Guinet, La Turquie d'Asie: géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure, Carte Générale de la Division Administrative Turquie D'Asia, 1/6000.000, Tome Premier, Paris, 1891.

Այսպիսով, Օսմանեան մատեաններում (Tahrir Defterleri) յստակ երեւում են վարչական վերաբաժանումներն ու սահմանային փոփոխութիւնները: Եթէ 1556ի մատեանում նշուած տեղանունները բաղդատենք հայկական սկզբնաղբիւրներում եղած տեղեկութիւնների հետ, ապա յստակ կարելի է նկատել, որ որոշ բնակավայրեր դուրս են գալիս Մ. Խրիմեանի աթոռակալութեան շրջանում Բուլանըք կոչուած գաւառի սահմաններից: Ուստի կարող ենք ասել, որ Բուլանըք գաւառն ընդգրկում էր պատմական Հարք գաւառը, արեւելեան կողմից այն ընդգրկում էր վաղ միջնադարեան Պալունիք գաւառի կամ աշխարհի տարածքը, իսկ մինչեւ 1881 թ. ընդգրկում էր Մանագլերտի գաւառը, որ բուն Ապահունիքն էր:

1881ին Բուլանըք գաւառն առանձնանալով Մանագլերտից եւ դառնալով առանձին վարչական միաւոր, դեռեւս մնում էին բնակավայրեր, որոնց պատկանելութիւնը այս կամ այն գաւառին մնում էին վիճելի: Կարծում ենք՝ այս հանգամանքով է պայմանաւորուած գիւղերի քանակի չփոթը: Կարծում ենք՝ վարչական վերաբաժանումներով եւ սահմանային անձշտութիւններով են պայմանաւորուած նաեւ բնակչութեան մարդահամարի տուեալների անհամապատասխանութիւնները նոյնպէս:

1. 2. ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱԽԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

19-րդ դարում մի շարք շրջադարձային իրադարձություններ տեղի ունեցան Օսմանեան Թուրքիայում, որոնք ամբողջութեամբ փոխեցին տեղի ժողովրդագրական պատկերը: Բաւական յետամնաց Օսմանեան կայսրութիւնը ագրարային երկիր էր, տրոհուած տնտեսապէս իրարից առանձին կիսանկախ փաշայութիւնների ու դերեբեյութիւնների: Կայսրութեան ներսում հզօրացող կենտրոնախոյս ուժերի ոչնչացումը, անկախութիւն նուաճած իշխանութիւնների վերացումը հրամայական պահանջ էր: Երկիրը ունէր բարեփոխումների կարիք⁵¹:

Կայսրութեան մէջ տարբեր ուժերի կենտրոնացման առաջին փորձն սկսեց սուլթան Մահմուդ II-ը (1808–1839), որի խորհրդականն էր Մուստաֆա Ռեշիդ փաշան: Մահմուդ II-ը բարեփոխումներն սկսեց քրդական դերեբեյութիւնների նուաճմամբ եւ կամակոր ֆէոդալների հպատակեցմամբ: Նշանակելով Սեբաստիայի կառավարիչ, սուլթանը հրամայեց Ռեշիդ փաշային հպատակեցնել Փոքր Ասիայի եւ Արեւմտեան Հայաստանի քրդական ապստամբ դերեբեյներին, որոնցից շատերը 1830–1834 թթ. օգնութեան ձեռք էին մեկնել եգիպտական զօրքերին:

Նիզիբի⁵² պարտութիւնից յետոյ կայսրութեան համար ստեղծուել էին արտաքին խիստ անբարենպաստ պայմաններ: Այս ծանր կացութիւնից դուրս գալու միակ միջոցը համարուեց բարեփոխումների շուտափոյթ իրականացումը:

1839ին Աբդուլ Մէջիդ (1823–1861) սուլթանը վաւերացրեց Մուստաֆա Ռեշիդ փաշայի բարեփոխումների ծրագիրը, որն յայտնի է Գիւլհանէի Հաթիթ Եներիֆ⁵³ անունով: 1856ին սուլթանը հրապարակում է բարենորոգումների երկրորդ ծրագիրը՝ Հաթիթ Հիւմայիւնը: Այս բարեփոխումներով

⁵¹ Օսմանեան կայսրութիւնում բարեփոխումների շարժման մասին մանրամասն տե՛ս **Berkes N.**, The Development of Secularism in Turkey, Montreal, McGill University Press, 1964, էջ 1–85; **Davison R.**, Reform in the Ottoman Empire: 1856–1876, Princeton University Press, 1963.

⁵² Տեղի է ունեցել 1839 թ. յուլիսի 24ին Հիսիսային Սիրիայում, Նիզիբի մօտ: Աւարտուել է օսմանեան բանակի ջախջախիչ պարտութեամբ: Մանրամասն տե՛ս **Gardiner S. R.**, A Student's History of England, from the Earliest Times to 1885, London, 1895, էջ 922–925:

⁵³ Հաթիթ շերիֆ կամ Հաթիթ հիւմայիւն, գրութիւն, հրովարտակ, սուլթանի հրաման, կայսերական հրովարտակ, (Վարդաստանի հրովարտակ): Տե՛ս Թուրքական աղբյուրներ, թարգմանություն բնագրից Սաֆրաստյան Ա. Խ., Սանթուրջյան Գ. Հ., հտ. 4, Երեւան, 1972, էջ 226:

օսմանահպատակները հռչակում էին հաւասար եւ բարեկարգում էր երկրի վարչական ու դատական համակարգը⁵⁴:

Ըստ էութեան Օսմանեան կառավարութեան նպատակը բարեփոխումներով բնակչութեան վիճակի բարելաւումը չէր, այլ՝ կենտրոնախոյս գաւառների կառավարման՝ քրդական փաշայութիւններին պատկանող իշխանութիւնը նահանգային եւ գաւառական իշխանութեանը յանձնելու խնդիրը լուծելն էր: Այս նպատակով 1849ին Կ. Պոլսից Մուշ է ուղարկւում զօրահրամանատար Ասադ փաշան: Այդ ժամանակ Մուշը փաշայութիւն էր, որը կառավարում էր Ալադին փաշայի⁵⁵ տան ներկայացուցիչ Շարիֆ (Շերիֆ) փաշան: Օսմանեան կառավարութեանը յաջողւում է քանդել քրդական իշխանապետութիւնը: Իսկ Շարիֆ փաշային իր ամբողջ ընտանիքով եւ եղբայրներով աքսորում են Մեդինէ⁵⁶:

Այս իրադարձութիւնները մեծ յոյս ներշնչեցին հայութեանը: Նրանք սկսեցին հաւատալ, թէ այլեւս ազատուել են քրդական բռնակալութիւնից⁵⁷: Այս ընթացքին է, որ հայ ազգային կեանքը տոգորւում է նաեւ ազգային սահմանադրութիւն ունենալու գաղափարով:

Սակայն, ինչպէս պատկերաւոր նշել է Գ. Աղանեանցը, 1850ից մինչեւ 1878 թուականի Բեռլինի դաշնագիրը, չնայած թանգիմաթի հռչակած դրոյթներին, հայ կեանքի ամէնից ցայտուն դրուագը դառնում է հայութեան հարստահարումը⁵⁸: Քուրդ բեկերին փոխարինում են թուրք փաշաները: Հայ ժողովուրդը մէկ գաւառից գաղթում է միւսը՝ յոյս ունենալով, որ կկարողանայ ազատուել: 1863–1865 թթ. միայն Վարդենիսի շրջանից 865 երիտասարդ բռնում է պանդխտութեան ուղին⁵⁹:

Տեղի հայ բնակչութեան ժողովրդագրական պատկերը արմատապէս փոխուեց 1828–1829 թթ. Ռոհ-թուրքական պատերազմից յետոյ, որի

⁵⁴ Օսմանեան կայսրութեան հայ հասարակութեան վրայ բարեփոխումների ազդեցութեան մասին մանրամասն տե՛ս Etmekjian J., *The Tanzimat Reforms and Their Effect on the Armenians in Turkey*, The Armenian Review, Spring, 1972, Vol. XXV, No. 1–97, Boston, էջ 10–24:

⁵⁵ Մրանֆ Քասրմ Աղաօղլի Ալաադդին բէյի յետնորդներն էին, որոնք Մշոյ դաշտում հաստատել էին քրդական իշխանութիւն: Տե՛ս Gencer F., Bitlis ve Muş'un Son Beyleri: Alaaddin Paşazadeler, İstanbul, 2019:

⁵⁶ Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Անթիլիաս, 2013, էջ 182:

⁵⁷ Նոյն տեղում:

⁵⁸ Հարստահարումների մասին մանրամասն տե՛ս Աղանեանց Գիւս ֆհնյ., Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԳ., «Հարստահարութիւններ Տաճկահայաստանում» (Վաւերագրեր 1801–1888), Թիֆլիս, 1915; տե՛ս նաեւ Երեմիա Տեկանց, նշ. աշխ., էջ 231–237:

⁵⁹ Սասունի Կ., 2013, էջ 190:

աւարտին Ալաշկերտից, Մշոյ դաշտից եւ միւս հայաշատ գաւառներից Արեւելեան Հայաստան տեղափոխուեցին նաեւ բուլանըքցիներ:

Իսլամ գաղթականութեան կամ այլ եզրով լեռնականների վերաբնակեցման առաջին փորձերը սկիզբ էին առել 19-րդ դարի երկրորդ կէսից: 1858 թ. Օսմանեան կայսրութիւնն են տեղափոխուում կովկասեան լեռնականների առաջին խմբերը: Լոբանով-Ռոստովսկու (Князь Лобанов-Ростовский) բանակցութիւններն ի վերջոյ հանգեցնում են նրան, որ արդէն 1860 թ. գարնանը Ֆելդմարշալ Ա. Ի. Բարեատինսկին նախատեսում էր մօտ 3000 ընտանիք ուղարկել Օսմանեան կայսրութիւն: Նրանց վերաբնակեցման գործընթացն յաջորդաբար շարունակուեց 1860–1862 թթ.: Միայն 80.000 լեռնական այստեղ տեղափոխուեց 1863 թ.⁶⁰:

Ժողովրդագրական պատկերի շրջադարձային փոփոխման երկրորդ փուլը կապուած էր 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ, որի աւարտին բալկանեան երկրների իսլամ բնակչութիւնն մեծ մասամբ տեղափոխուեց Օսմանեան Թուրքիա:

1894–96 թթ. Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածներին զոհ գնաց բուլանըքահայութեան մի մեծ զանգուած, մեծ թուով հայեր բանտարկուեցին, գաղթեցին Արեւելեան Հայաստան կամ այլ երկրներ:

Ժողովրդագրական նկարագրի յաջորդ փոփոխութիւնը կապուած էր Բալկանեան երկրորդ (1913 թ.) պատերազմի հետ: Ինչպէս Բալկանեան առաջին (1912), այնպէս էլ երկրորդ պատերազմից յետոյ իսլամ բնակչութիւնը, պետական աջակցութեամբ, վերաբնակեցւում էր յատկապէս Մշոյ գաւառում⁶¹:

Հարստահարումներով, տեղահանութիւններով, կոտորածներով եւ լեռնականների վերաբնակեցմամբ հանդերձ, 1880-ական թուականներին Բուլանըքի դաշտավայրը իռլանդացի աշխարհագրագէտ Հենրի Լինչի⁶², ռուսական շտաբի գնդապետ Վլադիմիր Ֆիլիպովի եւ այլոց գնահատմամբ շարունակում էր մնալ Մշոյ ամենախիտ հայ բնակչութիւն ունեցող

⁶⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX первая четверть XX вв.), Ереван, 2001, էջ 94–145:

⁶¹ Մանրամասնե՛ր տե՛ս Chochiev G. and Koç Bekir, Migrants from the North Caucasus in Eastern Anatolia: Some Notes on their Settlement and Adaptation (Second Half of the 19th Century–Beginning of the 20th Century), Journal of Asian History, 2006, Vol. 40, No. 1 (2006), pp. 80–103, էջ 91–92:

⁶² H. F. B. Lynch, Armenia: Travels and Studies, volume 2; The Turkish Provinces, London, 1901, էջ 424–425:

գաւառներէից մէկը⁶³: Մշոյ եւ Բիթլիսի դաշտավայրի բնակչութեան մեծամասնութիւնը հայեր էին, երկրորդ տեղում քուրդ բնակչութիւնն էր, իսկ թուրքեր գրեթէ չկային⁶⁴:

Այս ամենով հանդերձ Օսմանեան բնակչութեան պաշտօնական մարդահամարի տուեալները բաւական հակասական են՝ պայմանաւորուած մարդահամարներէ ընթացքում հայ բնակչութեան թուի նուազ ներկայացուած ցուցանիշներէ, մասամբ նաեւ մարդահամարի անցկացման՝ ժամանակի մեթոդներէ, հնարաւորութիւններէ պատճառով:

Մշոյ կուսակալութիւնում հայերն անցկացրել են երկու մարդահամար: Երկուսն էլ Պոլսոյ պատրիարքարանի նախաձեռնութեամբ: Առաջինն իրականացուել է Ներսէս արք. Վարժապետեան պատրիարքի (1837–1884) հրամանով՝ 1880ին: Այս մարդահամարի մէջ ընդգրկուած էր Բուլանքի, Մանազկերտի եւ Մշոյ բնակչութիւնը: Ըստ այդմ, հայ բնակչութիւնը արձանագրուած էր 225.000, իսկ իսլամ բնակչութիւնը՝ 55.000⁶⁵: Այս թւերի հրապարակումից յետոյ Մշոյ օսմանեան իշխանութիւնները համոզուած են տեղական քաղաքային խորհուրդի անդամ Կարապետ Էֆենդի Փոթիկեանին, թէ թուերը պէտք է փոխուեն, այլապէս, կառավարութիւնը նկատի կառնի այս հանգամանքը եւ չարձանագրուած, զինուորական տուրքից փախչողների հաշուով համայնքից ահագին գումար կգանձի: Փոթիկեանը համոզւում է: Իր հերթին միւսներին համոզելով՝ հայոց թիւն իջեցնում են 95.000ի, իսկ իսլամ բնակչութեան թիւը բարձրացնում 105.000ի⁶⁶: Երկրորդ մարդահամարը պատրիարքարանն իրականացնում է նախքան Առաջին աշխարհամարտը:

Մարդահամարի Օսմանեան աղբիւրները սալնամեներն են (տարեգիրք)՝ Օսմանեան կայսրութեան եւ նահանգների մասին կառավարութեան կազմած մատեանները, որոնք ներառում են բնակչութեան թիւը, դպրոցների եւ ուսուցիչների քանակը, ընտանի կենդանիների, ջրաղացների քանակը, վարելահողերը, տուրքերը, զինուորութեան հարկը եւ այլն: Մինչեւ 1892 թ.

⁶³ **Маевский В. Т.**, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Тифлис, Штаб Кавк. воен. окр., 1904 г., с. 29, 126, 233, 243; **Филиппов В. Н.**, Военное обозрение Азиатской Турции, С. Петербург, 1881, էջ 21, 93; **Н. F. B. Lynch**, Armenia: Travels and Studies, volume 2; The Turkish Provinces, London, 1901, էջ 424–425; **Բենսէ** (Սանակ Մովսիսեան), «Հարֆ (Մշոյ Բովանդիս)», Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտ. 3, Երեւան, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, 1972, էջ 79; **Բդէեան Ս. եւ Բդէեան Մ.**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 22:

⁶⁴ **Филиппов В. Н.**, Военное..., էջ 22:

⁶⁵ **Սարգիս եւ Միսաք Բդէեան**, էջ 22:

⁶⁶ Նոյն տեղում:

սալնամեների տուեալներով հայ բնակչութիւնը մշտապէս գերակշռում էր իսլամ բնակչութեանը⁶⁷: 1892ին կազմուած Բիթլիսի նահանգի սալնամեի համաձայն՝ Բուլանըք գաւառում հայութեան թիւը կազմում էր մօտ 70 տոկոս: Այստեղ հաշուառուած մօտ 26.000 բնակչից 17.000ը հայեր էին⁶⁸:

Ինչ վերաբերում է 1893ին գաւառ առ գաւառ կազմուած Օսմանեան բնակչութեան ընդհանուր քանակին, Բիթլիսում արձանագրուած է 276.998 մարդ, որից՝ 45.581 հայ կին եւ 55.777 հայ տղամարդ, 2.171 կաթոլիկ (կին), 2.777 (տղամարդ), Աւետարանական համայնքի հետեւորդ 636 կին եւ 862 տղամարդ⁶⁹:

Այս սալնամեները նոյնպէս հաստատում են, որ հայութեան թիւը գերազանցում էր իսլամ բնակչութեանը: Նկատելի է նաեւ, որ 1872ին եւ 1873ին կազմուած սալնամեներում իսլամ բնակչութեան կտրուկ մեծացում կայ, որը պայմանաւորուած էր պատերազմներից յետոյ այստեղ տեղափոխուած իսլամ բնակչութեան վերաբնակեցման գործօնով: Օտար հեղինակների ուսումնասիրութիւնների համաձայն, 19-րդ դարի երկրորդ կէսից մինչեւ 20-րդ դարասկիզբ հիւսիսային Կովկասից այստեղ է տեղափոխուել մօտ 40–45.000 գաղթական⁷⁰:

Բնակչութեան թուի ճշգրտման ուղղութեամբ հետաքրքիր են ուսումնասիրողների մօտեցումները: Բենսէն արքունի գանձարան վճարուած տարեկան գումարը բաժանում է պարտադիր վճարի վրայ: Ըստ որի՝ արական սեռի իւրաքանչիւր անձ պէտք է տարեկան վճարէր 38 ղուրուշ: Քանի որ 1898 թ. վճարուել է 386.190 ղուրուշ, հետեւաբար արական սեռի անձանց թիւը միայն Բուլանըքում պէտք է եղած լինէր 10.163: Այս ձեւով, սակայն, կանանց թիւը հաշուել անհնար է⁷¹:

Բենսէի ներկայացրած ցուցանիշը վերաբերում է 1898ի տուեալներին, մինչդեռ 1892ի սալնամեում հայոց թիւը կազմել է 16.889 մարդ: Եթէ հաշուի առնենք, որ Բենսէի հաշուարկը վերաբերում է միայն տղամարդկանց, իսկ սալնամեի ցուցանիշը երկու սեռերի հաշուարկն է, ինչ-որ տեղ կարող ենք արդարացնել Բենսէի հաշուարկներով առաջ բերուած ցուցանիշը:

⁶⁷ Աւելի մանրամասն տե՛ս Մարտիրոսեան Տ., Պոլսանիսի ֆազա-ժողովրդագրութիւն <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/local/kazaofbulanikdemography.html>

⁶⁸ *Sālnāme-i vilāyet-i Bitlis (1310) 1892.* <https://library.ircica.org/Flipbook/FlipBook/2694>

⁶⁹ Karpāt H. K., *Ottoman Population Records and the Census of 1881/82–1893* Author(s): International Journal of Middle East Studies, Oct., 1978, Vol. 9, No. 3, pp. 237–274 Published by: Cambridge University Press, էջ 274:

⁷⁰ Chochiev G. and Bekir K., *Migrants from the North...*, էջ 92:

⁷¹ Բենսէ, Բուլանիս կամ Հարֆ, էջ 33:

Վ. Քինենն նշում է, որ 1891ի դրությամբ Բուլանքն առանձնացել էր Մանազկերտից եւ կազմել առանձին գաւառ, միեւնոյն ժամանակ, գաւառում հեղինակը հաշւում է 135⁷² գիւղ, իսկ բնակչութեան թիւը տալիս է 23.361, որից 13.000ը իսլամ, իսկ 10.361ը քրիստոնեայ⁷³: Վ. Քինեի ցուցանիշը յստակ անհամաձայնութիւն է առաջ բերում, մի կողմից գիւղերի քանակի, միւս կողմից հայ բնակչութեան չափից դուրս նուազ ցուցանիշի գնահատմամբ:

Առաջին աշխարհամարտից առաջ Օսմանեան կառավարութեան մարդահամարի տուեալների համաձայն արդէն Բուլանք գաւառի հայ բնակչութեան թիւը կազմել է 14.662, իսկ իսլամ բնակչութեան թիւը՝ 16.372⁷⁴, Մանազկերտում իսլամ բնակչութեան թիւը 30.929, հայ բնակչութիւնը՝ 4.438 մարդ⁷⁵: Այս ցուցանիշը մօտաւորապէս կրկնւում է Ահմեթ Թեթիկի ուսումնասիրութեան մէջ: Որպէս «տեղահանուածների» (պէտք է հասկանալ հայրենազրկուած հայութիւն) քանակ նշուած է 14.309 մարդ⁷⁶:

Եթէ բաղդատենք 1892ի սալնամեի ցուցանիշը (16.889) Առաջին աշխարհամարտից առաջ ներկայացուող ցուցանիշի հետ (14.662), հաշուի առնելով համիդեան կոտորածների հետեւանքներն ու բնակչութեան գաղթը դէպի Արեւելեան Հայաստան կամ այլ երկրներ, արդեօ՞ք ցուցանիշը կարելի է ընդունել իբրեւ ճշմարտանման: Միեւնոյն ժամանակ պէտք է նշենք, որ յետպատերազմեան շրջանում Թէոդիկի պատրաստած բաղդատական վիճակագրութեան տուեալների համաձայն նախքան Առաջին աշխարհամարտը Բուլանքում կար 19.000 մարդ⁷⁷:

Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տուեալների համադրման արդիւնքում, որը տրամադրելի է Ռ. Գէորգեանի եւ Փ. Փապուճեանի ուսումնասիրութեամբ, նախքան հայոց ցեղասպանութիւնը հայ բնակչութեան, անշարժ կալուածքների եւ բնակավայրերի հաշուառման արդիւնքում գաւառում կար 30 գիւղ, 25.053⁷⁸ մարդ, 29 եկեղեցի, 3 վանք⁷⁹: Այս տուեալներն է հաս-

⁷² Vital Cuinet, La Turquie d'Asie: tome deuxième, էջ 571:

⁷³ Vital Cuinet, La Turquie d'Asie: tome deuxième, էջ 571:

⁷⁴ Karpas K. H., Osmanlı Nüfusu 1830–1914, İstanbul, 2010, էջ 366:

⁷⁵ Նոյն տեղում, էջ 368.

⁷⁶ Tetik A., (ed.), Armenian Activities in the Archive Documents, 1914–1918, Ankara, 2005, volume 1, էջ 163:

⁷⁷ Թէոդիկ (Թէոդորոս Լաբինճեան), 1922, էջ 262:

⁷⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁷⁹ Kévorkian R. and Paboudjian P., Les Arméniens dans l'Empire Ottoman, էջ 59:

տատում նաեւ Սարգիս Կարայեանն իր երկարատեւ ուսումնասիրութիւնների արդիւնքում հրատարակուած գրքի մէջ: Ս. Կարայեանի հաշուումների համաձայն նախքան հայոց մեծ եղեռնը Բուլանըք գաւառն ունէր 25.596 բնակիչ⁸⁰:

Ռուսական բանակի առաջխաղացմամբ պայմանաւորուած Կ. Սասունին գրում է, թէ երկու ամսուայ ընթացքին կ'ազատագրէր Վասպուրականի նահանգի 120.000 հայու թիւն եւ Մշոյ նահանգի Բուլանուխ-Մանազկերտի 34.000 հայ: Այս ձեւով նշելով, թէ զոյգ գաւառների հայութեան թիւը 34.000 էր⁸¹:

Միւս աղբիւրը, որի հեղինակը Վիսկոնտ Բրայսն է, Կովկաս ժամանած գաղթականութեան թիւ է ներկայացնում 20.038 մարդ: Ըստ աղբիւրի՝ ցուցանիշը վերաբերում է Մուշ եւ Բուլանըք գաւառներից գաղթածներին⁸²:

Հետաքրքրական է 1915–1916 թթ. Նիւ-Եորքում հրատարակուած շաբաթաթերթի տուեալները: Այս աղբիւրից քաղում ենք բաւական որոշիչ տեղեկութիւն: Ըստ Ն. Օգանովսկու⁸³ յօդուածի՝ Բուլանըք գաւառից, որն ունէր 3.135 ընտանիք, փրկուել է ընդամէնը 300 մարդ⁸⁴: 1915ին Գէորգ Սուրէնեանց կաթողիկոսին ուղարկուած նամակի համաձայն Ներքին Բուլանըքի 11 հայաբնակ գիւղերի 1.000 տուն բնակչութիւնից ազատուել է ընդամէնը 21 անձ⁸⁵: Վերին Բուլանըքի 15 հայաբնակ գիւղերի 2.225 տուն հայ բնակչից ազատուել են 40 հոգի⁸⁶: Այս աղբիւրում Բուլանըք գաւառում հաշուած է 26 գիւղ՝ 3.225 ընտանիքով⁸⁷:

⁸⁰ Karayan S. Y., Armenians in Ottoman Turkey, 1914, A Geographic Depographic Gazetter, London, 2018, էջ 76:

⁸¹ Սասունի Կ., Տաւկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918), Տաւկահայոց գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 68, 75:

⁸² Bryce V., The Treatment of Armenians in the Ottoman empire, 1915–16, London, 1916, էջ 206:

⁸³ Ն. Օգանովսկին ռուսական 4-րդ կորպուսի ղեկավարն էր: Նրա ղեկավարութեամբ տեղի ունեցաւ Բուլանըք-Մանազկերտի գրաւումը 1915ին: Տե՛ս Սասունի Կ., Տաւկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918), էջ 67:

⁸⁴ Oganovski N., *The Ravages of the Turks*, The New Armenia. A Semi-Monthly Periodical, v. 8, June 15, 1916 5–16), New York, 1916, 220–222, էջ 221:

⁸⁵ Ներսիսյան Մ., Նյութեր հայկական կոտորածների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1965 թ., էջ 85–100, էջ 88:

⁸⁶ Նոյն տեղում:

⁸⁷ Karajian S. J., *An Inquiry Into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915–1918*, The Armenian Review, Winter, 1972, Vol. XXV, No. 4–100, The Hairenik Association, Boston, 1972, էջ 11:

Եթէ առաջնորդուենք Մ. Խրիմեանին ուղղուած նամակներում նշուած ընտանիքի անդամների ցուցանիշներով, ապա կտեսնենք, որ ընտանիքներում հաշվում էր 10, 9, 7, 6 շունչ⁸⁸: Անշուշտ, դժուար է միջին թիվը ամենայն ճշգրտութեամբ գնահատել: Որոշ հեղինակներ գիւղական գոտիներում միջին թիւ են հաշվում 8 շունչը, իսկ քաղաքային գոտիներում՝ 6 շունչը, ոմանք այս ցուցանիշը հասցնում են մինչեւ 20 շունչ՝ որպէս աւանդական ընտանիքի օրինակ: Հետազոտողների մեծ մասի կարծիքով գիւղական համայնքների համար ընդունելի թիւ կարելի է համար 8 շունչը⁸⁹:

Առաջնորդուելով մէկ ընտանիքի մէջ 8 շունչ քանակով, Ն. Օգանովսկու նշած ընտանիքների ընդհանուր թիւը բազմապատկելով ծով, կստանանք 25.080 մարդ, եթէ միջին ցուցանիշը վերցնենք 6 շունչ՝ կստանանք 18.810 մարդ, որը մօտաւորապէս Թէոդիկի բաղդատական վիճակագրութեան մէջ նշուած բնակչութեան թիւն է⁹⁰:

Ներկայացուած թուերի անհամապատասխանութիւնը, կարծում ենք՝ պայմանաւորուած է ե՛լ Օսմանեան մարդահամարի տուեալների անճշտութեամբ, ե՛լ նոյնանուն բնակավայրերի առկայութեամբ, որից խուսափելու համար սոյն ուսումնասիրութեան շրջանակներում արտագրել ենք բացառապէս այն նամակները, որոնցում նշուած է եղել ե՛ւ գաւառը, ե՛ւ գիւղանունը:

Քրդական ցեղախմբերի յաջորդական ներխուժումների, Օսմանեան կառավարութեան հակահայկական քաղաքականութեան հետեւանքով Բուլանըք գաւառի ժողովրդագրութեան պատկերը ենթարկուեց հիմնայատակ փոփոխութեան:

1915–1916 թթ. հայութեան հանդէպ իրադործուեց դարի մեծագոյն ոճիրը՝ հայոց մեծ եղեռնը, որի հետեւանքով ոչ միայն Բուլանըք գաւառը, այլեւ Արեւմտեան Հայաստանի բնակչութիւնն ամբողջութեամբ ենթարկուելով ցեղասպանութեան՝ հայաթափուեց, սպանուեց, հայրենազրկուեց եւ ունեզրկուեց:

⁸⁸ Տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 596, թղթ. 102, վաւ. 712, թղթ. 102, վաւ. 743:

⁸⁹ Այս մասին տարբեր հեղինակների հաշումներին ծանօթացիր Karayan S. Y., Armenians in Ottoman Turkey, էջ 198; Մարտիրոսեան Տ., Պոլսանրիսի քաղաք-ժողովրդագրութիւն, https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/bitlispagheshvilayet/kazaofbulanik/local_e/kazaofbulanikdemography.html

⁹⁰ Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյց, 1922, էջ 262:

1. 3. ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱԽԱՌԸ 1915–1916 թթ.

ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Այս գրքում զետեղուած նամակներից իւրաքանչիւրը համիդեան կոտորածների, հարստահարութեան, հայաթափման, հայրենազրկման, դաւանափոխութեան, մարդկանց առեւանգման, սպանութիւնների մասին հաւաստի վկայութիւններ են՝ Հայոց ցեղասպանութեան վաւերագրական պատմութեան մի մասը:

Այս նամակները գրի չեն առնուել պատմաբանների կամ ճանապարհորդների, առաւել եւս՝ ռազմական հետախոյզների կողմից՝ իբրեւ բնակավայրի մասին տեղեկութիւնների հաւաքման ու մշակման նիւթ, որպիսին է օրինակ Վ. Մայեսկոլ հրատարակած ռուսումնասիրութիւնը կամ Ֆր. Ֆրիցի ռազմական քարտէզը:

Սրանք պարզ նամակներ են, որոնցում ջարդից մազապուրծ փախուստի դիմած մայրը հաց կամ հագուստ է խնդրում՝ ներկայացնելով իր սոսկալի վիճակը: Այս նամակներին հենուելով պարզորոշ տեսնում ենք Հայոց ցեղասպանութեան⁹¹, հայրենազրկման ծրագրի մանրամասները, իրագործման փուլերն ու մեթոդները, որոնք սկսուում են մարդու՝ հայրենիքում ապրելու իրաւունքի զրկումից, անչափահասների առեւանգումից, կանանց անարգելու եւ այն անպատիժ թողնելու դիտաւորութիւնից, հայութեանը լլկելու եւ բանտերում խեղդամահ անելու պետական գործելաոճից⁹²:

Բասենի ու Մշոյ դաշտերի միջեւ ընկած լինելու պատճառով Առաջին աշխարհամարտի եւ Հայոց ցեղասպանութեան տարիներին Սասունից, Բիթլիսից, Քղիից, Դերջանից Կովկաս փախչողների ճանապարհն անցնում էր Բուլանք գաւառի միջով: Այս հանգամանքով պայմանաւորուած օսմանեան իշխանութիւնների կողմից գաւառը ենթարկուել է առաւել խիստ հսկողութեան⁹³, իսկ ականատեսների վկայմամբ՝ 1915 թ. Հայոց մեծ եղեռնի ընթացքում Արեւմտեան Հայաստանի գաւառներից ամենից շատ տուժել է

⁹¹ Բուլանք գաւառի կոտորածների մասին տե՛ս «Համբարաբեր», 1916 թ.; Սահակ Մովսէսեան, Պոլսանրդի կոտորածն ու գաղթը, «Աշխատանք», 1916 թ., հմր. 26, էջ 1–2: Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 345–360: Սասունի Կ., Տանկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918)...

⁹² Özbek N., The Politics of Taxation and the "Armenian Question" during the Late Ottoman Empire, 1876–1908, Comparative Studies in Society and History, October 2012, Vol. 54, No. 4, pp. 770–797, էջ 785:

⁹³ Աւարպետ, Բուլանքի, հմր. 213:

յատկապէս Բուլանքը՝ Մանազկերտի շրջանով հանդերձ⁹⁴։ Բիթլիսը, Մուշը, Սասունն ու Հաքքարիի հայութիւնը ենթարկուեց բարբարոս կոտորածի⁹⁵։

1914ի յուլիս եւ օգոստոս ամիսներին հաւաքուած տեղական համիդիէ գնդերը ուղարկուած են Ալաշկերտի ու Բայազէտի սահմանագլուխ։ Զուգահեռաբար քրդերից կազմաւորուած են չեթեական խմբեր, որոնց միանում են մլանցի աշիրէթի ձիաւոր գնդերը՝ Իբրահիմ փաշայի առաջնորդութեամբ։

1914 թ. օգոստոսի 8ին ընդունուած «Թէքալիֆ-ի հարբիյէ»՝ պատերազմի համար գանձուող տուրքի մասին օրէնքի գործադրման պատրուակով, Բուլանքից նախ հաւաքուած են սայլեր ու եզներ։ Հաւաքելուց անմիջապէս յետոյ անասունների ականջները, վիզն ու սայլերը շիկացած երկաթով դրոշմուած էին (Damgalamak)։ Եթէ դրոշմուած էր, ուրեմն այն արդէն պետութեան սեփականութիւնն էր⁹⁶։

1914 թ. նոյեմբեր 11ին, երբ Օսմանեան Թուրքիան մասնակից դարձաւ Առաջին աշխարհամարտին, Բուլանքը վերածուած է Խնուսի, Մուշի, Խլաթի ու Արծկէի բանակատեղիի (ordugah), ուստի կառավարութեան հրամանով տուն, ախոռ ու եկեղեցի դառնում են պահեստանոցներ (ambar)։ Դրան յաջորդում են ձիերի, ջորիների, ոչխարների եւ այլ ապրանքների հաւաքումը, ապա կրկնապատկուած է բերքի տասանորդի հարկը եւս⁹⁷։

1914–1915 թ. ձմռանը Բուլանքը վերածուել էր մի քառսի, իսկ Կոփը, որ խիտ հայկական բնակչութիւն ունէր, դժոխային վիճակում էր յայտնուել։ Բացի եղած արհաւիրքներից, բնակիչները ստիպուած էին կերակրել ու պատսպարան տալ Վանից, Խլաթից, Ալջաւազից փոխադրուող կենդանիների եւ պաշարներով բարձուած մարդկանց քարաւանները։ Այս ամէնին աւելացաւ նաեւ բազմաբնոյթ այս աղտեղութիւններից ծնունդ առած բժաւոր տիֆը⁹⁸։

Ինչպէս յայտնի է, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ սկսուել էր իսլամ բնակչութեան տեղաշարժ Բալկաններից դէպի

⁹⁴ Պոլանքցի Կարապետ, Բուլանք-Մանազկերտը մոռացուած, 1916 թ., «Համբաւաբեր», հմր. 26, էջ 816–817։

⁹⁵ An Anthology of historical writings on the Armenian massacres of 1915 / [by] Viscount James Bryce, Arnold J. Toynbee, Herbert Adams Gibbons, Ambassador Henry Morgenthau [and] Fridtjof Nansen, Beirut, 1971, էջ 63; տե՛ս նաեւ Bryce V., The Treatment, 1916, էջ 646։

⁹⁶ Մովսէսեան Ս., Տաճկահայեր, Բուլանքի կոտորածը, «Համբաւաբեր», հմր. 12, էջ 378։

⁹⁷ Նոյն տեղում։

⁹⁸ Մովսէսեան Ս., «Համբաւաբեր», հմր. 12, էջ 378։

Օսմանեան Թուրքիա, որոնց, «Գաղթականութեան բնակեցման եւ պարէնաւորման տնօրէնութիւնը» (İskân-ı Aşâir ve Muhâcirîn Müdirîyeti), տեղաւորում էր յատկապէս բուն հայկական գիւղերում: Այս մօտեցումը շարունակուեց եւ իր լրումին հասաւ Հայոց ցեղասպանութեան տարիներին:

1915 թ., երբ Սարիղամիշի ճակատամարտից յետոյ թուրքական բանակը ջախջախիչ պարտութիւն կրեց, Ալաշկերտի իսլամ բնակչութիւնը փախուստի դիմեց դէպի Մանազկերտ եւ Բուլանըք: Ռուսական զօրքի առաջխաղացման վտանգով պայմանաւորուած իսլամ գաղթականութեանը տեղաւորեցին Հէնց Բուլանըքում⁹⁹:

Նոյն թուականի ապրիլի 27-ից սկսուեցին Բուլանըքի կոտորածները: Կոփ եւ Լիզ հայաշատ ավանների հայ բնակչութեանը սրի քաշելով՝ թուրքական հրոսակներն անցան Խօշգեալդի: Ասադ բէյի գլխաւորութեամբ ջբրանցի¹⁰⁰ ցեղապետերը նախ սրի են քաշում գիւղի զոյգ քահանաներին՝ Տէր Յովհաննէս քհնյ. Մանուկեանին եւ Տէր Ղազար քհնյ. Տէր Մելքիսեդեկեանին, ոչս Սեդօյին, ապա ուսեալ ու մտաւորական մարդկանց՝ շուրջ վաթսուն հոգու¹⁰¹:

Խօշգեալդի գիւղի կոտորածներին յաջորդում են Առնջիկ, Ագրակ, Կողակ, Գէաբոլան գիւղերի ջարդերը, որոնք կազմակերպում է շէյխ Քամելի որդի Մաթօն, իսկ շէյխ Մասումն իրականացնում է Մօլահքենլի եւ Ատկոնի հայութեան սպանդը¹⁰²:

Ինչպէս նկատում ենք կազմակերպուած այս կոտորածների մէջ իրենց մեծ դերակատարումն ունեցան հասնանցի, ապա նաեւ ցեղերը, որոնք դեռեւս 1880-ականներից հարստահարում ու հալածում էին Խնուսի, Բուլանըքի եւ Մշոյ դաշտի հայ բնակչութեանն՝ ստիպելով նրանց հեռանալ հայրենի երկրից¹⁰³:

Աբրեցիների կոտորածը կազմակերպեց շէյխ Սլէն՝ Ներքին Բուլանըքին սահմանակից Դեմիրճի գիւղից, եւ խիզանցի շէյխ Լիաէդդին

⁹⁹ Մովսէսեան Ս., «Համբաւաբեր», հմր. 13, էջ 403:

¹⁰⁰ Քրդական ցեղերից էին հասանանցիներն ու ջբրանցիները (հասանան, հասանանլը, հասանանլը, ջիբրան, ջիբրանլը): Այս ցեղերը բաժանուով էին երկու դասակարգի՝ քօռն եւ կոսմանց (ազատ եւ անազատ): Մանրամասն տե՛ս Մովսէսեան Ս., «Համբաւաբեր», հմր. 12, էջ 377:

¹⁰¹ Նոյն տեղում:

¹⁰² Նոյն տեղում:

¹⁰³ Աղանեանց Գիւս Բենյ., Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԳ., «Հարստահարութիւններ Տաճկահայաստանում» (Վաւերագրեր 1801–1888), Թիֆլիս, 1915, էջ 102–103:

Հազարաթը¹⁰⁴ ռեզիֆի (պահեստային զինուորների հարկւրապետ) պաշտօնեան, ոստիկանապետ Շիւքրիի եւ բաշ-չաւուշ Մեհմէդի հետ միասին¹⁰⁵:

Բուլանըքահայուլթեան կոտորածը տեղի ունեցաւ 1915ի մայիս եւ յունիս ամիսներին՝ Հիլմի բեյի, Օսմանեան 3 ռազմական զօրաբաժինների եւ ժանդարմական հրոսակախմբերի, հաջի Մուսայ բեյի, չեյի Հազերթի ու ժերն օգտագործելով¹⁰⁶:

1916ին ռուսական բանակի առաջխաղացմամբ պայմանաւորուած, ողջ մնացած բուլանըքցիները, կարծելով թէ այլեւս աւարտուած է արհաւիրքը, որոշում են վերադառնալ հայրենիք: Ճիշտ այնպէս, ինչպէս վարուեցին 1894–95ի համիդեան կոտորածներից յետոյ, յուսալով, որ կվերադառնան իրենց հողն ու ջրին ու կապրեն իրենց օջախներում:

Դժուարութեամբ վերադարձած բուլանըքցիներին մեծ հիասթափութիւն էր սպասում, քանի որ իրենց տներն ու այգիները գտան դրացի քրդերի ու թուրքերի կողմից թալանուած: Գիւղերը լիքն էին հայդարի, ջնդու եւ միւս աչիրէթներով: Զեռնակի, Խոյլիբաբայի լեռնաշղթաները մինչեւ Կումկում, Մշոյ դաշտից մինչեւ Խնուս լցուած էին ջրբրանցի ցեղապետերով, որոնք մի քանի հազարի հասնող զինուած քրդերով սարսափ էին տարածում հայերի մէջ¹⁰⁷:

1917ի կէսերին Բուլանըքի շուրջ մէկ տասնեակ գիւղերում վերահաստատուած հայերի թիւը հասնում էր 2.000ի, որոնց հիմնական մասը բնակւում էր Մանազկերտում եւ Դութաղում¹⁰⁸:

1918ի փետրուարից թուրքական զօրքերի հակայարձակման պատճառով ցեղասպանութիւնը վերապրած մի քանի հայ ընտանիքներ վերջնականապէս թողեցին իրենց բնօրրանը՝ հաստատուելով Արեւելեան Հայաստանի տարբեր շրջաններում¹⁰⁹:

Համաձայն 1916ին հրապարակուած վիճակագրութեան՝ ցեղասպանութեան ընթացքում զոհուած բուլանըքցիների քանակը կազմում է 7.500 մարդ¹¹⁰:

¹⁰⁴ Մովսէսեան Ս., «Համբաւաբեր», հմր. 12, էջ 377:

¹⁰⁵ Մովսէսեան Ս., «Համբաւաբեր», հմր. 13, էջ 404:

¹⁰⁶ Bryce V., The Treatment 1916, էջ 85, 92:

¹⁰⁷ Պուլանըքցի Կարապետ, «Համբաւաբեր», հմր. 26, էջ 816–817:

¹⁰⁸ Բադալյան Գ., նշ. աշխ., էջ VII:

¹⁰⁹ Նոյն տեղում:

¹¹⁰ Համառօտ տեսութիւն գաղթականութեան ծագման, արդի կացութեան, «Համբաւաբեր», հմր. 2, Յունուարի 3, 1916 թ., էջ 46:

Բուլանըքահայութեան եղբայրական գերեզմանը համարուում է Լիզ եւ Ատկոն գիւղերի միջակայքի Տապանչոլ կոչուած դաշտը¹¹¹:

Գաւառի ցեղասպանութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ ցեղախմբերի կողմից գործադրուել է քրդացման քաղաքականութիւն եւս, որի համաձայն քուրդ ցեղապետերն ու շէյխերը քրդացող հայերին չէին սպանում¹¹²:

1916ի «Համբաւաբեր» թերթի Յաւելուածի 2–50-րդ համարներում տեղադրուած են փախստական որբ երեխաների ցուցակները, որոնց տեղաւորել են տարբեր որբանոցներում: Այս ցուցակների մէջ մի քանի տասնեակ որբեր էլ բուլանըքցիներ են՝ 3-ից մինչեւ 15 տարեկան: Դրանք էջմիածնի «Եղբայրական օգնութեան», Ղարաքիլիսայի «Թայիբեան», Ալէքսանդրապոլի «Գաղթականական Միացեալ-որբանոցների», «Մոսկուայի Հայկական կոմիտէի» եւ այլ որբանոցներում հաստատուած բուլանըքցիներն են: Այստեղ ծուարած որբերը ո՞վ գիտի, թէ կեանքի ի՞նչ դառնաղէտ օրեր ապրեցին, ո՞վ ողջ մնաց ու ո՞վ յաւէտ փակեց իր մանկական աչքերը՝ մայրական սիրոյ կարօտով...

Իբրեւ սրտի հովացում՝ Բուլանըքի կոտորածների ականատեսը գրում է. «Ներքին բուլանըքցիները ոչխարի նման չը մորթուեցին, նրանք դիմադրեցին իրանց դահիճներին հնարաւորից տասն անգամ աւելի ոյժով, բայց չը կարողացան տապալել իրանց հալածողներին...»¹¹³:

¹¹¹ Մովսէսեան Ս., Պոլանըգի կոտորածն ու գաղթը, «Աշխատանք», 1916 թ., հմր. 26, էջ 1–2:

¹¹² Ատրպետ, Բուլանըկ, հմր. 214:

¹¹³ Նոյն տեղում:

1. 4. ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱԻԱՌԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԻ ԱՂԻՒՍԱԿՆԵՐ՝ ՔԱՂՈՒԱԾ ՏԱՐԲԵՐ ԱՂԲԻՐՆԵՐԻՑ

19-րդ դարի հայ բանասէր, աղբիւրագէտ, ճանապարհորդ Ներսէս Սարգիսեանը (1800–1866) Բուլանըք գաւառի տեղագրութեան մասին հետեւեալ նկարագրութիւնն է տալիս. «Մի յերեւելի գիւղօրէիցն է Կոբ, յորոց անուն կոչի վերին մասնն՝ Կոբայ Պուլանուլս. եւ առ նմա է մենաստանն սրբոյ ծերոյն Դանիէլի, կոչեցեալ Կոբայ վանք եւ գերեզման նորա ի մէջ եկեղեցւոցն: Դիրք վանացն ի բարձու կայ եւ հայի ի վերայ դաշտավայրին Մանազկերտի եւ Կոբայ միանգամայն, զի չիք որոշիչ սահման ի լերանց կամ ի բլրոց կամ գետոյ իրիք ընդ երկոսին գաւառսդ Մանազկերտ եւ Կոբ, այլ ըստ արդի բաժանման ի գիւղօրէից սահման հատանի, յորոց մասն մի Մանազկերտի են սեփականեալ եւ մասն մի Կոբայ: Այսպիսի բաժանմունք եւ յայլ գաւառս տեսանին սահմանակիցս իրերաց, որպէս Վերնոյն Բասենոյ եւ Ներքին Բասենոյ, Խուլթայ եւ Բոնաշինոյ, Շիրակայ եւ Կարուց, որ թուին առ նախնեօք երկոցուն մի գաւառ համարել: Յաղագս մարմնոյ Ս. Դանիէլի ասի առ պատմագիրս՝ թաղեալ ի Հացեաց Դրախտի¹¹⁴ եւ տեղիդ այդ է ի դաշտին Մշոյ, առ սուրբ Սահակ գիւղիւ, ըստ նոցին իսկ պատմութեանց: Սակայն անդ չիք գերեզման եւ ոչ ուխտատեղի ինչ յանուն Դանիէլի, թերեւս յետ ժամանակաց անտի փոխադրեալ իցէ ի Կոբայ վանսն»¹¹⁵:

Այսպիսով նկատելի է, որ Բուլանըք գաւառի մէջ մտնող գիւղերի հարցում կան բաւականին հակասութիւններ: Այս բաժնում ներկայացնելու ենք տարբեր աղբիւրներից քաղուած Բուլանըք գաւառի գիւղերի ցանկերը:

¹¹⁴ Հացեաց Դրախտ կոչուած վայրի տեղագրութեան մասին տե՛ս նաեւ ԻճԵՒՆԵԱՆ Ղ., Ստորագրութիւն, 1822, էջ 96:

¹¹⁵ Հ. ՆԵՐՍԷԱ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեղագրութիւնի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 223:

Բուլանըք գաւառի գիւղերն՝ ըստ Վ. Մայեւսկոյ¹¹⁶

Բուլանըք գաւառի գիւղերն առանց գիւղախմբերի բաժանման					
N	Գիւղանուն		ընդհանուր	քուրդտուն	հայտուն
1	Копь	Կոփ	420	70 (թուրք)	350
2	Енджалу	Եօնջալու	180	—	180
3	Ширваншейх	Շիրվանշէյխ	130	—	130
4	Хамзашейх	Համզաշէյխ	110	—	110
5	Караагылъ	Քարաղըլ	115	10 (ղլբրանցի)	105
6	Тегуть	Թէղուտ	130	—	130
7	Одынчоръ	Եօթնջուր	110	3	107
8	Мемани	Մեմանի	35	35	—
9	Мехикъ	Մեխիկ	25	25	—
10	Битлу	Բիթլու	10	10	—
11	Мечетлю	Մէջիթլու	60	5 (հասնանցի)	55
12	Мрбаръ	Մերպար	60	—	60
13	Плуръ	Բլուր	80	15	65
14	Кеярлю	Քարառլու	80	—	80
15	Лотаръ	Լաթար	166	90	76

¹¹⁶ **Маевский В. Т.**, Военно-статистическое..., Статистическія данныя о населеніи и нѣкоторыя свѣдѣнія объ отдѣльныхъ казахъ и нахіяхъ обоихъ вилаетовъ, էջ 119–121:

16	Татарказы ¹¹⁷	Թաթարքազը	30	30	—
17	Кирхалю	Քիրխալու	20	20	—
18	Согутлы	Սօղլիթլի	48	48	—
19	Пирань Кей	Պիրան քյոյ ¹¹⁸	60	15	45
20	Шехягубь	Շէխաղուբ	114	—	114
21	Харабашерь	Խարաբաշեհիր	40	10	30
22	Хачлу	Խաչլու	50	48	2
23	Трдобь	Տրտոփ	50	50 (Հասնանցի)	—
24	Ванкцорь	Վանքձոր	15	15	—
25	Экмань	Եկմալ	12	—	12
26	Лизь	Լիզ	190	10	180
27	Хошгялды	Հոշգեալդի	90	10	80
28	Шехвали	Շէխվալի	40	30	10
29	Кочакь	Քոչաք	80	40 (Չըբրանցի)	40
30	Пркашень	Փրկաշէն	70	20	50
31	Отгонкь	Յատկոն	70	15	55
32	Абри	Աբրի	80	80	—
33	Пионкь	Փիոնկ	100	50	50
34	Молакенть	ՄոլաՀքանդ	70	35	35
35	Абдаль-базидь	Աբդալ-Բազիդ	35	35	—
36	Ари	Արի	9	9	—

¹¹⁷ Վ. Մայեսկու կարծիքով այն ընկած է Լաքար գիւղի մօտակայքում, տե՛ս Маевский В. Т., Военно-статистическое..., էջ 119.

¹¹⁸ Հաւանաբար խօսքը Վիրանէտլին է վերաբերում:

37	Нейнуць	Նեյնուկ	29	20	—
38	Алагезь	Ալգոզ/Ալագեզ	25	25	—
39	Самаршейх	Սամարշէյխ	60	60	—
40	Молла карыць	Մոլա Քարիք	30	30	—
41	Верн. Далиць	Վերին Դալիք	20	20	—
42	Нижн. Далиць	Ներքին Դալիք	25	25	—
43	Акраць	Ագրակ	40	15 (Չըբրանցի)	25
44	Аликулакь	Ալիքուլաք	10	10	—
45	Шарбахать	Շարբախաթ	40	40	—
46	Аринджикь	Առնջիկ	42	40	2
47	Молладавудь	Մոլլադաւուդ	40	40	—
48	Гассангорань	Հասանգորան	50	50 (0ս)	—
49	Габелань	Գէաբոլան	30	10	20
50	Котанлу	Գոտթանլը	30	10	20
51	Молла газь	Մոլլա Գազ	25	25	—
52	Копу	Կոպու	50	50	—
	Ընդհանուր՝ 3.521 տուն, որից 2.218ը՝ հայոց տներն են:				

Բուլանըք գաւառի գիւղերն՝ ըստ Թէոդիկի¹¹⁹

N	Գիւղանուն	Հայ տուն
1	Մէջէթլու/Մաճաղլու	130
2	Միթիպար	80
3	Բլուր	40
4	Լաթար	90
5	Ալիպօճան	4
6	Քէքէրլու	190
7	Բիրան	64
8	Խաչլու ¹²⁰	2
9	Խարապա Շէհիր	80
10	Շէյխ-Եաղուպ	200
11	Եօնճալու	260
12	Թեղուտ	160
13	Ոտնջուր	190
14	Շէրվան-Շէյխ	150
15	Մալա-Մստաֆա	40

N	Գիւղանուն	Հայ տուն
1	Համգա-Շէյխ	80
2	Գարաղլ	160
3	Լիզ	250
4	Կեապօյներ	60
5	Ապրի	50
6	Փեօնք	70
7	Բրզաշէն	60
8	Յատկոն	120
9	Շէյխ-Վալի	2
10	Խօշ-Կէլտի	180
11	Մօլլաքէնտ	30
12	Կողակ	120
13	Առինճիկ	2
14	Ագրակ	50
15	Բոստաքանդ	120

¹¹⁹ Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին, իւմք.՝ Ա. Գալանեան, Նիւ Եորք, 1985, էջ 99–101:

¹²⁰ «Համանուն լճակի հարաւային ափին վրայ՝ նախապէս հայաշատ գիւղ, «Սուրբ Կարապետ» վանքով, որուն խաչքարերով իր պալատը կերտած է տեղւոյն Քիւրտ աղան», Թէոդիկ, Գողգոթա, էջ 99–101:

*Բուլանքը գաւառի գիւղերն ըստ Հայաստանի ազգային
արխիւի վաւերագրերի¹²¹*

<i>Վերին Բուլանքը</i>				
N	Գիւղանուն	Տուն	Հայ	Քուրդ
1	Լաթար	220	70	150
2	Քաքառլու	200	196	4
3	Փիրան/Փերու ¹²²	80	50	30
4	Խաչլու	40	4	36
5	Խարաչահեր	70	55	15
6	Կոփ	600	450	20
7	Եոնճալու	300	300	130
8	Բլուր	120	40	8
9	Մերբար	43	40	3
10	Մէճետլու	150	145	5
11	Ոտնչոր	150	150	—
12	Թեղուտ	160	160	—
13	Շերվանչէլ	140	140	—
14	Համզաշէլիս	200	197	3 տուն չերքէլ
15	Ղարաղլլ	210	210	—
16	Շէյխեաղուբ	200	200	—

¹²¹ Վերապրածների վկայություններ... էջ 214–219:

¹²² Այս տեղանունը հանդիպում է նաև Փերու ձեռով, տե՛ս «Աշխատանք», 1916 թ., հմր. 34, էջ 4:

* * *

Ներքին Բույժանոց				
N	Գիւղանուն	Տուն	Հայ	Քուրդ
17	Լիզ	350	345	5
18	Ապրէ	200	50	150
19	Գէաբուլան	60	20	40
20	Մոլլաբէնդ	100	30	70
21	Փինք	80	40	40
22	Հատկօն	80	65	15
23	Փրկաշէն	70	68	2
24	Խոշկէլտի	150	147	3
25	Կողակ	300	60	246
26	Աքրակ	60	50	10

Բուլանըք գաւառի հայաբնակ գիւղերն ըստ Ատրպետի (1915)¹²³

Վերին Բուլանըք		
N	Գիւղանուն	Տուն Հայ
1	Խարաղըլ	191
2	Համգաշէխ	111
3	Կոփ	600
4	Շիրվանշէխ	200
5	Եօնջալու	192
6	Թէղուտ	194
7	Ոտնչոր	151
8	Ագրակ	35
9	Կողակ	91
10	Շէխվալի	35
11	Կեաբօլան	18

Ներքին Բուլանըք		
N	Գիւղանուն	Տուն Հայ
12	Մաջիդու	95
13	Դէրըք	150
14	Լաթար	36
15	Բլուր	38
16	Նորադին	150
17	Խասմիկ	100
18	Դուզնուկ	48
19	Խաղօղլի	45
20	Շէխեաղուք	200
21	Փիրան	35
22	Խարաբա-Ղասըմիկ	90
23	Քեաֆեարլու	207
24	Խան օղլի	38
25	Տօլախ Բաշ	68
26	Մօլա-Բաղ	75
27	Խարախայա	110

¹²³ Ատրպետ, Բուլանըք, հմր. 213:

**Բուլանըք գաւառի գիւղերն ըստ Մուշի առաջնորդարանի
քարտուղար Նազարէթ Մարտիրոսեանի (1916)¹²⁴**

Վերին Բուլանըք						
N	Գիւղանուն	Հայ տուն	Բնակիչ	Կովկասում ապաստանողներ	Քուրդ տուն	Քուրդ բնակիչ
1	Գարաղէշ	186	1372	372	14	80
2	Համզաշէխ	179	1264	229	15	93
3	Շերվանշէխ	168	1141	531	2	9
4	Թէղուտ	180	1186	—	33	197
5	Ունչոր	170	1044	—	12	57
6	Եոնճալու	225	1650	—	12	100
7	Կոպ	543	4513	—	156	757
8	Մէճիղլու	135	950	—	—	—
9	Միրիբար	50	472	—	—	—
10	Շեխաղուպ	185	1200	—	6	33
11	Քէքէռլու	215	1506	—	11	52
12	Լաթար	100	675	—	227	1104
13	Բլուր	27	175	—	20	107
14	Փիւրան	45	341	—	28	149
15	Խարաբաշէհ	77	606	—	12	91
16	Ս. Դանիէլ վանք	1	13	—	—	—

¹²⁴ Մարտիրոսեան Ն., Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը, Վան-Տոպ, 1916, հմր. 14, էջ 7:

* * *

<i>Ներքին Բույանքը</i>						
N	Գիւղանուն	Հայ տուն	Բնակիչ	Կովկասում ապաստանողներ	Քուրդ տուն	Բնակիչ
17	Կողակ	48	471	2	180	1430
18	Խոշկեւտի	170	1428	68	40	280
19	Ագրակ	40	283	—	22	140
20	Կեաբօլան	35	265	27	75	416
21	Մալախբերան	45	415	—	130	687
22	Շեխվուլի	5	43	—	75	469
23	Բրգաշէն	80	593	43	25	133
24	Յատկոն	109	835	17	24	113
25	Մալաքեանտ	37	253	7	65	361
26	Փեօնք	55	527	36	60	484
27	Ապրի	45	278	18	140	1056
28	Լիզ	275	1768	193	35	205

**Բուլանըք գաւառի գիւղերն ըստ
Վարդան Պետոյեանի կազմած ցանկի¹²⁵**

N	Գիւղանուն	Հայ տուն	չունչ	Իսլամ	չունչ
1	Կողակ	55	417	160	1430
2	Խոչգյալդի	170	1428	48	772
3	Փիոնք	66	572	60	444
4	Ագրակ	40	283	12	70
5	Բրգաչեն	74	561	25	78
6	Աբրի	35	210	140	650
7	Լիլ	244	1698	30	205
8	Ատկոնք	109	720	24	120
9	Գեբոլան	29	256	83	436
10	Մոլաքենդ	70	457	130	667
11	Ոտնջուր	191	1295	12	57
12	Թեղուտ/Նեղուտ	165	1168	93	677
13	Ղարաղըլ	165	1315	4	60
14	Յոնջալու	263	1560	12	100
15	Կոփ	650	5106	75	390
16	Մեջիդլու	120	850	—	—
17	Մերբար	50	772	—	—
18	Քեքերլու	189	1506	11	42

¹²⁵ Պետոյան Վ., Սասունի եւ Տարոնի պատմաաշխարհագրական տեղագրությունը, Երևան, 2005, էջ 94–95:

19	Փիրան	64	446	26	149
20	Շեխաղուբ	200	1200	—	—
21	Խարաբաչեհիր	77	606	10	95
22	Ս. Դանիել վանք (Կարմիր)	1	10	—	
23	Նազիկ գիւղ (լճին մօտ)				
24	Խաչի լիճ				
25	Արի				
26	Իհրան				
27	Մեխիկ				
28	Կանի Սիրի				
29	Հերս				
30	Սիւկան				
31	Կարկառուտ				
32	Հաջի բեկ (ներքին)				
33	Զիրինգ				
34	Բայրաման				
35	Բեջան				
36	Կատանլի				
37	Սերկիսան				
38	Ակալինար (Սպիտակ Աղբյուր)				
39	Ալի գետիկ				
40	Դերըկ				
41	Կարմունջ				
42	Միսկ				
43	Սյուկուրտ				
44	Դատվան				

Բուլանքը գաւառի գիւղերն ըստ էլեկտրոնային աղբիւրների

Սոյն ցանկը քաղել ենք Թուրքական էլեկտրոնային աղբիւրներից: Նիւթը տեղադրուել էր 2010ին, որտեղ առաջարկոււմ էր վերականգնել տեղանունների հին տարբերակները¹²⁶:

N	Գիւղի հին անունը	Գիւղի հին անունը լատինատառ	Գիւղի նոր անունը	Գիւղի նոր անունը լատինատառ
1	Աբրի	Abri	Էսենլիք	Esenlik
2	Ատկոն	Adgon	Գիւնբաթմազ	Günbatmaz
3	Ակրակ	Akrak	Դեմիրքափը	Demirkapı
4	Ալիբոջան	Alibocan	Չայգելի	Çaygeldi
5	Ալիբոնջու	Aliboncu	Էսքիյուլու	Eskiyolu
6	Ալիքիւլեք	Aliküllek	Մեշէի	Meşeiçi
7	Առնչիկ	Arıncık	Բոսթանջըլար	Bostancılar
8	Բիթլու	Bitlu	Գեոփրիւլու	Köprüyolu
9	Դալիքեր	Dalikler	Աշաղը	Aşağı
10	Գէաբոլան	Gebolan	Ջանքուրթարան	Cankurtaran
11	Խաչլու	Haçlu	Գյոլյանը	Gölyanı
12	Համզաշէյխ	Hamzaşeyh	Սարըփընար	Sarıpınar
13	Հանի ըսպը	Hanisipi	Բիւնգիւլդեք	Büngüldek
14	Խարաբաշէհիր	Harabeşehir	Էօրէնքենթ	Örenkent
15	Հասանգորան	Hasangöran	Չաթաքլը	Çataklı
16	Հըրգըզ	Hirgiz	Գոյունաղըլը	Koyunağılı
17	Ինդիրիս	İndiris	Սըրադերե	Sıradere
18	Քարաշափիրան	Karacaviran	Քարաշաօրէն	Karacaören
19	Քեքերլի	Kekerli	Քըրքգէօզէ	Kırkgöze
20	Կոզակ	Koğak	Դոքուզփընար	Dokuzpınar

¹²⁶ http://www.musovasi.com/haber/yaman_koylere_eski_isimle-6820.html

21	Կողո	Kogo	Օլուրդերէ	Olurdere
22	Կուշտիեան	Kuştıyan	Շեհիթթահիր	Şehittahir
23	Լաթար	Later	Էլմաքայա	Elmakaya
24	Լիզ	Liz	Էրենթեփէ	Erentepe
25	Մասալլա	Masalla	Թոքլուլար	Toklular
26	Մեմանլը	Memanlı	Սամանեոլու	Samanyolu
27	Մեմանլըմիհիգի	Memanlımihigi	Դեյիրմէնսուլու	Değirmensuyu
28	Միրբար	Mirbar	Իւչթեփէ	Üçtepe
29	Մոլլաքորիկ	Mollakorik	Աքչաարմութ	Akçaarmut
30	Մոլլամուստաֆա	Mollamustafa	Գիւնդիւզիւ	Gündüzü
31	Մուրադիբեյ	Muradibey	Եազբաշը	Yazbaşı
32	Նեյնիք	Neynik	Ուզգյորիւր	Uzgörür
33	Նիֆլիք	Niflik	Սեչմէ	Seçme
34	Օդունչուր	Odunçor	Արաքոնաք	Arakonak
35	Փիրան	Piran	Գեոզթեփէ	Göztepe
36	Փիրանմիհիգի	Piranmihigi	Քարաբուրուն	Karaburun
37	Փիյոնգ	Piyong	Յեմիշէն	Yemişen
38	Քիւլըր	Pülür	Գիւմիւշփընար	Gümüşpınar
39	Փրկաշէն	Pürkaşen	Օղլաքքայա	Oğlakkaya
40	Սեմերշէյխ	Semerşeyh	Յոքուշբաշը	Yokuşbaşı
41	Սիմօ	Simo	Քուրգանլը	Kurganlı
42	Շահբերաթ	Şahberat	Դողանչայ	Doğançay
43	Շեհիդան	Şehidan	Շէհիթփերէն	Şehitveren
44	Շէյխսեակուլը	Şeyhyakup	Գիւլլիւօվա	Göllüova
45	Շիրվանշէյխ	Şirvanşeyh	Ադըվար	Adıvar
46	Թէյդուտ	Teygut	Բալօթու	Balotu
47	Թըրչոնք	Tırçonk	Ալթընօլուք	Altınoluk
48	Տըրտոփ	Tırtop	Գիւնյուրդու	Günyurdu

ԵՐԳ՝ ՄՇԵՑՈՅ

(Մշոյ շրջակայ գիւղօրէից նկարագրութիւնը¹²⁷)

Քրդագոմն է բանի պարպար¹²⁸,
Մատաթ ըման, ըման, ըման,
Թիլն ու Բարտիկն է քրդավար,
Ապլբուհար ծեծեն զձաւար,
Երիզակը կը ծախեն տաւար,
Ընցնանք Հացիկ, ընկաւ յաւար¹²⁹,
Գանք Յօրնոց տե՛ս մարդավար,
Յեքանք¹³⁰ յառաջ, քելենք¹³¹ պրվար¹³²,
Ընցնանք Բերդակ, տե՛ս մանտր զառ,
Երթանք Նօռչէն դեռ ուռի ծառ,
Էդ Խութեցիք նախշուն մաթալ¹³³,
Կիրիրայ կուտեն Նօռչեցիք,
Ջըմեն լիզեն էդ Յօռչեցիք,
Դժոխքի ճըրագ են Գաբնեցիք,
Խուչկու¹³⁴ պռտող էդ Զրեցիք,
Կռտնի¹³⁵ ուտող էդ Կառնեցիք,

¹²⁷ Երգ Մշեցոց (Մշոյ շրջակայ գիւղօրէից նկարագրութիւն), խմբագրական, «Մասիս», Շաբաթաթերթ ազգային եւ քաղաքական, քիւ 3788, Սեպտեմբեր 21, 1885, Կ. Պոլիս, էջ 184:

¹²⁸ Թրք.՝ barbar, սափրիչ:

¹²⁹ օգնութիւն

¹³⁰ գանձ

¹³¹ քայլենք

¹³² ծառուղի

¹³³ վահան:

¹³⁴ աղբ


¹³⁵ ծեր էգ գոմէշ:

Ավզօտ յոռեր էդ Բքլցիք,
 Հօլ կը խաղան էդ Հունանցիք,
 Գուլթնի պարզօղ էդ Գբօնցիք,
 Շատ կը քֆրեն Ալիճանցիք,
 Կանկառ կուտեն էդ Աղճանցիք,
 Շատ խօրօտիկ են Սուլուխցիք,
 Շատ լաչկաւոր էդ Կուռաւցիք,
 Տէմ խոտ քաղեն էդ Ծխաւցիք,
 Պար կը խաղան էդ Աւրցիք,
 Էմ լէ զօղօ¹³⁶ Զիարացիք,
 Զիրար սիրեն էդ Խպիանցիք,
 Ճառիմէն¹³⁷ կիտեն¹³⁸ Մէշտըվցիք,
 Տերեւ կտրեն էդ Պաղլըվցիք,
 Ալուճ կուտեն էդ Բաղվըցիք,
 Աղքատ հպարտ էդ Տրմեցիք,
 Էդ Մօկունքն է Մշու մօտիկ,
 Տէրքէ վանք կը քաշեն կօտիկ,
 Ալի ճըռնան սուտ խօրօտիկ
 Էտ Սողգոմցիք թուլթնի հորտիկ:
 Նշխուն փաշայ են ՄՇԵՑԻՔ:

¹³⁶ գերազանց

¹³⁷ տուգանք

¹³⁸ տալ



Բիթլիսի քարտեզ: Պահում է Թուրքիայում, Վարչապետության
հանրապետական արխիվում (BCA): Գծագրել են Բիթլիսի Ամերիկեան
վարժարանի աշակերտները՝ 1907ին:

ԳԼՈՒԽ II


ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐԽԻԵՎ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅԱԲՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՐ

2. 1. ՄՇՈՅ ԲՈՒԼԱՆԸՔ ԳԱԻԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ԲՆՈՅԹՆ ՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

«Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի. սա յոյժ կը թաաէր լինելով՝ պէտք եղածին չափ խնամք կը տանի դպրոցի յառաջադիմութեան համար: Սուրբ Կարապետի ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչ կը կարգէ Գարեգին վրդ. Սրուանձտեանցը եւ տպարան բանալով կը հրատարակէ «Արծուիք Տարօնոյ» ամսաթերթ՝ բանասիրական, գրական եւ ժողովրդական լեզուով: Իր վանահայրութիւն կը սկսի Քրիստոսի 1862 թուականին եւ յամի 1869ին Կ. Պօլսոյ պատրիարք կընտրուի եւ Մակար կաթողիկոսի վախճանումէ յետոյ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական գահ կը բարձրանայ»¹³⁹:



¹³⁹ Լուսարարեան Կ. վրդ., Գաւազանագիրք, Յաջորդութիւն վանահարց ուխտիս Սուրբ Կարապետի Տարօնոյ, Երուսաղէմ, 1912, էջ 106–107:





Մկրտիչ Ա. Խրիմեան (1893–1907) կաթողիկոսն¹⁴⁰ աթոռակալեց Հայ ժողովրդի Համար դժնդակ մի ժամանակահատուածում: Նրա կաթողիկոսութեան շրջանը համընկաւ Աբդուլ Համիդ II սուլթանի գահակալութեան (1876–1909) հետ, որը 1894–96 թթ. կազմակերպեց արեւմտահայութեան զանգուածային ջարդեր՝ նպատակ ունենալով իր բնօրրանից Հայրենազրկելու եւ Հայաթափելու Հայաբնակ նահանգները: Մ. Խրիմեանն ականատես եղաւ 1903ի Հայ Առաքելական Եկեղեցու գոյքի բռնազրաւմանը, Հայկական դպրոցների փակմանը, 1905ի Բաքւի Հայութեան կոտորածներին...

Այդ ծանր ու օրհասական շրջանում ծերունազարդ կաթողիկոսը կանգնած էր Հայ ժողովրդի կողքին՝ իր ողջ ուժն ու կարողութիւնը ծառայեցնելով Հայութեանն ու Հայրենիքին: Հայ ժողովրդի մտաւոր զարթոնքի առաջին դէմքերից էր Մկրտիչ Խրիմեանը: Մտաւոր զարթոնքի հետ ապահովելով նաեւ քաղաքական ազատութեան զարթոնում:



ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ԿՆԻՔ

¹⁴⁰ Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի կեանքի եւ հասարակական գործունէութեան մասին տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունէությունը, Երեւան, 2008:

«Այն, որու անձին չուրջ պատահեցան այս բոլորը՝ Վանայ Այգեստաններէն մինչեւ Վաղարշապատի հնձանները, Վարազէն մինչեւ Ս. Էջմիածնի գահը՝ ուր երկու անգամ հայկանոյշ քառասուն ծաղիկներու օծումն ունեցաւ, ան Հայաստանեայց Մկրտիչն էր, ԱՐԾՈՒԱԹՈՒԶ ՀԱՅՐԻԿԸ ՀԱՅՈՅ»¹⁴¹:



Ժողովուրդը դիմաւորում է Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին:

¹⁴¹ Գարեգին եպս. Տրապիզոնի (Խաչատուրեան Գարեգին, Արեւիսկոպոս), Տարօնաշունչ, 1945, Պուլնոս Այրէս, էջ 105:



Մաշտոցեան Մատենադարանում այսօր պահուում է Խրիմեան կաթողիկոսի արխիւի մի մասը, շուրջ 8.000 միաւոր վաւերագիր:

Այս վաւերագրերը գետեղուած են 101–117 համարները կրող թղթապանակներում, ներկարուած են եւ կնքուած կաթողիկոսական կնիքով: Այս արխիւում չկան պաշտօնական գրութիւններ եւ կոնդակներ: Այստեղ ընդգրկուած են 1893–1907 թթ. ընթացքում Հայոց Հայրիկին ուղղուած գաղթականութեան դիմումները, որոնցով նրանք հաց կամ հագուստ էին խնդրում, հանգանակութեան թոյլտուութիւն՝ բանտերից իրենց հարազատներին ազատելու համար: Այս նամակները բնօրինակներ են, որոնց մի մասը կնքուած է տուել բնակավայրի ծխատէր քահանայի կնիքով: Նամակները գրուած են սեւ կամ կապոյտ թանաքով: Բովանդակութեան առումով մեծամասամբ խնդրագրեր են՝ հացի, սնունդի, հագուստի, կացարանի, բժշկուելու առնչութեամբ: Կարիքներ, որոնք առաջացել էին քուրդ շէյխերի, թուրք պաշտօնեաների, Օսմանեան կայսրութեան որդեգրած հարստահարութեան, հայաջինջ քաղաքականութեանն իբրեւ հետեւանք:

Այս նամակները, ուղղուած լինելով Հայոց Հայրիկին, չեն առաքուել յատուկ նամակատան ծառայութեան միջոցով: Այդ առումով բաժանուում են երեք մեծ խմբի.

Ա) Նամակներ՝ գրուած համիդեան կոտորածների արդիւնքում փախուստի դիմած մարդկանցից, որոնք, նամակը շարադրելու պահին գտնուել են Արեւելեան Հայաստանում, իսկ աւելի յստակ, ինչպէս նամակներում է նշուած, վանքի գոմում կամ վանքի պլանում (վանքի շրջափակում):

Բ) Նամակներ՝ գրուած այն կարօտեալ գաղթականներից, որոնք մի քանի ամսից մինչեւ առաւելագոյնը երկու տարի կաթողիկոսի յատուկ յանձնարարականով հաստատուել էին որեւէ գիւղում: Գաղթականութեան տեղաւորման գործընթացն ունէր շարունակական բնոյթ, իսկ նրանց կերակրելու, կեցութիւն եւ կացարան տրամադրելու խնդիրը, ինչպէս կարգում ենք նամակներում, կաթողիկոսի յանձնարարականով մասամբ դրւում էր տեղական համայնքների հոգածութեան վրայ: Այս կամ այն գիւղում գաղթականների կեցութեան ժամանակի լրանալու պարագայում, կամ, երբ նշուած գիւղն այլեւս անկարող էր կերակրելու, օգնելու, նեցուկ կանգնելու այդ ընտանիքին, գաղթականները ստիպուած էին լինում նորից դիմելու կաթողիկոսին:

Գ) Նամակներ, որոնց հեղինակները յատուկ հասել էին Վաղարշապատ եւ սպասում էին այն յանձնելու յարմար առիթի:

Նամակներն ունեն ձեռագրային որոշ նմանութիւններ: Կարելի է ենթադրել, որ եղել են յատուկ նամակագիրներ, որոնք գրի են առել

գաղթականների ասելիքը խիստ բառացի, այնպէս, ինչպէս ցանկացել է իր խօսքն ուղղել տուեալ անձը: Սակայն կան նաեւ բացառիկ ինքնուրոյն, գեղեցիկ, լեզուական ճոխ արտայայտչամիջոցներով ու պատկերաւոր շարադրուած գրութիւններ:

Անցնող տարիների ընթացքում մենք ձեռնարկեցինք նախ վաւերագրերն ըստ գաւառների դասդասելու եւ խմբաւորելու աշխատանքը: Մէկ խումբ կազմեց Արեւելեան կամ Ռուսահայաստանի շրջաններից գրուածները: Միւս խումբը, որ վաւերագրերի մեծամասնութիւնն էր, մաս կազմեց Արճէշ, Բալու, Բաղէշ, Բուլանք, Խարբերդ, Սուրմալու եւ միւս բոլոր հայաշատ գաւառներից գրուած նամակների խմբին:

Որպէսզի ուսումնասիրութիւնը լինէր առաւել ամբողջական եւ մանրակրկիտ, վաւերագրերի քանակով պայմանաւորուած, առանձնացրինք Բուլանք գաւառը:

Բուլանք գաւառին վերաբերող աղբիւրները, ուսումնասիրութիւններն ու սկզբնաղբիւրները բաժանուած են 3 խմբի.

Ա. Ուսումնասիրութիւններ, որոնք գրուել կամ հրատարակուել են նախքան 1915 թ. Հայոց ցեղասպանութիւնը:

Բ. 1915–1916 թթ. գրառուած նիւթեր, որոնք ցեղասպանուած հայրենիքի մասին բեկորների հաւաքման փորձեր էին՝ քաջ գիտակցելով եղած տեղեկութեան պահպանման անհրաժեշտութիւնը: Օրինակ, այս նպատակով են հաւաքուել այն վաւերագրերը, որոնք լոյս տեսան 2012ին¹⁴²:

Գ. Նոր շրջանի ուսումնասիրութիւններ, որոնցում 100 տարուայ ընթացքում ձեռք բերուած նորանոր տեղեկութիւնների լոյսի տակ փորձ է արւում ամբողջացնելու Բուլանք գաւառի բնակչութեան, եկեղեցիների, գիւղերի ցուցակները:

Ուսումնասիրելով Մկրտիչ Խրիմեանին ուղղուած նամակները եւ առանձնացնելով դրանցում եղած գիտական նիւթն ու յատկապէս ուշադրութիւն դարձնելով տեղանուններին՝ նկատեցինք, որ մինչ օրս հրապարակուած աղբիւրները բաւական հակասական են:

Այս առումով մենք ունէինք երկու մեծ խնդիր: Պատմագրական փաստը, որը հիմնուած է արդէն իսկ հրապարակուած, տպագիր աղբիւրների կամ գրականութեան վրայ, եւ տեղեկութիւններ կամ գիտելիք, որ մեզ են փոխանցում այս վաւերագրերը, այս դէպքում գաղթականութեան անտիպ նամակները, որոնք գիտական շրջանառութեան մէջ են դրւում առաջին

¹⁴² Հայոց ցեղասպանութիւնը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ. Փաստաթղթերի ժողովածու, հտ. I, II, III, կազմ.՝ Վիրաբյան Ա., Ավագյան Գ., Երևան, 2012:

անգամ: Այստեղ առկայ է գիտական նորոյթ, այն է՝ բնակավայրեր, որոնց մասին մատնանշում են տեղի բնակիչները, սակայն այդ մասին առայժմ մեզ յայտնի չէ: Գիւղեր, որտեղ ապրել է հայութիւն, սակայն տպագիր աղբիւրներում այդ մասին տեղեկութիւններ չկան:

Մինչդեռ Խրիմեան կաթողիկոսի արխիւի մէջ արձանագրուած վաւերագրերը անհերքելի գրաւոր վկայութիւններ եւ սկզբնաղբիւրներ են: Մարդիկ գրել կամ նամակ են թելադրել մատնանշելով իրենց հասցէն: Արդեօք կարո՞ղ էին սխալուել սեփական հասցէն գրելու ընթացքում:

Ինչո՞ւ ենք ուղղում այս հարցը:

Մեր առանձնացրած տեղանունների մէջ կան գիւղանուններ, որոնք տեղ չեն գտել Բուլանք գաւառին նուիրուած մասնագիտական գրականութեան մէջ: Կան գիւղանուններ, որոնք որոշ աղբիւրներում ընդգրկուած են Բուլանքի, միւսներում՝ Մանազկերտի կազմի մէջ: Այդ դէպքում ո՞րն է աւելի հաւաստի: Այն, որ գրուած է անմիջապէս տեղաբնիկի նամակո՞ւմ, այն որ գրուած է Հայոց մեծ եղեռնից 30 տարի առաջ ճանապարհորդի՞, թէ՞ Յեղասպանութեանը յաջորդող տարիների ընթացքում յիշողութիւնների հիման վրայ:

Աւելի հակուած ենք ընդունելու այն մօտեցումը, ըստ որի տեղաբնիկները աւելի ճշգրիտ պէտք է որ նշած լինէին իրենց բնակավայրը: Մեզանից հարիւր երեսուն տարի առաջ մարդիկ բանահիւսութեան հարիւրաւոր էջեր գիտէին անգիր, գիտէին նաեւ, թէ իրենց գիւղը քանի՞ ոչխար ու կով ունէր, գիւղում քանի՞ մարդ էր ապրում, քանի հարսնացու կար եւն. եւն.: Ուրեմն ինչո՞ւ կասկածի տակ դնենք բնակավայրի այս կամ այն գաւառին վերագրելը, մաս կազմելը, կամ տուեալ տեղանուն գոյութիւնը նշուած գաւառում: Օրինակները քիչ չեն եւ հաւանականութիւնը, որ բնակիչները աւելի ճշգրիտ գիտելիքներ ունէին, բաւական ծանրակշիռ է: Թէպէտեւ, այստեղ էլ կարող ենք բախուել նաեւ վարչական անընդհատ կրկնող վերաբաժանումների մասին հասարակ բնակչութեան անտեղեակ լինելու վարկածին: Ինչ խօսք՝ տեղին է նաեւ մէջբերել Գարեգին վրդ. Սրուանձտեանցի՝ Մանազկերտ եւ Բուլանք գաւառների սահմանների մասին նկարագրութիւնը. «Վանայ ծովուն Արեւմտեան գաւառաց ուղղութեամբ, այսինքն Ախլաթու, Արծկէու եւ Արճէշու ետեւը յարեւմուտս կոյս կը տարածին Վերին եւ Ներքին Պուլանըխները ու Մանազկերտը: Այս երեք անունով գաւառները իրենց դիրքին նայելով պէտք է միացեալ համարել, ինչպէս որ այժմս է, գաւառագլուխ ունենալով Մանազկերտ բերդաւանը: Եւ կը սահմանուի այսպէս. Հարաւէն՝ Մշոյ դաշտ եւ Չարբօհար, յԱրեւմտից՝ Խնուս, Հիւսիսէն՝

Ալաշկերտ, ուր կայ եւ Այնթապ դաշտ, յԱրեւելից՝ Խլաթ, Արծկէ եւ Արճէշ գաւառները»¹⁴³:

4. Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթի 1910 թ. հրապարակումների մէջ գրեթէ նոյն միտքն է արտացոլուած. «Պոլսանըզ. այս շրջանի կրթական պատկերը հետեւեալն էր 908ին. — Վերի եւ Վարի Պոլսանըզ, ինչպէս նաեւ Մանազկերտի գաւառը, որոնք միասնաբար 50—55 հայ գիւղերէ կը բաղկանան...»¹⁴⁴: Նկատենք, որ Բուլանըք-Մանազկերտը 19-րդ դարավերջին դեռեւս ընկալուած էր եւ կար որպէս մէկ վարչական միաւոր:

Ռուսական շտաբի հետախոյզ¹⁴⁵, Վանի ռուսական փոխհիւպատոս, գնդապետ Վ. Մայեւսկին այս երկու գաւառների տեղագրութեան առնչութեամբ գրում է, թէ դժուար է որոշել՝ որտե՞ղ է վերջանում մէկն ու սկսում՝ միւսը¹⁴⁶: Յատկապէս սահմանային գիւղերի առնչութեամբ այս կամ այն գաւառին պատկանելու հարցը սկզբնաղբիւրների մէջ տարբեր է, որից եւ ծագում է հետազօտական գրականութեան մէջ հանդիպող հակասականութիւնը:

Մեր ուսումնասիրութեան երկրորդ գլխում, գիւղանուններին անդրադառնալիս խօսում ենք բացառապէս 1893—1907 թթ. ընթացքում Բուլանըք գաւառի մէջ մտնող բնակավայրերի մասին: Եթէ վերցնենք այլ թուականներ, ապա խառնաշփոթն աւելի ու աւելի կը մեծանայ, քանի որ, ինչպէս գիտենք՝ մշտապէս եղել են վարչական վերաբաժանումներ, տեղանունների անուանափոխութիւններ, իսկ եթէ հետընթաց կատարենք առնուազն 3—4 դար ապա բխուելու ենք նաեւ Բուլանըքի մի շարք գիւղերի բնակչութեան բռնագաղթի, աւելի ուշ այլ գաւառներից հայերի վերադարձի երեւոյթի, քուրդ շէյխերի կողմից գիւղանունների փոփոխման, գիւղերին պատկանող հողերի վերաբաժանման խնդրին, որով պայմանաւորուած էլ փոփոխուել են գիւղերի սահմանները: Ինչ վերաբերում է Հարք գաւառի այն տեղանուններին, որոնք յիշատակուել են պատմաբանների կողմից իբրեւ Հարք գաւառի գիւղանուններ, որ աշխարհագրորէն մաս էր կազմում նախաեղեռնեան Բուլանըք գաւառին, ապա մի շարք յայտնի բնակավայրեր գտնելն ուղղակի անհնարին կդառնայ: Օրինակ, Ստեփանոս Տարօնեցու Տիեզերական պատմութեան մէջ յիշատակուած է Եղեգական¹⁴⁷

¹⁴³ Մրտանձտեանց Գ. վրդ., Համով-Հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 99—100:

¹⁴⁴ 3. Ե., Պոլսանըզ, «Ազատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1910, հմր. 201:

¹⁴⁵ Каширин В. Б., Дозорные на Балканах. Русская военная разведка в странах Балканского полуострова накануне и в годы Первой мировой войны, Москва, Викмо-М, 2014 г., с. 103, 610:

¹⁴⁶ Маевский В. Т., Военно-статистическое..., с. 112—113.

¹⁴⁷ Հարք գաւառի մաս կազմող այս գիւղի մասին տե՛ս նաեւ Արաբացի մատենագրեր..., էջ 12:

անունով գիւղը, որ է Սահակ կաթողիկոսի ծննդավայրը¹⁴⁸: Հարք գաւառի մէջ մտնող Եղէգակ գիւղի մասին յիշատակում են նաեւ արաբ մատենագիրները¹⁴⁹: Սահակ Բ. կաթողիկոսը (534–539) (Ուղկեցի¹⁵⁰) այլեւայլ աղբիւրներում յիշուել է Սահակ Յըղկեցի, Զակեցի, Զակեցի, Եղեգիկցի, Եղեգականցի եւ Հարքցի, եւ «Որուն ղիւրքը անորոշ մնացած է այժմեան Պուլանըք գաւառի մէջ»¹⁵¹:

Մեզ հասանելի աղբիւրները Բուլանըքում հաշւում են 20¹⁵², 25–26¹⁵³, 29¹⁵⁴, 30¹⁵⁵, 32¹⁵⁶ հայաչափ գիւղ: Ինչ վերաբերում է առհասարակ Բուլանըքի մէջ մտնող խառը գիւղերին, որոնց բնակիչներն էին հայեր, քրդեր, թուրքեր եւ այլք, հաշւում է 43¹⁵⁷, 46, 49¹⁵⁸, 51¹⁵⁹, 52¹⁶⁰, ¹⁶¹ գիւղ: Յրանսիացի աշխարհագրագէտ Վ. Քինեի հաշւումների համաձայն 1891ի դրութեամբ Բուլանըքն ունէր աւելի քան 135 բնակավայր, որով այն դառնում էր Մուշից յետոյ երկրորդ խոշոր հայաչափ կենտրոնը¹⁶²:

Եթէ մեզ հասանելի աղբիւրներից քաղենք միայն 1895–1915 թթ. ընթացքում իբրեւ Բուլանըք գաւառին մաս կազմող այն բնակավայրերը, որոնք յիշատակուած են մէկ կամ առաւելագոյն երկու անգամ, ապա

¹⁴⁸ Ստեփաննոս վրդ. Տարօնեցի, Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859, էջ 82:

¹⁴⁹ Արաբացի մատենագրեր..., էջ 12:

¹⁵⁰ «Իսկ ի գաւազանագիրս Միխայէլի Ասորոյ, Սահակ Բ. կաթողիկոս գրի 'ի գեղջէն Ուղկայ», տե՛ս Իննիճեան Ղ., Ստորագրութիւն 1822, էջ 120:

¹⁵¹ Օրմանեան Մ. արք., Ազգապատում, հտ. Ա., 2001, էջ 611:

¹⁵² Владимир Н. Филиппов, Военное..., էջ 21:

¹⁵³ Միրախորեան Մ., նշ. աշխ., էջ 69, 86:

¹⁵⁴ Ա. Դօ (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի Վիլայեթները, Երեւան, տպարան, 1912, էջ 146:

¹⁵⁵ Kévorkian Raymond, *The Armenian Genocide, A Complete History*, I. B. Tauris & Co Ltd., London-New York, էջ 350:

¹⁵⁶ Karayan S. Y., M. D., *Armenians in Ottoman Turkey*, էջ 196–197:

¹⁵⁷ Մշոյ Աշխարհ, «Լուսայ», Գիրք Ա., 1897, էջ 167:

¹⁵⁸ Սրուանձտեանց Գ. վրդ., Համով-Հոսով, էջ 101:

¹⁵⁹ Բենսէ, Բուլանըխ կամ Հարֆ գաւառ, Ազգագրական հանդէս, Ե, Թիֆլիս, 1899, էջ 34:

¹⁶⁰ Маевский В. Т., Военно-статистическое..., էջ 119–120:

¹⁶¹ Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 318:

¹⁶² Vital Cuinet, *La Turquie d'Asie: géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l'Asie-Mineure*, tome deuxième, Paris, 1891, էջ 588:

կատանանք հետեւեալ պատկերը. Գարապաղար¹⁶³, Գեղանք¹⁶⁴, Եկմալ¹⁶⁵/Yegmal, Թաղաւան¹⁶⁶, Թրքաշէն¹⁶⁷, Խաղօղլի¹⁶⁸/Խան օղլի¹⁶⁹, Խասմիկ¹⁷⁰, Խարաբա-Ղա-սըմիկ¹⁷¹, Խօթանլու¹⁷², Խոշկերտ¹⁷³, Կերօլան/Kerolan¹⁷⁴, Կաղանջ¹⁷⁵, Կոպակ¹⁷⁶, Մալազկերտ¹⁷⁷, Մալախդրան¹⁷⁸, Մալամաստաֆա¹⁷⁹, Մոլա-Բաղ¹⁸⁰, Մոլլաքար¹⁸¹, Նէմջաշեղ¹⁸², Նորադին¹⁸³, Նորաշէն¹⁸⁴, Շիղ¹⁸⁵, Պրտոպ¹⁸⁶, Ռոստամգիրուկ¹⁸⁷, Սրտանուտ¹⁸⁸, Տոլախ Բաշ¹⁸⁹, Օղնուտ¹⁹⁰:

Ներկայացուած այս ցանկին մենք չենք աւելացնում Վ. Մայեսկու եւ Վ. Պետոյեանի կազմած ցուցակներում եղած տեղանունները: Դրանք արդէն իսկ ներկայացրել ենք առանձին աղիւսակներով:

¹⁶³ «Ազատամարտ», 1910, Կ. Պոլիս, հմր. 201:

¹⁶⁴ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338–339:

¹⁶⁵ Այս տեղանունը ներառել ենք, քանի որ Ռ. Գէորգեանի աշխատանքը պատրաստուած է պատ-
րիարքարանի կազմած ցուցակների հիման վրայ: Տե՛ս Kévorkian R., The Armenian Genocide,
A Complete History..., էջ 350; Маевский В. Т., Военно-статистическое..., էջ 118–119:

¹⁶⁶ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁶⁷ Ա.-Դօ, էջ 147: Ամենայն հասանականութեամբ Բրգաշէն կամ Փրկաշէն տեղանուններն են
վրիպակով:

¹⁶⁸ Ասորպետ, Բուլանըկ, հմր. 213:

¹⁶⁹ Նոյն տեղում:

¹⁷⁰ Նոյն տեղում:

¹⁷¹ Նոյն տեղում:

¹⁷² «Դրօշակ», 1895, հմր. 12, էջ 9; «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1910, հմր. 201:

¹⁷³ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁷⁴ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

¹⁷⁵ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 349:

¹⁷⁶ Ա.-Դօ, էջ 147: Ամենայն հասանականութեամբ Կոդակ տեղանունն է վրիպակով:

¹⁷⁷ «Ընդարձակ Օրացոյց» Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի Հայոց, Կոստանդնուպոլիս, 1903, էջ 338:

¹⁷⁸ Սասունի Կ., 2013, էջ 318:

¹⁷⁹ Յ. Ե., Պոլսանըզ, «Ազատամարտ», 1910, հմր. 201:

¹⁸⁰ Ասորպետ, Բուլանըկ, հմր. 213:

¹⁸¹ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁸² Նամակ Բուլանըղից, «Դրօշակ» Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1895, հմր. 12,
էջ 8–10:

¹⁸³ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 361. նաեւ՝ «Մշակ», հմր. 213:

¹⁸⁴ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁸⁵ «Դրօշակ», 1895, հմր. 12, էջ 9:

¹⁸⁶ Սասունի Կ., 2013, 318; Ա.-Դօ, էջ 146:

¹⁸⁷ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 121, թղթ. 103, վաւ. 386. նաեւ՝ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁸⁸ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338–339:

¹⁸⁹ «Մշակ», հմր. 213:

¹⁹⁰ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելոստ հմր. 48:

Ինչ վերաբերում է Մ. Խրիմեան կաթողիկոսի ֆոնդի ուսումնասիրությանը, դրանց աւարտին մենք կազմեցինք Մշոյ Բուկանըք (Բուկանուկ, Բուկանլու, Բլանուկ, Բըլանըլ, Պուկանլու, Պուկանք¹⁹¹) գաւառի 28 հայաբնակ գիւղերից գրուած ցանկ, որոնց հեղինակները, 1893–96 թթ. ընթացքում հաստատապէս ապրել են Մշոյ Բուկանըք գաւառի նշուած գիւղերում Աբդուլ Համիդ II սուլթանի հայահալած քաղաքականութեան եւ կազմակերպած կոտորածների պատճառով դիմել էին փախուստի, հասել Արեւելեան Հայաստան, սակայն սեփական միջոցներով չկարողանալով լուծել առաջնահերթ խնդիրները՝ դիմումներ էին ուղղել Հայոց Հայրիկի:

Այդ գիւղերը 28ն են՝ Աբրի (Ապրի), Ալագեազ (Ալգոզ), Ատկոն (Յատկոն, Յադկոն, Յադկոն), Բլուր (Պլուր), Բոստաքեանդ (Բոստանքանդ, Բոստաքենթ), Եօնջալու (Եօնճալու, Յոնջալու, Օնճալու), Եօթնջուր (Յոթընջուր, Յոտնչոր, Ոտնչոր), Թէղուտ (Թղութ, Թղուտ), Լաթար (Լաթառ), Լիզ (Լզա-Բուկանըք), Խարաբաշհար (Խրաբաշհար, Խարաբշհար, Խարապա Շէհիր), Քարաղըլ (Ղարաղլու, Քարա-աղըր, Քարաղլ, Խարաղըլ¹⁹², Քարաղէշ¹⁹³), Ռըստամկէտուկ (Խրիստամ գետուկ, Խրիստամ-Քատուկ), Խօշգեալդի (Հոշգեալդի, Խոշկալուր, Խօշկելտի, Խոշկելտի), Կաղանջ, Կողակ (Կողագ), Կոփ (Կոբ, Կոպ, Բուկանըք), Համզաշէյխ (Համզաշէխ, Համզա-Շեխ), Մէջիթլու (Մաճըտլու, Մաճիտլու, Մեջեթլի, Մէճիտլու), Մերպար (Միրբար, Միրիբար), Մալաքեանդ (Մուլահքենթ, Մուլահքանտ), Նորադին (Նորատի), Շէյխաղուբ (Շէյխ Եակուբ, Շէյխաղուպ), Շէրվանշէյխ (Շեր-Վան-Շէյխ, Շէր-Վան-Շեխ), Պագրան, Փիոնիկ (Բիօնք, Բիոնգ, Պիոնգ), Փրկաշէն (Բրգաշէն, Բրգայ Շէն), եւ Քաքաուլու (Թաքիաուլու, Թաքեաուլու, Թաքեաուլի, Քէքէուլու, Քեքեիլի, Կեկեիլի):

Նշուած 28 գիւղերից Կաղանջ գիւղի մասին, բացի Խրիմեանին ուղղուած նամակներից, առայժմ չունենք որեւէ այլ աղբիւր: Մինչ այժմ գտնուել է միայն մէկ վաւերագիր, որտեղ նշուած է Կաղանջ տեղանունը:

Ինչ վերաբերում է Բոստանքանդ տեղանունը, ըստ Մ. Միրախորեանի՝ «Շինուած ընդարձակ բլրոց կողերուն վերայ եւ կը կազմէ մէջ տեղի սահմանն Մշոյ եւ Ներքին Պուկանըլի»¹⁹⁴: Այս առնչութեամբ տեղին է

¹⁹¹ Պոպանֆ, տե՛ս ՄՄ, թղթ. 103, վաւ. 186:

¹⁹² «Ընդարձակ Օրացոյց», էջ 338:

¹⁹³ Մարտիրոսեան Ն., նշ. աշխ.:

¹⁹⁴ Միրախորեան Մ., հտ. Գ., էջ 93:

մէջբերել նաեւ «Տեղագրութեան» հետեւեալ նկարագրութիւնը. «Դիրք վանացն 'ի բարձու կայ եւ հայի 'ի վերայ դաշտավայրին Մանազկերտի եւ Կոբայ միանգամայն, զի չիք որոշիչ սահման 'ի լեռանց կամ 'ի բլրոց եւ կամ գետոյ իրիք ընդ երկոսին գաւառսդ Մանազկերտ եւ Կոբ, այլ ըստ արդի բաժանման 'ի գիւղորէից սահման հատանի, յորոց մասն մի Մանազկերտի են սեփականեալ եւ մասն մի Կոբայ»¹⁹⁵:

Բոստաքանդի առնչութեամբ որպէս Բուլանք գաւառի գիւղ ունենք երկու հաստատում: Անտիպ աղբիւրներից վաւերագրեր Խրիմեանի ֆոնդից, իսկ տպագիր աղբիւրներից այն վկայուած է Պատմութիւն Տարօնի Աշխարհի գրքում՝ որպէս Ներքին Բուլանքի բնակավայր¹⁹⁶:

Յաջորդը վերաբերում է Պագրան, Խրիստամ-Քատուկ կամ Ռստամ-Կիրուկ (Ռոստամ-Գետիկ, Ռոստամգիրուկ) եւ Նորադի գիւղերին:

Վան-Տոսպ (Թիֆլիս) թերթում Նազարէթ Մարտիրոսեանի հրապարակուած վիճակագրական թարմացուած աղիւսակում «Մանազկերտի գիւղանուններ» բաժնում ունենք Բագրան անունով բնակավայր¹⁹⁷: Արդեօ՞ք սա նոյն Պագրանն է, որը սահմանային շրջանում գտնուելու պատճառով երբեմն համարուել է Մանազկերտի, երբեմն էլ՝ Բուլանքի մէջ մտնող գիւղ:

Մեր նպատակը հնարաւորին շատ վկայութիւններ եւ վաւերագրեր գտնելն է, որոնց վրայ յենուելով կարելի է հիմնաւորել բնակավայրի այս կամ այն գաւառին մաս կազմելու հարցը: Այս փուլում մենք սահմանափակուած ենք եղած եզակի վկայութիւնը գիտական լայն հանրութեանը ներկայացնելով, սակայն վստահ ասելու համար, թէ այն Բուլանքի գիւղերից է, անհրաժեշտ է ունենալ աւելի շատ վկայութիւններ եւ փաստեր, ինչն էլ մեր հետազոտութեան նպատակն է:

Գալով Նորատին եւ Նորադին տեղանուններին՝ ամենայն հաւանականութեամբ այն պէտք է նոյնացնել Նորաշէն բնակավայրի հետ, որի մասին հանգիպում ենք «Ընդարձակ Օրացոյց»ի (1903) էջերում, որպէս Բուլանք գաւառի բնակավայր¹⁹⁸:

Բենսէն իր հերթին նշում է գիւղանուններ, որոնք, «հայկական ծագում ունենալով հանդերձ, զուրկ են աւանդոյթներից»¹⁹⁹: Ինչպէս, օրինակ, Ատկոն, Փրկաշէն, Ագրակ, Կողակ, Առնճիկ, Փրոնկ գիւղերը:

¹⁹⁵ Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն, 1864, էջ 223:

¹⁹⁶ Սասունի Կ., 2013, էջ 248:

¹⁹⁷ Մարտիրոսեան Ն., նշ. աշխ.:

¹⁹⁸ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

¹⁹⁹ Բենսէ, Բուլանքի կամ Հարֆ, էջ 27:

Ի հակադրութիւն Բենսէի՝ Խրիմեանի ֆոնդում առկայ նամակների քանակով պայմանաւորուած՝ կարող ենք վստահաբար ասել, որ նշուած գիւղերից մի քանիսը Մեծ եղեռնից առաջ հայկական հոծ բնակչութիւն ունեցող բնակավայրեր են եղել, գրուած նամակներն էլ շարադրուած են գեղեցիկ հայերէնով: Այդ մասին կանգրադառնանք իւրաքանչիւր տեղանունը նուիրուած բաժնում:

Բուլանք գաւառի մէջ ընդգրկուած Խաչի գիւղի մասին առայժմ որեւէ վկայութիւն չենք կարողացել գտնել Մ. Խրիմեանի ֆոնդից: Չգտնելը, անշուշտ, դեռ չի նշանակում, թէ մենք ժխտում ենք այս բնակավայրի գոյութիւնը կամ նրա հայկականութիւնը:

Խրիստամ-Քատուք բնակավայրը, որպէս Բուլանք գաւառի գիւղ յիշատակուած է Սեւան Նիշանեանի²⁰⁰ մօտ եւ Ընդարձակ Օրացոյցի 1903ի էջերում:

Ինչ վերաբերում է Ալգոզ տեղանունը, ամենայն հաւանականութեամբ Ալագեոզ/Elgöz գիւղն է, որը տեղացիներն արտասանել են Ալգոզ ձեւով: Այս բնակավայրը յիշատակում է Վ. Մայեւսկին, իբրեւ զուտ մուհաջիրներով՝ իսլամ գաղթականներով բնակեցուած գիւղ:

Ստորեւ՝ այբբենական կարգով ներկայացնում ենք Բուլանք գաւառի գիւղերը՝ 1893–1896 թթ. ընթացքում Մկրտիչ Ա. Խրիմեանին ուղղուած նամակների վերծանութիւններով: Գրքի ամփոփում (Summary) բաժնում ընթերցողը կարող է ծանօթանալ Մ. Խրիմեանին ուղղուած նամակների անգլերէն թարգմանութիւններին:

²⁰⁰ <http://nisanyan1.blogspot.com/2018/10/anadoluda-gezintiler-mus-bulank-ilcesi.html>

ԱՐՐԻ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ESENLIK)

Աբրի հայաբնակ գիւղն ընկած էր Բիթլիսի նահանգի, Մշոյ գաւառի Ներքին Բուլանք գաւառակում, Նազիկ լճից մօտ 14 կմ հիւսիս, Բլէջան լեռան հիւսիսարեւմտեան ստորոտում: Հայր Սուքիաս. Էփրիկեանն Աբրի/Ապրի գիւղը տեղակայում է Լիզից 1^{1/4} ժամ հեռավորութեան վրայ, Տուրուբե-րանի Կորանի գաւառի սահմաններում²⁰¹:

Խրիմեան Հայրիկին ուղղուած նամակներում տեղացիներն իրենց գիւղն անուանել են Աբրի, Ապրի, Աբրէ, Յաբրի²⁰²: Այլ աղբիւրներում բնա-կավայրն յիշատակուած է նաեւ Էպրի²⁰³ եւ Աբրէ²⁰⁴ ձեւով:

Քեմալական Թուրքիայում 1928 թ. բնակավայրը հաշուառուել ու ար-ձանագրուել է Աբրի (Abri)²⁰⁵: Ներկայումս այն քրդաբնակ է եւ կոչւում է Էսենլիք (Esenlik)²⁰⁶:

Աբրի տեղանունն ծագումը Մաղաքիա արք. Օրմանեանը կապում է Բզնունեաց եպիսկոպոս, Սահակ-Մեսրոպեան աշակերտութեան երիցա-գոյններից Աբրահամ Զէնակեցու հետ, որի «վախճանը եղաւ խաղաղու-թեամբ ի բարուք ծերութեան, եւ թաղուեցաւ իր վիճակի մէջ: Պուլանքի Աբրի գիւղին կը ցուցուի այսօր իր գերեզմանը, եւ գիւղն ալ իր ճգնութեան տեղը կը կարծուի: Նոյնիսկ Աբրի գիւղին անունն ալ Աբրահամի անունէն առնուած կ'երեւի»²⁰⁷:

²⁰¹ Էփրիկեան Ա., Պատկերագարդ Բնաշխարհիկ բառարան, հտ. Ա., Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Սուրբ Դաւար, 1903, էջ 242:

²⁰² ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 130, նամակագիր՝ Պետրոս Տէր Դաւիթեան; թղթ. 104, վաւ. 139, նամակագիր՝ Ազնի Տէր Դաւիթեան:

²⁰³ «Շէյխեր կան, որոնք տխրաներ կը պահեն կը կարդացնեն, բայց ի՞նչ կը կարդացնեն... հասկցողը կը հասկնայ: Ասոնցմէ քանիսը Մշոյ թաղերուն մէջն են, միւսները գեղերն են, զոր օրինակ շէյխ մը Թիլ, շէյխ մը Մալաֆանդ, շէյխ մը Յատկոն, շէյխ մը Էպրի, շէյխ մը Լաթառ..., տե՛ս Սրռանձտեանց Գ., Երկեր, Երեւան, 1982, հտ. 2, էջ 126:

²⁰⁴ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 45:

²⁰⁵ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416:

²⁰⁶ <https://nisanyanmap.com/?y=Arakonak&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

²⁰⁷ Օրմանեան Մ. արք., Ազգապատում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, հտ. Ա., էջ 510–511:

Ս. Գէորգ եկեղեցու եւ այլ խոնարհուած սրբավայրերից զատ այստեղ եղել են նաեւ բազմաթիւ Օջախներ²⁰⁸: Ամենանշանաւոր Օջախներից մէկը Մամբրէի գերեզմանաքարն էր²⁰⁹, որի մասին այլ հեղինակներ համարում են զուտ յունական եկեղեցու փլատակ²¹⁰:

Աբրի գիւղը հարուստ էր նաեւ հանածոներով, եւ յատկապէս՝ քարհանքերով, որտեղից հանում էին ամբողջ շրջանի ջրաղացների համար անհրաժեշտ քարերը: Գիւղից մինչեւ Ազնաւուրի բերդ տանող լեռնաշղթան ամբողջութեամբ սպիտակաւուն, կրային հող էր, որին տեղացիներն անուանում էին եռքար (քարածուխ): Այն մեծ պահանջարկ ունէր յատկապէս դարբինների մօտ՝ իբրեւ երկաթը շիկացնելու լաւագոյն միջոց²¹¹:

Գիւղի հայ բնակչութեան մասին մեզ հասած տեղեկութիւնների համաձայն 1900-ական թուականներին այստեղ կար մօտաւորապէս 80–90 տուն, որից կէսը հայոց եւ կէսը քրդերինն էին²¹²: Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն հայոց ցեղասպանութիւնից առաջ գիւղում կար 203 անձ²¹³ կամ 50 տուն հայ բնակիչ²¹⁴: Մօտաւորապէս նոյն թիւն է փոխանցում Ս. Կարայեանը²¹⁵: Ինչ վերաբերում է հայութեան նիւթական կարողութիւններին այդ մասին գիտենք, որ գիւղի հայութիւնն ունեցել է մօտաւորապէս 350 գոմէշ, մատակ, եզ ու կով, 400 ոչխար, 1 ձի²¹⁶:

1915 թ. ապրիլին սկիզբ առած կոտորածները Աբրի գիւղում շարունակւում են մինչեւ յունիսի 28ը²¹⁷:

²⁰⁸ Բուլանքում օջախ ասելով նկատի ունէին այն տները, որտեղ կար «Տան Սուրբ», «Տան Օջախ», սրբազան վայր: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Հայոց Սրբերը եւ սրբավայրերը, Ակումքները, տիպերը, պաշտամունքը, Երեւան, 2001: Յայտնի էր Աբրի գիւղի Շէլիս Սրբի թէ՛րի օջախը, որ հայերն անուանում են «Ապրուայ օճախ»՝ Ապրիի Սուրբ, ուխտատեղի: Տե՛ս Մանասեան Գ., Տաճկահայեր, Բուլանքի կոտորածը, Ապրի, Գեբուլան, «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 8, էջ 193–194:

²⁰⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Ա., էջ 242:

²¹⁰ Մանասեան Գ., Տաճկահայեր, Բուլանքի կոտորածը, Ապրի, Գեբուլան, «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 8, էջ 193–194:

²¹¹ Բենսէ, Բուլանքի կամ Հարֆ, էջ 22:

²¹² Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Ա., էջ 242:

²¹³ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

²¹⁴ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

²¹⁵ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

²¹⁶ Մանասեան Գ., Տաճկահայեր, Բուլանքի կոտորածը Ապրի, Գեբուլան, «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 8, էջ 194–195:

²¹⁷ Մովսէսեան Ս., Բուլանքի կոտորածը, Մեծ-Ղարաքիլիսա 1916 թ., «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 43, էջ 1358–1360:

Կոտորածները կազմակերպում ու գլխավորում է շէյխ Սլէյն (Սիւլէյման): Ականատեսի վկայմամբ 300 աբրեցիներին ազատում են միայն 15 տարեց կին ու երեխայ, 6–7 տղամարդ, որոնք կոտորածից առաջ տեղափոխուել էին Կովկաս²¹⁸:

Մաշտոցեան Մատենադարանում պահուող՝ Խրիմեան կաթողիկոսի ֆոնդի 101–105 համարի թղթապանակներում գտնուել է 4 նամակ. գաղթական Ազնիւ Տէր Դաւիթեանից²¹⁹, Աբրահամ Ակօփով Նազարեանցից²²⁰, Պետրոս Տէր Դաւիթեանից եւ մէկ նամակ Աբրի գիւղի ծխատէր քահանայ Յովսէփ Տ. Յովհաննէսեանցից:

1916ին Բաշ-գիւղից Ալէքսանդրապոլ են փոխադրուել աբրեցի երկու որբ. Աւետիսեան Մարտիրոս՝ 8 տարեկան, Աւետիսեան Ազնիւ՝ 4 տարեկան²²¹:

(ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 91)

**ՆՈՐԻՆ ՎԵՂԵՓԵՆՈՒԹԵԱՆ ՏՐԵՆՈՒՆ ԵՒ ՏՐԵՆՈՒՆ ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԱՋՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ
ԾԵՅՐԸԳՈՒՆ ՊԵՏՐՈՐԳԻ ՄԵՅՐ ԸԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԵԼՆԻ
Ի ՏԵՃԵՍՏԵՆՈՒ ՏԵՐՍՈՆԵՅԻ, ԲՈՒԼՆՈՒՂ ԳԵՒԵՆԻ ԸՐԻ
ԳԻՒԼԵՅԻ ՊԵՏՐՈՍ ՏՐԵՐ ԴԵՒԹԵԱՆԷ՝**²²²

Խոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ Տ[է]ր,

Ահա առաջի առնեմ խոնարհաբար եւ համբոյրել Ս[ուր]բ Գարշապարն Ա[ստուա]ծընտիր Վեհափառութեանդ: Վ[ա]սն [ուր]ոյ այլ[եւս] ոչ կարեմք համարձակիլ խնդրազրաւ եւ բանիւ դիմել Ս[ուր]բ Վեհափառութեանդ, զչարչարանս եւ ըզնեղութիւնս մեր, քանզի, արդէն յայտնի եղած է Ձեր

²¹⁸ Մովսէսեան Ս., Տաճկահայեր, Բուլանըխի կոտորածները, «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 12, էջ 377:

²¹⁹ ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 139, նամակագիր՝ Ազնիւ Տէր Դաւիթեան:

²²⁰ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 117, նամակագիր՝ Աբրահամ Ակօփով Նազարեանց:

²²¹ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 45:

²²² Պետրոս Տէր Դաւիթեանի մակագրութեամբ 1896ին գրուած մէկ այլ նամակ տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 130:

Վեհափառութեան: Եւ եւս մեր թաղանձանքն Ձեր ազգասիրութեան կողմից աւելի վշտեր կաւելացնէ: Այլ է՝ Ձեր անհրաժեշտ Ս[ուր]բ աղօթիւք յոյս է, որ փարատինք:

Ուստի առ ձեռն նոյն բարբարոսաց, որ կարելի չէր մնալ հայրենի գաւառն, որ եւ իսկ մի որդիս սպանեալ են, եւ այնու փախուցեալ թափառական ընտանիքով զերկիրն ըմբոսահայոց, եւ ա[յ]ժմոյս կամ Դադալու²²³ գիւղում:

Խնդրեմ Վեհափառութեանդ՝ խնամ անիջիք ուր[եք] ուրեք բարեհաջեացի ողորմածութեամբն Ձեր բնակուել ժամանակաւոր՝ մինչեւ ծագեսցի լոյսն ա[ստուածա]յ[ին] միջնորդութեամբն Ա[ստուա]ծընտիր Վեհափառութեան Ձեր:

*ՏԱՐՍՈՆԱՅԻ, ԲՈՒԼԱՆՈՒՂ ԳԱԻԱՌԻ ԱԲՐԻ ԳԻՒՂԻ
ՊԵՏՐՈՍ Տ[է]Ր ԴԱԻԹԵԱՆ*

18 Յուլիսի, 1895 ամի

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 103, վաւ. 103)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՌՈՒԹԵԱՆ ՆԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐՈՐԳ ԵՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՅՐԵՊԵՏ ԵՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ[ԵԱՌՆ]
Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻՉ Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ
ՊՈՒԼՆԵՐԻԻ ԵՊՐԻ ԳԻՒՂԻ ՆԵՍԷՐ ՅՈՎԱԷՓ ՔԷՀԱՆԵՅ Տ[ԷՐ]
ՅՈՎՀԱՆՆԷՍԵՆՆՅԷ**

Խոնարհական խնդիր

Վեհափառ Հայրապետ,

Թուէս մի տարի յառաջ տանս մէջ վեց հայրենակից ճանապարհորդ հիւրընկալելով՝ մի հայի մատնութեամբ ձերբակալուեցանք վեց ընկերներով՝ չորս ամիս, յորոց երեքը կղերական էին, իսկ երեքը՝ աշխարհական, Պաղիչու բանտի մուծ խորշերու մէջ: Եւ յետ չորից ամսոյ 60-ակ[ա]ն օսմանեան ոսկի տուծելով՝ ազատուեցանք: Բայց քանի օրէն յետոյ կրկին մեզ բանտարկել ուզեց կա[ռա]վ[ա]րութիւնը՝ ինչպէս ըրաւ մի աշխներուն:

²²³ Ներկայիս ՀՀ, Արագածոտնի մարզ, Եղնիկ գիւղ:

Մեր դրացի Տէր Յարութ[իւն] ք[ա]հանայի հետ այս կողմ անցանք, իսկ կառավ[ա]րութ[իւն]ը քրդերի ձեռօք իր սրտի վրէժը լուծեց: Մեր ամէն ունեցածը աւարի առնել տուաւ: Այսպէս անցանք այս կողմ՝ 40 հոգիէ բաղկացած մեր ընտանիքը թողնելով այն կողմ:

Իսկ նուաստս այս քանի ամիս էր, որ Շիրակայ գաւառ Մուշնոյ լուրացած մի աղքատ գիւղի քահանայութեան պաշտօն կ'վարէի եւ այս տարուան ձեռքս անցած քանի կոպեկով ուղեցի ցանք ցանիլ, այն ալ մեր մեղքէն անցեալ շաբթու մի գիշերուան մէջ Յովնանի /// նմանութիւն /// ունեցաւ, զի ցուրտը յանկարծ փչացրեց, ըստ նմին նորին մերձակայ գտնուող տասը գիւղերն:

Վեհափա՛ռ Տէր, այժմ տարակուսած եմ եւ չըզդիտեմ՝ այն սրտամաշ տարակուսութեան որդը ինչպէ՞ս սրտէս մեռցնեմ, ի՞նչ կերպ ընեմ, որ սոյն ցաւալի խնդրոյն վերջ գրուի:

Նշդեհ՝²²⁴ բարձրգոյն ք[ա]հանայ մի եմ. ոչինչ չունեմ, բացի անտանելի ցաւերէն, որ գիտեն, թէ մեզ վիճակուած է: Ունեմ նաեւ մի ընտանեաց ըստուար խումբ մը հայրենեացս մէջ, որք երկու սարսափելի թշնամիներէ պաշարուած են: Մինն է սով, իսկ Բ.՝ թշնամեաց սարսափ, որ երկուն եւս մահ կապառնան:

Կաղաչեմ լալագին Վեհութեանդ, ժամ յառաջ դարման տանէք մեր ընտանեաց վիճակի բարօրութեան:

Իսկ ինձ՝ նուաստիս, չըկարեմ յայտնել, զի թշուառութիւնը 65 ծերութեանս հասակիս մէջ ձգեց զիս պանդխտութեան տղմին, եւ քաջ գիտեմ, որ Զերին Վեհութենէն ի զատ ուրիշ մէկը չէ կարող զիս այս տեղէն դուրս հանել: Ուրեմն՝ օգնեցէ՛ք...

*ԱՄԵՆԱԽՈՐԻՆ ԱԿՆԱԾԱՄԲ ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝
ՅՈՎՍԷՓ Ք[ԱՀԱՆԱՅ] Տ[ԷՐ] ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ*

1895, Օգ[ոստոսի] 27

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

²²⁴ Հին ֆեոդալանութեան դասագրքերի համաձայն լծորդատառք համարուող բառերը ունեն երկ-
ձեւութիւն, օրինակ՝ թակարթ-թակարդ, դժգոհ-տժգոհ, աստիճան-աշտիճան, նշդեհ-նժդեհ եւ
այլն: Տե՛ս **Տէր-Յարութիւնեան Մետրովը**, Փեոդալանութիւն հայոց լեզուի, Կ. Պոլիս, 1826 թ.,
հտ. Ա., էջ 6:

ԱԼԱԳԵԱԶ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ALAGÖZ / ELGÖZ)

1556ի Խնուսի լիւայի հաշուառման եւ գրանցման մատեանում նշուած է Ալագեոզ (Էլգեոզ/Elgöz) անունով բնակավայր: Նոյնանուն բնակավայր արձանագրուած է թէ՛ Բուլանք եւ թէ՛ Բլէջան կոչուած գիւղախմբերի մէջ²²⁵:

Գնդապետ Վ. Մայեսկու պատրաստած ցուցակում առկայ է Ալագեազ անունով մէկ բնակավայր: Հեղինակն այն տեղակայում է Լաթարի մօտակայքում, արձանագրելով իբրեւ 25 տուն՝ բացառապէս մուհաջիրներով՝ իսլամ գաղթականներով բնակեցուած գիւղ²²⁶:

Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի արխիւում առայժմ գտնուել է երկու նամակ՝ գրուած Ալգոզ կոչուած գիւղի երկու բնակչից: Կարծում ենք, պէտք է նոյնացնել Մայեսկու յիշատակած եւ Խրիմեան Հայրիկին ուղղուած նամակում Ալագեազ եւ Ալգոզ տեղանունները: Հետեւաբար՝ մեր ունեցած երկու վաւերագրերի համաձայն, Մկրտիչ Խրիմեանի աթոռակալութեան շրջանում, Ալգոզ կամ Ալագեոզ գիւղը զուտ քրդաբնակ չէր: Այն ունէր առնուազն 4 տուն, կամ 27 հայ բնակիչ, որոնք, համիդեան կոտորածների ընթացքում ենթարկուելով հալածանքների՝ հայրենազրկուել են: Այս 27 ալագեազցի հայերի, եւ տեղի հայ բնակչութեան մասին այլ մանրամասներ առայժմ մեզ յայտնի չեն:

(ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 363)

ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԼՆԻԴ ԵՒՅՐԵԳՈՅՆ

ՊԵՏՐՈՂԻՆԻ ԿԵՐՈՂԻԿՈՍ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ

ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏԶԻ ԸՈՒԼՋՆՈՅ

Ամենախոնար[հ] խնդիր աղաչանք

Աղաչիմք լալով, արտասովորով՝ խնդրիմ մի ճար, մի օգնութիւն հասցինիք Ձեր խել[ճ] ծառային՝ բնակիչ[ի] Բլանուխայ Ալգոզ գիւղիցն, ամենախոնար[հ] ծառայ Սարգիս Մուրադով եւ ունիմ 13 նափար: Մի եղբայրաս

²²⁵ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 76:

²²⁶ Маевский В. Т., Военно-статистическое..., էջ 120:

բոլորովին կորավ, ոչինչ չի իմացվեց, իսկ մի եղբայրս պարտկի տեղակ քրտերն տարան: Այդ երկուսի ընտանիքն նոյնպէս մնում է իմ վերիս: Նորանց ցավն ես պիտի քաշիմ:

Հիմայ ես այստեղ եկա աշխատելու, բայց տեսնելով, որ մի դատ, աշխատանք չիկա, եւ կոտորվածն նորից տեսեցինք, Հիմայ ուզոյմ եմ գնամ, աղաչիմ եւ համբուրիմք Ձեր Սուրբ աջն ու Սուրբ ոտներն: Մի ճար, մի օգնութիւն հասցրէք, որ ես գնամ հասնիմ իմ ընտանիքիս:

*Ձեր ԽՈՆԱՐ[Հ] ԾԱՌԱՅ՝ ԱՄԷՆ ՐՈՊԷ ՄԻՇՏ ԱՂԱԶԱՆՈՔ ԼԻՆԻՔ ՀԱՍՏԱՏ
ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՈՎ*

1895 ամի, ի 6 նոհեմբերի

Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 365)

**ՆՈՐԻՆ ՎԵ՛ՆՓԵՌՈՒԹԵԼՆԵՂԻ ԵՆՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐԻ
ԿԵԹ[Ո]ՂԻԿՈՍ ԼՄԵՆԵԼ[Յ]Ն ՀԵՅՈՑ
ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏԻՉԻ ԼՈՒԱԶՆՈՅ**

Ամենախոնար[հ] խնդիր աղաչանոք սուրբ

Օղորմացո՛ղ, օղորմա՛ մեզի՝ խեղճերիս: Մի՛ թողնիր մեզ այսպիսի նեղ դրութեան. Բնակիչ Բլանուխայ ալգոզեցի Մարգար Ներսէսով:

Ես Հիմա գերութեան մեջ իմ, եւ իմ հարսիս քրտերն փախցիրեցին: Խնդրիմ՝ մի հրաման գրիք Վան՝ Սահակ հայր սրբազանի վերայ, որ մի օգնութուն ինձ հասցենի, որ տունը ունինք 14 նափար՝ բոլորն խմորակեր, եւ եթե մեր նեղութունքը բոլորն պատմիմ՝ շատ է Է՞, բայց ալելի աղէկնորդ իմ համարում նորա համար, որ Ձեզ բոլորից լա՛վ հայտնի է: Աղաչիմք եւ խնդրիմք մի օգնութիւն հասցինիք: Ճանապարհ[հ]ի ճար չունիմ: Գնալու ծաղք՝ մի քանի շահի, օգնեցէ՛ք, որ գոնէ ցամաք հացի փուղ /// ելնի, տեսնիմ, հասնիմ իմ գերդաստանին: Աղաչիմ եւ խնդրիմք, համբուրիմ Ձեր Սուրբ Աջն եւ Սուրբ Ոտէն մի ճա՛ր անիք:

*Ձեր ԱՄԵՆԱԽՈՆԱՐ[Հ] ԾԱՌԱՅ՝ ՄՇՏԱԿԱՆ ՄԱՐԳԱՐ ՆԵՐՍԷՍՈՎ: ԵՒ ԿԸ
ԽՆԴՐԷԻ, ՈՐ, ԵԹԵ ԿԱՐԵԼԻ ԵՐ, ԵՍ ՆԵՐԿԱՅ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՆ ԽՈՍԷԻ ՁԵՐ ԱՌԱՋՆ:*

1895 ամի ի 6 նոհեմբերի

Վաղարշապատ

ԱՏԿՈՆ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(GÜNBAZMAZ)

Ատկոն գիւղն ընկած էր Ներքին Բուլանըքի Լիզ կենտրոնական գիւղաքաղաքից հարաւ-արեւմուտք: 20-րդ դարասկզբին գիւղում ապրում էր 100 տուն հայ: Ատկոնի հոյակերտ եկեղեցին կոչւում էր Ս. Աստուածածին²²⁷: Հայաշատ այս բնակավայրում, որ աւելի յաճախ յիշատակւում է Ատկոն կամ Յատկոն ձեւով, 1871 թ. Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով բացուել եւ գործում էր 22 աշակերտանոց եւ Տօնապետ Վարդանեանի ուսուցչութեան ներքոյ գրուած դպրոց²²⁸:

1877-78 թթ. ուսւ-թուրքական պատերազմը Բուլանըք գաւառի միւս բնակավայրերի նմանութեամբ փոխեց նաեւ Ատկոնի ժողովրդագրական նկարագիրը: Իսլամ գաղթականութեան վերաբնակեցման պետական քաղաքականութեան արդիւնքում այստեղ նախ բնակեցւում է շուրջ 24 տուն չերքէզ, որոնք «տեղւոյս ամենէն աւելի խոտաւէտ տեղերն գրաւած են, որով այս կողմերու մեղուաջան գիւղացւոց խաղաղութիւնն փոքր ինչ վրդոված» են²²⁹:

Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում ատկոնցիները գիւղն անուանում են Հատկոն, Հատկոնք, Յադկոն, Յատկոն, Ատկոն²³⁰: Այլ աղբիւրներում կարելի է հանդիպել նաեւ Յատկանայ²³¹, Գատկոն²³² տարբերակներին, իսկ Կ. Սասունու մօտ, Թերեւս, ամենայն հաւանականութեամբ՝ վրիպակով, նշուած է Կատկոն²³³:

Խրիմեան Հայրիկին ուղղուած նամակներից պարզում ենք, որ ատկոնցիները ենթարկուել են տարատեսակ բռնութեան, սակայն իրենց պայքարի ոգով, հայրենասիրութեամբ եւ իրենց ուժերի ներածին չափով դիմագրաւելով թշնամուն՝ փորձել են ելք ու միջոց գտնել ապրելու եւ ապրեցնելու Ատկոնի հայութեանը: Խրիմեանին ուղղուած նամակներում թուրքական հարստահարումն ու զրկանքներն են, դիմակայելու ճիգն ու փորձերը:

²²⁷ Էփրիկեան Ս., նշ. աշխ., հտ. Ա., էջ 274:

²²⁸ Սասունի Կ., 2013, էջ 248:

²²⁹ Միքայիլեան Մ., նշ. աշխ., էջ 90:

²³⁰ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 7, ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 770, ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 743:

²³¹ «Դրօշակ», 1895, հմր. 12, էջ 9:

²³² Ներսիսյան Մ., 1965 թ., էջ 88:

²³³ Սասունի Կ., 1957, էջ 355:

«Տասն ամիս Մշու բանտում պահեցին: Տասն ամսուայ ընթացքում որքան հաց էին տուել մեզ, հաշուելով տասն ոսկի առան ամէն մէկիցս: Մենք բանտի մէջ՝ մեր եզն, գոմէշ եւ այլ իրեղէններ վաճառ հանելով վերցրել էին եւ ընտանիքներէս ցիր ու ցան էին արել...»²³⁴:

Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած ջարդերին զոհ գնացած հայերի մէջ է եղել նաեւ Ատկոն գիւղի 80-ամեայ քահանայ Տէր Առաքել Ապրօյեանը, որի որդուն՝ Գասպարին բռնի դաւանափոխ են արել՝ ի տես եւ նուաստացում քրիստոնեաներին²³⁵:

1915 թ. ապրիլի 30ին՝ Համբարձման տօնի առաւօտեան է սկսուել Ատկոնի ջարդը: Կոտորածի հրամանը տուեց քայմաքամ Ասադ բէյը, իսկ այն իրագործեց չէյխ Հազրաթի ազգական՝ չէյխ Մասումը՝ տեղացի քրդերի օգնութեամբ²³⁶:

Հայոց ցեղասպանութիւնից առաջ հայութեան թիւն Ատկոնում հաշւում էր 120²³⁷ տուն կամ 754 հայ²³⁸: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Ատկոն գիւղն ունէր 109 հայ ընտանիք՝ 720 բնակչով²³⁹:

1928 թ. Քեմալական Թուրքիայում այս բնակավայրն արձանագրուեց Ադքուն ձեւով (Adqun)²⁴⁰: Ներկայումս այն քրդաբնակ է, կոչւում է Գիւնբաթմազ²⁴¹:

Մեծ եղեռնի ընթացքում Ատկոն գիւղից Արեւելեան Հայաստան են հասել եւ տարբեր ապաստարանների խնամքին յանձնուել երեք որբ. Մելոյեան Եղիշէն՝ 12 տարեկան²⁴², Դաւիթը՝ 10 տարեկան²⁴³ եւ Վարդանը՝ 11 տարեկան²⁴⁴: Երկուսի ազգանուններն էլ յայտնի չեն:

²³⁴ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 257:

²³⁵ Նոյնի վաւ. 7:

²³⁶ Մովսէսեան Ս., Բուլանըղի կոտորածը, 1916 թ. Ղարաբիլիսա, «Համբարաբեր», 1916 թ., հմր. 43, էջ 1358–1360:

²³⁷ Թէոդիկ. Գողգոթա, էջ 100:

²³⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

²³⁹ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

²⁴⁰ Son Teşkilatı Mükiyede Köylerimiz..., էջ 417:

²⁴¹ <https://nisanyanmap.com/?y=Arakonak&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

²⁴² «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 5:

²⁴³ Նոյնի Յաւել. հմր. 19:

²⁴⁴ Նոյն տեղում:

(ՄՄ, ԽԿՖ, թղթ. 102, վաւ. 770)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԼՆ ԼՄՆԵՊԵՏԻ ՊԵՏՐԵՐԳԻ
ԾԵՅՐԵԳՈՒՆԵՂԻ ՍՐԲԸՋՆԵՍՈՒՐԻ ՀԵՅՐԵԻՆԵՄ ՀԵՅՐԵՊԵՏԻ
ԼՄՆԵԸՅՆ ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՉԻ Ը.**

Ամենայն արժանաւոր մտքերի զբաղեցնող հայ[ը]ական ազատութեան
ոգով տոգորւողների ընտանիք, բարեկամ, սիրելի մոռացողների խմբակնե-
րից եւ յորդորող անձնաւորութիւն[ն]երից լինելով՝ եւ ես՝ տկարս մարմնով,
բախտի հոսանքի տարադէպ բերմամբ տաճկական բարբարոս կառավարու-
թեան միջին բանտին եւ չարչարանաց բաժակն ընկած՝ իմ մշտաւառ, ազա-
տասէր ընկերակիցներով հազիւ փախուստ դիմած՝ այս վայրեր հասած ենք:
Հացի, շորի, մարդկային փափուկ անկողին[ն]երի մէջ ապրող, ստակ ի դուր
վատնող մարդկանց չենք ուզեր նմանիլ ուխտեալներս: Մեր փափաք՝ մեր
սրտի, մտքի արտայայտութիւն[ն]՝ Ձեր կամք եւ որոշմունք լինելու է, թէ
արդեօք ապրի՞նք, թէ՞ մեռնի՞նք: Այդ որոշման կսպասենք: Ձենք միմեկ.
Մինն՝ հազարս, երկուքն՝ զբիւրս:

Այո՛, ողորմած Հայր, մենք՝ կեանք՝ Ձեր կամաց հպատակութեան տակ
դրուած է, եւ կսպասենք....

Հաց ուզելու քարին չարժանանաք, եւ մնամ Ձերդ Վեհափառութեան
խոհական կարգադրութեան:

*ԱՐՄԵՆԱԿ Տ[Է]Ր ՄԱՏԹԷՈՍԵԱՆ՝ ԲՕԼԱՆՈՒԽԻ ԳԱԻԱՌԷՆ
ՅԱԴԿՈՒՆ ԳԻՒՂԷՆ ՍԱՐԳԻՍ ԴԵՐՋԻՆՅԻ,
ԱԻԷՏԻՍ ՍԱՍՈՒՆՅԻ*

ի 14ն Դեկտեմբերի, 1894 ամի

(ՄՄ, ԽԿՖ, թղթ. 102, վաւ. 743)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԼՆ ԿԵԹՈՒՂՅԱՆՍԻ
ԼՄՆԵԸՅՆ ՀԵՅՈՅ
ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏՉԻ Ը.
ԲՈՒՂԸՆՈՒՂ ՅԼՏԿՈՆՅԻ ԲՆԸԿԻՉ ՄԵՐՏԻՐՈՍ ՄԷՀՐԵԼՆԷ**

Աղերսանօք խնդիր

Վեհափա՛ռ Տէր, աշուն 1893 ամի, մի քուրտ գիշերեց իմ տան մէջ: Եւ
սատկել է յանկարծ: Այդ ժ[ա]մ[ա]ն[ա]կ քրտերն ինձ բանտարկեցին 2 տարի

եւ կողոպտեցին իմ ամ[բողջ] կարողութ[թ]ի[ւ]նն այնպէս, որ փախս եմ ընկել իմ 10ն ընտանիքովս եւ օրական հացի կարօտ եւ մերկ մնալով դրութեանց:

Երեսանկեալ աղաչեմ, Վեհափա՛ռ Տէր, ինձ եւ իմ 10ն ընտանիքին նեղութիւնից ազատելու հ[ա]մ[ա]ր:

Բարեհաճէք հրամայել տալ կոնդակ, որով կարողանամ նուէրի խնդրել եւ նեղութիւնէ ազատուիլ:

ՕՐՀՆԵԼՈՎ ՍՈՒՐԲ ՀՕՐԴ ԿԵԱՆՔՆ՝
ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ՝
ՄԱՐՏԻՐՈՍ ՄԷՀՐԵԱՆՏ՝
ԱՆ ԳՐԱԳԷՏ

14 նոյեմբերի, 1894 ամի

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 7)

**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԼՆ ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏՁԻ Ը.
ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԸՄՆԵՆՆՅՆ ՀԸՅՈՅ**

Ամենախոնարհ խնդիր

Յայտնի է Ձերդ Վեհ[ափառ] Օծութեան, որ այս քանի ժամանակներս Տաճկահայաստանում, մասնաւորապէս Սասունի եւ Մշոյ կողմերում ոչ մի հայ ապահովութիւն չունի իւր կեանքի համար. ոչ ոք չէ կարողանում դուրս գալ իւր տնից առանց թուրքերին կամ քրդերին զոհ դառնալու:

Այդ տարաբաղդ զոհերից եղաւ Մշոյ գաւառի (Բուլանլիս) Ատօն գիւղի ութսունամեայ Տէր Առաքէլ Աւագեան քահանայի ընտանիքը:

Սասունի կոտորածի առիթով նորան եւ ինձ, որ նորա որդին եմ, տարան ձգեցին Կոփա բանտը, ուր պահեցին չորս ամիս ժամանակ: Այս միջոցին իմ եղբօրս՝ Գասպարին, կրօնափոխ արին բռնի կերպով:

Չարաբաղդ հայրս ստիպուած եղաւ իւր բոլոր կարողութիւնը ծախել, իւր ունեցած-չունեցածը ծախել, որով կարողացաւ ազատել բանտից՝ թէ իրեն եւ թէ՛ ինձ: Բայց այժմ էլ նորան ամենեւին հանգիստ չեն թողնում: Չեն թողնում, որ գոնէ եկեղեցի գնայ եւ ստիպու՞մ են, ինքն էլ իւր ընտանիքով ուրանայ իւր սուրբ հաւատը, ընդունի մահմէտականութիւն եւ թուրքի մօլլայ դառնա[յ], ասելով. «Ինչպէս որ Ապրօյեան Գասպարը

մահմէտական դարձաւ, այնպէս էլ դու պէտք է մահմէտական դառնաս, որ Գասպարին եւ միւս դարձած Հայերին մօլլայութիւն անես»:

Իսկ ես մի կերպ կարողացայ Համիդէյի Հարիւրապետ Ասսադ աղա անուն քրդից պարտքով առնել եօթանասուն օսմանեան լիրա եւ ազատել մահմէտականացած եղբորս քրդերի ձեռից, եւ նորան իւր ընտանիքով հետս առած՝ անցայ Ռուսաստան՝ Ղարսի գաւառի Քիւրէք դէրէ գիւղը, ուր եւ թողի եղբորս ընտանիքը:

Իսկ իմ ընտանիքը միւս եղբորս հետ մնացել է Հայրենի գիւղումս, ուր իբրեւ պատանդ ծառայում են իմ երկու եւ այդ եղբորս երկու աղջիկները, որոնք անկասկած զոհ կը գնան մահմէտականութեան, եթէ չկարողանամ վճարել այդ եօթանասուն լիրա պարտքս: Այդ գումարն էլ քիւրդը տուեց ինձ այն պատճառաւ, որ կարծում էր, թէ ես էլ եղբորս նման մահմէտական եմ դարձել եւ կամ հակուած եմ դառնալու:

Ես էլ, քաղցին եւ ամենատեսակ զրկանքներին համբերելով, շտապեցի Ղարսից գալ Նոր Նախիջեւան առ ոտք Ձերդ Ս[ուրբ] Օծութեան արկանելու իմ ամենախոնարհ աղերսագիրը եւ խնդրելու, որ շնորհէք ինձ մի կոնդակ, որով միջոց ունենամ ազգայնոցս մէջ պտտելով հանգանակել հարկաւոր գումարը, որով կարողանամ ազատել թուրքերի եւ քրդերի ձեռքերից իմ ընտանեաց եւ մատաղ կոյսերի հոգիները:

Մի՛ մերժէք, Վեհափա՛ն Տէր, տառապեալիս աղերսը, որ եկել եմ այսքան ճանապարհ կտրելով, հազար տեսակ նեղութիւնների համբերելով եւ այն յուսով, որ ձեռնունայն պիտի չմնամ:

*ՁԵՐԴ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝
ՄՈՒՇԻ ԱՏԿՈՆ ԳԻՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԷՐՈՐ ՏԷՐ ԱՊՐՕԵԱՆ*

*1895 ամի, 9 Մայիսի
Նոր-Նախիջեւան*

(ՄՄ, ԽԿՖ, [Թղթ. 103, վաւ. 257])

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏՁԻ Ը.
ՍՐԲԸՋՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ
ԲՈՒԸՆԸԻ ԳԸԻԸՈՒ ԸՏԿՈՆ ԳԻՒՂԻ ԲՆԸԿԻՉ ԸՍՏՈՒԱԾԸՏՈՒՐ
ՂԱԶԱՐԵԱՆԷ
ԽՈՆԱՐՀ ԽՆԴԻՐ**

Պաշտելի՛ Հայրիկ,

Նուառատս եւ երեք ընկերներ ինձ հետ գնացինք Կոպ *Նաչալնըկի* մօտ գործով: Մենք այնտեղ էինք: Շուքրի էֆենդի[ն] յանկարծամահ եղաւ: Մեզ այնտեղ բռնելով տարան բանտ, ասելով, թէ դուք էք արել նորան, որ մեռել է:

Տասն ամիս Մշու բանտում պահեցին: Տասն ամսուայ ընթացքում որքան հաց էին տուել մեզ, հաշուելով տասն ոսկի առան ամէն մէկիցս: Մենք բանտի մէջ մեր եզն, գոմէշ եւ այլ իրեղէններ վաճառ հանելով վերցրել էին եւ ընտանիքներիս ցիր ու ցան էին արել: Տասն ամսից յետոյ հազիւ կարողացայ ազատուիլ եւ գալ այս կողմերս:

Սէֆու լամուկ, Ալի ու Այիազ՝ համիտի միւնքաշիք²⁴⁵ իմ եղբայր Սահակին եւս սպանեցին:

Բարերա՛ր Տէր, այժմ կամենում եմ գնալ երկիր, որպէս զի տեսնեմ իմ երեխայքս եւ կինս ի՞նչ եղան եւ ի՞նչ դրութեան են: Բայց, որովհետեւ չունիմ ճանապարհ[ա]ծախս անկարող եմ գտնւում գնալու:

Վասն որոյ խնդրում եմ եւ աղաչում զթաք խեղճ թշուառիս, հրամայէք, որոց հարկն է տալ ճանապարհածախս:

*ՄՆԱՄՔ ԱԿՆԱՊԻՇ ԱԿՆԿԱԼՈՒ ԲԱՐՁՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՒՄ
ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՂԱԶԱՐԵԱՆ*

1895 թ[իւ], Սեպտեմբեր 14

Ի Ս. Էջմիածին

²⁴⁵ միւնքաշի, թրք., հազարապետ կամ ցեղապետ:

ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹԵԱՆ
ՏՐԵԱՌՆ ՏՐԵԱՌՆ ՄԿՐՏԶԻ ՍՐԲԸՆԸԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ ԵՆՅՐԸԳՈՅՆ ՊԵՏՐՈՐԳԻ ԸՄԲԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ

ՏԸՃԿԸՊԵՏԸ ԲՈՒԼՆԵՐԻ ԳԵՒԵՆՈՒ ԸՏԿՈՆ ԳԻՒՂԵՅԻ
ՄԵՐՏԻՐՈՍ ԲԸՂԴԵՍԵՐԵԱՆ-ՄԷՆԵՐԵՅԻ

Խնդիր

1894 ամի գիւղական գործով մի քանի առաջնակարգ անձանց հետ մեր գիւղացւոց, գնացինք մեր գաւառի Կոբ գիւղի դատարան եւ գիշերեցինք այդ գիշեր այդ գիւղում: Եւ այն տանը, որ մենք հիւր էինք եղած, նոյն տանը հիւր էր եւ Շաքիր անունով մի քուրդ էֆենդի: Դժբախտաբար այդ քուրդ[ը] էֆենդին այդ գիշերը մահացաւ: Այդ քրդի մահուան պատճառաւ բանտարկեցին տանտիրոջը եւ մեզ՝ հիւրերին: Դատաւորաց քննութիւնով մի քանիսը ազատվեցին բանտից, եւ մի քանիսս մնացինք բանտարկուած: Եւ ես բազում կաշառ տալով հազիւ կարողացայ բանդից ազատվել: Մինչեւ իմ բանդից ազատվելը իմ ունեցած բոլոր կայքս քրդերը յապշտակել էին: Ես դորանով անկայ ծանր պարտուց տակ: Մինչ զի իմ երկու որդիքս, ի տեղի երկու հարիւր ոսկի լիրայի, այժմ պատանդ են Այլազ անուն քուրդ[ը] աշրաթի մօտ:

Ես դիմեցի Ս[ուր]բ Կարապետ վանուց առաջնորդի օգնութեան, եւ նա, տալով ինձ վկայական, խորհուրդ տուց դիմելու Ռուսահպատակ հաւատացեալ եղբարց օգնութեան: Ես անցնելով Ռուսաստան հիւանդացայ Ղարս գաւառի Բաշքետիքլար գիւղում:

Եւ հազիւ սթափուած հիւանդութիւնից՝ դիմում եմ առ ոտս Վեհափառ Հայրապետիդ՝ գթալ ի վերայ որդէկորուստ ծնողիս եւ հրամայել թեմական առաջնորդաց Ռուսահպատակ հայոց, որպէս զի նոքայ ժողովեսցին ի թէմական ժողովրդոց իւրեանց կամաւոր նուերս եւ որոց շնորհիւ կարողանամ ազատել իմ որդւոցս կեանքը անօրէն բռնակալի ձեռքից:

Դորանով կը համբուրեմք Վեհափառ Հօրդ ոտքը եւ կօրհնեմք նուիրատու անձանց կեանքերը:

Եւ իմ խնդրիս միջով պատիւ ունիմ ներկայացնելու Վեհափառ Հօրդ վկայական առաջնորդին Ս[ուր]բ Կարապետ վանուց:

1896 ամի, Տն Օգոստոսի

ԲԼՈՒՐ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(GÜMÜŞPINAR)

Հայաշատ Բլուր գիւղը գտնուում էր Վերին Բուլանըքում, Բլէջան լեռան ստորին մասում, Խաչի լճից դէպի հիւսիս-արեւելք, Մերպար գետի ճախափնեայ հարթավայրի մէջ: Բլուր, Մերպար եւ Մալաքեանդ գիւղերը անցեալ դարի 60-ական թուականների ուսումնասիրութիւնների ընթացքում համարուել են ուրարտական շրջանի արձանագրութիւններով հարուստ բնակավայրերից²⁴⁶:

Մ. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում հանդիպում ենք բնակավայրի երկու տարբերակ՝ Բլուր եւ Պլուր: 1928ին Քեմալական Թուրքիայում բնակավայրն հաշուառուեց եւ արձանագրուեց Փիլուր (Pilur)²⁴⁷ անունով: Ներկայումս այն ամբողջութեամբ հայաթափուած է, քրդաբնակ, եւ կոչւում է Գիւմիւշփընար²⁴⁸:

Այս գիւղի հետ է կապուած Մեծ եղեռնի օրերին Առաքելոց վանքի Աւետարանը փրկելու եւ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարին յանձնելու սխրանքը²⁴⁹:

Բլուր գիւղը ենթարկուեց թէ՛ 1894–1896ի համիդեան կոտորածներին, եւ թէ՛ անմասն չմնաց հողային ապօրինի գրաւումներից: Քրդերն այստեղ գրաւեցին մօտ 3000 արտավար²⁵⁰:

Մեծ եղեռնի նախօրէին Բլուր գիւղի հայ բնակչութեան մասին մեզ հասած հաշուումների մէջ բաւական մեծ տարբերութիւն կայ: Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի տուեալների համաձայն, Առաջին աշխարհամարտի նախօրէին Բլուրում կար 182²⁵¹ հայ: Սա բաւական մօտ է Ս. Էփրիկեանի նշած թուին՝ 26 տուն հայ, իւրաքանչիւր տան համար 7 շունչ բնակչով²⁵²: Տարբեր աղբիւրների համադրման արդիւնքում

²⁴⁶ Burney C. A., Urartian Fortresses and Towns in the Van Region, Anatolian Studies, 1957, Vol. 7 (1957), էջ 43:

²⁴⁷ TC, Dahiliye Vekaleti, Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928, էջ 416.

²⁴⁸ <https://nisanyanmap.com/?y=Arakonak&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

²⁴⁹ Գափոյան Ա., Նրանց գնալով աղքատանում ենք մենք, հարստանում է մեր պատմութիւնը, Հայ գիւմլոր, 17 Գեկտեմբեր 2010, www.hayzinvor.am/754.html.

²⁵⁰ Տէր Կարապետեան Գ., Հոդային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պօլիս, 1911, էջ 41:

²⁵¹ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350.

²⁵² Էփրիկեան Ա., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Ա., էջ 54:

Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն հայ բնակչութեան թիւը կազմել է 60 տուն, կամ 420 անձ²⁵³:

1916ի յունիսի 20ին Բլուր գիւղից 14-ամեայ Եղոյեան Զաւահիր²⁵⁴ (Զավահիր²⁵⁵) եւ 9-ամեայ Եղոյեան Արեգնազը²⁵⁶ հաշուառուել են ՀԲԸ Նոր-Քայազէտի որբանոցի որբերի ցուցակում:

(ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 109)

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ ՄԿՐՏԻՉ
Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍ ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԸՅՈՑ
ՊՈՒԼԵՆԸԻԻ ԳԵԻԸՌ ՊԼՈՒՐ ԳԻՂԻ ԲՆԵԿԻՉ Մ[Ը]ՀՏ[ԵՍ]Ի
ԵՐԱՆՈՍ ՅՈՎՀ[Ը]ՆՆԵՍԵՆՑԻՔ**

Խոնարհական խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Այսօր հազիւ հասայ Ձերդ Վեհափառութեան շնորհաց: Վ[ա]սնզի ես՝ 78 տ[ա]րեկան ծերուկս, հայրենիքիս մէջ ամէն չարիքներին համբ[ե]լրեցի, բոլոր նեղութե[ան]ց եւ քրթական տանջանաց եւ հարուածից եւ ն[ոյնիսկ]՝ այն բոլոր արհաւիրք սրտիս բնաւ սարսափ չազդեց:

Վեհ[ափառ] Տէր,

Ախ՛, իմ սիրտս հարուածող եւ արիւն-արցունք աչքերէս վազցնել տուող այն երկու հազար ղ[ու]ր[ու]չ պարտքն է, որուն պատճառաւ իմ 10-ամբողջ ընտանիքը այսօր հասնանցոց Աճամի-Շավէջ աղի մօտ պատանդ մնացեր է, եւ, որ հասնանցոց Աջէմի այս է պատճառ...

Վեհ[ափառ] Հայրիկ, ասկէց աւելի բան չեմ կ[ա]րող խօսիլ եւ հաւատացէ՛ք, որ ես իբրեւ բօթաբեր ընտանեաց միակ ազատութե[ա]ն հ[ա]մ[ար] դիմեցի Ձերդ Վեհութեան ծունկերուն՝ ժամը յառաջ մի դարման գտնալու յուսով, որ գնամ, ազատիմ զանոնք, ապա թէ պիտի կենացս վերջ տամ յուսահատութենէս:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐ Հ ԱԿՆԱԾՈՒԹ[ԵԱՄ]Բ ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝
Մ[Ա]ՀՏ[ԵՍ]Ի ԵՐԱՆՈՍ ՅՈՎՀ[Ա]ՆՆԵՍԻՑ

1895, 13 Օգոս[տոս]

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

²⁵³ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

²⁵⁴ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 44:

²⁵⁵ Նոյնի Յաւել. հմր. 41:

²⁵⁶ Նոյն տեղում:

ԲՈՍՏԱՔԵԱՆԴԻ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(BOSTANKENT)

Բոստաքեանդ գիւղի տեղագրութիւնը վիճելի է: Սկզբնաղբիւրներում այն ընդգրկուած է երբեմն Մանազկերտի, երբեմն՝ Բուլանք գաւառի կազմի մէջ: Յաճախ էլ, այս բնակավայրի տեղագրութիւնը դրոււմ է Մշոյ շրջանի մէջ՝ առանց մանրամասնելու գաւառ կամ գաւառակ:

Բոստաքեանդ (Բոստանքանդ, Բոստանքէնթ) տեղանունը Բուլանք գաւառի գիւղանունների շարքում են ընդգրկել Թէոդիկը²⁵⁷ եւ Ատրպետը²⁵⁸, իսկ Կ. Սասունին, «Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով բացւած դպրոցներ» բաժնում, բնակավայրը ներառել է Ներքին Բուլանքի գիւղերի մէջ²⁵⁹:

Պէտք է նկատի ունենալ, որ Բոստանքեանդ կամ Բոստան քէնթ կոչւած գիւղը Մանազկերտի սահմանից բաւական հեռու է, եւ չպէտք է այն շփոթել Բոստանխայա կամ Պոստանխանէ անունով Մանազկերտի շրջանում ընդգրկուած բնակավայրի հետ: Այս մասին աւելի յստակ կարելի է տեսնել ժամանակի քարտէզներում²⁶⁰:

Սոյն ուսումնասիրութեան մէջ Բոստաքեանդ գիւղն ընդգրկուած ենք Բուլանք գաւառի գիւղերի ցանկում՝ հիմք ընդունելով Թէոդիկի եւ Ատրպետի յղումները, ինչպէս նաեւ Խորիմեան կաթողիկոսի Փոնդի վաւերագրերը: Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստիտուտի ձայնագրութիւնների Փոնդում պահւում են 1969ին Սարգիս Յարութիւնեանի բանահաւաք արշաւախմբի ձայնագրութիւնները: Այս նիւթերի մէջ եւս Բոստաքեանդից գաղթածները բնակավայրը տեղագրում են Բուլանք գաւառի կազմում²⁶¹:

1871ին Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով Բոստաքեանդ գիւղում բացուել էր դպրոց, որն ունէր 15 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ Պետրոս Տէր-Գրիգորեան²⁶²:

²⁵⁷ Թէոդիկ, Գողգոթա, էջ 101:

²⁵⁸ Ատրպետ, Բուլանք, հմր. 214:

²⁵⁹ Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի..., 1957 թ., էջ 271:

²⁶⁰ Karte von Kleinasien in 24 Blatt ... Bearbeitet von Dr. Richard Kiepert, Berlin, 1913.

²⁶¹ Տե՛ս Հնագիտութեան եւ Ազգագրութեան ինստիտուտ, Ձայնագրութիւնների ֆոնդ, Ախտրեանի պատերգեր, հմր. 2; 4:

²⁶² Սասունի Կ., 2013, էջ 248:

Մկրտիչ Ա. Խրիմեանի ֆոնդից արտագրուած նամակը խօսուէն մի վկայութիւն է գիւղի հայ բնակչութեան հարստահարման, կրած զրկանքների, թուրքական ու քրդական ճնշումների մասին առհասարակ:

Յեղասպանութեան ընթացքում Բոստաքեանդ գիւղից փրկուած մի քանի որբեր տեղափոխուել են տարբեր ապաստարաններ: Այդ որբերից են՝ Ըռկոյեան Առաքելը՝ 11 տարեկան²⁶³, Բաղդասարեան Դաւիթը՝ 11 տարեկան²⁶⁴, Բաղդասարեան Քիչմիշը՝ 6 տարեկան²⁶⁵, Խուրշուդեան Արմէնը՝ 8 տարեկան²⁶⁶, Սիմոնեան Հերքօն՝ 9 տարեկան, Մովսէսեան Յովսէփը՝ 12 տարեկան²⁶⁷:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 590)

ՆՈՐԻՆ ՎԵՀԸՓԸՌՈՒԹԵԱՆ ՀԵՅՐԸՊԵՏԻՆ

ԼՍՆԵԼՅՆ ՀԵՅՈՑ

**Ի ՏԵՃԿԵՍՏԵՆԷ ՊՈՒԼԵՆՈՒԹ ԳԵՒԸՌԻ ԲՈՍՏԱՔԵԱՆԴ ԳԻՒԳԶԷ
ՄԻԹԵՐ ԳԸԼՈՒՍՏԵԱՆԷ**

Ամենախոնար[հ]աբար խնդիր

Նախ անցեալ 1893 ամին դաւաճանեցանք ընդ միումն բարբարոս քրտու, առիթովն ազգասիրութեան՝ որ եւ յա[յ]տ է Սրբութեանդ:

Զկնի քանի միջոցաւ գաղտաբար ի յանդէ տարան զմատաղահաս, ինն ամեա[յ] Յովհաննէս անուանի որդի իմ, եւ անյա[յ]տացուցին ի մէջ յինքեանց:

Իսկ ես՝ ընդ ծերացեալ կնաւս՝ որպէս զջանակորուս<ս> մայր, դեգերալով ընդ ամ[ենայն] գաւառս, չորս ամսուց չափ հազ ի հազ լուաք ի բերանէ տաճկի միոյ երեսուն արծաթի կաշառով, թէ որդին ձեր կայ աւասիկ Նորչէն տաճկաբնակ գիւղը՝ մերձ Բիթլիզու:

Եւ երբ գտաք՝ չկարողացամք տեսնել: Մինչ ի բողոքեցինք տեղական դատարանը: Եւ ապա ներկանացուծին զմանուկս՝ երբեմն ուրախ եւ երբեմն տրտում: Վասն զի ըստ օրինի մահմետականի՝ թլպատեալ էին: Սակայն Աստուածային ողորմութեամբն լսելի եղեւ դատաւորը ի բերանէ մանկանէ, թէ

²⁶³ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 21:

²⁶⁴ Նոյնի Յաւել. հմր. 23:

²⁶⁵ Նոյն տեղում:

²⁶⁶ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 48:

²⁶⁷ Երկուսն էլ 1916ին եղել են Ալաշկերտի որբանոցում, տե՛ս «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 48:

կամ ի՛ հաւատս քրիստոնէութեան: Եւ ակամայից, թլպատեալքն յայնժամ զամօթի հարան բարբարոսք եւ ցնձացինք քրիստոնեա[յ]քս: Առի զմանուկս ի դիւանէն եւ երկու զորականօք բերաւ ի տուն իմ:

Իսկ զկնի քանի աւուրց, կրկին յարուցին ի վերա իմ նորիմն չարիք, թէ մանուկդ ի տանէ մերմէ գողացեալ է յիսուն ոսկի եւ այլ զարդս կանանց, եւ այսպիսի դաւաճանութեամբ բարձրացաւ մեծամեծ կռիւն^օ: Անորենքը սրով, եւ որդիքն իմ գերանդով վիրաւորեցին միմեանց:

Զկնի քսան աւուր մեռաւ վիրաւոր ովումն քրտաց Աւտալ անուանին: Եւ երբ իմացամք, առին Երանոս եւ Սէրոբ որդիկն իմ զՅոհաննէս եղբայր իւրեանց եւ փախան ի ընդուստտան: Իսկ անորենք քայքայեալ փլուցին եւ աւերելով աւերեցին զտունս եւ զգոյսս եւ վճռեցին երեք հարիւր եւ յիսուն ոսկի՝ դէմ արեան Աւտալին:

Իսկ ներկա[յ] թուականիս ազդ եղեւ, զոր կորուսեալ որդին իմ մեռեալ է բանտում: Երանոս ընկղմեալ է ի խորս ընդուստտանու եւ Սէր<է>ոբը ծանր հիւանդութեամբ կա[յ] ի Քիւրակտարեն՝ Խարսու:

Ուստի զվեր թողեալ զանազան աղէտանաց, պատանդեցին զերկունս դստերքն իմ ի տունս ըռեսի միոջ բարեպաշտելի՝ ի դէմ յիշատակեալ պարտուց: Եւ ես նախանցեալ ամէ մինչ ի ցա[յ]ժմ դեգերալով առ դուրս ողորմածաց չկարողացա[յ] լցուցանել զեօթ[ն]երորդ մասն պարտուցս:

Վասն որոյ խոնարհաբար խնդրեմ գորովագոյթ Վեհափառութենէդ առէք զտնորինութիւն: Վասն զի լաւ է ինձ մեռանել քանց ցաւալի եւ աղետալի կեանս կրել:

*ՄՆԱՄ ՍՊԱՍՈՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆԴ ՆՈՒԱՍԾ ԾԱՌԱՅԻՅ ԾԱՌԱՅ՝
ՄԽԻԹԱՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ*

1894 ամի, 15 Փետրվարի

ԵՕՆՁԱԼՈՒ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(YONCALI)

Հայաշատ Եօնջալու գիւղն ընկած էր Վերին Բուլանըքի Կոփ գիւղաքաղաքից 8 կմ դէպի հիւսիս-արեւմուտք՝ Կոր-ջուր գետի աջ ափին: Գրեթէ բոլոր աղբիւրները միանշանակ նշում են, որ այն զուտ հայաբնակ գիւղ էր, թէ՛ դարասկզբին եւ թէ՛ Մեծ եղեռնից առաջ: 1900-ականներին այստեղ ապրում էր 1.400 հայ (153 տուն)²⁶⁸: Առաջին աշխարհամարտի նախօրէին արդէն գիւղի հայութեան թիւը հասնում էր 1560ի²⁶⁹ (263 տուն²⁷⁰):

Մ. Խրիմեանի ֆոնդում պահպանուած նամակներում բնակավայրն յիշատակուած է Եօնջալու²⁷¹, Եօնճալու, Օնջալու, Յոնճալու, Յոնջալու ձեւերով²⁷²: Մեզ հանդիպել են նաեւ գիւղանուան՝ Յոննալու, Յոննգալի, Յոննչալու²⁷³, Էօնճալու²⁷⁴, Ղօնջալու²⁷⁵ տարբերակները: 1902ի եւ 1914ի ռազմական քարտեզներում տեղանունը նշուած է Եօնջալու (Yoncali)²⁷⁶, իսկ 1928ին, Քեմալական Թուրքիայում արուած հաշուառումների ժամանակ այն արձանագրուեց Յօնջելի (Yondjeli)²⁷⁷: Ներկայումս գիւղն ամբողջութեամբ հայաթափուած է եւ կոչւում է Եօնջալը (Yoncali)²⁷⁸:

²⁶⁸ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Ա., էջ 755:

²⁶⁹ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350.

²⁷⁰ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

²⁷¹ Եօնճալու գիւղի բնակիչներից գրուած այլ նամակներ տե՛ս, ՄՄ, Խկֆ., թղթ. 103, վաւ. 44, նամակագիր՝ Սիմէօն Մուրատեան; թղթ. 103, վաւ. 44; նոյնի վաւ. 185, նամակագիրներ Մարտիրոս Ղուկասեան, Սէնկօ Մուրատեան, Ռաֆաթ Յօխսեան, Յովհաննէս Գրիգորեան; ՄՄ, Խկֆ., թղթ. 103, վաւ. 95, նամակագիր՝ Մելիք Քօլօգեան, ՄՄ, Խկֆ., թղթ. 105, վաւ. 36, նամակագիր՝ Մուրատի որդի Մանուկ:

²⁷² ՄՄ, Խկֆ., թղթ. 103, վաւ. 17, նամակագիր՝ Գէորգ Մանուկեանց, ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 356, նամակագիր՝ Դաւիթ Մխիթարեան; ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 122, նամակագիր՝ Թէգօ Յոհանեան, ՄՄ, Խկֆ., թղթ. 105, վաւ. 340, նամակագիր՝ Բեգօ Մելիքեան; ՄՄ, Խկֆ., թղթ. 105, վաւ. 36, նամակագիր՝ Պոլանըք գաւառի Եօնճալու գիւղից Մուրադի որդի Մանուկ; ՄՄ, Խկֆ., թղթ. 102, վաւ. 802, նամակագիր՝ Մշոյ Պոլանըք գաւառի Եօնճալու գիւղի բնակիչ՝ Խաչիկ Պետրոսեան:

²⁷³ Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Յուցակ 1, էջ 93:

²⁷⁴ Երեմիա Տեկանց, Տոհմային Յիշատակարան, էջ 30:

²⁷⁵ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 9:

²⁷⁶ Erkân-i Harbiye-i Umumiye...:

²⁷⁷ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416:

²⁷⁸ <https://nisanyanmap.com/?y=Yoncal%C4%B1&lv=&t=Bulan%C4%B1&u=1&ua=5>

Եօնջալու գիւղն ունէր Ս. Աստուածածին անունով եկեղեցի եւ մէկ նախակրթարան: Մշոյ Ս. Առաքելոց վանքի ձեռագրացուցակում արձանագրուած է երկու ձեռագիր Աւետարան (1336 թ., 1501 թ.) եւ մէկ ձեռագիր շարականոց (1606)²⁷⁹: Կարծիքներ կան, որ յունարէն արձանագրութիւններով զարդարուած Թադէոս առաքեալի շիրիմը Եօնջալու եւ Կոփ գիւղերի միջնամասում եղած մատուռում է²⁸⁰:

Թէպէտեւ Մ. Միրախորեանը վերապահութեամբ է բնութագրում Եօնջալուի կրթական կեանքը, սակայն մեր ձեռքի տակ եղած նամակներում եօնջալեցիների խօսքը շարադրուած է գրագէտ հայերէնով, որից ենթադրելի է դպրոցի եւ կրթութեան հանդէպ նրանց ունեցած վերաբերմունքը: Բացառիկ մէկ նամակ ունենք՝ գրուած Եօնջալուի Եսայի վարժապետի կողմից, որը դասական նամակի գեղեցիկ օրինակ է՝ համեմուած աստուածաշնչեան համեմատութիւններով:

Կան նաեւ նամակներ, որոնք պարունակում են բարբառային արտայայտութիւններ, ինչպէս օրինակ՝ հերոս անցուցինք²⁸¹, վիճակ գէշ է²⁸², երկու պօլուկ (վաշտ)²⁸³ զօրք, 10 նըֆուս (Nüfus-բնակչութիւն)²⁸⁴, տղիկ²⁸⁵ (փոքր երեխայ), բազբօրդ (անձնագիր)²⁸⁶, պայերիս (պահել ես)²⁸⁷, խրկէք (ուղարկէք) եւ այլն:

Այս բազմաթիւ նամակներից հասկանալի է, որ 1893ից գիւղում մեծ թափ են առել մանկահասակ երեխաների առեւանգման դէպքերը, բնակչութիւնը ենթարկուել է հարստահարման, թուրքացման եւ կրօնափոխութեան հարկադրանքի՝ որպէս հարկերից ազատուելու միջոց: Ստեղծուած պայմանների թելադրանքով մարդիկ դիմել են փախուստի՝ տեղափոխուելով Արեւելեան Հայաստան կամ այլ վայրեր: 1908ին կազմուած տեղեկագրերից մէկի համաձայն Եօնջալու գիւղից 55 ընտանիք է դիմել փախուստի, 92 ընտանիք զրկուել լուծից, 36 հոգի սպանուել, 12-ը՝ առեւանգուել կամ բանտարկուել: Բնակչութեան մի մեծ մաս մեկնել պանդխտութեան²⁸⁸:

²⁷⁹ Մուրատեան Ս. Ա., Մարաիրօսեան Ն., Յուցակ Ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, Երուսաղէմ, 1967, էջ 220:

²⁸⁰ Բենսէ, Բուլանքիս կամ Հարֆ, էջ 30:

²⁸¹ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 295:

²⁸² Նոյն տեղում:

²⁸³ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 15:

²⁸⁴ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 590:

²⁸⁵ Նոյնի վաւ. 592:

²⁸⁶ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 29:

²⁸⁷ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 108:

²⁸⁸ Տէր Կարապետեան Գ., Հոդային հարցը..., էջ 21–22:

Այս գիւղն հարստահարուել է հասնանցի Ֆէհիմ, Սիւլէյման, Թաճտին, Հիւսէին, Խալիթ եւ ուրիշ աղաների ձեռքով, որոնք յափշտակել են 1.200 ոչխար, 139 գոմէշ-մատակ, 322 եզ-կով, 324 կիւղբրամ հացահատիկ, 425 դէզ խոտ, 400 սակառի հարդ, 73.682 դահեկան արծաթ, 150ի չափ արտեր, որոնց միայն տարեկան հասոյթը 1.000 ոսկիից աւելի էր: Եօնջալուն թաւանուեց նաեւ խուզարկութիւններ իրականացնող ծառայողները՝ միւլթէ-զիմների ու թահսիլդարների կողմից: Ըստ այնմ՝ թահսիլդարները տարան 6.100 ղուրուշ, Փիդայի փնտրողները 4.260 ղուրուշ, եւ այլ կաշառք՝ 17.000 ղուրուշ²⁸⁹:

1899–1905ի ընթացքում հարկահաւաքները, իբր փոխան փախչող գաղթականների պետական տուրքի, եօնջալեցիներից յափշտակել են 92.500 ղուրուշ, երեք տարուայ մէջ 1903–1905 տարապարփակ աշխատեցնելով, նրանցից խլել են 728 բանուոր, 220 սայլ, 328 բեռնակիր եզ, 900 դէզ խոտ, եւ տարեկան 120 տաւարի կեր²⁹⁰:

Այս ամէնից զատ 1908ի ապրիլ 18ին՝ հասնանլը Ֆէհիմ աղայի ծառաները յարձակուում են գիւղի վրայ, ներս են խուժում Խալոյեան Ալօ անունով հայի տուն, սպանում են Ալօյին, կնոջը՝ Պէզօյին, եւ զաւակներին՝ 15-ամեայ Արփիարին, 9-ամեայ Լեւոնին, 11-ամեայ Էֆիկին, քենուն եւ փեսայ Թորոսին: Ամբողջ ընտանիքը այլեւս ջնջուած էր եւ 300–400 ոսկիի հարստութիւն թալանուած²⁹¹:

Հողային գրաւումներին իբրեւ հետեւանք են ներկայանում Մ. Խրիմեան կաթողիկոսին հասցէագրուած հացի ու հագուստի խնդրագրերը:

Մեծ եղեռնի ընթացքում Արեւելեան Հայաստան են տեղափոխուել եւ տարբեր ապաստարաններում են հաստատուել 6–12 տարեկան եօնջալեցի 10 որբեր. Քոչոյեան Ֆիդան՝ 6 տարեկան²⁹², Աբրահամեան Մկրտիչ՝ 12 տարեկան²⁹³, Յովհաննիսեան Շողեր՝ 12 տարեկան²⁹⁴, Պօղոսեան Ազնիւ՝ 8

²⁸⁹ Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 21–22:

²⁹⁰ Նոյն տեղում:

²⁹¹ Նոյն տեղում:

²⁹² «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 9:

²⁹³ Նոյնի Յաւել. հմր. 25:

²⁹⁴ Նոյն տեղում:

տարեկան²⁹⁵, Վարդանեան Հերիքնազ՝ 4 տարեկան²⁹⁶, Վարդանեան Զարգանդ՝ 2 տարեկան²⁹⁷, Միլոյեան Խաչալ՝ 10 տարեկան²⁹⁸, Միլոյեան Զանթա՝ 8 տարեկան²⁹⁹, Միլոյեան Գէորգ՝ 7 տարեկան³⁰⁰, Սարգսեան Հմայեակ՝ 6 տարեկան³⁰¹:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 75)

**ՀԱՅՐԵՆԵԱՆԻ ՊԼԱՆՏՐԻԲԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ ԵՒ
Ե[ՍՏՈՒԼ]ԾՐՆՏԻՐ ԸՈՒԶԻՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻԶ
ՍՐԲԸԶՆԵԳՈՅՆ Կ[ԼԱՆԴ]ՈՒԴ[ԻՆ]Կ[ՈՂ]Ս ԸՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ
ՎԵՀԵՓԸՈՒ ՀԱՅՐԵՊ[ԵՏ] ԼՈՒՍԸՆԿԸՐ ԳԵՀԻՆ ՍՐԲՈՅ
ԷԶՄԻԵԾՆԻ**

Ազգասէ՛ր Հայրիկ,

Օսմանիոյ պետութեան դժոխային բանտերու շղթայներէն հազիւ ճողորկեալ, գլխաւոր Վեհափառութեան]դ սեղանոյ եղջիւրն ձեռնարկեալ ապաստանեցայ:

Ո՛վ իմանալի Արեգակդ, ի սկզբանէ անտի Ա[ստուա]ծային անստուեր լուսով խառնուած է Ս[ուր]բ զանկուած հայրիկիդ: Զի ծագիս ի վ[ե]ր[ա]յ չարեացն եւ բարեացն եւ ցօղես զանսպառ ողորմութեան]դ ցօղն ի վ[ե]ր[ա]յ շնորհաց եւ ապաշնորհացն:

Ա՛րդ, ո՛վ ողորմած Հայրիկ, ցօղեայ յիս եւս՝ ի գերի մնացեալ գերդաստանս, որք այժմիկ ի հայրենեաց աշխարհէն սպասէն եւ աղաղակէն ի տուէ եւ ի գիշերի եւ խնդրեն զօգնութիւն]: Քանզի անագորոյն հեմիտիէ զօրք քիւրճերին, թալնելով զամ[ենայն] անասունս եւ զգոյքս, մերկացուցեալ յնչիցն, եւ թողեալ կիսակենդան եւ հեռացեալ՝ օրինակ Երուսաղէմի ճանապարհին վերայ անկեալ վիրաւորին:

Ուրեմն, ո՛վ դու Հայոց կիսամեռուկ ազգութեան] բուժօղ ճշմարիտ Սամարացի, քեզ միայն է տուեալ ի Հօրէ բառնալ զվիրաւորս ի գրաստու

²⁹⁵ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 25:

²⁹⁶ Նոյն տեղում:

²⁹⁷ Նոյն տեղում:

²⁹⁸ Նոյնի Յանդ. հմր. 26:

²⁹⁹ Նոյն տեղում:

³⁰⁰ Նոյն տեղում:

³⁰¹ Նոյն տեղում:

գլխով թեմանդ եւ արկանել զգիւնին եւ ձէթ ամենախնամ ողորմութեանդ:

Խոնարհեցո՛՛ Տէր զուկն քոյ եւ լո՛ւր ինձ, զի աղքատ եւ տնանկ եմ ես:

Ո՛վ բարերարդ ազգիս, մի՛ լքանիր այսմիկ Ա[ստուա]ծապարգեւ տնօրինութենէ, որում ի մանկութենէ կոչեցար եւ որոշեցար սերմանօղ ողորմութեան կարօտելոցն: Վասն զի երկնային հեղինակին հրահանգովն հրահանգեալ է հոգի հայրենասէր Հայրիկիդ: Եւ քեզ վայել է այս Ս[ուր]բ աւանդ ա[ստուա]ծ[այ]ին, որ էս միջնորդ ի մէջ Ա[ստուծո]յ եւ ի մէջ նեղեալ կարօտելոցն, եւ այս անուն վեր է քան զամ[ենայն] անուն, որ այժմիկ կան ի կենցաղոյս եւ տիրէն աշխարհի:

Աւա՛ղ, անձկով կարօտ է Վեհափառ Հայրիկիդ երեսին տեսութեան]: Վաղեմի, նախածանօթ հող ոտիցդ՝ Բուլանխայ (յԱպաղունեաց) գաւառի Եօնճաւու գիւղի ամենախոնարհ Մալխաս Եսայի ապերջանիկ վ[ա]րժ[ա]պ[ետ]ն՝ յուսալով յԱ[ստուա]ծ եւ ի Վեհափառ Խրիմեան Ազգասէր Հայրիկն:

ՆՈՅՆ Ծ[ԱՅՐԱԳՈՅՆ] Վ[ԱՐԴԱՊԵՏ] Հ[ԱՅՐ] ԵՍԱՅԻ Վ[Ա]ՐԺ[Ա]Պ[Ե]Տ
ԽՈՌԽՈՌՈՒՆԻ ԵՕՆՃԱՒՈՒ ԳԻՒՂԷ

1895, 16 Յուլիս

Աղեկս[ա]նտր[ա]յօլ

(ՄՄ, ԽԿՖ, [Թղթ. 103, վաւ. 184)

ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՆՈՒԹԵԱՆ Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ
ՄԿՐՏԻՉ Ս[Ր]ԲԸՆԵԳՈՅՆ

ՊՈԿԼԵՆԴՈՒ ԵՕՆՃԱՒՈՒ ԳԻՒՂԻ ԳԵՂԹԵԿԱՆ ԲՆԵԿԻՉ

Ընտանեաց թիւ՝

Նազար Ասպատուրեան - 8 [չուկն]:

Մուրադ Կիրակոսեան - 7 [չուկն]:

Ասպատուր Կիրակոսեան - 9 [չուկն]:

Մկրտիչ Մէհրեան - 4 [չուկն]:

Ընդհանուր՝ 28 [չուկն]:

Վեհափա՛ռ Հայրիկ,

Մենք յիշեալ չորս ընտանեաց տէր կը համարուինք, որ գիմեցինք ծնկա-

չօք առ ոտս բարերարութեանդ: Նախ մեր սոյն թշուառ ընտանեաց մի ապահով գիւղ *Խրկէք*, որ կարող լինինք ձմեռնային ապագայ սառնամանիքէն լաւ պաշտպանուիլ՝ ինչպէս անցեալ տարի պահուեցանք Ձերին հայրական պահպանողութեամբ՝ Կառնուայ Հիմամ-Շուշի գիւղ, որոց բարերարութիւն մեր բոլոր ընտանիք՝ մեծ եւ փոքր երախտապարտ են:

Գալով մեր չորս ընտանեաց առտնին կրած ներկայ անձկութեան եւ դառնաղէտ վիճակին, որ չենք կոնար յայտնել մի առ մի, վասն զի ամէն մէկիւ տուն 3-4 հիւանդ ինկած են: Փող չունինք, որ նոցայ դարման ընենք, բժիշկի եւ ուրիշ կարիքներէ զուրկ կը մնան: Մուրթ խրճիթ կը մտնինք: Այդ պժգալի տեսարան մեր աչաց կը բացուի հիւանդներու դառնաղէմ աղաղակներն, եւ կսկիծէն աչքերնիս կսկսին մթագնիլ, բերաններէս կրակ ու բոց դուրս կը վխտա... մա՛հ կուգենք, բայց ձեռք չանցներ:

Հայրի՛կ Վեհափառ, մենք այս տեսակ դառն բաժակ չէինք խմեր, չէինք տեսեր յասպէս վայրկեաններ: Տներնիս կը նայիմ՝ բան մը չըկայ. ո՛չ ուտելիք, ո՛չ վառելիք, ազանելիք ըսիս՝ պատկառիմ ըսել՝ բոլորովին չկայ:

Հայրի՛կ մեզ օգնէ՛...

Ժամանակով շատերուն ըրած եմք, իսկ այժմ ի Ձեզ ենք դիմում, մեր մարմնաւոր պէտքերը հոգացէք, վասնզի Դ<յ>ուք էք թէ մեր տէր, պաշտպան եւ ճշմ[ա]րիտ հովիւ:

ՀԱՄԲՈՅՐ ՇՆՈՐՀԱԲԱՇԽ ԱԶՈՅԴ /// ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ
ՄՆԱՄՔ ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ՆԱԶԱՐ ԵՒ ԸՆԿԵՐՔ

14, Սեպ[տեմբեր], Վաղարշապատ
[Ստորագրութիւն]

(ՄՄ, ԽկՖ, Թղթ. 103, վաւ. 13)

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆԵՌՆ ՏՆԵՌՆ
ՄԿՐՏՁԻ ՍՐԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԼՄԵՆԵՅՆ ՀԸՅՈՅ
Ի ԲՆԵԿՁԷ ՄՇՈՒ ԳԸԻՆՈՒ ՕՆՃԼԼՈՒ ԳԵՂՁ ԳԷՈՐԳ ՄԼՆՈՒԿԵԼՆՅ

Ի 1894–1895 ամաց եղեալ հալածումն եւ ճնշումն ի դէմս ժողովրդաց Սասնոյ, Մշոյ եւ այլ տեղւոյս Տաճկահայոց երկրներում, եւ ստիպուած լինելով այդպիսի անտանելի դէպքերից այս՝ 1895 թիւ, ես՝ իմ ընտանիքով, որը բաղկացած է ամուսնուց եւ որդուց, գաղթեցի իմ ծննդավայրից եւ

թափառեցի այլեւայլ քաղաքներ եւ գիւղեր՝ հաւաքելով մի քանի *կոպէք* ու դորմութեամբ զանազան անձնաւորութիւններից:

Վերջապէս, տառապանօք եւ աննկարագրելի դրութեամբ եկայ ընտանիքով այս Ախալքալաք քաղաքը, ուր մի քանի ժամանակ աշխատութիւնից յետոյ, ես իմ գերդաստանով ընկայ սաստիկ հիւանդութեան մէջ:

Այժմեան վիճակն իմ ընդ ամուսնոյ եւ որդւոյ իմոյ է յոյժ ցաւալի, անտանելի եւ աննախանձելի: Քանզի աւելի քան մի ամիս է, որ ես իմ ընտանիքով *գտընվում* եմ մի բարի անձի հոգատարութեան ներքոյ:

Վասն որոյ, յայտնելով վերոյիշեալի մասին, ամենախոնարհաբար, ի ծուներ անկեալ առաջի Վեհափառ Հայրութեանդ, դողդողագին եւ աղերսագին հայցում եմ Ձերդ Վեհափառութեան գթութիւնը՝ ի սէր Փրկչի եւ մարդասիրութեան, մտանելով աննախանձելի եւ թշուառ դրութեան իմոյ ընդ ընտանիքս, տնօրինել եւ օգնել ինձ եւ իմ ընտանիքիս նիւթական միջոցաւ, որով կարողանամ զնալ իմ միւս երկու օրիորդաց մօտ, որոնք Կարս քաղաքում դեգերվում են մուրացկանութեամբ:

ԳէՎՕՐԳ ՄԱՆՈՒԿՕ Վ ՎԱՍՆ ԳԻՐ ՈՉ ԳԻՏԵՆԱԼՈՒՆ
ԸՍՏՕՐԱ ԳՐԵՑԻՎ ՎԱՂԱՐՇԱԿ ԱՅՎԱԶԵԱՆ

1895 թիւ, Յուլիս 11

ի Քաղաքն Ախալքալաք

(ՄՄ, ԽկՖ, ԹղԹ. 103, վաւ. 26)

ԸԶԳԵՅԻՆ ՍՐԲԸԶԸՆ ՊԼԵՂՏՐԻԷՂԻԳ ԿՈՍԳԸՆԴԵՆՈՒ ՊՕԼՍՈՅ
ԵՒ ՍԼՐԴՐՈՅ ԷԶՄԵԸԾԵՒ ԼՈՒՍԸՆԿԸՐ ԳԵՀԻՆ
ԸՍՏՈՒԷՂԾԸՆՏԻՐ ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ԼՈՒԶԻՆ ՄԿՐՏԻՉ
ՎԵՀԵՓԸՌ ԵՒ ՀԵՅՐԵՆԸՍԻՐ ԿԼԵԹՐՈՂԻԿԱՆՍ
ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ

Գթառա՛տ Հոգի,

Յիսուսի կենսաբեր Աւետարանը ցուցանէ զգալի Արեգական լոյսն, որ ծագի ի վ[ե]ր[ա]յ չարեաց եւ բարեաց, եւ տեղիայ անձրեւ ի վ[ե]ր[ա]յ շնորհացն եւ ապաշնորհացն, նոյնպէս եւ դու, ո՛վ աղբիւր բարութեանց:

Ի սկզբանէ անտի ծագես զլոյս գթութե[թ]ե[ան]դ ի վ[ե]ր[ա]յ արժանից եւ անարժանիցն, եւ ցօղես զցօղ ողորմութե[թ]ե[ան]դ չարի եւ բարի անձանց եւ

ո՛չ խտրեա եւս երբեք ձեռնունայն յետս ո՛չ դարձուցանեա զամ[ենայն] աղքատս: Որպէս առատ էիր սրտիւքն, նոյնպէս զվէմդ, զոր շինօղքն անարգեցին, եղեւ գլուխ անկեան տանն Թորգոմայ:

Արդ, ո՛վ Հայրիկ, յիշէ՛ զքոյ անարժան Եօնճալու գիւղի բազմաշխատ ծերունի Մալխաս Եսայի վ[ա]րժ[ա]պ[ետ]ն, որ այժմիկ գերծեալ թրքական դժոխային բանտերու կապերէն եւ սոսկալի շղթայներէն, կիսակենդան դիակն Երուսաղէմի ճանապարհի վ[ե]ր[ա]յ եղած վիրաւորին իսկ եւ իսկ առնի զնմանու[թիւ]ն:

Զի ք[ա]հ[ա]ն[ա]յքն ոմանք եւ ղեւտացին ոչ արարին այցելու[թեամ]բ վեր ականել զնայ, այլ Քեզ՝ Բարերա՛ր Սամարացի, բա՛րձ գդիակն իմ ի գրաստու գթու[թ]ե[ան]դ զնել ի վերայ վիրացս զգինին ու ձէթ ողորմու[թեա]ն:

Քանզի ողորմելոյս 17 թուով գերդաստանն ի Հայրենիքն է այժմիկ: Հէմիտիէ վայրենի քրթացն կողոպտելով ճարահատեալ սկ[ս]եցինք ապաստանել ի գիրկ գթու[թ]ե[ան]դ: Իմ վիճակն վերջին շունչ սպառելու վերայ է, քանզի պանդուխտ, թշուառ եւ անծանօթ եմ աշխարհիս: Միայն իմ յոյս առ Ա[ստուա]ծն է եւ Զերոյին ողորմած գթու[թ]ի[ւ]ն: Համաձայնեմ ընդ կարկամեալ եւ չորացեալ ձեռն անձին, որ աղաղակէր՝ ասելով. «Տէ՛ր, եթէ կամիս՝ կ[ա]րօղ ես գիս փրկել»:

Կոյր Բարտիմէոսին պէս ճանապարհիդ վերայ նստեալ սպասեմ եւ յոյս անեմ, զի յիշողու[թ]ե[ան] եւ ի նկատն պիտի առնէ ո[ղ]որմածն Հայրիկն, զիս գործոյ մը վերայ դնելն տալ, որ իմ ծանր պարտուցն ազատիմ, եւ տող մը շրջաբերականով կամ յատուկ այցելու[թ]ի[ւ]ն առնելով ի սէր ազգութեան եւ ի սէր բարեյիշատակ Մելիք աղային, որ Հայրիկի հոգևովն կապրէր: Արդ, ի չարածնունդ որդիքն ըստ գործոցն առին զհատուցումն: Ոչ է փոյթ, զի բարեաց գործօղքն պսակին ասէ, չարեացն ի հուր անշէջ մատնին:

*ՅԱՆԿԱՅ ՏԵՍՈՒԹ]Ե[ԱՆ]Դ ՎՇՏԱԼԻ ՄԱԼԽԱՍ ԵՍԱՅԻ Վ[Ա]ՐԺ[Ա]Պ[ԵՏ], ՈՐ
ԵՐԲԵՄՆ ԿՐԷՐ ԶՀՈԳԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԱՐԾԻՈՅՆ
Ի Ս[ՈՒՐ]Բ Կ[Ա]Ր[Ա]Պ[ԵՏ]Ի ՎԱՆՔՆ ԹԷ Ի ՅԱՊԱՀՈՒՆԻՔՆ
ԵՕՆՃԱԼՈՒ ԳԻՒՂՆ*

1895, 15 Յուլ[իսի]

Եօնճալա Մարտօն (տունք 1, նուֆուս 8)

Եօնճալա Պօղէն (տունք 1, նուֆուս 7)

Եօնճալճա Էլօ Ղաղարն (տոլնք 1, նոլֆոլս 3)
Եօնճալճա Բաղժօլի Ենկօն (տոլնք 1, նոլֆոլս 5)
Եօնճալճա Բրօ Ս[ա]րգօն (տոլնք 1, նոլֆոլս 8)
ԸնդՀանոլր տոլնք՝ 5, նոլֆոլս՝ 29

Եօնճալճա Բրօ Նաղարն (տոլնք 1, նոլֆոլս 4)
Եօնճալճա Գօրգէ Մխօն (տոլնք 1, նոլֆոլս 9)
Եօնճալճա Բօզօ Մոլրատ (տոլնք 1, նոլֆոլս 4)
Եօնճալճա Բօզօ Կարօն (տոլնք 1, նոլֆոլս 4)
Եօնճալճա Պաոլոլ Յակոբ (տոլնք 1, նոլֆոլս 4)

Եօնճալճա Աճօ Միւսա (տոլնք 1, նոլֆոլս 3)
Եօնճալճա Ուսթայ Մկրօն (տոլնք 1, նոլֆոլս 3)
Եօնճալճա Նաճրի Գալօն (տոլնք 1, նոլֆոլս 5)
Եօնճալճա Նաճրի Էլօն (տոլնք 1, նոլֆոլս 6)
Եօնճալճա Թանկօ Յօլիկ (տոլնք 1, նոլֆոլս 2)

Եօնճալճա Թաոլօ ՄէՀրօն (տոլնք 1, նոլֆոլս 2)
Եօնճալճա Բոթօ Հասօն (տոլնք 1, նոլֆոլս 3)

ԵաՀի Գրիգորն Փիռէն (տոլնք 1, նոլֆոլս 6)
Քրդագոմոլ Յակոբն (տոլնք 1, նոլֆոլս 8)
Քրդագոմոլ Ըռէս Պետրոսն (տոլնք 1, նոլֆոլս 3)
Շերվանշիոլ Մխօ Կ[ա]ր[ա]լ[ե]տ[եա]ն (տոլնք 1, նոլֆոլս 8)
Շերվանշիոլ Մոլրատն (տոլնք 1, նոլֆոլս 2)
Մաջիթլոլայ Սաֆօն Խանօն (տոլնք 1, նոլֆոլս 6)
Յօտնչորայ Լեւոն (տոլնք 1, նոլֆոլս 9)
Յօտնչորայ Սիմօն (տոլնք 1, նոլֆոլս 4)

Զգիրօքա Կիրակոսն (տունք 1, նուֆուս 4)
Թէղուտայ Դարպին (տունք 1, նուֆուս 7)
Լզա Աւաք Բաղտասարով (տունք 1, նուֆուս 10)
Թէղուտայ Այվազ (տունք 1, 8 նուֆուս)
Հարամկու Աւետիսն (տունք 1, նուֆուս 1)
Խոշգէլդի Մարտէ Մարատով (տունք 1, նուֆուս 6)

Պօստանքնդու Սերօբն (տունք 1, նուֆուս 3)
Խարաջօպանայ Գիրգորն (տունք 1, նուֆուս 5)
Խարաջօպանայ Ստէփէ Քօջօն (տունք 1, նուֆուս 4)
Խարաջօպանայ Բոստաքնդու Աւաքն (տունք 1, նուֆուս 6)
Խարաջօպանայ Հայր[ա]պ[ե]տ (տունք 1, նուֆուս 2)
Խանդաղլու Պետրոսն (տունք 1, նուֆուս 4)
Խօզլուա Խազարն (տունք 1, նուֆուս 4)
Նորատնայ Գիրգորն (տունք 1, նուֆուս 6)
Համգաշխու Զնտօ Կ[ա]ր[ա]պ[ե]տ[եա]ն (տունք 1, նուֆուս 5)

Ալաշկեր[տ]ցի Մալխասն (տունք 1, նուֆուս 5)
Գօվանդակայ // (տունք 1, նուֆուս 5)
Քրթագո[մ]ու // (տունք 1, նուֆուս 6)
Խօզլուա[յ] Պետրոսն // (տունք 1, նուֆուս 9)
Շիրվանշխու // (տունք 1, նուֆուս 10)
Եօնճալվայ // (տունք 1, նուֆուս 6)
Ընդ.՝ 294:

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

96

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

1895/10-20
 1895/10-20
 1895/10-20

1895/10-20

1895/10-20
 1895/10-20

год	число	содержание	год	число	содержание
01	08	Коллекция насекомых	01	08	Коллекция насекомых
01	04	" " "	01	04	" " "
01	03	" " "	01	03	" " "
01	05	" " "	01	05	" " "
01	06	" " "	01	06	" " "
05	29		01	09	" " "
01	04	" " "	01	00	" " "
01	03	" " "	01	06	" " "
01	04	" " "	46	24	
01	04	" " "			
01	04	" " "			
10	48				
01	03	" " "			
01	03	" " "			
01	05	" " "			
01	06	" " "			
01	02	" " "			
14	67				
01	02	" " "			
01	08	" " "			
14	48				
01	06	" " "			
01	08	" " "			
01	03	" " "			
01	08	" " "			
01	02	" " "			
01	06	" " "			
01	09	" " "			
01	04	" " "			
25	48				
01	04	" " "			
01	07	" " "			
01	00	" " "			
01	06	" " "			
01	01	" " "			
01	06	" " "			
31	24				
01	03	" " "			
01	05	" " "			
01	04	" " "			
01	06	" " "			
01	02	" " "			
01	04	" " "			
01	04	" " "			
01	06	" " "			
01	05	" " "			
01	05	" " "			

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԼՆ ԾԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԵՐԳ ԵՒ ԸՆԳՀԵՆՈՒՐ
ՊԵՏՈՒԵԿԵՆ ՀԵՅՐԵՊԵՏԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ]
Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԶԻ Ս[Ր]ԲԵԶՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ
ՊՈԽԼԵՆԸԻՈՒ ԵՕՆՃԼԼՈՒ ԳԻՒՂԻ ԶՈՐՍ ՏՆՃՈՐ ԳԵՂԹԵԿԵՆ
ԸՆՏԵՆԻՔԷ**

Մառդօ Ղուկասեան, 8 (չունչ)
Եէնկօ Մուրադե[ա]ն, 5 (չունչ)³⁰²
Ղազար Յովհանէսե[ա]նց, 5 (չունչ)
Սաֆար Յօխաննէսցէ, 6 (չունչ)
Ընդհանուր 24 չունչ

Ամենախոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ Հայրապետ,

Ահի մեր յիշեալ ընտանեօք հերոս Կառնուայ Թաղայ գիւղ անցուցինք:
Իսկ դարուն օրի վատութենէն դուրս եկանք: Երբ տեսանք, որ մեր ընտա-
նեաց վիճակ գէշ կը լինի Ֆիզիքապէս, յայնմ օրէ ցարդ գիւղէ գիւղ, Թափա-
ռական շրջեցանք:

Իսկ այսօր, երբ տեսանք ալ անհնար է, եւ չենք կարող ապրել առանց
Ձերին Հայրական խնամոց, դիմեցինք Ձերին վեհութեան հովանոյն, մեզ եւ
մերայնոց ձմերային ցրտէն պահպանուելու մի պատուարան ընդունելու:
Վ[ա]սն զի մերկ եւ բոլորովին անծածկոյթ եմք եւ այս երկու օր է, որ եկած
եմք վանքիս *պլանը*: Բայց այն տեղ կը տեսնեմք, որ մեզ բոլորովին ան-
հարմար է, զի այն անասուններուն մէջ մեր ընտանիք չէ կարող շարժիլ:

Ուստի կաղաչեմք Վեհափառութիւն]էդ՝ մեզ մի ձմերնային պահապ-
անութեան տեղի որոշելու հրաման ընէք, որ ձմեռն անցնինք:

**ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՄԲ ՄԱՏՁԻՄ Ի ՀԱՄԲՈՅՐ
ՈՐԴԻԱԿԱՆ ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱՅ՝ ՄԱՌԴՕ ԵՒ ԸՆԿԵՐՔ**

1895, Հոկ[տեմբեր] 22
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

³⁰² ՄՄ, ԽԿՖ., 106-րդ թղթապանակի, թիւ 630 վաւերագրում, Եէնկօ Մուրադեանի դիմաց նշուած է 6 շունչ:

(ՄՄ, ԽկՖ, թղթ. 102, վաւ. 789)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԶԻ Ը.
ՍՐԲԸԶՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԵՅՈՅ
ՄՇՈՅ ՊՈԽԸՆԸԳ ԳԵԼԵՈՒ ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՒՂԸՅԻ ԳԻՒՂԸԸՐ
ՎԸՐԻԸՆԵԸՆԷ**

Աղերսախառն խնդիր

Վեհափա՛ռ Տէր,

Թշուառ կին մ'եմ, երկու զաւակաց տէր, զորս, աւա՛ղ, չկարողացայ հետս բերել եւ միայն գլուխս առնելով՝ հեռացայ՝ հետս ունենալով տագըս՝ Մկրտիչ Մհէրեան, եւ ամենափոքրիկ մանկիկս, զոր բաբէ՛, Բագրեւանդայ Խասդուր գիւղի մէջ հողին յանձնեցի:

Ո՛ր, Հայրիկդ Հայոց, շնորհ առնիմ Ձեր Վեհափառութենէն, մի ամիսէ հետէ Մայր Աթոռոյ մէջ կը կերակրուիմ տագերս հետ: Այլ ամօթխածութիւնս կստիպէ զիս բաւ համարել եւ խնդրել Ձեր Վեհափառութենէն մի միջոց՝ ձմրան մեր երկուքիս ապրուստին համար, մինչեւ գարնան տեսնենք, թէ Աստուած ի՞նչ այցելութիւն կընէ մեզ եւ մեր հայրենեաց:

*ՊԱՏԻՒ ՈՒՆԻՄ ՄՆԱԼ ՅԱՐԱԺԱՄ ՄԵԾԻ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՁԵՐՈՒՄ
ԽՈՆԱՐՀ ԱՂԱԽԻՆ՝ ԳԻՒԼԻԶԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ*

1894 Դեկտեմբերեր] 11

ի Ս. Էջմիածին

(ՄՄ, ԽկՖ, թղթ. 102, վաւ. 797)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻԶ
ՍՐԲԸԶՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԵՅՈՅ
ՄՇՈ ՊՈԽԸՆԸԳ ԳԵԼԵՈՒ ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՒՂԻ ՄԸՐԳԸՐ ԸԻԳԸԸՆ
ԽԸԶԸՏՈՐԵԸՆՅԷ**

Աղերսախառն խնդիր

Վեհ[ափառ] Սրբազնազո՛յն Հայր,

Անտանելի թշուառ դրութիւնս հարկադրեց զիս հեռանալ հայրենեաց գրկէն եւ այսօր իսկ խոնարհ խնդիրս հանել յատենի Ձեր Վեհափառութեան:

Սակայն, ո՛ր, Հայրդ Հայոց, ամօթահար կը լքանիմ՝ խորհելով, որ պարտաւորած եմ միանգամայն խղճալի աղքատութեանս պատճառը ցոյց տալ:

Հայր Վեհափառ, օտար ոք չկործանեց Հայրենական շէն տունս: Այո՛, օտար չէր, որ զիս հասուց այս դառնադէտ վիճակին, այլ արիւնակիցս եւ ազգակիցս՝ Հօրեղբօրորդիս՝ մատնիչն Մխիթար Մէլիքեան, իւր արժանաւոր հօր անարժան զաւակն, որ երեք տարիներէ հետէ, իբրեւ մարախ կաւերէ զՊուլանըզ, զԵօնճալու եւ մանաւանդ՝ զնուաստս:

Մի քանի անգամ զրպարտութեամբ բանտի եւ տուգանաց դատապարտել տալով զիս՝ դարձուց աղքատ ու պարտական:

Այո՛, Խաչատուրի տան զաւակներն արար Հացակարօտ եւ մուրացկան, որով միանգամայն կորցուց մեր տան համարումը Պուլանըզայ եւ ամէն ազգայնոց մէջ: Այժմ վարանած կը խորհիմ, թէ ինչպէ՞ս ապրեցնեմ կարօտ զաւակներս, մանաւանդ թէ ինչպէ՞ս ազատուիմ պարտապահանջներու ձեռքէն, որոց տուածները փոխարինելու համար Հայրենական ժառանգութիւնս իսկ անբաւական է:

Սորա համար դիմելով յօտս Ձեր Վեհափառութեան կը խնդրեմ մի օգնութիւն՝ ի մխիթարութիւն հացակարօտ զաւակացս:

Խոնարհ համբոյրս մատուցանելով Ձեր Հայրական Ս. Աշոյն՝ պատիւ կը համարիմ մնալ յաւէտ Մեծի Վեհափառութեանդ Ձերում խոնարհ ծառայ եւ որդի:

Ն. ՄԱՐԳԱՐ ԱԻԴԱԼԵԱՆ

1894 Դեկտեմբեր, 28 ի Տփղիս

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 15)

**ՎԵՀԵՓԵՌ ՀԵՅՐԻԿ, ԸՄՏՈՒԸ՝ԾԸՆՏԻՐ
ԿԸԸԹՈՂԻԿՈՍ ԸՄՆԵՆՅՆ ՀԵՅՈՅ**

Անարժան ծառայս Բուլանիսի Եօնճալու գիւղի բնակիչ Եղօյ Յարութիւնեան, որոյ, գիւղիս մէջէն ծընած չարագործ վասակն՝ Մէլիքեան Մխիթարն, որն մատնեց զերկրիս առաջն[ո]րդն՝ զպատուական Ներսէս Խաւսանեան ծ[այրագոյն] եւ ազգասէր վ[ա]րդ[ապետ]ն, եւ այլ բազում ի յազգայնոցն զգիւղէս վ[ա]րժ[ա]պ[ետ]ն, որոյ զմատնեալքն ամ[ենայն] դժոխային բանտի շղթայներու ենթարկելոյ զկնի ո՛չ յազեցաւ: Գնաց

չէր քէզններու³⁰³ գէղէն 250 պատռոն գնեց, լեցուց տօպրակի մէջն եւ գաղտնի կախեց տանս սենեակի վառարանի ծակէն: Որոյ մենք միամիտ, յանկարծ երկու *պօլուկ*³⁰⁴ զօրք բերաւ զգլուղի շուրջ փակեցին, տներն խուզարկելով, հասին ողորմելոյս տունն, յիշեալ վասակն զիւր պահածն շուտով գտաւ, բայց մեր վ[ա]րժ[ա]պ[ետ]ի որդի Համազասպ յերեւան հանեց զանոր ըրած չարագործութիւնը:

Եւս զմեզ բոլորովին թալնել տուաւ, եւ զվ[ա]րժ[ա]պ[ետ]ի տունն ընդ մեզ աւերեց: Ամիս մը վ[ա]րժ[ա]պ[ետ]ի տղայն դատարան երթալով-գալով զՄխիթարն իւր փորած գուբին մէջն արկանելոյ արժանացոյց: Եւ ահաւասիկ դեռ բանտն էր մինչեւ զգալն մեր, որ քառասուն օր է մեր գալն:

Արդ, ո՞վ բարեխնամ Հայրիկ, մեր երկու տունքն՝ ողորմելի վ[ա]րժ[ա]պ[ետ]ին եւ Խօճի Յարութիւնին տներն, այն աւուրց մէջն աւերեցան մինչեւ Մխիթարի գործած չարութիւնը յայտնեց եւ ստուգեց Համազասպն, ո՞րչափ ծախս եւ կաշառ կերան մինչեւ զարդարութիւնն] ի լոյս հանեցին քննիչ դեսպանաց շնորհիւ:

Ուստի թէ ես եւ թէ ողորմելի վ[ա]րժ[ա]պ[ետ]ն, որ այժմիկ կպանդխտեմք եւ կը մուրամք պատճառն վասակ Մխիթար Մէլիքեանն է:

Ս[ուր]բ Աթոռէդ խնդրեմք զի զկորուստ մեր եւ զվրէժն հատուցանել տալոյ՝ ի նկատ առնելոյ ողորմեսցիս:

ԵՂՕՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ/էն

Եօնճալու, 1895, 23 Յուլիս

³⁰³ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ շերէֆները գաղթում են Ռուսաստանից եւ կառավարութեան թոյլատրութեամբ գրաւում են հայապատկան Կօփօ եւ Սիմօ գիւղերը (Տէ՛ս Մովսիսեան Ս., *Տաճկահայեր, Բուլանըխի կոտորածները*, «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 12, էջ 376–377): Այս նոյն պատերազմից սկսած զանգուածաբար Բուլանըղ են տեղափոխում նաեւ լեզգիներ, ինգուշներ, թարաֆեամաններ եւ բալկանեան այլ թուրքախոս ժողովուրդներ, որոնք դառնում են իսկական պատումասս հայ ժողովրդի համար (Տէ՛ս Աւարպետ, *Բուլանըկ*, հմր. 213):

³⁰⁴ Bölük՝ թրք. գումարտակ:

(ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 776)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՌՈՒԹԵԼՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՄՆ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

ՄՇՈՅ ՊՈԽԼԵՆԳ ԵՕՆՃԼԸ ԳԻՒՂԷ Ի ԽԸՉԻ ԳԵՏՐՈՍԵԼՆԷՆ³⁰⁵

Ամենախոնարհ խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Մեր կրած այլեւայլ նեղութեանց պատճառաւ ելանք, առինք մեր ընտանիք Ռուսաստան անցնելու: Բազրեւանդ գաւառի կիրճէն անցած ժամանակ, գիշերուան պահուն չորս հատ ձիաւոր քիւրտեր վրայնիս յարձակեցան, ծեծեցին եւ կապելով զմեզ՝ տասն երկու տարեկան աղջիկս առին տարան: Այժմ, եղբօրս վեց հատ որբեր եւ հինգ հատ փոքր գաւակներով իմս, Շիրակայ գաւառը թողուցեր եկել եմ հոս՝ ընտանեացս համար ոչ հաց կայ եւ ոչ ալ փող ունիմ, որ գոնէ նոցա հ[ա]մ[ա]ր ուտելիք պատրաստեմ եւ ես երթամ աղջկաս ետեւ՝ պտտեմ, տեսնեմ, թէ որ տեղն է:

Վեհափա՛ռ Հայրիկ, կը խնդրեմ, որ խղճալոյս խնդիր լսես, զի դու ես մեր տէրը, մեր կարօտ զարիւրներուս օգնութիւն ընես, որպէս զի կարող լինիմ երթալ գաւակքիս ետեւէն: Պտտիմ, թերեւս կարող լինիմ գտնել որտեղ ըլլալը: Մեր գալը մի ամիս է եղեր եւ ես ալ միակ մարդ ըլլալով չեմ կարող թողուլ ընտանիքս՝ երթալ գաւակիս ետեւէն:

ՄՆԱՄ ՎԵՀԷՓԵՌՈՒԹԵԱՆԴ ԶԵՐՈՒՄ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ԽԱՉԻ ԳԵՏՐՈՍԵԱՆ

12 Դեկտեմբեր, 1894

³⁰⁵ Խաչիկ Պետրոսեանի միւս նամակը տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 802:

ՆՈՐԻՆ ՕՅՈՒԹԵԱՆ ՎԵՂՈՒՄԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՑ
ՄՇՈՅ ՂԱԶԱՅԻՔ³⁰⁶ ՊՈԽԼՆԵՐԻ ԳԵՒԼՈՒԻ, ԵՕՆՃԼՈՒ ԳԻՒԴԻ ԲՆԵԿԻՉ
ԱԽԵՏԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԷ ԵՒ ՄԿՐՏԻՉ ԲԱՐՍԵՂԵԱՆԷ

Աղերս

Վեհափա՛ռ Տէր,

Տաճկական երկրում կրելով մահմետականաց հասցրած զանազան զրկանքները եւ բռնութիւնները, նորա ծանր բեռան տակ ճնշուած՝ ամէն մէկն ալ թէ՛ կառավարութեան եւ թէ՛ արքունի հարկաց պատճառաւ, բացի ամէն գոյքերից զրկուելէ հեծում ենք ծանր պարտքերի տակ: Եւ դեռ այդ նեղութիւններից եւ տառապանքներից չազատուած՝ այս տարի, մեր՝ շինականացս, բոլոր արտօրայքը մորեխով ծածկուեցաւ եւ ոչնչացաւ: Եւ մեք ընկանք ամենադառն վիճակի: Եւ մեզ, թէ ընտանեացս, սովամահից ազատելու համար մտադրեցանք զաղթելով ազատիլ, որով իցէ հնար լինի մի կտոր հացով սնուցանեմք մեր գերդաստանը: Բայց տեղական կառավարութիւնը մի կողմից, եւ պարտատէրերն միւս կողմից արգելեցին մեզ ոտ փոխելու, եւ սպառնում էին մեզ զանազան ձեւերով՝ ընդ նմին համոզում էին մահմետականութիւն ընդունել՝ խոստանալով մեր պարտքերը վճարել: Իսկ մեք, չունելով մի այլ փրկութեան ճանապարհ, ստիպուեցանք թողնել ընտանեաց եւ միայնակ դուրս եկանք դէպի Ռուսիայ՝ մի կերպով՝ թէ մեզ եւ թէ անտէր եւ թէ անօգնական, միայն Ա[ստու]ծ[ո]յ խնամոց յանձնուած ընտանեացս սնունդ ճարելու:

Արդ՝ զթած եւ ողորմած Հայրդ Հայազանց, անկանելով Վեհիդ սուրբ զարշապարաւ, արտասուալից աչօք կաղերսեմք զթուրիւն եւ ողորմութիւն: Խնայել գէթ մեր անտէր եւ անմեղ զաւակաց, որ մահմետական աշխարհում քաղցած կը հեծեն, ազատէք նոցա սովատանջութիւնից՝ շնորհելով մեզ Վեհափառութեանդ Սրբութեան կոնդակը, որ շրջելով բարեպաշտ ազգայնոց մէջ կարողանամք միջոց ձեռք բերել մեր պարտքը վճարելու համար, կամ՝ բարիհաճեցէ՛ք Սրբազնասո՛ւրբ Տէր, օգնել տառապելոցս՝ որով եղանակաւ կամիք: Որպէսզի հնար լինի մեզ վերադառնալ հայրենիք, մեր թշուառ ընտանեաց մօտ: Որով կը փրկէք մեզ եւ նոցա կորստեան անդունդից:

ԱԽԵՏԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՄԿՐՏԻՉ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ի 30 Հոկտեմբերի 1893 ամի

ի Ս[ուրբ] էջմիածին

³⁰⁶ Kaza – գաւառ/գաւառակ:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 102, վաւ. 754)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՆՈՒԹԵԱՆ ՏՄԵՆՈՒՆ] ՏՄԵՆՈՒՆ] ՄԿՐՏԻՉ Ը.
ԿԵԹՈՒՂԻԿՈՍ ԸՄՆԵԱՅՆ ՀԵՅՈՅ**

ԽՈՆԵՐՀ ԽՆԴԻՐ ԵՕՆՃԸԼԵՑԻ ԱԻԿԸ ԵՒ ՎԵՐԴԵՆ ԿԵՐԱՊԵՏԵԱՆԷ

Վեհափա՛ռ Տէր,

Ստորագրեալքս Պուլանխայ Եօնճալու գիւղէ լինելով՝ ամենաղաուն անասելի Հանգամանքներ զմեզ ստիպեցին թողուլ մեր ամենապատուական արտն ու ափը, մեր սիրելիքը, մեր տուն եւ տեղ, չալակեցինք մեր սիրասուն զաւակները, բռնեցինք մեր ընտանեաց ձեռնէն: Գիշերուան մուկն մեզ փրկարար միջոց գտնելով՝ անցած եմք երկիւղալի վայրերէն, մահուան վտանգներէն: Վերջապէս Հասած եմք ռուսական փրկարար Հողը՝ Հանգիստ շունչ քաշած:

Տասն երկու շնչով եկած ապաւինած եմք Շիրակայ Թիքնիս գիւղն եւ արդէն ունեցածնիս ուղեցոյցի տալով՝ վատնած էինք եւ որոնցմէ եւս թաւանուելով՝ մնացած եմք բոլորովին մերկ եւ անխնամք:

Այժմ մեր ամբողջ ընտանիք ամենաղաուն դրութեան մատնուած, նաթի, մերկ եւ ցրտի ներքեւ կը դողդողան: Ձեր փրկարար դռներուն կը Հային, յօգնութիւն կը յուսան...

ՄՆԱՄՔ ԽՆԴՐԱՆԱՅ ՅԱՆԿԱՅՈՂ՝

ՎԱՐԴԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԱԻՏԱԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

1894, Նոյ[եմբեր] 29

Ս[ուրբ] Էջմիածին

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 102, վաւ. 760)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՆՈՒԹԵԱՆ ԸՄՏՈՒԸ]ԾՐՆՏԻՐ
ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ[Ն], ՀԵՅՐԱՊԵՏԻ[Ն] ԵՒ ՈՂՈՐՄԸՆՈՒ ՀԵՅՐԻԿԻՆ
ԸՄ[ՆԵԱՅՆ] ՀԵՅՈՅ**

ԲԸՆՈՒԹԵՑ ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՂԻՅ ԳԵՂԹԵԱՆՆԵՐ 7 ՏԱՆԻՅ

Աղերսանօք խնդիր

Ողորմա՛ծ Հայրիկ,

Այս չորս օր է, որ խնամատարութեամբ Վեհ[ափառ] օծութեանդ

Ս[ուր]ը Աթոռոյդ *պլանում* պատսպարուած, եւ օրական ցամաք հաց էլ կստանայինք՝ օրհնելով սուրբ կեանքը մարդասերիդ: Բայց այժմ ընդհատ-ւեց նոյն շնորհաց շարունակութիւնը եւ արտաքսում են զմեզ:

Այս պատճառաւ դարձեալ դիմում եւ արտասուածութիւն պաղատանօք կնդրում ենք բազմագութ եւ մարդասէր Հօրդ առատ ողորմութիւնից:

Բարեհաճեք որեւիցէ տեղում պատսպարան որոշել: Ներկայ անտանելի ցրտից մեր մատաղաբերամ զաւակները ազատելու հ[ա]մ[ա]ր, որով պարտա-ւոր կացուցանէք զմեզ գերդաստանեալս անդադար աղօթել յերկարակեցու-թեան անգին կենաց համար Վեհիդ:

ՍԱՐԳԻՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
ՄԱՆՈՒԿ ԽՕՍՏԵՂԵԱՆ
ԵՆԳՈՅ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ՄԽՈ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՄԱՆՈՒԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ
ՍԱՖԱՐ ՀՕԽԱՆԵԱՆ

1894 ամի, 18 նոյեմբեր

ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 712)

ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹԻՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼՈՂ]Ն ՄԿՐՏԶԻ
ՍՐԸԶՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ
ՊՈԻԸՆԸԽՈՒ ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՒՂԻ ՀԻՆԳ ՏՈՒՆ
ՆՈՐԵԿ ԳԸՂԹԸԿԸՆ ԸՆՏԸՆԵՐ

Այն է՝

1. Մուրատ Հովէե[ա]ն – 5 հոգի
2. Ղ[ա]զար Շարէե[ա]ն – 3
3. Պօղոս Խաչօե[ա]ն – 7
4. Յակոբ Մարգարե[ա]ն – 4
5. Մինաս Յովհաննիսե[ա]ն – 3

Պուլանըխու Քաջառուկեցի գիւղէն

6. Աւետիս Մինասե[ա]ն – 7

Շիրվանշ[եյ]ի գիւղէն

7. Ամրօ Մարկոսե[ա]ն – 6

Մշու դաշտի Խարո գիւղէն՝

8. Կիրակոս Կ[ա]ր[ա]պետե[ա]ն – 4

Ալաշկերտի Զլկանի գիւղէն՝

9. Խլխաթ Մօսէսե[ա]ն – 5

Ընդ. – 44

Վեհափա՛ռ Հայրիկ,

Մեր ինն ընտանեաց գումարն, որ քառասուն չորս ոգիէ կը բաղկանայ, տեղս եմք եկած այս չորս օր է, եւ յանՀունս շնորհակալութ[իւ]ն կը մատուցանեմ Ձերին Վեհափառութ[իւ]նէն: Նախ, որ զմեզ իբրեւ ազգ ընդունելով՝ օրական մարդ-գլուխ երկերկու նկանակ եւ երբեմն՝ ոչ թէ շարունակ, տաք կերակուրով կը պահպանուինք:

Բայց Վեհ[ափա՛ռ] Հայրապետ, մի մեծ պակասութիւն մը ունինք, որ տանիլը անկարող ենք, վասն զի գիտէք արդէն, որ մեր նուաստութիւնը. մեզ հետ բան մը չունինք, ոչ թէ փողային կարողութիւնէն, այլ եւս ոչ հանդերձ, ո՛չ վերմակ, եւ ո՛չ մի բան, զի մեր ունեցածը բոլորը զօրաւորն խլեց:

Կաղաչեմք երեսանկեալ, Վեհ[ափա՛ռ] Հայրիկ, մեր այս դէմ եկողը ձմեռ է, եւ այս *պլանի* քարերու վր[այ] մերկ պառկելով մեր գերիները, ամէնք պիտի սառին, այն գերիները, որ ցօղունէն կտրուած ծաղկի նման թռումած եւ դեղնած են: Անոնք մի ժամանակ իրենց ծաղկափթիթ դաշտերուն մէջ ինկած ազատ շնչէին եւ երգէին: Այն մատաղ էակներուն դէմք, որ տեսնէք մեռելատիպ պատկերք են դարձած: Մի բանաք մեր ծնողացս սրտի վէրքերը, պատսպարան լերուք այդ ընկածներուն, տուէք անոնց հոգին եւ շունչ, ծածկո՛յթ մարմնոյ, պատսպարան եւ հաց: Ապա թէ ոչ՝ մերձեալ է ձմեռ եւ փոթորիկների ձայն հեռուէն կը լսուի:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿՆԱԾ[ՈՒԹԵԱՄ]Բ ՄԱՏՁԻՄ
ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆՆ ԵՕՆՃԱԼՈՒ ԳԻՒՂԱՅԻ 5 ՏՈՒՆ ԵՒ ԱՅԼՆ

1894, Հոկ[տեմբեր] 27

ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 424)

Վեհափա՛ռ Հայրիկ,

Այցելու եւ ապաւէն Ազգիս Հայոց

Եօնճալու գիւղի աւագ ք[ա]հ[ա]ն[ա]յ տ[է]ր Կ[ա]ր[ա]պ[ետեա]ն Իկի-
թըս, կողոպտեալ եւ զրկեալ յամ[ենայն] ընչիցն եւ գոյքիցն իմոց, թողեալ
զգերդաստանն ի գերութեան թրքացն եւ ապաստանեալ ռուսական ազգայ-
նոցն գթութեան]. Բայց եւ այնպէս մնալով կարօտեալ եւ յոյժ չքաւորեալ:

Թէ՛ ծանրութեան է անտանելի պարտուցս եւ թէ՛ անողոք հալածման է
անգութ թրքացն փակեալ կամ ի՛ պանդխտութեան, եւ ո՛չ գիտեմ թէ զի՞նչ
լինելոց է ինձ ապագային:

Ուստի կամեցայ դիմել առ Վեհափառ ազգասէր Հայրիկիդ եւ խնդրել
զի մեզ չմերժես ողորմութեան է քումմէ:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ՝ ԻԿԻԹ Տ[է]Ր Կ[Ա]Ր[Ա] Պ[ԵՏԵԱ]Ն՝ ԵՕՆՃԱԼՈՒ ԳԻԻՂԻ

1895/17 Յուլիս]

յԱղեկսանտրպօլ քաղաքի

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 101, վաւ. 590)

Վեհափա՛ռ եւ ողորմա՛ծ Հայրիկ,

Հայհաստանի զրկեալ եւ տարագրեալ գաղթականացն Եօնճալու գիւղա-
ցի Զակեան Մարտօյ, ունելով 10 *նուֆուս*³⁰⁷ գերդաստան եւ աներձագ էն-
կօն՝ 5 *նուֆուս* զաւակօք, ի յերեւանայ Թաղաքեանդ գիւղէն գաղթեալ,
այժմ ի յԱղէքսանդրապօլիս կ'ընակիմք՝ Ձեր Վեհափառ Հայրենասիրական
ողորմութեան շնորհիւ:

Արդ, ո՛վ գթած Հայրիկ, այժմիկ մենք աւուր պարէնի կարոտ, եւ մեր
յոյսը վեր Ա[ստուա]ծ եւ Հայր[ապետութիւ]ն Ամ[ենայն] Հայոց, ողորմած
եւ խնամակալ այցելու Հայհաստանի գաղթական աղքատ ազգայնոց, աղեր-
սելով, զի ի նկատ առնելոյ չմերժես զողորմելիքս՝ առնելով մեզ ըստ ար-
ժանւոյն զկարեւոր ողորմութեան արժանիքն, որոյ յոյս մեր եւ ապաւէն
միայն այս թելէն կախուած է:

ԿԵՅՅԷ ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՀԱՅԵԱՍՏԱՆԻ ԱՅՅԵԼՈՒՆ ԿՈԶՈՂ
ՄԱՐՏՕՅ ԵՒ ԷՆԿՕՅ ԵՕՆՃԱԼՈՒԵՑԻՔՆ

1895, Յուլիս] 12

յԱղէ[ք]սանդրապօլիս քաղաքի

³⁰⁷ Nüfus – բնակչութիւն, ազգաբնակչութիւն: Այստեղ գործածուել է շունչ, հոգի իմաստով:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 592)

Ազգասէր այցելու

Վեհափա՛ռ Հայրիկ,

Եօնճալու գիւղի Տ[է]ր Միթարեան Գասպար ծառայս, գարնան փախայ
ռուսական Հայոց մէջն, առնելով ընդիս մի փոքրիկ տղիկ: Խեղճ եւ թափա-
ռական կշրջիմ աստ եւ անդ: Ո՛չ կարեմ ապրիլ:

Ո՛վ բարերար Հայր, երկիր կուգեմ դառնալ: Ո՛չ թողուն այլազգի վայրե-
նիքն: Սպանանեն ի ճանապարհ[հ]ին:

Ուրեմն, ո՛վ Հայր, ել ճանապարհ[հ]ին, ի քէն ելցէ մեզ գաղթականացս:

Կյուսամ, որ զիս գաղթականաց կարգին Համարելով, ինչ որ նոցայ
կտնօրինէք զմեզ անտերունչ Գասպարն եւ որդի Տօնականն: Հաս ընդ
նոսայ Համարէք արժանի Ձեր Հայրախնամ ողորմութեանն:

ԵՕՆՃԱԼՈՒ ԳԻՒՂԻ ԳԱՍՊԱՐ Տ[Է]Ր ՄԽԻԹ[Ա]ՐԵ[Ա]Ն

1895, 17 Յուլիս]

յԱղէկս[ա]նդր[ա]յօլ

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 102, վաւ. 774)

ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹ[ԵԱՆ]Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻԶ

ՍՐԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ

ՄՇՈՅ ՊՈՒԼԵՆԳԻ, ԵՕՆՃԱԼԻ ԳԻՒՂԷ Ի ԵՂԵԼՁԱՐ ՍԵՐՈՊԵՆԵ[Է]

Ամենախոնարհ խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Հայրս առեւտրական մարդ էր: Իւր անդադար աշխատութեամբ մեր
ամեն պիտոյքներ կը հոգար: Մենք Հանգիստ կապրէինք մեր ընտանեկան
յարկին տակ: Անցեալ աշունս Կարին ուղեց երթալ: Քիւրտերը վրան կը
յարձակին, ճանապարհորդութեան մէջ կսպանին եւ բոլոր ունեցածները կը
յափշտակեն քովէն: Տան մէջի եղածներն ալ բռնութեամբ տնէն տարին:
Այսպիսով մի խիստ կարօտ վիճակի մէջ ինկայ: Անհնարին եղաւ ընտա-
նեացս ապրուստը հոգալ:

Առի ութ հոգի անձինք, անցուց[ի] այս կողմ: Քառասուն օր է գալս: Ես
մեծ մարդ եմ, չկարողացայ նոցա Հաց եւ Հանգիստ պատրաստել: Թողուցի
Շիրակ գաւառի Փրկիտ գիւղը, դիմեցի յոտս Ձեր Վեհափառութեան՝ օգնել
սովելոցս: Մնամ Վեհափառութեան Ձերում՝

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ԵՂԻԱԶԱՐ ՍԵՐՈՊԵԱՆ

15 Դեկտ[ե]մբ[երի], 1894

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 39)

**ՆՈՐԻՆ ՎԵ՛ՀԵՓԼՈՒԹԵԼՆ Ը[ՍՏՈՒՆԾ]ԸՆՏԻՐ ԿԼԹՈՂԻԿՈՍԻ,
ՀԵՅՐԸՊԵՏԻ ՆԻ ՈՂՈՐՄԵՆԾ ՀԵՅՐԻԿԻՆ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ
ԲՈՒԼԵՆՈՒԹԵՅ ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՒՂԻՅ ԳԵՂԹԵԿԸՆ ՊԵՏԵՆԻ ՄԵԼՈ
ՄՈՒՐԸԴԵԼՆԷ**

Աղերսանօք խնդիր

Ողորմա՛ծ Տէր,

Սորանից երեք տարի առաջ, թուրքաց վայրենի յարձակումներէ, ինչպէս պատմում են, հայրս խենթանում եւ անհետանում է մինչեւ ցայսօր: Մնալով ինձ մէկ մայր եւ մի փոքր եղբայրս, առի աշնանը այս կողմեր գաղթեցինք եւ հոգածութ[եամ]բ խնամող Հօրդ մինչեւ հիմայ Հայթաղ գիւղում կբնակիմք:

Բայց, աւա՛ղ, ներկայումս քաղցած եւ կորստեան անդունդի մօտ կամք: Ես էլ դեռեւս անընդունակ լինելով աշխատել, միակ միջոց ընտրեցինք դիմել Ձերդ Վեհափառութեան առատ ողորմութեանը՝ աղերսելու, որով պիտի ազատեմք ի սովատանջ մահուանէ:

*ՕՐՀՆԵԱԼ ԶԶԵԶ Ի ՓԱՌՍ ԱՄ[ԵՆԱՅՆ] ՀԱՅ ԹՇՈՒԱՌՆԵՐԻ
ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ՄԵԼՈ ՄՈՒՐԱԴԵԱՆ*

1895 ամի, 24 Յուլիսի

Ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 77)

**ՆՈՐԻՆ ՎԵ՛ՀԵՓԼՈՒԹԵԼՆ, ՏԵԼՈՒՆ, ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏԶԻ
ՍՐԲԸՆԸԳՈՅՆ ԿԼԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ
Ի ԲԸԼԵՆՈՒԹԻ ԳԵԼԵՈՒՆ, ԵՕՆՃԸԼՈՒ ԳԻՒՂԻ ԲՆԿԸՉՈՒ՜ՅԻ,
ԵՅՐԻ ԿԻՆ ԲԷԶՈ ՅՈՒՆԵԼՆԷ**

Խոնարհաբար Աղերս

Հինգ տարի առաջ իմ ամուսին անյայտացած է գլխովին: Եւ ես ճարահատեալ չորս մանրիկ զաւակունքս վեր առի եւ եկի այստեղ՝ մեծ նեղութ[եամ]բ, եւ այժմ մենք բաղկանում ենք հինգ անձինք՝ թափառելով...

Այս երկու տարի մեծ նեղութեամբ եւ մանրիկ զաւակներս սովալլուկ աստանդական եղած օրական հացի կարոտ, մերկ եւ անօգնական: Ուստի ի վերայ այս եւ ամենայնի խոնարհաբար աղերսանօք կը խնդրեմ Ձերդ Վեհափառութիւնէն, Ձեր աղախնոյ պաղատանքը լսելով, ողորմել ողորմեցնացս եւ Ձեր հայրական քաղցր գթութիւնը՝ օգնել տառապելոցս ըստ հաջոյից Ձերին Վեհափառութեան:

Բէջօ ՅՈՀԱՆԵԱՆ՝ ԵՕՆՋԱԼՈՒԵՅԻ

*1896 ամի, 13 Մայիս
Վաղարշապատ*

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 767)

**ՆՈՐԻՆ ՎԵՀՎՈՐՈՒԹԵԱՆ Ը[ՍՏՈՒՄԵՐ]ԸՆՏԻՐ ԿԵԹՈՒՂՈՍԻ,
ՀԵՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՈՂՈՐՄԵՐ ՀԵՅՐԱԿԻՆ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՑ**

**ԲԼԵՆՈՒԽՅ ԵՕՆՋԱԼՈՒ ԳԻՒՂԻՑ ԳԵՂԹԵԿԸՆ ՍԻՄԷՕՆ
ՄՈՒՐԱՏԵԱՆԷ՝**

Աղերսանօք խնդիր

Ողորմած Տէր,

Արդէն յայտնի է Վեհափառութեանդ, որ ստիպեալ մեր երկրում թագաւորուած սովից եւ ամայութիւնից գաղթեցինք այս կողմը: Մի ամիս դեգերուելուց յետ վեց օր է Աղջիղալայ³⁰⁸ գիւղումն եմք՝ վեց ընտանեացս հետ:

Այժմ, որովհետեւ այնտեղ էլ տեղ եւ հանգիստ չեն տալիս, այս պատճառաւ դիմում եմ ողորմած հօրդ գթութեան՝ տնօրինել մի որեւիցէ տեղում պատսպարան այս ձմեռ անցուցանելու համար:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ՍԻՄԷՕՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ

*1894 ամի, 2ն Պէկտեմբերի
ի Վաղարշապատ*

³⁰⁸ Գիւղ էջմիածնի գաւառում: <http://www.aniarc.am/2020/03/14/ejmiatsin-1831-1931-population-korkotian/>

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 594)

Ամենախոնարհ աղերս

Վեհափա՛ռ Ողորմա՛ծ Տէր,

Աղաչում եմ Ձերդ Վեհափառութեան ընդունել մեր աղերսանքը: Ես՝
Խլղաթ Մովսիսեանս, Բուլանըխի Եօնջալու գիւղացի եմ, ընտանեաց տէր,
որ բաղկացած են եօթ հոգուց եւ Ձեր ողորմածութեան շնորհիւ գաղթել եկել
ենք Ալէքսանդրապօլի մօտ, Հաջի-Նազար գիւղը կը բնակիմք:

Արդ, գիմելով Ձերդ Վեհափառութեան, աղաչում ենք ողորմել մեզ եւ
գթալ մեզ վրայ:

Հաց չունինք ուտելու, մէ կտոր չոր հացի կարօտինք:

Ինչպէս ողորմում էք մեր միւս ազգայիններին, աղաչում ենք Տէր մեր
եւ Հայրի՛կ, որ խղճաք մեզ վրայ եւ մեզ հաց տաք ուտելու, որ սովից
չմեռնինք:

*ԵՕՆՃԱԼՈՒ ԳԻՒՂԱՅԻ ԽԼՂԱԹ ՄՈՎՍԻՍԵԱՆ
ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ՁԵՐԴ ԳԹԱԾՈՒԹԵԱՆ*

*1895 ամի, 5ն Օգոստոսի
ի Ս[ուրբ] էջմիածին*

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 108)

**ԽՆԳԻՐԻ ՆՈՎԻՆ ՎԵ՛Հ ՎԸՅ՛ՀԸՅՓԸԹ՝³⁰⁹ ՄԿԸՐՏԻՉ ՍՐՊԸԶԸՆ
ԿԸԹՈՂԻԿՈՍ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ Ս[ՈՒՐ]Ի ԷԶՄԻԸՆԻՆ**

Եղեայ մարգարէի տեղաշկալ Հա[յ]րիկ,

Սուրբազան Հա[յ]րիկ, Եղեայ մարգարէն խնդրելով անչափ անձրեւ բե-
րաւ, բոլոր աշխար[հ] թրջեց եւ նմայնայպէս քոյ Հարուքըդ³¹⁰: Չորս տարի
բոլոր գաղտնականներ պայերիս: Կու յուսամ, որ մեզի ալ անտես չանիս: Այս
քանի աւ[ուր] օր եկաց ենք երկրէն: Վեր Ա[ստուա]ծ եւ ներքեւ քոյ
Հարուքըդ ապաւիններեմ լերինքէն: Բարձուք եղջր՛աց վէմք ապաւէն նո-
ցա<ս> տաքուց յեղալ թռջեա սնողնեալ անձրիւով:

³⁰⁹ Իմա՝ Վեհափառ: Այսուհետեւ ա ձայնաւորից յետոյ բառամիջում գրուած անհարկի յ ձայն-
նորդը չի ծանուցուի:

³¹⁰ Քո հայրերին նոյնպէս:

Գործել ո՛չ կարիմ: Մուրանալ՝ ամաչիմ: Եօթանասուն ամաց Բուլանուխ Յօնջալու գիւղ Մելիք Քօլօղին, Սարգիս Յովան[ն]էսին, աշխատ<ի>ել չենք կարնար: Ի՞նչ անինք, որոնք որ չեն կարնան հաղորդվիլ քա<յ>հա<յ>-նա<յ>ին: Հեչ չէ³¹¹ հայ[ն] այն օրչնեալ մասն առնելով Ա[ստ]ծոյ շնորհաց մասնա<յ>կից կլան: Իբր թէ անոր սեղանքի փշրանքներէն կը *կերայկրվէին*:

Ս[ր]բազան Հայր, արժանի չեմ քոյ Ս[ուր]բ աջըդ համբուրել: Փափա-
հիմ եւ յուսովիմ:

Կուսարսայալիմ եւ կուգողամ սուրբ Աջըդ համբուրեմ Հարի՛կ:

Կուխնդրիմք, կաղաչիմ եւ կաղերսիմք՝ բա՛ց մեզ Տ[է]ր, բա՛ց մեզ դուռն ողորմու[թեան]դ, որ ողբալով կարդամ առ քեզ:

*Ս[րբ]ԱԶԱ՛ն ՀԱՐ, ՈՂՋ ԼԵՐ:
ԱՄԷՆ*

³¹¹ Հակուած ենք կարծելու, որ թուրքերէն hiç değılse արտայայտութիւնն է, որն ունի *գոնէ, գէթ* իմաստը:

ԵՕԹՆՋՈՒՐ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ARAKONAK)

Մեզ հասած զրոյցների համաձայն Բլէջան լեռան արեւմտեան մասում՝ Վերին Բուլանըքում տեղակայուած այս գիւղն իր անունն ստացել է տեղիս բժշկելու, դարմանելու զօրութեամբ յայտնի եօթ սուրբ աղբիւրների շնորհիւ՝ Եօթն ջուր³¹²: Դարերի ընթացքում, ենթարկուելով հնչիւնափոխութեան եւ տարբեր լեզուների ազդեցութեանը, այն անուանուել է նաեւ Օդունչուր, Օդունչար ձեւերով: Մ. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում հանդիպում ենք տեղանուան Եօթնաջուր, Յոթնաջուր, Եօթնջուր, Յոտնչուր, Ոտնչուր, Եոտնչուր, Օտնչուր³¹³, Օտունջար, Օտունճար տարբերակներին³¹⁴: Այլ աղբիւրներում կարելի է տեսնել նաեւ Յոյտնչար³¹⁵, Օդնչուր³¹⁶, Ոտնջուր³¹⁷ տարբերակներով:

Բուլանըքի հայաշատ այս գիւղի եկեղեցիների մասին աղբիւրների փոխանցած տեղեկութիւնները տարբեր են: Մ. Միրախորեանի փոխանցմամբ այն ունէր կոփածոյ, սրբատաշ սեւ քարերով շինուած Ս. Թուխ Մանուկ անունով եկեղեցի՝ արժանապատիւ Տէր Տաճատ քահանայի սպասաւորութեամբ³¹⁸: Ընդարձակ Օրացոյցի փոխանցմամբ՝ գիւղի եկեղեցին կոչուում էր Ս. Յովհաննէս³¹⁹: Արխիւային նիւթերի տուեալների համաձայն գիւղի եկեղեցին տարեկան 1000 օսմանեան ոսկի հասոյթ ունեցող Ս. Աստուածածինն էր³²⁰:

1895–1907ին Օսմանեան կառավարութեան կողմից հայաշատ գիւղերի հողազրկման գործընթացն իրականացուում էր Երկրագործական բանկի (Ziraat Bankası) միջոցով: Գիւղացիները չնչին գումարի դիմաց գրաւադրում էին իրենց մեծարժէք հողերը, որն իր մէջ մեծ վտանգ կրելով, ի վերջոյ, զրկում էր գիւղացուն պապենական հողից: Հողազրկման միւս

³¹² Միրախորեան Մ., նշ. աշխ., էջ 82:

³¹³ Տե՛ս ՄՄ, թղթ. 103, վաւ. 186, նամակագիր՝ Աւրալ Մլխեան:

³¹⁴ Ոտնչուրից գրուած վաւերագրեր տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 186, նամակագիր՝ Աստալ Մլխեան, ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 249:

³¹⁵ Նամակ Բուլանըքից, «Դրօշակ» Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1895, էջ 9:

³¹⁶ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 40:

³¹⁷ Նոյնի Յաւել. հմր. 49:

³¹⁸ Միրախորեան Մ., նշ. աշխ., էջ 82:

³¹⁹ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

³²⁰ Վերապրածների վկայություններ..., էջ 208–209:

ճանապարհը չվճարուած պետական տուրքերն էին: Այս մասին բազմաթիւ տեղեկագրեր կան ե՛ւ օսմանեան արխիւներում, ե՛ւ Հայոց պատրիարքարանի տեղեկագրերում: Օրինակ. «Պոլսանդէի Ոսնչոր գիւղացի Ռէս Ապտա աղան՝ Մկրտչի 2 ընդարձակ արտերը, 2 մարգագետինները, 1 ձաւարահան, 1 բանջարանոց, որոնք իբր 400 ոսկի կարծէն՝ աշարի (տասանորդ) 45 ոսկիի պարտքի փոխարէն Կոփի կառավարութեան միջոցաւ ծախուած է խարապա-չէհիւր գիւղի բռնակալ Ավանզատէ Մէհմէտ Սալիտ աղային, չնայելով, որ Մկրտիչը իր լուծքը, տաւարը ծախած եւ պատրաստակամութիւն յայտնած է պարտքը վճարելու: Զրկեալները տակաւին կը բողոքեն՝ բայց անոնց ստա-ցուածքը ետ չէ արուած»³²¹:

Խրիմեանի ֆոնդում բաւական մեծ թիւ են կազմում Եօթնջուրից գրւած նամակները, որոնք վերը շարադրուած հարստահարութեան ու զրկանքնե-րի վկայութիւններն են. աղքատութիւն, սով, հարստահարում, որոնք ար-գիւնքն էին Օսմանեան կառավարութեան հայահալած քաղաքականու-թեան: Դրանք ունէին մէկ նպատակ՝ Հայաստանը դատարկել հայութիւնից:

Խրիմեանին ուղղուած նամակների մէջ ունենք նաեւ մէկ նամակ՝ գրու-ւած քուրդ Ջնտօ Մահմուտեանցի կողմից, որը, դիմելով կաթողիկոսին, ցան-կացել է ստանալ նրա թոյլտուութիւնը՝ մկրտուելու եւ քրիստոնեայ դառ-նալու համար: Այստեղ սխալագրութիւնները մեծ թիւ են կազմում, որի պատճառով նամակների շարքում չենք տեղադրել. «Ջնտօ Մահմուտեան, Օսնչոր կուղացի Բուլանիս գավառից: Որով Զերդ Վէհափառութանը խնթրէցինք Ջնտօ Մահմուտեանցի մզուտութան համար ու կ'ներկայացնեք առ թարու թամս եւ քանի ստորագրվաց մառտիկըս ճանաճում ենք իսկապէս Ջնտօ Մահմուտեանցին: Յովհանէս Բարխուտարեանց, սասունցի Տալ[վ]որ կուղից, Բարսեղ Մանուկեան՝ Շեղյաղուբ գուղից, Բուլանուխայ, Նազար Սաղաթեւեան՝ Կոպ կուղացի, Բուլ[անուխ] գավառից, Սմբատ Յագոփեանց տարոնացի, Խաչատուր Յովհանէսեան՝ Եոնջալու գուղից, Բաղտասար Սա-նասարեանց՝ Լիս գուղից, Բուլանիս: Մենք առթարութամփի վըգայում ենք Ջնդօ Մահմուտեանցի կողմից, որ կարող է հավատարիմ ծառայ[յ]ի քրիստո-նեաց օրէնքին»³²²:

Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն՝ Մեծ եղեռնից առաջ Եօթնջուր գիւղում բնակւում էր 1295 անձ³²³ (1254³²⁴):

³²¹ Տէր Կարապետեան Գ., Հոդայիմ հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պօլիս, 1911, էջ 16–17:

³²² ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 617:

³²³ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350.

³²⁴ <https://nisanyanmap.com/?y=Arakonak&lv=&t=&cry=TR&ua=5>

Թէոդիկն այստեղ հաշուում է 190 տուն հայ բնակիչ³²⁵: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն՝ 1914ի դրութեամբ Եօթնջուր գիւղն ունէր 90 հայ բնտանիք՝ 630 բնակչով³²⁶:

1915ին իրագործուած Հայոց ցեղասպանութեան ընթացքում Եօթնջուրի³²⁷ հայ բնակչութիւնն ամբողջութեամբ զոհ գնաց թուրքական վայրագ կոտորածներին:

Ցեղասպանութեան ընթացքում Եօթնջուր գիւղից որբերի մի խումբ հաստատուել է այլեւայլ ապաստարաններում: Այդ որբերից 1916ին Ալաշկերտի որբանոց են տեղափոխուել Մարտիրոսեան Շազլին՝ 10 տարեկան, Մարտիրոսեան Ֆերիաշը՝ 11 տարեկան, Մարտիրոսեան Խօտետան՝ 8 տարեկան, Մուշեղեան Զլֆէն՝ 8 տարեկան³²⁸:

1928ին այս բնակավայրն անուանուեց Օդունչուր (Oduncur)³²⁹: Ներկայումս այստեղ հիմնականում ապրում են քրդեր: Բնակավայրը կոչւում է Արաքոնաք (Arakonak)³³⁰, որ թարգմանաբար ունի միջնատեղի կամ միջնադադար իմաստները:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 101)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՆՈՒԹԵԼՆ ԸՍՏՈՒՆԾԵՐԵԼԻ ՀԵՅՐԵՊԵՏԻ ԵՒ
ԵԼՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԵԼԻԲ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԼԵՆՑՆ] ՀԵՅՈՅ
Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ ՄԿՐՏՁԻ**

**Ի ՄՇՈՅ ԲՈՒԼԵՆԻ ԳԵԼԵՈՒ ՅՈՏՆՁՈՒՐ ԳԵՂՁ ՕՍՄԵՆԵԼՆ
ՊԵՏՈՒԹԵԼՆ ԲՆԵԿՉՈՒՀԻՈՅ ՀՈՒՓՈՒՄԵԼՅ ՂԵԶԵՐԵԼՆ
ՂՍՏ ԸՈՒՆ՝ ԴԵԹԵԼՆՅ**

Աղերսախառն խնդիր

Արդէն քաջայայտ իսկ է Զերոյին Վեհափառութեան զտաժանակիր տարազրութիւնը թշուառ ազգայնոց մերոց՝ ի հայրենի յերկրէ եւ տանց իւրեանց՝ ի ձեռաց բռնակալ տէրութեանն Օսմանիոյ եւ բարբարոս ազգաց

³²⁵ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

³²⁶ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

³²⁷ Այս գիւղի կոտորածների մասին մանրամասներ տե՛ս Վիրաբեան Ա., Վշտապատում: Հայոց Մեծ եղեռնը ակամատեսների աչքերով, Երևան, 2005, էջ 243–245:

³²⁸ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 40:

³²⁹ TC, Dahiliye Vekaleti, Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928, էջ 416:

³³⁰ <https://nisanyanmap.com/?y=Arakonak&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

Հպատակաց նորին, որք կեղեքեն եւ լլկեն զորդիս եւ զանտերունչ ազգայինս մեր անխնայաբար: Ի թիւս որոց եւ թշուառս՝ Հանդերձ չորիւք մատաղ զաւակօք իմովք եւ մշտնջենական անբուժելի ցաւօք, դեգերեալ արամբ իմով Մկրտչիդ, որ կարօտ աւուրն պարէնի անկեալ տնի ի մահճիս հիւանդութեան յերեւան քաղաքի: Թողով զիս որդւովքս՝ Հանդերձ ի սուգ թախծութեան ի դրունս այլոց նօթի եւ ծարաւ, յօրէ տարազրութեան մերոյ, որ լրացուցանէ աւասիկ ամիսս իբրեւ գերկոտասան:

Արդ, ստիպեալ յայսոցիկ դառնաղէտ Հանգամանաց, պարտ անձինս վարկայ մատչել այսու աղերսագրով իմով ի համբոյր ոտիցդ սրբութեան եւ խոնարհաբար Հայցել զՋերոյինն մարդասիրական գթութեան առ իս եւ զաւակունս իմ, որք Հանդերձ թշուառացեալ հարբ իւրեանց զարտօսը յաչս աղաղակեն. «Հա՛յր, գթա՛ ի մեզ եւ ողորմեա՛», յուսալով՝ զի զաղաչանս իմ եւ զաղաղակ նոցին ընկալցի Վեհափառութեան Ձեր ի գուժ խնամողական եւ մի՛ անխայեսցէ սրբել զարտօսը յաչաց մերոց՝ տալով մեզ զօրապահիկն մեր զպարէն՝ ցօր ելանելոյ մեզ աստի կենացս:

*ԸՍՏ ԽՆԴՐԱՆԱՅ ԵՒ ՎԱՄՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՏՈՒԻՆ ՀՌԻՓՄԻՄԵԱՅ
Ի ՏԵՂԻ ՆՈՐԱ ՍՏՈՐԱԳՐԵՅԻՄ ՄԱՄԻԿՈՆ ՏԷՐ-ՄԱՏԹԷՈՍԵԱՆՅ*

*Ի 1ն Օգոստոսի, 1895 ամի
յերեւան*

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 589)

**Տ[ԵԱՌԵՆ] Տ[ԵԱՌԵՆ] ՄԿՐՏԻԶ ԽՐԻՄԵԱՆՅ ՀԱՅՐԻԿ ՆՈՐԻՆ
ՎԵՀԷՓԸՆՈՒԹԵԱՆՅ ՍՐԲԸՋՆԸԳՈՅՆ ԵՒ ԲԸՐԶՐԸԳՈՅՆ**

Ամենայն Հայոց

Ես՝ Նանօ Ղարիբջանեանց, Մշու Բուլանդղու Օտնչօրից, ես որբ եւ նոթի, դողալով հիմայ եկայ այս երկիրը, բայց 8 երեխայ թողած այնտեղ:

Հիմայ եկամ անոթի մնացաց եւ սովամահ լինելով, Այլայաղուլս³³¹ եմ նստել:

³³¹ 1831 թուականի տուեալներով՝ այսօրուայ Արմավիրի մարզի Էջմիածնի շրջանում եղել է 39 գիւղ: Այդ գիւղերից մէկն էլ Այլամլուն էր (Վերին եւ Ներքին): Տե՛ս <https://www.anianc.am/2020/03/14/ejmiatsin-1831-1931-population-korkotian/>

Վասն որոյ, խնդրում եմ մի հասարակ եւ կամաւոր ողորմութիւն մը տալու, որպիսի կարողանամ իմ երեխայոց պահպանել:

Տէ՛ր Հայրիկ, արդէն սովահարութիւնից մինչեւ անգամ թռչունների ցորենէին կարոտութիւն կզգանք, որ զաւակունք, մեր ընտանիքը պահպանենք:

Տէ՛ր Հայրիկ, հիմա թէտկ է, որ ես երթամ իմ երկիրը եւ չըկարողանալով մնացաց [եմ] այստեղ բանտարկեալ հայ թանդուղտ...

ՈՂՈՐՄԱՅԷ՛Ք ԱՅՍ ԱՐՏԱՍՈՒՔՈՎ ՀԱՐՍԻՆ
ՆԱՆՈ ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆ

1894սն, 25 Փետրուարի

(ՄՄ, ԽկՖ, Թղթ. 103, վաւ. 37)

ՎԵՀԸՓԸՌ- ՀԸՅՐԻԿ Ը[ՍՏՈՒԸ]ԾՐՆՏԻՐ Կ[Ը]Թ[Ո]Ղ[Ի]Կ[Ո]Ս ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ

Բուլանխայ Յօտնչոր գիւղէ գաղթեալ Աղեկս[ա]նդրաօլ կը բնակիմ: Ունիմ 9 նուֆուս զաւակունք, որոյ մերկ եւ քաղցեալ օրեր կանցնեն: Ո՛վ ապաւէն տարակուսելոց, գթայ ի ցրուեալ եւ կարօտեալ Գեջորքիս, որ այս-չափ զաւակունքս անտերունչ կսպասին: Աղերսեմ Հայրի՛կ զ<ի> չմե[ր]թես զկարօտեալ գերդաստանս մեծի ողորմ[ութեն]էդ:

ԳԵՎՈՐՔ ԼԵՒՈՆԵԱՆ

1896, 18 Յուլ[իս]

Աղեկս[ա]նդրաօլ

ԹԵՂՈՒՏ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(BALOTU)

Վերին Բուլանըքի վերջին գիւղն է Թէղուտը: Գտնուում է Կոփից խնուս տանող ճանապարհին, Արածանի (Մուրադ) գետի եւ Կոր-Ջրի միացման գօտում: Թէղուտից այն կողմ սկսւում է Ներքին Բուլանըքը: Ժամանակին ունեցել է մէկ հայկական եկեղեցի՝ Ս. Յակոբ՝ ծառայող մէկ եկեղեցականով³³² Հազրոյենց Պետրոսի տղան:



Թէղուտը յայտնի է որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա. Թէղուտցու (1885–1891) ծննդավայր³³³, որին 73 տարեկան հասակում յաջորդել է Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմեան Կաթողիկոսը:

1870-ական թուականների վերջերին Թէղուտը համարւում էր Բուլանըքի ամենամեծ գիւղերից մէկը:

Տարբեր սկզբնաղբիւրների փոխանցմամբ 1880–1915 թուականների ընթացքում գիւղում հաշււում էր 70³³⁴, 80–90³³⁵, 160³³⁶, 180³³⁷, 194³³⁸, 221³³⁹ հայ ընտանիք (1168 հայ³⁴⁰):

³³² «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

³³³ Օրմանեան, Մ. արք., Ազգապատում, հտ. III, Երուսաղեմ, 1927, տպ. Ս. Յակոբեանց, էջ 5005, Գլ. 2972:

³³⁴ Ա.Պօ (Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան), Վանի, Պիթլիսի եւ Էջրումի վիլայեթները, Երեւան, 1912, էջ 146:

³³⁵ Միրախուրեան Մ., նշ. աշխ., էջ 83–85:

³³⁶ Թէղիկ, Գողգոթա, էջ 100:

³³⁷ Մարտիրոսեան Ն., նշ. աշխ.:

³³⁸ Ատրպետ, Բուլանըկ, հմր. 213:

³³⁹ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

³⁴⁰ Kévorkian, The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում թէղուտցիների կողմից գրուած վաւերագրերը մեծ թիւ են կազմում: Ինչպէս գիտենք, այս անուամբ տեղանուններ կան նաեւ Հայոց այլեւայլ նահանգներում եւս: Այս հանգամանքը նկատի առնելով՝ առանձնացրել ենք միայն այն նամակները, որոնց մէջ յստակ նշուած էր Բուլանք գաւառանունը³⁴¹: Մատենադարանում պահուող այս վաւերագրերում մեզ հանդիպել են տեղանուան թէղուտ, թղութ, թղուղ, թեղուղ տարբերակային ձեւերը, գրուած՝ տեղացիներ իղլաթ Գալուստեանի³⁴², Խանդիլ Մկրտչեանի³⁴³, Աննա Մխիթարեանի³⁴⁴, Յարութ իղլաթեանի, Յակոբ Մելքոնեանի³⁴⁵ եւ այլոց կողմից³⁴⁶: Այլ աղբիւրներում հանդիպել ենք Բէղուտ տարբերակային ձեւին, որ ամենայն հաւանականութեամբ պէտք է համարել սխալագրութիւն³⁴⁷:

1928ին Քեմալական Թուրքիայում գիւղն արձանագրուեց թէղուտ (Tigout) ձեւով³⁴⁸: Այսօր այն կոչւում է Բալոթու (Balotu)³⁴⁹, իսկ բնակիչները թուրքեր եւ քրդեր են:

1895–1907 թթ. ընթացքում թէղուտի հայ բնակչութեան հողագրկման հիմքում «Իսլամ գաղթականութեան տեղաւորման եւ վերաբնակեցման յանձնաժողովի»³⁵⁰ գործունէութիւնն էր՝ համագործակցութեամբ տեղական իշխանութիւնների: Բուլանքի 8–9 գիւղերում (Քարաղըլ, Համզաշէյխ, Շոնճալու, Շէխեաղուպ, Լիզ, Կողակ, Շէխվելի եւ այլն) հաստատուել էր չերքէզ գաղթականութիւն, որոնց ի նպաստ տեղի էին ունենում ապօրինի հողային գրաւումները: Այստեղ հաստատուած էր մօտ 40 տուն մուհաջիր (գաղթականութիւն), որոնք տեղի հայերից գրաւել էին 42 տուն՝ իրենց յարակից շէնքերով, 150ից աւելի արտերով եւ մարգերով³⁵¹:

³⁴¹ Օրինակ՝ ՄՄ, Խկֆ, վաւ. 255, նամակագիր՝ Բուլանուխայ Թաֆարուվայ բնակիչ՝ Կարապետ Սաֆարեան, միւս օրինակում արդէն Աբարանու Թաֆարու գիւղի բնակչից ստացւած նամակ, տե՛ս թղթ. 101, վաւ. 519:

³⁴² ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 42:

³⁴³ ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 587:

³⁴⁴ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 241:

³⁴⁵ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 63:

³⁴⁶ Տե՛ս նաեւ ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 63:

³⁴⁷ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 26:

³⁴⁸ Dahiliye Vekaleti, Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928, էջ 416.

³⁴⁹ <https://nisanyanmap.com/?y=Balotu&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

³⁵⁰ 1860 թ. Օսմանեան կայսրութիւնում կազմաւորում է «Գաղթականութեան յանձնաժողովը» (Muhacir Komisyonu): 1875ին արդէն այն շարունակում է իր գործունէութիւնը Նեւրին գործոց նախարարութեան առնիքեր: Մանրամասն տե՛ս Авакян А., Черкесский фактор..., էջ 97–98:

³⁵¹ Տե՛ր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 17–18:

Սրանք այն հոգերն ու տներն էին, որոնց տէրերը այս կամ այն խնդիրը լուծելու համար մեկնել էին պանդխտութեան: Վերադառնալով՝ նրանք այլեւս չէին կարող ետ ստանալ իրենց ունեցուածքը:

Յեղասպանութեան ընթացքում թէղուտցի 3–16 տարեկան որբերի փոքրիկ մի խումբ է փրկուել, որոնք անցնելով Արեւելահայաստան՝ հաստատուել են այլեւայլ ապաստարաններում: Այդ որբերից են. Կարապետեան Սրապ՝ 8 տարեկան³⁵², Յարութիւնեան Քեարամ՝ 16 տարեկան³⁵³, Մանուկեան Եղիշէ՝ 6 տարեկան, Մանուկեան Խանում՝ 9 տարեկան, Յարթիւնեան Քոչար՝ 10 տարեկան, Յարթիւնեան Ալթուն՝ 12 տարեկան, Յարթիւնեան Յովսէփ՝ 6 տարեկան, Ղանդիլեան Ղանդել՝ 13 տարեկան, Ղանդիլեան Մուշեղ՝ 8 տարեկան, Ղանդիլեան Աւետիս՝ 3 տարեկան, Ղանդիլեան Ֆէնիս՝ 5 տարեկան³⁵⁴:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 645)

**ՆՈՐԻՆ ՎԵ՛Հ [Ե]ՓԼՈՒԹԵԼՆ ԾԱՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐՔ
ԸՄՆԵՆՅՆ ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹ[Ո]ՂԻԿՈՍ
ՄՇՈՒ ԲՈՎԵՆԵԼ ԹՂՈՒԹ ԳԻԴԻ ՀԵՍԵՐԿՈՒԹԻՒՆԷ**

Ցաւալի աղերս

Մենք Թեղութ **գողղի** գլխաւոր հ[ա]սարակութիւնէ՝ վարթապետովս, քահանայոք եւ իշխանոք դիմում ենք Զերին Վեհաքարութեան՝ յայտնել մեր կրած թշուառութիւնք, որ կրենք քուրտ **փառփառոսաց** եւ տեղոյս անարդար կաթաւարութեան ձեռօք:

Վասն զի, մենք այժմ ո՛չ մեր արթար վաստակին, ո՛չ անասունների, ո՛չ իսկ ընտանեաց տէր ենք: Զի բոլոր բարբարոս վայրենի քիւրտերին անգտութեան զոհ գնացին եւ շարունակելու վրայ ենք:

Մէկ խոսկով, կուգեն, որ հայ ազգը իրեն ծնած հայրենիքէն փաղցնին եւ նոցա անունը եւ յիշատակ աշխարհէն բառնալ:

Ինչպէս Նէրսէս վարդապետ, որ այս երկու տարի Բաղիշ քաղաք բանտարկւած էր, հ[ի]մա նովին 400 օսմանեան ոսկի առնելով անտեղէն դուրս

³⁵² «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելոսած հմր. 5:

³⁵³ Նոյնի Յաւել. հմր. 26:

³⁵⁴ Նոյն տեղում:

Հանեցին, բերին Խնդրակատար վանքը: Արգելեցին, որպէս թէ ապաշխարէ՝ առանց արեւի երես տեսնելու:

Նմանապէս Մանուկ աղայի տղայի[ն] թէլօ էֆենտիի քով^{հն} 400 ոսկի տուկանք առին՝ ոչինչ պատճառով, որ ինքն էլ կառաւարութեան (*Չինայի-թի*) անդամ էր: Եւ այլ ուրիշ այսպիսի ցաւալի դեպքեր, որ անհ[ա]մար կը պատժուին բռնութեան ձեռով:

Վեհափա՛ռ Հայրապետ,

Մի խնդիր հոս կը ներկայացնեմ Ձերդ Վեհափառութիւնին եւ այս է.

Մեր գիւղի Մանուկ աղայի եղբոր որդին՝ Խանդիլը, որ այս հինգ ամիս կը լինի, որ այդ կողմ եկած է՝ կը թափառի: Պատճառը, որ իր դրացի ըռ^{հս}³⁵⁵ սուտ զրպարտութիւն ընելով գնաց կառաւարութեան իմացոյց, թէ իմ տղուս նա է մեռցրել, բայց դա լաւ գիտեմք, որ անպարտ էր: Վասն զի Խանդիլի տաւարը նորա կալի վրայ գալով նոքա ոչ թէ բռնելով նորա տղային մերձիմահ գանակոծեցին, որ մի տարի անկողին պաշկեցաւ, այլեւ անլուր մատ[ն]ութիւն մը եւս յաւելին վրեն, թէ մեր տղին մեռցուցել է, որ կէս տարեկան էր: Ասոր հ[ա]մար Խանդիլը իր երկու մարդերով մի տարի բանտարկեցին: Յետոյ 150 ոսկի օսմ[անեան] առին ու թող տւին: Խանտիլը անպարտ տեղ այդքան չարչարեցին:

Վեհափա՛ռ Տէր, մեր թշուառութեան չափ իր հեռակեան անցաւ, ինչպէս յետոյ *քօրտեղ*³⁵⁶ մեր գիւղի բոլոր ոչխարներ տարին, եւ այս տարի ալ մորելի ցորենիս փչացրեց՝ մանաւանդ այդ Խանդիլու, որ 20 մէկ ընտանիքէ կը բաղկանայ անոր ընտանիքը: Այստեղ մեծ թշուառութեան մէկ>ը <են> մնացած են:

Ի սեւր Քրիստոսի, խեղճ եւ անտէր եւ այսօր իսկ մուրացկանութեան վիճակի ենթարկած են, կը աղաչեմք յատկապէս, որ այդ մարդուն օգնեք ըստ *ամենայնոյն*. «Ձի արժանի է որոյ *ըզշնորհս* անոնց եւ այժմ կըսեմ, որ տեղդ կքտնուի այդ անձնաւորութիւն:

Մի արժանաւոր շնորհատուութեամբ[ը] ընձեռեք, որ իր նմա[ն] թշուառ ընտանեաց տիրութիւն ընէ:

*ՄՆԱՄՔ ՁԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ՝
ՂՈՒԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԿՐՏՁԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀ[ԱՆՆԵՍԵԱՆ]Է*

³⁵⁵ Ռէն՝ գիտական հայ տառուտէ: Ռէսուրսինը կամ մեղիփոքինը հայոց մէջ ժառանգական էր: Մանրամասն տե՛ս **Քենսէ**, Բոլանըխ կամ Հարֆ գաւառ, էջ 37:

³⁵⁶ Իմա՝ ֆրդեր:

**ՆՈՐԻՆ ՎԵՀԸՓԸՆՈՒԹԵԱՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ]
ՍՐԲԸԶՆԵԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

Որբոց պաշտպան Հայրապետ,

Գաղթականութեան դառն վիճակի մէջ մի տարի անցաւ, որ այրս Ղա-
զարապատի³⁵⁷ մէջ մեռաւ: Մնացին վրաս վեց որբեր: Հազար ու բիւր անար-
գանքներու մէջ կապրինք *բլանի*³⁵⁸ մի գոմի մէջ, ուր թոնդիր³⁵⁹ չկայ: Մի
*պղինց*³⁶⁰, երբ ուզենք՝ հալածանքի կը հանդիպիմ: Երախայքս փարաւոնի
գերութեան մէջ են, չունին ոեւէ մի պատսպարան: Եօթ հոգի ենք: Մեզ
տրուած է մի *ատիեալ*³⁶¹: Գոնէ քանի *փալաս*³⁶² ունենայինք՝ ձմեռուան
ցրտէ չմեռանէին երախայքս:

Շատ սպասեցի: Գոնէ ինձ մի գործ յանձնէին, որ իմ աշխատանքով ապ-
րէի: Սակայն այդ եւս չարին: Իմ յոյսս եւ ապաւէնս մնացիք Դուք՝
Վեհափա՛ռ Հայրիկ: Ձեր յուսատու հովանին շնորհ արէք տարածելու զաւա-
կացս վերայ, որպէս զի ապրին գոնէ այժմ՝ քանին հիւանդ են:

Նաեւ որբոցս մին որ տաս տարեկան է, Ղազար անուն, հառաչանօք կը
խնդրէ, որ շնորհ անէք ընդունելու ի շարս Ձեր հովանոյն ներքեւ ուսած
որբ աշակերտաց մէջ, որ ամենից աւելի պէտք ունի Ձեր պաշտպանութեան:

ՊՈՒԼԱՆԽԱՅ ԹԵՂՈՒԴ ԳԻՒՂԱՅԻ ԳՈՀԱՐ ՏՕՆՈՅԵԱՆ

1895 Հունվար 18

Ս[ուրբ] Էջմիածին

³⁵⁷ Նախկինում ունեցել է նաեւ Քարաբուլղա անունը: Գտնուում է Շիրակի մարզում, կոչում է Իսահակեան:

³⁵⁸ Պլան՝ վանքի շրջակայք:

³⁵⁹ Իմա՝ թոնիր:

³⁶⁰ Իմա՝ կաթսայ:

³⁶¹ Բրբ՝ ծածկոց:

³⁶² Յատակին փռելու հասարակ կարպետ:

**ՆՈՐԻՆ ՎԵՂԵՓԵՆՈՒԹԵԼՆ ՆԵՅՐԵԳՈՅՆ ՊԼՏՐԻԼՐԻ
ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԶԻ
ՍՐԲԸՋՆԵՍՈՒՐԻ ՀԵՅՐԵՊԵՏԻ**

**ԲՈՒԼՆԵԼՈՒԳԼՅ ԹԻՂՈՒՏ ԳԻՂԸՅԻ ԳԵՂԹԵԿԵՆ ԸՅՐԻ ԳՈՂԸՐ
ՏՈՆՈՅՆԵԼԵ**

Ամենախոնարհ խնդիր

Ամենաողորմած Հայրիկ,

Յուսով եմ, որ քաջ գիտեք իմ ամուսնոյ անբնական մահը: Երբ անցեալ տարում աթոռոյս Ղազարապատի³⁶³ մօտ ընկաւ խուրջինի? տակ, փոքրիկ երեխայիս հետ միասին՝ մեռաւ: Այն օրից պաշտելի Հայրիկդ առանձին խնամքով կարգադրեցիք մեզ պահպանել աթոռապատկան գոմանոցում՝ հոգալով անտէր այրուս եւ եօթն թշուառ զաւակներին կերակուրը եւ հագուստը:

Բացի այդ ամենը, յանձնեցիք ինձ Գայեանէ վանքում սովորող աշակերտաց հագուստի լուացքը, որից տարեկան մի քանի մանեթ շահոյթով հոգում էինք մեր միւս պէտքերը:

Այժմ տարաբախտաբար այս միջոցները՝ յիշեալ լուացքը, խլուեց իմ ձեռքից եւ տրուեց վանեցի մի կնոջ: Այնպէս որ այժմ մնացել եմ բոլորովին զրկուած ամէն բանից: Բացի հացից, չնայելով, որ առաջուան չափով չէն տալիս: Այնուամենայնիւ զգալի նեղութիւն չէնք կրում հացի կողմից. միայն հագուստի եւ անկողնոյ կողմից սարսափելի նեղութիւն ենք զգում: Մանաւանդ այժմ, որ ցրտերը արդէն սկսուել են: Ուստի սոյն խնդրագրով դիմում եմ պաշտելի Հայրիկիդ ոտքը եւ ամենախոնարհաբար խնդրում եմ բարեհաճեք հոգալու մէջ անհրաժեշտ պէտքերը, որով կարողանանք ազատուիլ ցրտի հարուածից՝ հնազանդուելով մեր ճակատագրին:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱՂԱԽԻՆ՝ ԳՈՂԱՐ ՏՈՆՈՅՆԵԼԵ

Ի 26ն ն[ո]յեմբերի 1896 ամի

Ի Վաղարշապատ

³⁶³ Ներկայիս Իսահակեան գիւղն է (Շիրակ):

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 101, վաւ. 632)

ՎԵՀՓԸՆՈՒ ՏԷՐ
ՍՐԲԸԶՆԸՍՈՒՐԻ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ
ԵՒ ՀԸՅՐԻԿԻ ՈՐԲՈՅ ՏԸՈՒՊԵԼՈՅ

Ամուսնոյս մահուանէն յետոյ Ձեր Վեհափառութեան շնորհիւ Ս[ուր]բ Էջմիածնայ Հովանւոյն ներքեւ պատսպարուած միշտ կօրհնեմ զձեզ եւ անդադար կաղօթեմ Ձեր անգին կենաց երկարութեան համար: Ամ~~ռ~~սը կանցնի դեռ երախայներըս տկլոր մնացած են: *Փալաս* չի կայ տակերնին: Գիշեր~~ցորեկ~~ չոր տախտակին վրայ են: Ձեր անսպառ գթութեանը կը դիմեմ եւ մանաւանդ ամսէ ամիս մէկ քիչ դրամ տաք, որ վեց երախայներովս կարենամ կառավարուիլ, որով երախտապարտ Ձեր անգին կենաց երկարութեան աղօթող միշտ եմս:

ՂԱԶԱՐԱՊԱՏՈՒՆ ՈՏԸ ԿՈՏՐԱԾ ԽԱԶՕՅԻ ԿԻՆ՝
ԳՈՀԱՐ՝ ՎԵՅ ՈՐԲԵՐՈՎ, ՊՈԻԼԱՆԸԽԱՅ ԹԷՂՈՒՏ ԳԻՒՂԷՆ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 669)

ՆՈՐԻՆ ՎԵՀՓԸՆՈՒԹԵԱՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՉԻ Ը.
ՍՐԲԸԶՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ
ՄՇՈՒ ԳԵԻԸՈՒ, ԲՈՒԼԸՆՈՒԹԵՂՈՒՏ,
ԽԸՆՏԻԼ ՅԵՐՈՒԹԻՒՆԵԱՆԷ

Խոնարհ խնդիր

Պաշտելի՛ Հայրիկ,

Անցեալ տարի մեր դրացին Թշնամաբար իմ վրայ գանգատուեց, թէ դուք իմ եղբայրս ծեծել էք եւ մեռցրել: Թէեւ մենք միմեանց հետ կռուել էինք, բայց կռուից առաջ արդէն նորա եղբայրը մեռել էր: Ինձ, եւ ինձ հետ եւս երկու մարդ, բռնել տուեցին: Մէկ տարուայ չափ բանտում մնալով՝ հագի՛ւ թէ գիւղացւոց վկայութեամբ, որ այդ գործի մէջ արդար էինք, արձակեցին մեզ բանտից: Բայց ինձանից առան հարիւր քառասուն ոսկի՝ նոր արձակեցին. եթէ ոչ, Սիբիրիա պէտք է ուղարկէին:

Բարերա՛ր Հայր,

Անցեալ տարի՝ Վարդավառի պասին, քրտերը, յափշտակելով մեր գիւղացւոց ոչխարները, եւ որոց մէջ էր նաեւ իմ հարիւր քսան ոչխարները:

Բարեգո՛ւթ Հայր,

Արդէն Ձեզ քաջ յայտնի է] մեր առաջուայ դրութիւնն: Որ գիւղի մէջ առաջինն էինք, այժմ բոլորից ստոր եւ վերջին:

Ձերդ Հայրութիւնն եւ Կարապետ աղա<յ>ն մեր տանն՝ Բուլանուխ, իջեւանել էք եւ մեր կենցաղավարութեան որպիսութիւնն արդէն տեսել էք: Բայց այժմ Բուլանխայ մէջ վերջինն ենք դառել եւ բազում պարտուց տէր...

Վեհափա՛ռ Տէր,

Եթէ ինձ չէք հաւատալ, որ այդքան նեղութիւնների եմ հանդիպել եւ այդքան պարտուց տէր եմ դառել, այստեղ մեր մօտակայ գիւղերից մարդիկ կան, նաեւ Մաշտուկոց³⁶⁴ տէր Կարապետ քահանա<յ>ն. կարող էք հարցնել նորանից, որ իրաւ է իմ այդքան փորձանքների հանդիպելս:

Այս վեց ամիս է, որ տանից դուրս գալով՝ այս կողմ, այն կողմ պտտել եմ, որպէս զի իմ ցաւերիս ճար գտնեմ, բայց ի դուր: Յոյսս եւ ապաւէնս Հայրութեանդ վերայ դնելով՝ դիմում եմ՝ ոտքըդ ընկած, որովհետեւ կամենում եմ երկիր գնալ, բայց ոչ ճանապարհածախս ունեմ եւ ոչ այնքան դրամ ուտելու: Ուրեմն ինչպէ՞ս գնամ երկիր եւ իմ երախայոց մօտ: Պէտք է ընկեր-հարեւան գան, հարցնեն, ես նոցա ի՞նչ պատասխանեմ: Կասեն՝ Հայրիկին տեսա՞ր եւ նորա Սուրբ Աջը համբուրեցի՞ր եւ քո ցաւերը պատմեցի՞ր: Ինչպէ՞ս Հայրիկ ձեզի չօգնեց: Ամբողջ երկրին հաց կը մատակարարէ, քեզ ալ օգնած կլինի:

Բարեգո՛ւթ Հայրիկ, աղաչում եմ] լալագին աչքերով եւ խնդրում եմ՝ օգնէք խեղճ, թշուառ եւ անկեալ Հայուս, որ գոնէ քիչ պարգերէս կարողանամ գնալ իմ երկիր, իմ ընտանեաց եւ երեխայոց մօտ:

Հայրի՛կ, երկիր գնալուս պէտք է գան գաղտնի կերպով ընկեր-հարեւան հարցնեն մեր երկրի դրութեան մասին, թէ Հայրիկ ի՞նչ ասաւ: Ես նոցա ի՞նչ պատասխանեմ:

Եթէ ինչ ՊԱՏԻԻ ՉՈՒՆԵՄ, ԳՈՆԷ ՄԱՆՈՒԿ ԱՂԱՅԻ ԽԱԹԵՐ՝ ՕԳՆԵՅԷ՛Ք:

ՄՆԱՄ ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ԽԱՆՏԻԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1894 թ. Մայիս 17

Ի Բուլանուխ, Թէղուտ

³⁶⁴ Բուլանքի Մէջիթու գիւղը նկատի ունի:

1896 ՆՄԻ Ի 16 ՅՈՒՆԻՄԻ

ՅՈՒՅԵԿԵԳՐԵԼԼ ԸՆՈՒՆԵՔ ԳԵՂԹԵԿԵՆԵՅ ԳՈՄԱՆՈՅԻ

ՄԵՅՐ ԸԹՈՌՈՅ Ս[ՐԲՈՅ] ԷՋՄԵՆՆԵԻ

ՈՐ ԸՅԺԸՄ ԲԵԼԿԵԼԼ ԿԸՆ Ի ՊԼՇՆՈՒՄՆ

1. Ալջաւազցի Պօղոս Տէր Ղազարեանց, բաղկանում է ինը հոգուց: Նա-
խընկանից եկեալ եւ գնում են Շիրակը: Թիւ արանց 3, թիւ կանանց 6/7/8³⁶⁵:

2. Յակօբ Քօչարեան, Ալջաւազցի: Բաղկանում է եօթը հոգուց: Դարձեալ
Շիրակ են գնում: Թիւ արանց 2, թիւ կանանց 5/6:

3. Յոհաննէս Մուրատեան, Ալջաւազցի, Նորաշէն գիւղից, տասը եւ չորս
հոգի: Թիւ արանց 3, թիւ կանանց 11/9:

4. Բուլանուխցի, Մաճըթլու գիւղից Մանուկ Յարութիւնեան, եօթը հո-
գի: Ցանկանում են գնալ Կարսայ վիճակը: Թիւ արանց 1, թիւ կանանց 6:

5. Հօռօմսիմ Կարապետեան, Բուլանլիս, Լիզ (Բուլանիս) գօղացի, չորս
հոգի, այրի կին եւ երեխայք: Թիւ արանց 1, թիւ կանանց 4:

6. Աբրահամ Քօչարեան, Բուլանլիս, Փիօնք *գիւղացի*, չորս հոգի: Ցան-
կանում են գնալ Կարսայ⁶: Թիւ արանց 1, թիւ կանանց 3:

7. Պողոս Սահակեան, Բուլանլիս, Թէղուտցի, եօթը հոգի, կին եւ երե-
խայք եւ մի մարդ: Ցանկանում է գնալ, ուր որ կամի: Թիւ արանց 1, թիւ
կանանց 7/6:

8. Ծաղիկ Մելքոնեան, Ախլաթցի: Ծաղիկ գիւղացի այրի կին ու մի
երեխայ է: Ցանկանում է գնալ ուր որ կամի. Թիւ արանց 0, թիւ կանանց 2:

9. Բէգօ Խաչատուրեան, Երեք հոգի, չի ցանկանում գնալ: Կոյր կին է:
Թիւ արանց 2, թիւ կանանց 1:

10. Խնուսցի, դարաջօպանցի Յօհաննէս Ասատուրեան, մարդ եւ կին:
Հիւանդ է: Կամին մնալ մինչ ի առողջանալ: Թիւ արանց 1, թիւ կանանց 1:

³⁶⁵ Այս վաւերագրի մէջ գաղթական կանանց թիւը տրուած է մօտաւոր: Մեր կարծիքով, ոչ թէ
կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքից է կախուած, այլ ամուսնացածներին եւս
միեւնոյն ընտանիքի մէջ հաշուառելու հանգամանքից:

**ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹԵԱՆ ՏԵԼ[ՈՒ]Ն ԵՒ ՏԵԼ[ՈՒ]Ն
ՄԿՐՏԻՉ ԿԵԹՈՂԻԿՈՍ ԸՄԷՆԸՆ ՀԵԼ[Յ]ՈՅ**

Մշու գա՛լառի Բուլանի ԹէղուԹ **գողի** բնակիչներ Պէտրոս Մուրա-
դիեան, Թորոս Մարքարիեան եւ Ղարաղլ **գողի** բնակիչ Գասպար Գէորքով
եւ Կարապէտ Գէորքով, եւ Խնուս գա՛լառի Չովուրմայ գողի բնակիչ Գա-
լուստ Գիրակոսով եւ Ջուլամէկ³⁶⁷ գաւառի Դղայ³⁶⁸ գողի բնակիչ Աւէտիս
Օհաննէսով: Եւ այս վէրոհիչեալ վեց անձինքնէրս մէր ընտանիքնէրս գաղ-
ղական **էղնէլով էկած** ենք Ռուսաստան՝ Ղարսայ **գող**, Ուզունքիլիսայ:

Մէնք այս էրկու ամիս է մեր ընտանիքներուց հեռացել ենք: Հիմայ
այս երկու օրն նամակ ըստացանք տունէն: Մէղի ուզած էն, որ մէնք եր-
թա[յ]ինք: Հիմայ մէնք կուգէնք տուն երթալու ըլանք, որ մէր ընտանիքնէր
տանէնք մէր հայրէնիք: Հիմայ մէղի ճանապարհ[հ]ի ծախս չի ունինք:
Խնթրէմք ձեր Սուրբ Վեհափառութեանից, որ մէղի լինիք ողորմած, որ կա-
րողանանք վերա<յ>դարցնէնք ծառայնէրիդ ուրեանց հայրէնիք: Վէրէվն
Աստուած ինք ապա՛լինէլ նէրքէ՛վն ի քօյ Սուրբ Կաթողիկոսեդ:

ՄՄ, ԽԿՖ, ԹԴԹ. 104, վաւ. 260)

**ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹԵԱՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻ Ը.
ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՂԻԿՈՍ ԸՄԷՆԸՆ ՀԵՅՈՅ
Ե[ՍՏՈՒԷ]ԾԵՐԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԵՅՐԵՊԵՏ**

Ի խնդիր

Նուաստս՝ Թեղուդ գիւղացի, ճնշման եւ կարօտահարութեան պատճա-
ռաւ տունս եւ զաւակներս ձգեցի, ամէն տեսակ նեղութիւն յանձն առնելով,
պանդխտեցայ օտար երկրին մէջ, որպէսզի չոր հացիկ մը կարող լինիմ հայ-
թայթել տառապեալ զաւակացս: Բայց դժբաղդաբար հայրենիքէս կսկծալի

³⁶⁶ Այս վաւերագիրն ունի բազմաթիւ տառասխալներ, բարբառային ձեւեր: Մենք արտագրել ենք
նոյնութեամբ, սակայն ամբողջ վաւերագիրը թաւ եւ շեղ ենք դարձրել:

³⁶⁷ Իմա՝ Զովամերկի գաւառակ, Ճովամերկի, Ճովամերկ, Զիլամերկ, Զովմար, Վանի նահանգի,
Հեֆեարի գաւառ, Տեղանունների բառարան, հտ. 4, էջ 424:

³⁶⁸ Իմա՝ Դիզայ գիւղ:

նամակ մը ընկալայ ի Պաթում. անյապաղ օգնութեանս եւ երթալուս կսպասին, որովհետեւ բաղչեցի կատաղի թուրք մը, մեր գիւղ գալով արձակուեր էր մեր տան վրայ՝ սա անիրաւ եւ սուտ պատճառներով, թէ քսան եօթ ոսկի պահանջ ունիմ սոցայ վրայ: Վիրաւորեր է կինս, եւ զաւակիս ալ ամէն նեղութիւն տալով՝ Բաղէշ տարած է: Այլեւս ծառադ ցնդուած եւ շուարած, ցնորուելու աստիճան հասած եմ: Ահա երեք ամիս շրջան կդառնայ, որ պանդղտած եմ, ունիմ մասանւոր ըստակ, սակայն չէ բաւական: Անդի նուաստ ծառադ դիմած եմ յոտս Ս[ուր]բ գահիդ, լալագին աչօքս կաղաչեմ եւ կխնդրեմ Վեհափառ եւ Ս[ուր]բ Հայրապետէդ, որպէսզի գթութիւն ընելով մասնաւոր օգնութիւն մը շնորհէք ի պէտս սա կսկծալի թշուառութեան, որ փութապէս հասնիմ ազատելու, եթէ ոչ՝ կկորսուիմ բոլորովին: Շատ կաղաչեմ, որ չպիտի՛ գլանաք, խնդրութեամբ վերադառնանք հայրենիքս, որ եմք միշտ երախտագէտ ծառայ Վեհափառ Սուրբ Հայրապետիդ:

*Ս[ՈՒՐ]Բ ԷՋՄԻԱՅԻՆ ՄԵԾԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ,
Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ] ՅՈՀԱՆՆԷՍԵԱՆ ԹԵՂՈՒԴ ԳԻՒՂԱՅԻ*

10, Օգոս[տոս] 1896

ի Վաղարշապատ

ԼԱԹԱՐ ԳԻՒՂ/ԴԱԼԱՐ, ԴԱԼԱՐԻԿ, ԹԱԼԱՐԻՍ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ELMAKAYA)

1880-ականներին Բուլանքի Լաթար գիւղը գուտ հայաբնակ էր եւ ունէր 300 տուն: 1801–1888ի տեղեկագրերի, 1908–1914ի՝ Կ. Պոլսոյ ազգային պատրիարքարանի՝ ընդհանուր ժողովի ատենագրութիւնների մէջ լայնօրէն քննարկուած է Բուլանքի եւ շրջակայ գիւղերի հայաթափման եւ քուրդ շէյխերի վերաբնակեցման մասին մանրամասներ՝ գրաւումներ, հարստահարութիւններ, որոնք իր ժամանակին թաքրիւններով (պաշտօնական յուշագիր) տրամադրուել էին Օսմանեան կառավարութեան քննութեանը, սակայն՝ ապարդիւն³⁶⁹: Նման պայմանների թելադրանքով է, որ հայութիւնը պարտադրուած շարունակել է գաղթել կամ, որ աւելի տեղին է ասել՝ դիմել է փախուստի: Նրանց փոխարէն գիւղը լցուել է քուրդ եւ այլ իսլամ վերաբնակիչներով: 1900-ական թուականներին արդէն Հ. Լինչի «Արմենիա» ուսումնասիրութեան մէջ գիւղը նկարագրուած է որպէս մասամբ քրդական եւ մասամբ՝ հայկական³⁷⁰:

Նախկինում ամբողջութեամբ հայաբնակ այս գիւղն ընկած էր Վերին Բուլանքի հարաւարեւելեան մասում՝ Խաչի լճից արեւելք: Ունէր երկու եկեղեցի՝ Ս. Թադէոս³⁷¹ եւ Ս. Գէորգ³⁷²: Տեղիա հոգեւոր հովիւն էր Տէր Խաչատուր քահանայ Մեկքոնեանը, որ միեւնոյն ժամանակ Լաթարից ոչ հեռու Ալիբեջան գիւղի հոգեւոր սպասաւորն էր: Գիւղը դպրոց չուներ³⁷³:

Լաթարը Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում յիշատակուած է Լաթար եւ Լաթառ տարբերակներով: Հանդիպել ենք նաեւ Լաթոր³⁷⁴ եւ Լաթարու ձեւերին³⁷⁵: Մ. Միրախորեանը Լաթարը նոյնացնում է

³⁶⁹ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարան, Ազգային ընդհանուր ժողով, 1909 նստաշրջան, նիստ ԻԲ., 21 Օգոստոս 1909: 1909–10 նստաշրջան, նիստ ԺԵ., 28 Մայիս 1910 (դոմփակ): 1911–12 նստաշրջան, նիստ ԺԱ., 2 Սեպտեմբեր 1911: 1913–14 նստաշրջան, նիստ Գ, 17 Մայիս 1913, եւ նիստ Ի. 25 Ապրիլ 1914:

³⁷⁰ H. F. B. Lynch, Armenia: Travels and Studies, volume 2, էջ 342:

³⁷¹ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

³⁷² Վերապրածների վկայություններ..., էջ 155–156:

³⁷³ Նոյն տեղում:

³⁷⁴ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 4:

³⁷⁵ Նոյնի Յաւել. հմր. 9:

Թալարիս բնակավայրի հետ³⁷⁶: Բենսէն իր հերթին բնակավայրը տեղադրում է Փաւստոս Բուզանդի յիշատակած Ապահունեաց գաւառի Դալարիս գիւղի տեղում³⁷⁷, որտեղ պարսիկները կուրացրել էին դաւադրաբար առեւանգուած Տիրան Թագաւորին (338–350): Ինչպէս վկայում է Փ. Բուզանդը. Թագաւորի աչքերը կուրացնելու համար երկաթը չիկացրել էին ածուխով (բնագրում՝ ածուղ), զի գաջս խարեսցուք զարքայիս Հայոց³⁷⁸: Կուրացած Տիրան Թագաւորն իր հերթին ասում է. թէ փոխանակ՝ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարեցան յայս տեղւոյն, արդ՝ փոխանակ Դալարեացս անուան՝ Ածուղ անուն լիցի սմա՝ մինչեւ ցյաւիտեանս ժամանակաց...³⁷⁹:

Ինչ վերաբերում է Բենսէի տեսակէտին, նման կարծիքը ընթերցողի մէջ ծնում է հետեւեալ հարցը. ինչո՞ւ այդ դէպքում Բենսէի գիրքը վերնագրուած է Բուլանըիս կամ Հարք գաւառ, չէ՞ որ Դալարիսը մաս էր կազմում Ապահունեաց գաւառին:

Հայաթափուած Լաթար գիւղը 1928ին՝ Քեմալական Թուրքիայում արձանագրուեց Լեթեր (*Leter*) ձեւով³⁸⁰: Ներկայումս հայկականութեան հետքն ամբողջութեամբ վերացնելու քաղաքականութեամբ նախկին Լաթար գիւղն ստացել է Էլմաքայա (*Elmakaya*) անունը³⁸¹:

1850-ականներին գրուած բացառիկ մի օրագրութեան մէջ այս բնակավայրի մասին կարդում ենք հետեւեալը. «14ին ելանք Նորչնջողէն հետերնիս քուրտ մը առնելով գացինք Լաթար, հոս քահանայ մը ունէր գրչայ Աւետարան մը, 36 չորերու մէջ փաթթած: Ծաղիկ Աւետարան կըսեն անոր, որ Հիգան քաղաքին մէջ գրուած էր, Տէր Զաքարիայի ձեռօք, թուին Հայոց Պժէ (1368), յաւուրս արքային Խարա Ուսուֆայ: 16ին Լաթարայ ելանք գացինք Կոփայ վանք եւ հոն խեցեմորթէ քարացեալ ժայռը գտանք. ան քարերով վանքի մեծ դուռը կոփեր էին»³⁸²:

³⁷⁶ Միրախուրեան Մ., նշ. աշխ., էջ 62:

³⁷⁷ Բենսէ, Բուլանըիս կամ Հարք, էջ 26: Տե՛ս նաեւ Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ քարգմանեց Խալափեանց Բ., Վիեննա, 1919, էջ 12:

³⁷⁸ Փաւստոս Բուզանդացի, Պատմութիւն Հայոց ի շորս դպրութիւնս, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1889, էջ 53:

³⁷⁹ Նոյն տեղում:

³⁸⁰ Taşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416:

³⁸¹ <https://nisanyanmap.com/?y=Elmakaya&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

³⁸² «Մասունցի եւ տարօնացի Հեթեմաց Փընկոցի Մարկոսի որդի Սարգսի որդի՝ Դաւթի որդի՝ Սիմէօնի օրագրութիւն», Մելիքեան Ե. Յ., Հարք-Խնուս, էջ 210:

Գիւղը հարուստ էր հանքային ջրերով: Այս ակունքներից մէկը տեղացիներն անուանում էին Խուշ-Խւրան³⁸³, քանի որ վրայով թռչող թռչունները սատկում էին: Ամենայն հաւանականութեամբ այս ակունքից բխող հանքային միացութիւնների պատճառով, որից էլ ստացել էր Քուշ-Քւրան կամ Քուշ-Խւրան թռչուն զարկող, սատկեցնող անունը:

Նախքան Հայոց մեծ եղեռնը Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Լաթար գիւղում բնակւում էր 700 հայ³⁸⁴ կամ 90 տուն³⁸⁵: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Լաթար գիւղն ունէր 80 հայ ընտանիք՝ 560 բնակչով³⁸⁶:

Համիդեան կոտորածների տարիներին հողային գրաւումներից անմասն չմնաց նաեւ Լաթար գիւղը: Տեղի շէյխերի կողմից բռնագրաւուեց 73 խոշոր արտ, 2.400 օրավար, 56 արօտավայր³⁸⁷:

Ցեղասպանութեան ընթացքում լաթարցի 9–14 տարեկան որբերի մի խումբ է փրկուել, որոնք անցել են Արեւելահայաստան: Այդ որբերից են Խաչատուրեան Նեկտար՝ 9 տարեկան³⁸⁸, Հասրաթեան Խանէ՝ 10 տարեկան³⁸⁹, Մխոյեան Նունուֆար՝ 10 տարեկան³⁹⁰, Սարգսեան Աբրահամ՝ 10 տարեկան³⁹¹, Կարոյեան Գրիգոր՝ 9 տարեկան, Պօղոսեան Նուարդ՝ 14 տարեկան, Պետրոսեան Ծաղիկ՝ 10 տարեկան, Գէորգեան Անուշ՝ 10 տարեկան, Գէորգեան Մարիամ՝ 9 տարեկան, Գէորգեան Թադէոս՝ 11 տարեկան³⁹²:

Ցեղասպանութիւնը վերապրած ընտանիքները հաստատուել են Դարաչիչակ (Ծաղկաձոր) եւ Ապարանի Սաչլու գիւղերում³⁹³:

³⁸³ Բենսէ, Բուլանրիս կամ Հարֆ, էջ 22:

³⁸⁴ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

³⁸⁵ Թէղդիկ, Գողգոթա, էջ 100:

³⁸⁶ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

³⁸⁷ Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 41:

³⁸⁸ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 4:

³⁸⁹ Նոյն տեղում:

³⁹⁰ Նոյն տեղում:

³⁹¹ Նոյն տեղում:

³⁹² Նոյնի Յանդ. հմր. 41:

³⁹³ ՀԱԱ, ֆ. 227, Յ. 1, Գ. 440, ԹԹ. 8–10:

ՆՈՐԻՆ ՕՆՈՒԹԻՒՆ
Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ ՄԿՐՏԻՉ Ս[Ր]ԲԸՋԵՆԳՈՅՆ ՀԵՅՐԵՊԵՏ
ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԵՅՈՅ

ՊՈՒԼԵՆԸԻՈՒ ԼԸԹԸՐ ԳԻՒՂԻ ԳԸՂԹԸԿԸՆ ԲՆԸԿԻՉ
ՍԵՐՈՒ ՄՈՒՐԸՏԵՆՆՅԷ

Խնդիր

Հայրի՛կդ պաշտելի,

Այսօր դիմեցի յոտս Մեծիդ եւ Բարերարիդ նախ յայտ[ն]ելու մեր ցաւեր, երկրորդ³⁹⁴ շնորհացդ արժանանալու:

Հայրի՛կ Վեհափառ, Լաթար գիւղի գլխաւորաց մինն ալ ես էի: Ինչպ[է]ս քանիցս մեր տուն հիւրընկալուած էք, եթէ յիշէք, կամ չէք մտաբերել:

Բայց այսօր այն տուն եւ ընտանիք մնացին ճարհատ: Ունեցած բոլոր ձեռքէս գնաց: Մեր գիւղի շէ[յ]իս, որ քոյրս խլելու հ[ա]մ[ար] բոլոր բարբա-րոսութ[իւ]ն գործածեց, գիշերներ տանս վր[այ] յարձակելով թէեւ չըկարաց խլել, բայց ի՞նչ օգուտ, որ երկու զոհուց պատճառաւ գնացին՝ ոտքի տակ իյնալով: Որոց սրէն ես ինքս վիճակորեցայ, որ ցարդ վէրքերս կը մնա: Վեր-ջապէս, այդ շէ[յ]իսը, երբ տեսաւ, որ իր նըպատակին չըհասաւ, սկսաւ գո-ղունի ունեցածս խլել: Երբ տեսայ, որ մեզ պիտի զրպարտէ յանիրաւի, պիտի կորսուիմ, առայ մեր մնացած ընտանիք՝ այս կողմը եկայ, եւ հիմայ Կարսայ Նախճուան գիւղը նստած ենք:

Եւ այս տեղս տեսնելով, որ չեմ կարօղ ընտանիքս պահպ[ա]նել, վ[ա]սնդի եւ ոչ մի բան չէ մնացեր ձեռքերնիս, դիմեցի Ձերին Վեհափառու-թեան՝ առանց ամաչելու մեզ մի օգնութ[իւ]ն խնդրելու նպատակաւ:

Կաղաչեմ երեսանկեալ, մեզ մի մարդասիրական շնորհ մատակ[ա]րարէք, որ տանեմ մեր ընտանիք պահպանեմ:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿՆԱԾՈՒԹ[ԵԱՄ]Բ
ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝ ՍԵՐՈՒՄ ՄՈՒՐԱՏԻՑ

1895, 1 Հոկտեմբեր
ի Վաղարշապատ

³⁹⁴ Բնագրում՝ Բ.:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 9)

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԼՆ Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ ՀԱՅՐԵՊԵՏԻ ԵՒ
ԾԱՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐԻԱԿԱՆ ԼՄ[ԵՆԵՅՆ] ՀԱՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ]
Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՁԻ**

ՊՈԿԼԱՆԸՐՈՒ ԼԵԹԵՐ ԳԻՒՂԵՅԻ ԽԸՉՈՒՆՅԷ

Ամենախոնարհական խնդիր

Վեհափա՛ւ եւ պաշտելի՛ Հայրապետ,

Ինձմէ ի գատ, երկու եղբայր ունէ[ի]: Մինը երկու տարի յառաջ իր բնական մահուամբ մեռաւ, իսկ երկրորդը³⁹⁵ մեր գիւղի չԽ[յ]իս Ամուրը ծածի տակ մեռցրեց՝ մեր դաշտի մէջի սպանուած քուրդի պատճառաւ, որոյ Հ[ա]մ[ար] մեր ունեցածը բոլոր աւարի առնել տուաւ:

Եւ ես՝ նուաստս ալ, ստիպուեցայ դուրս ելլել գիւղէն դէպի յօտարութիւն], եւ այս երեք ամիս է, որ այս տեղերը քարշ կուգամ կաղԽկաղ, զի ոտքիս մինը սախատ³⁹⁶ է:

Այսպէս թողեր եկեր եմ. 10 ընտանեաց խեղճ ստուար մի խումբ, վ[ա]սն զի 7 որբերը մեռնօղ եղբարցս է, որ այժմ թեւիս վր[այ] է[ն] մնացեր:

Վեհ[ափա՛ւ] Հայրիկ, գիւղի մէջ մեր տունը անուն ունէր: Ինչպէս Ձերին Վեհուծ[իւն]ը Կ. Պօլսէն Վան դառնալուն մեր տունը Հանգիստ առաք եւ առաւօտե[ա]ն գնալուն մի աղօթքի գիրք մեզ շընորհեցիք, որ դեռ տան մնում է իբրեւ անգին գանձ:

Վերջապէս, իմ ներկայ դրութիւնս այս է: Եթէ բարեհաճիք, կարօղ էք ինձ դուրս հանել այս անտանելի վիճակէն, նաեւ ժամ յառաջ ճանապարհ գցել դէպի Հայրենիք, որուն փափագիմ...

*ՈՒՐԵՄՆ ՄՆԱՄՔ ՎԵՀՈՒԹԵԱՆ Դ ԱՆԳԻՆ ԿԵՆԱՅ
ԸՆԴՄԻՇՏ ԲԱՐԵՄԱՂԹՈՒ Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ]՝
ԽԱԶ[Ա]ՏՈՒՐ ԱՍԼՕԵ[Ա]ՆՅ*

1896, 29 Յունվ[ա]րի

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

³⁹⁵ Բնագրում Բ.:

³⁹⁶ Թրք. sakat, հաշմանդամ:

ԼԻԶ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ/ԼԻԾ/ԼԻԾՆ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ERENTEPE)

Լիզ գիւղաքաղաքն ընկնած էր Բլէջան լեռան արեւելեան մասում՝ բլրի լանջին, Լիզ կամ Վարդ գետի ձախ ափին՝ Նազիկ լճից հիւսիս-արեւմուտք։ Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում տեղացիները բնակավայրն անուանել են Լիզ եւ Լիս։ Այլ աղբիւրներում հանդիպել ենք նաեւ Լեզք³⁹⁷ եւ Լէզ³⁹⁸ ձեւերին։ «Համբաւաբեր» թերթի ցուցակներում երկու անգամ գործածուել է Լզու տարբերակով³⁹⁹։ Վարչական կենտրոնը նկատի առնելով Ներքին Բուլանքը Օսմանեան շրջանում կոչուել է նաեւ Լզա-Բուլանք⁴⁰⁰։ 1928ին Քեմալական Թուրքիայում գիւղն հաշուառուեց եւ արձանագրուեց Լիզ անունով։ Կարճ ժամանակ անց այն ստացաւ Զամիլի (Camili) անունը⁴⁰¹։ Մեծ եղեռնից յետոյ այն ամբողջութեամբ հայաթափուել է։ Ներկայումս կոչուում է Էրենթեփէ (Erentepe)⁴⁰²։

Լիզը Ներքին Բուլանքի (նահիյէ) վարչական կենտրոնն էր՝ քայմաքամի գլխաւոր օգնական միւղիրի նստավայրը, որտեղից էլ կառավարւում էին դատական, հողային (արազի), աշխարհազրական (նիւֆուս) գործերը⁴⁰³։ Գիւղի կենտրոնում գտնուող սեւ կճաքարից (բազալտ, կճաքար) շինուած եկեղեցին Ս. Աստուածածինն էր⁴⁰⁴։

9-րդ դարի երկրորդ կէսին, կրթական բարենորոգչական աշխատանքները թեւակոխել էին նաեւ 200⁴⁰⁵–250⁴⁰⁶ տուն ունեցող, ամբողջովին հայաբնակ Լիզ⁴⁰⁷։ Այստեղ բացուել էր երկու դպրոց։ Առաջինը՝ 1871ին, Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով հաստատուած կրթօջախն էր,

³⁹⁷ Տաշեան Հ. Յ., «Տայֆ, Դրացիք եւ Խոտորջուր, Պատմական-Տեղագրական Ուսումնասիրութիւն», Վիեննա, 1973, էջ 250։

³⁹⁸ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 19։

³⁹⁹ Նոյնի Յաւել. հմր. 13։

⁴⁰⁰ Նամակներ տե՛ս, ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 43, նամակագիր Աստուածատու Միրզոյեան; ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 10, նամակագիր՝ Մաթթէս Սողոմոնեան; ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 251, նամակագիր՝ Վարդան Ասադեան, թղթ. 104, վաւ. 10։

⁴⁰¹ TC İçişleri Bakanlığı, Köylerimiz (1 Mart 1968'e kadar), Ankara 1968.

⁴⁰² Sezen T., Osmanlı Yer Adları, Ankara, 2017, էջ 253.

⁴⁰³ Ատալեա, Բուլանքի, «Մշակ», 1915 թ., հմր. 214։

⁴⁰⁴ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Բ., էջ 99; «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338։

⁴⁰⁵ Մարտիրոսեան Ն., նշ. աշխ.։

⁴⁰⁶ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Բ., էջ 99։

⁴⁰⁷ Բենսէ, Բուլանքի կամ Հարֆ, էջ 27։

որտեղ Սարգիս Յովհաննէսեանի դաստիարակութեան ներքոյ արձանագրուել էին շուրջ 70 աշակերտ⁴⁰⁸։ Միւս կրթօջախը 1879ին՝ Միացեալ Ընկերութեան ջանքերով բացուած նախակրթարանն էր, որտեղ լիզեցի եւ հարեւան գիւղերի հայ երեխաները կրթութեան հնարաւորութիւն ստացան ընդամէնը 5⁴⁰⁹ կամ 6⁴¹⁰ տարի։

Համիդեան կոտորածներէից անմասն չմնաց նաեւ Լիզը։ Բացի այդ՝ 1895ից մեծ թափ ստացան ապօրինի հողային գրաւումները։ Լիզի հարեւանութեամբ գտնուող չերքէզաբնակ Կոբօ գիւղի բնակիչները գրաւեցին 400ից աւելի արտ⁴¹¹։ Կոբօն չերքէզներով էր վերաբնակեցուել 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի աւարտից յետոյ՝ իսլամ գաղթականութեան տեղաւորման եւ վերաբնակեցման կառոյցի կողմից, որը Հիւսիսային Կովկասի գաղթականութեան վերաբնակեցումը վերածել էր պետական քաղաքականութեան⁴¹²։

Նախքան Հայոց մեծ եղեռնը Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Լիզ գիւղում բնակւում էր 1499 անձ⁴¹³ կամ 250 տուն հայ բնակչութիւն⁴¹⁴, (113 թուրք, 75 քուրդ բնակիչ)⁴¹⁵։ Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի գրութեամբ Լիզ գիւղն ունէր 244 հայ ընտանիք՝ 1.698 բնակչով⁴¹⁶։

Գիւղում հայերն ունէին 2.420 եղջերաւոր անասուն, 3.368 ոչխար, 21 ձի, 9 ջրաղաց, 3 ձիթհանք, 1 եկեղեցի, 1 վարժարան, աւելի քան 600 տուն, 2 խանութ՝ իւրաքանչիւրը 4–500 օսմանեան լիրայի կարողութեամբ։ Միայն 1915ի ցանքսի բերքը ենթադրւում էր 2.040 սոմար (փութ) ցորեն եւ 2.800 դեզ խոտ⁴¹⁷։

⁴⁰⁸ Բենսէ, Բովանդիս կամ Հարֆ, էջ 27։

⁴⁰⁹ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ բառարան, հտ. Բ., էջ 99։

⁴¹⁰ Սասունի Կ., 2013, էջ 252։

⁴¹¹ Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 11։

⁴¹² Karpat K. H., "The Status of the Muslim under European Rule: the Eviction and Settlement of the Çeikes," Studies on Ottoman Social and Political History. Selected Articles and Essays, (Leiden: Brill, 2002), էջ 660–662։

⁴¹³ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350։

⁴¹⁴ Թէղիկ, Գողգոթա, էջ 100։

⁴¹⁵ <https://nisanyanmap.com/?y=Erentepe&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁴¹⁶ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195։

⁴¹⁷ Մովսէսեան Ս., Բովանդի կոտորածը, Մեծ-Ղարաքիլիսա 1916 թ., «Համբաւբեր», 1916 թ. հմր. 43, էջ 1358–1360; Ունեցումսի մասին տե՛ս նաեւ Հայոց ցեղասպանութիւնը Օսմանյան Թուրքիայում, Բիթլիսի նահանգ, Երեւան, 2012, հտ. 2, էջ 157։

Հայոց ցեղասպանութեան տարիներին Լիզի հոգեւոր սպասաւորները⁴¹⁸ երկուսն էին⁴¹⁹՝ Տէր Ղազարը եւ Տէր Յովհաննէսը, որոնք երկուսն էլ դաժանաբար սպանուեցին 1915ին⁴²⁰:

1915ի յունիսի 28ից սկսւում է տեղի հայ բնակչութեան ջարդը: Ողջ են մնում միայն 18 երիտասարդ, որոնք աշխատում էին Լիզի 9 ջրաղացներում: Այս ջրաղացների գործունէութիւնը շատ կարեւոր էր, քանի որ պատերազմող երկրին ու զօրքին անհրաժեշտ էր ալիւր մատակարարել: Ուստի իւրացնելով այս ջրաղացներն իբրեւ պետական սեփականութիւն՝ այստեղ աշխատող երիտասարդներին չէին զինուորագրել⁴²¹: Շուտով հերթը հասնում է նաեւ ջրաղացպաններին: Երիտասարդներին առաջնորդում են հրամանատարի մօտ՝ աշխատավարձը յանձնելու պատրուակով: Երբ երիտասարդները⁴²² ներկայանում են՝ վերջինս հրամայում է յանձնել «Ղասապ թաբուրուին»՝ մսագործների գնդին⁴²³, որոնք ստեղծուել էին յատուկ հայերին կոտորելու համար: Դրանք թեչքիւաթ-ը մախսուսայի՝ առանձնա-յատուկ գումարտակի մաս էին կազմում եւ զինուած էին կացիններով ու մահառիթ գործիքներով⁴²⁴:

Լիզ գիւղի հայ բնակչութեան կոտորածը կազմակերպել է քայմաքամ Էսադ բէյը, միւղիւր Խալաֆ էֆենդին, Մուշի կառավարիչ (միւթէսարֆ) Սէրվէթ բէյը՝ զինուորական ու քաղաքային պաշտօնեաների հետ. Խօշ-գեալդիի թոռը Ջնդիի, Սայիդի եւ Հայդարի ձեռքով⁴²⁵:

Լիզ գիւղից զրուած նամակներն ամենահետաքրքրականներն են, դրանք ե՛ւ բովանդակային, ե՛ւ թեմատիկ ընդգրկումով, ե՛ւ բառապաշարով, ե՛ւ ներկայացուող նիւթի խորքայնութեամբ խիստ տարբեր են Բու-

⁴¹⁸ Ըստ Թէոդիկի՝ Սահակ Բահանայ Աստուածատուեան եւ Նահապետ Բահանայ, տե՛ս Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁴¹⁹ Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում արձանագրուած է մէկ նամակ Բոլանուի գիւղի Մատթէոս Բահանայ Տէր Գէորգեանի կողմից: Ամենայն հաւանականութեամբ համիդեան կոտորածների ընթացքում նա է եղել գիւղի Բահանան: Տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վա. 644:

⁴²⁰ Մովսէսեան Ս., Պոլանդգի կոտորածն ու գաղթը, «Աշխատանք», 1916 թ., հմր. 26, էջ 1–2:

⁴²¹ Մանասեան Գ., Տաճկահայեր, Մի լրացուցիչ տեղեկութիւն Բուլանդի կոտորածէն, Համալու, 1916 թ., «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 48, էջ 1524–1525:

⁴²² Ականատեսը նաեւ տալիս է սպանուած ջաղացպանների անունները, տե՛ս «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 6, էջ 142–143:

⁴²³ Նոյն տեղում:

⁴²⁴ Այս գնդերի մասին մանրամասն տե՛ս Գ. Վ. Կ., (Գրիգոր վրդ. Կերկերեան, Գրիկեր) Թէշիլաթի մահսուէ, Յուսաբեր, բացառիկ թիւ նուիրում ապրիլեան եղեռնի յիսնամեակին, 1915–1965, Յուսաբեր, Գահիրէ, 1965, էջ 5–38:

⁴²⁵ Մովսէսեան Ս., Պոլանդգի կոտորածն ու գաղթը, «Աշխատանք», 1916 թ., հմր. 26, էջ 1–2:

լանըքի միւս գիւղերից գրուած նամակներէից: Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակները Լիզի հայ բնակչութեան կրած հարստահարութեան ու զրկանքների, ինքնապաշտպանութեան փորձի, անելանելի կացութիւնից դուրս գալու ձգտումների մասին է: Հայրենի տնից փախչելու կարողութիւնն իբրեւ ելք, իբրեւ նպատակ ժողովրդի գոյատեւման, որոնք ապրած սահմուկեցուցիչ կեանքի իրական նկարագրութիւնն են. «Գիշերներն մեր կին ընտանեաց հետ կատարում են իւրեանց շնութիւնն եւ սպանում ե... 18 տուն Համգաշեխ գիւղից փոխում են ստիպմամբ թուրք կրօնի, որոնց 3-ին սպանել են, եւ այժմ 28 հայ հոգու կախաղանի հրաման է արձակուած»⁴²⁶: «Չեմ կարող դ[ա]րձեալ, Վեհ[ափա՛ն] Տէր, այն ճանապարհին ինձ տուած տանջանքներ պատմել մի առ մի, բայց օրհնեալ է Ա[ստուա]ծ, որ ի վերջոյ քանի իշխանաց շնորհիւ ազատեցանք, իսկ երբ տուն հասայ, տեսայ, որ ամեն բան վեր ի վայր դ[ա]րձած աւերակ գիւղը բուերու բոյն դ[ա]րձած, անտէր, լալոտ ու բոկոտ...»⁴²⁷:

Անսահման հայրենասիրութեան մէկ օրինակ է տասը հոգանոց խմբի այցելութիւնը Խրիմեան կաթողիկոսին. «Մեր դիտաւորութիւնն է ինքնապաշտպանութիւն: Մենք դիմած, եկած ենք Վեհիդ ոտքը, որ թէ՛ մեզ, թէ՛ մերայինք, թէ՛ Հայրենիքը ազատենք թրքական երկաթէ լծէն: Մէկ խօսքով, մենք 10 հոգի ենք: Ուխտեր ենք, որ պիտի գնանք մեռնելու: Ահա՛, մեր վերջի վճիռն է այս»⁴²⁸:

Ներքին Բուլանըքի զուտ հայաբնակ Լիզ գիւղը Առաքել Մելոյեանի կամ, ինչպէս թշնամիներն են կոչել՝ Սարսափ Առաքելի⁴²⁹ ծննդավայրն է:

Յեղասպանութեան ընթացքում Լիզ գիւղաքաղաքից 3-14 տարեկան որբերի մի խումբ հաստատուել է այլեւայլ ապաստարաններում: Այդ որբերն են՝ Արտաշէս Յովհաննիսեանը՝ 15 տարեկան⁴³⁰, Գրիգորեան Մխիթարը՝ 13 տարեկան⁴³¹, Թայիրեան Սամսոնը՝ 14 տարեկան⁴³², Նիսոն՝ 5 տարեկան⁴³³, Տէր Սահակեան Գասպարը՝ 6 տարեկան, Տէր-Սահակեան Գէորգը՝ 8 տարեկան, Տէր-Սահակեան Սերովբը՝ 8 տարեկան⁴³⁴, Մօսէեան Բիրսօն՝ 11

⁴²⁶ ՄՄ, ԽԿՖ, թղթ. 102, վա. 644:

⁴²⁷ ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վա. 106:

⁴²⁸ ՄՄ, ԽԿՖ, թղթ. 104, վա. 8:

⁴²⁹ <http://www.hayzinvor.am/17687.html>

⁴³⁰ «Համբարաբեր», 1916 թ., Յաւելուած հմր. 6:

⁴³¹ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 5; հմր. 6:

⁴³² Նոյնի Յաւել. հմր. 5:

⁴³³ Նոյնի Յաւել. հմր. 7:

⁴³⁴ Նոյնի Յաւել. հմր. 13:

տարեկան⁴³⁵, Մօսէեան Հրաչեան՝ 6 տարեկան⁴³⁶, Մուշեղը՝ 8 տարեկան⁴³⁷, Մամիկոնը՝ 4 տարեկան⁴³⁸, Նազարը՝ 12 տարեկան⁴³⁹, Սանդուխտը՝ 12 տարեկան⁴⁴⁰, Սարգիսը՝ 8 տարեկան⁴⁴¹, Սեդրակը՝ 7 տարեկան⁴⁴², Յակոբեան Մուշեղը՝ 10 տարեկան⁴⁴³, Մխոյեան Դաւարիան՝ 5 տարեկան⁴⁴⁴, Գարեգինը՝ 13 տարեկան⁴⁴⁵, Ստեփանեան Վաղինակը՝ 7 տարեկան⁴⁴⁶, Կարապետեան Գիւլնազը՝ 10 տարեկան, Յակոբեան Մուշեղը՝ 11 տարեկան, Մխէեան Տամաթիան՝ 6 տարեկան⁴⁴⁷, Աւետիսեան Յովհաննէսը՝ 12 տարեկան⁴⁴⁸:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 102, վաւ. 644)

ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹԵԼՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԵՅՈՑ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՉԻ Ը.

ՏԵՃԿԸՀՊԵՏԵԿ ԲՈՒԸՆՈՒՂ ԳԻՒՂԻ ՄԵՏԹԷՈՍ ԲԵՀԸՆԵՅԷ ՏԷՐ
ԳԻՈՐԳԵԼՆ ԵՒ ԿԵՐԵԿԻԼՍԸ ԳԻՒՂԻ ՍԸՀԸԿ ՍԵՐՈՎԵԼՆԷ

Աղերսանօք խնդիր

Վեհափա՛ռ Տէր,

1893 թուի սեպտեմբեր ամսից Տաճկաստանի քուրդ եւ տաճիկներն ամենասաստիկ նեղութեան եւ վնասուց են տանջում մեր Հայերին: Այն է՝ Հորած ցորեանն տիրում են, ամբարած ցորեանն տիրում են: Գիշերներն մեր կին ընտանեաց Հետ կատարում են իւրեանց շնութիւնն եւ սպանում են: Օտարութիւնից երբ վերադառնում են Հայ մշակներն, նրանց աշխատած դրամն եւ տունն կողոպտում են եւ սպանում: 18 տուն Համզաշէխ գիւղից

⁴³⁵ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 19:

⁴³⁶ Նոյն տեղում:

⁴³⁷ Նոյն տեղում:

⁴³⁸ Նոյն տեղում:

⁴³⁹ Նոյն տեղում:

⁴⁴⁰ Նոյն տեղում:

⁴⁴¹ Նոյն տեղում:

⁴⁴² Նոյն տեղում:

⁴⁴³ Նոյն տեղում:

⁴⁴⁴ Նոյնի Յաւել. հմր. 20:

⁴⁴⁵ Նոյնի Յաւել. հմր. 21:

⁴⁴⁶ Նոյնի Յաւել. հմր. 45:

⁴⁴⁷ Նոյնի Յաւել. հմր. 49:

⁴⁴⁸ Նոյնի Յաւել. հմր. 9:

փոխում են ստիպմամբ թուրք կրօնի, որոնց 3-ին սպանել են, եւ այժմ 28 հայ հոգու կախաղանի հրաման է արձակուած:

Վարդենիս գիւղի Մարգար վարժապետին⁴⁴⁹ 3 օր կախած պահեցին, որին, Բաղիշու Կարմրական⁴⁵⁰ եկեղեցին դրած ժ[ա]մ[ա]ն[ա]կին, գիշերապահ թուրքերն տեսել են նորա վ[րա]յ լոյս իջնելուս եւ վկայել են: Այս պատճառաւ վկայ թուրքերին նշանակուեց 3 ամիս բանտ:

Էֆենդիքն եւ աղաներն ստիպմամբ հայ գիւղերից պահանջում են 40–50 ոսկի կամ սպանում: Առաջնորդ Ներսէս վ[ա]րդ[ա]պ[ետ]ին 2 տարի նշանակած է բանտ, որից 450 ոսկի թաքալ շրջելով ստիպմամբ պահանջեցին, եւ այժմ բանտարկուած է նա:

Էֆենտիքն եւ աղաներն նստում են *զօռով*⁴⁵¹ հայ գիւղերում եւ վնասուեց են տանջում, եկեղեցիքն ոչխար են լցնում, այնպէս, որ հայի համար լաւ է մեռնել, քան թէ այսպէս՝ կիսակենդան մնալ: Վեհափա՛ռ Տէր, հայերին արգելում են հեռագիր տալ, որով լինի գուցէ օգնութիւն:

Այս նեղութեանց եւ սպանմանց պատճառաւ դիմելով Սուրբ Հօրդ գարշապարն՝ երեսանկեալ եւ արտասուռք աղաչեմք մեր խեղճ հայոցը մի փրկութիւն եւ օգնութիւն:

*ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆԴ ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝
ՄԱՏԹԷՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ ԵՒ ՍԱՀԱԿ ՍԵՐՈՎՔԵԱՆ*

19 Ապրիլի, 1894 ամի

⁴⁴⁹ Վարդենիս գիւղից Մարգար վարժապետի մասին (Մարգար Ամիրեան) տե՛ս Սասունի Կ., 2013, էջ 487–489:

⁴⁵⁰ Բաղիշի Կարմրակ եկեղեցի:

⁴⁵¹ ստիպել, ուժ գործադրել:

ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԵՐԳԸ
(ՄԱՐԳԱՐ ԱՄԻՐԵԱՆ)

Մարգար բանտէն հանեցին ա՛խ հայեր
Ֆարման վըզէն կախեցին, լացէ՛ք հայեր
Գերի հայեր, անգու՛թ թիւրքեր:

Տերութեան զօրքը լեցուաւ բակ ա՛խ հայեր,
Մարգար տարան Կարմրակ, լացէ՛ք հայեր
Գերի հայեր անգու՛թ թիւրքեր:

Տէր Գէորգին կանչեցին ա՛խ հայեր,
Մարգար խօստովանցուցին լացէ՛ք հայեր,
Գերի հայեր անգու՛թ թիւրքեր:

Հինգշաբթի իրիկուն ա՛խ հայեր,
Մարգար հանեցին կախաղան լացէ՛ք հայեր
Գերի հայեր անգու՛թ թիւրքեր:

Երբ որ Մարգար կախուեցաւ ա՛խ հայեր,
Հայի արեգակը խաւարեցաւ լացէ՛ք հայեր,
Գերի հայեր անգու՛թ թիւրքերը:

Հաւաքեց՝ Յ. ԽԱՆՈՅԵԱՆ



Կարապետեան Ք., Երգարան «Տարօն», Տարօնի անցեալ բանաստեղծութիւնները,
հերոսներու նկարները եւ ժողովրդական անտիպ երգերը, ինչպէս նաեւ
սիրերգեր եւ պարերգեր, 1930, էջ 77:

**ՆՈՐԻՆ ՕՇՈՒԹԵԼՆ Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ ՄԿՐՏՉԻ
Ս[Ր]Բ[Լ]ՋՆ[Լ]Ս[ՈՒՐ]Բ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ
ՊՈԽԼՆԸԻՈՒ ԼԻՁ ԳԻՂԵՅԻ ԸՐԸՄ ՏԷՐ ԵՂԻԸԸԸԸԸՆՅԷ**

Խոնարհական խնդիր

Վեհափա՛ռ Հայրապետ,

Նուաստս, Ձերին այն անարժան ծառան եմ, որ անցեալ ձմեռ արժանացանք Վեհի՞դ ներկայութեան, եւ մեր ներքին փափագանց կարօտն լցուցանելով եւ վայելելով միանգամայն հայրական անբաւ շնորհաց բարիքն՝ հեռացանք դէպի մեր հայրենիք, որ Ծաղկազարդի կիւրակէ հասանք Մշոյ Ս[ուր]բ Կարապետի մենաստան:

Բայց ներեցէք, Վե՛հ Տէր, որ յայտնեմ հակիրճ. տեղոյն միաբանութիւն՝ ինձ **Հասցրած**⁴⁵² վշտազին չարիք: Զի յիշեալ վանքը հասնելուն պէս տեղոյն երեք միաբանք, այն է՝ լեցցի Եսայի, ամբեցի⁴⁵³ Կար[ա]պետ եւ Եղիշէ քօսայ վ[ա]րդ[ա]պետները մեզ անմիջապէս Մշոյ կ[ա]ռ[ա]վ[ա]րութեան] մատնեցին՝ իբրեւ ազգային խռովարար, եւ 25 օր մութ, խոնաւ բանտին մէջ մեզ շղթայակապ պահելէն յետոյ մեր ընկեր պաղիշեցի Պղտօի հետ: Յետոյ մեզ հանելով անկէց՝ խրկեցին Պուլանըխայ դատարան:

Իսկ ճանապարհին, երբ հասանք Զրի գիւղ ըսուած կամուրջ, փողի պատճառով պահապան ոստիկան[ն]ներէն մինը **յուսիս**⁴⁵⁴ հրացանի **խօնտախով**⁴⁵⁴ ընկերոջս այնպիսի հարուած մը տուաւ, որ անմիջապէս գետ գլորուելով՝ ջրամոյն եղաւ: Իսկ գործող «յիշեալ ոճրագործ», գործոյն ծախսոտ ելք տեսնելով, հետս ընդ կրունկ դարձաւ՝ դատարանին յայտնելու, ո[ր]պ[էս] թէ Պղտօն ինքզինքը գետ ձգեց: Մինչ այս, մինչ այն, մարդիկ դատարանէն հասան, եւ Եաշիդ ոստիկան, իմ շղթայներս քակած, եւ Պղտօի դին դուրս բերած էր ջրէն: Իսկ ես այն միջոցին, մեռածի մէջքէն քամարը քակելով, հանեցի մէջէն 27 օս[մանեան] լիւրան, որ ան ալ Մշոյ դատարանին մէջ Քօսապի⁴⁵⁵ ձեռքէս խլեց: Դ[ա]րձեալ բանտարկեցին եւ սկսան այս անգամ երբեմն համոզմամբ եւ մերթ սպառնալիօք զիս ահաբեկել՝ ասելով, թէ երբ քեզ կանչեն՝ ասա, թէ Պղտօն ինքնասպանութիւն] գործեց եւ այլն...

⁴⁵² Պէտք է լինէր հասցրեց:

⁴⁵³ Ամուր, Կամախ:

⁴⁵⁴ Հրացանի ծայրի մասը:

⁴⁵⁵ binbaşı՝ քրմ. հազարապետ:

Իսկ երեք պետութիւնաց քննիչ մասնաժողով, որ այն պահու Մուշն է[ր] գտնջվում, լսելով մեզ կանչեց, եւ գործոյն իսկութիւնաց ճշմ[ա]ր-տ[ու]թիւն լսելով, մեզ յանձնեցին քանի ոստիկան[ն]երու մեր տեղերը մեզ բերին:

Ձեմ կարօղ դ[ա]րձեալ, Վեհ[ա]փա՛ւ Տէր, այն ճանապարհին ինձ տուած տանջանքներ պատմել մի առ մի, բայց օրհնեալ է Ա[ստուա]ծ, որ ի վերջոյ քանի իշխանաց շնորհիւ ազատեցանք: Իսկ երբ տուն հասայ, տեսայ, որ ամեն բան վեր ի վայր դ[ա]րձած, աւերակ գիւղը բուրու բոյն դ[ա]րձած, անտէր, լալոտ ու բոկոտ, լեռներ կտրելով՝ Կարս եկայ եւ գտայ մեր դժբաղդ ընտանիք:

Գործել ուղեցի այնտեղ, ո[ր]պ[էս] թէ ապրեմք, բայց գործ ձեռքս չան-ցաւ, եւ 15 մերկ, սոված, անթեւ արարածները հոն ձգելով, մայրս միայն վեր առայ եւ հետս տեղս բերի, բայց դ[ա]րձե[ա]լ անգործ եւ դատարկածեւ:

Վերջապէս, Վեհ[ա]փա՛ւ Տէր, ալ բաւ է, կաղաչեմ արձ[ա]կեցէք, գնամք մեր ծննդավայր: Բաւ է կասեմ, որ 6 տարի թափառաշրջիկ դեգերիմ ընդ սար եւ ընդ ձոր: Արձակեցէ՛ք մեզ, գնամք մեր Մայր Հայաստանի անձկացեալ քաղցր գիրկ //, ծծենք որ[պէս] ստինքներէն բղխած կաթ եւ այն գրկին մէջ մեռնինք:

*ՄԱՏՁԻՄՔ ՈՐԴԻԱԿԱՆ ՅԱՐԳԱՆԻ ՀԱՄԲՈՅՐ
Ն[ՈՒԱՍՏ] Ծ[ԱՌԱՅ]՝ ԱՐԱՄ Տ[ԷՐ] ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ*

1895, Օգ[ոստոսի] 2

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

ՄՄ, ԽկՖ, Թղթ. 104, վաւ. 8

ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԸՌՈՒԹՅԱՆ
Ս[Ր]ԲԵՋԱՆԳՈՅՆ Ե[ՍՏՈՒԸ]ԾԷՆՏԻՐ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ[ԵՆՈՒՆ] Տ[ԵՆՈՒՆ] ՄԿՐՏԶԻ
ՊՈԽԸՆԸԻՈՒ ԼԵՁ ԳԻՒՂԻ ԲՆԵԿԻՉ ՅԵԿՈՒ ԼԵՒՆԵԸՆՅԷ
(ԵՍԸՅԻ Վ[Ը]ՐԴ[Ը]ՊԵՏԻ ԵՂՐՈՐ ՈՐԴԻ)

Խոնարհաբար խնդիր

Պաշտելի՛ Հայրապետ,

Թուէս 10 օրի չափ առաջ Օշական գիւղ Վեհիղ ուղեցինք ներկայանալ, իսկ Ձերդ Վեհափառութիւն, մեզ այլ մարդի կարծիք տանելով, Ձերդ

չաթը⁴⁵⁶ ծառայի միջոցաւ մեզ ճանբեցիք⁴⁵⁷, եւ, մեր նուաստութիւնը, ի Ձէնջ շնորհեալ դրամական չնչին նուէրն ըստանալով՝ հեռացանք:

Վեհափա՛ռ Տէր, մենք փող չահելու միտք չունինք բնաւ եւ ոչ ողորմութիւն խնդրելու միջոց: Եթէ այդպէ՛ս լինէր, Ռումանեայ եւ ուրիշ հարուստ ք[ա]ղ[ա]քները կրնայիմք աշխատիլ եւ գլուխ պահել, քան թէ այստեղ: Եւ այն օրն Ձերին ծառայ չաթըն եւս յայտնեցիմք մեր միտք, որ բնաւ չէ յայտներ Վեհիդ:

Հայրի՛կ պաշտելի՛, մենք գիտենք, որ Դուք առատասիրտ էք թէ՛ առ թշուառս հայ ազգս եւ թէ՛ առ ո՛ր եւ իցէ ուրիշ ազգեր: Մեր դիտաւորութիւնն է ինքնապաշտպանութիւն: Մենք դիմած, եկած եմք Վեհիդ ոտքը, որ թէ՛ մեզ, թէ՛ մերայինք, թէ՛ հայրենիքը ազատեմք թրքական երկաթէ լծէն: Մեր ձեռք մի քանի հ[ա]տ գէնք տուէք, որ թողունք-գնանք անոնց հասնենք՝ այն ութ ընկերներու, որք /// անցած նամակ նամակի ետեւից մեզ կը գրեն, թէ՛ շուտով հասէք:

Մէկ խօսքով, այսօր մեր սիրտը արեան ալէկոծեալ ծով է դարձաց: Այստեղ մեզ մի՛ ուշացնէք: Մեր նպատակն էր, որ յայտնեցինք: Մէկ խօսքով՝ մենք 10 հոգի եմք: Ուխտեր եմք, որ պիտի գնամք մեռնելու: Ահա՛, մեր վերջի վճիռն է այս. մեր վր[այ]ի հագուստ մեզ կասկածելի կերեւցնեն, ասոր հ[ա]մ[ար] կասեմ՝ մենք պէտք չէ այստեղ մնամք:

Վեհ[ափա՛ռ] Տէր, ա՛խ, ի՞նչ կը լինէր՝ ինձ միայն արժանացնէիք Ձերին ներկայութեան, եւ ի՛նչ գաղտնի խօսքեր պիտի լսէիք մեր բերնէն: Տա՛ր Ա[ստուա]ծ, որ պիտի լսէր մեր ուխտ եւ ժամ առաջ կատարէր մեր իղձը: Իսկ եթէ բնաւ չուզէք մեզ տեսնել՝ մորթեցէ՛ք դրան առաջ եւ ոգանէ՛ք արիւնս Ողբա՛նի, որ մի կերպով փափագս կատարուած կը լինի:

ՄՆԱՄՔ ՁԵՐԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ

ՔԱՂՅՐ ԿԵՆԱՅ ԱՂՕԹԱՐԱՐ՝ ՅԱԿՈՐ ԼԵՒՈՆԵԱՆՑ

1896, Յուն[ուար] 2

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պատ

⁴⁵⁶ Շաթրը, շաթիր՝ կաթողիկոսի անձնապահապետ, որ պաշտօնական ու հանդիսատւ երթի ժամանակ գնում է նրա առջեւից, ձեռքին գաւազան բռնած: Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հտ. 2 Հ-Ո, Թէհրան, 1982, հտ. 2, էջ 491:

⁴⁵⁷ Իմա՝ համբել, ուղարկել:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 571)

ՎԵՆԵՓԸՈՒ ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՑ ՍՐՓԸԶԸՆ ՄԿՐՏԻՉ ԿԸԹՈՂԻԿՈՍ

Ամենախնդիր ունիմ Ձեր Սրբազան Վեհափառութեան, որ **քըթաք**⁴⁵⁸ իմ **թշփախտ**⁴⁵⁹ վիճակիս: Մի զաւակ ունիմ, կոչումն Հրահանգ է: **1884 <ս>ին** Սուրբ Կարապետի վանքը ուսմունք առնել^{հն} **հետո[յ]** ղրկեցի տեղիս Սու[ր]բ Աթոռին ճեմարանը: 2 տարի եւս ուսմունք առնել^{հն} **հետո[յ]** գնացեր է Առաջի վանքը՝ բոլորովին մեզ մօռացած, մի փոքր օքնած չէ մեզ: Ինը հոքի ենք՝ ոմս ծերացած, ոմս դեռ երեխայ: Երկիրս ապրուստ չի կրնալ ճարելուս պատճառաւ **անհողջ**ս եկած ենք Ղառսի⁴⁶⁰ նահանգի Աղճաղալայի **գիրողը**: Անյուշս, անճար մընացած եմ: Խնդիրքս է Ձեր սրբազան Վեհափառութեանը՝ Հրահանգը կամ բերել տալ, կամ մեզի օքնութիւն մը հասցունել:

ՄԸՆԱՄ ՍՈՒՐԲ ՔԸԹՈՒԹԵԱՆՏ ՍՊԱՍՕՂ՝
ՊՈՒԼԱՆՈՒԽ ՆԱՀԱՆԿԻ ԼԻԶ ԳԻՈՒՂԱՅԻ ՀԱԿՕՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Հոկտեմբեր 15

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 596)

ՎԿԸՅԸԿԸՆ

Տուաւ սոյն վկայականս ի ձեռն տաճկահայտակ Պուլանուխ գաւառի Լիզ գիւղի բնակիչ, գաղթական, Աւաք Բաղդասարեանին եւ Հլխաթ Մարգարեանին եւ Պետրոս Մանուկեանին.

Առ այն, զի այս մի տարւոյ չափ յիշատակեալները բնակ[ւ]ում են աստ՝ իւրաքանչեւքը իններորդ մատաղահաս գերադաստանեօք: Այսմ ամուսն հիւանդութեան վերայ] հասնելով չկարողացան պաշար ճարել առաջիկայ ամիսուան.

Վասն զի գաղթականք բազմանալով՝ ի վերայ] գիւղիս փոքր ինչ նեղութիւն է: Այսու առիթովը **մնացիալին** մերկ եւ բոկ, քաղց եւ անօթէ՛վան,

⁴⁵⁸ Իմա՝ գոյք ունենալ, ողորմիլ, խղնալ (գրա՛ֆ իմ դժբախտ վիճակիս):

⁴⁵⁹ Իմա՝ դժբախտ:

⁴⁶⁰ Կարս:

եւ չունին հնար կելոյ: Ուստի խնդրեմք՝ ուր ուրեք որ կապտահեն սոյն վկայաթ[խ]թովս...

Արդարեւ կ[ը] հեծեն սոյն տառապե[ա]լքն եւ կ[ը] խնդրեն ինքեանց մի ճարակ:

Եւ ստորագրեմք՝

Գէորգ ՄԱՐՏԻՐՈՍԵ[Ա]Ն,

ՄԱՆՈՒԿ ՇԱՀԱԶԵԱՆ,

ՄԵԼԻՔ ՏՕՆՈՅԵ[Ա]Ն,

ՄԵԽԱԿ ԳԷՈՐԳԵ[Ա]Ն,

/// ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐ ՄԱՆՈՒԿԵ[Ա]Ն,

ԾԽԱՏԷՐ ՄԿՐՏԻՉ Տ[Է]Ր ՄԵԼԻՔԵ[Ա]Ն [ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ]

1895 ամի, 12ն Հոկտ[ե]մբ[ե]րի,

ՀԱԶԻՆԱԶԱՐ

[ստորագրութիւն]

ԱՒԱՔ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ 8 ԱՆՁՈՎ

ՀԼԽԱԹ ՄԱՐԳԱՐՈՎ 12 ԱՆՁՈՎ

ՊԵՏՐՈՍ ՄԱՆՈՒԿ[Ե]ԱՆ 10 ԱՆՁՈՎ

ԱՅՐԻ ԿԵՆՁ ՄԻՈՅ՞ 3 ԱՆՁՈՎ

ԸՆԴՀԱՆՈՒՐ 33 ԱՆՁ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 101, վաւ. 627)

ՎԵՀԸՓԸՌ ՀԵՅՐԻԿ,

Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏԻՐ Կ[Ը]Թ[ՈՒ]Ղ[Ի]Կ[Ո]Ս ԸՄԵՆԸՅՆ

ՀԵՅՈՅ

Լիզ գիւղի Աւաք աղքատիկս՝ 10 անձինք զաւակունքս Հաճինազար գիւղն կ[ը] մուրամք՝ վեր Ա[ստուա]ծ յուսալով եւ ներքեւ՝ Զեր ող[որ]մած Վեհափառութեան: Զի ազգասիրական գթով ողորմելով տառապեալ Աւաքիս, որ խնդրեմ զպարէն զաւակ[ա]յցս թշուառ եւ երերուն կենցաղավարութիս:

ԱՒԱՔ ԲԱՂՏ[Ա]Ս[Ա]ՐԵԱՆ

1895/6, Ալէքսանդր[ա]յոլ

**ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹ[ԵԱ]Ն] ԵՆՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐԳ ԵՒ
ԸՆԴՆԵՆՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՊԵՏ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ Տ[ԵԱՌՆ]
Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻՉ Ս[Ր]ԲԵԶՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՂԻԿՈՍ
ՊՈԽԸՆԸԻՈՒ ԼԻԶԵՅ ԳԻԻՂԵՅԻ ՅԼԿՈՐ ԸՍՕԵԱՆՅԷ**

Սրտահառաջ աղերս

Հայրի՛կդ Վեհափառ,

Ես՝ նուազուս, իմո այս 12 հոգիէ բաղկացած մի խումբ թշուառ ընտանեօքս, այս պահուս Զերին Վեհափառութեան, ոտք կը խոնարհեմ լալագին եւ ասելով՝ «Տէ՛ր, փրկեա՛ւ»՝ զմեզ զի կորնչիմք»:

Զեմ համարձակուիր մի առ մի յայտնել՝ քարտիզին երեսը մըտնելով, վ[ա]սնզի մեր ընտանեկան թշուառութեանց մանրամասն նկարագրութիւնը լսողը՝ չեմ կարծէր, որ լաց չը շարժէ, որովհետեւ յոյժ ցաւալի է, եւ լսելով Զերին այն մեծ սիրտը՝ հարուածէ:

Բայց այսքան միայն կասեմ.

Երբ քրթաց բռնութենէն ազատուած՝ եկանք մինչ Խասթուր⁴⁶¹ գիւղը, ալ չկրնալով այս կողմ անցկացնել մեր այդ գերիները՝ թէ հովու⁴⁶² եւ թէ մերկութեան պատճառով: Վ[ա]սնզի ինչ որ ունէինք մեր ձեռքէն զօրաւորն⁴⁶³ առած էր, այն պատճառաւ զանոնք յիշեալ գիւղը թողնելով, ինքս, ճարահատեալ, առ Զերին Ս[ր]բութեանը դիմեցի՝ իբրեւ բօթաբեր սոյն ցաւալի եղելութեան:

Ուստի Վեհ[ափա՛ռ] Տէր, կաղաչեմ՝ հայեցարուք ի թշուառութիւնս մեր, որ թերեւս այս գերիները ազատելու եւ պահպանելու կարողութիւն ունենանք:

*ՄՆԱՄՔ ԶԵՐԴ ՎԵՀ[ԱՓԱՌՈՒԹԵԱՆ] ԱՆԱՐԺԱՆ ԾԱՌԱՅ՝
ՅԱԿՈՐ ԱՍՕԵԱՆՅ*

1894, Մարտ 24, ի Վաղարշապատ

⁴⁶¹ Խասթուր, Հացտուր: Գիւղ Էրզրումի նահանգի Բայազէտ գաւառում, Ալաշկերտի գաւառակում:

⁴⁶² Նկատի ունի ցուրտ եղանակ:

⁴⁶³ կառավարութիւն

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 103, վաւ. 47)

**ՆՈՐԻՆ ՎԵՆԵՊԵՆՈՒԹԵՐԼՆ ՏԵԼՈՒՆ-ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏՉԻ Ը.
ԸԶԳԵՍԵՐ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ ՀԵՅՐԻԿԻՆ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

**Ի ԲԵՂՏԵՍԵՐԷ ԸԻՆԳԵԼՆ, ԲՈՒԼՆԵՈՒՂ ԳԸԻՆՈՒԷ
ԼԻԶ ԳԵՂԶ**

Ամենախոնարհաբար Խնդիր

Ահա հազիւ լրանայ երկու ամիս՝ թողնելով մեր ամենայն ինչ՝ ե՛ւ կարողութիւն, եղանք փառագուրկ թափառական: Այժմս բնակիմք աստ՝ Կարոլց գաւառում, Ղզլչախչախ գիւղում՝ մերկ, քաղցած, անտերունջ եւ անօգնական: Եօթ հոգի գերդաստանով մնացած եմ բոլորովին ամենավերջին նեղութեան մէջ:

Ուստի դառնալով սոյն աղերսալի խնդրագրով Ձերդ Վեհափառ ազգասէր խնամոց՝ ի գուժ, ի խնամս չարժել անօգնական թշուառականիս, ի սէր Աստուծոյ, շնորհել ինձ մի ողորմութիւն՝ ըստ հաճութեան Ձերդ Վեհափառութեան:

*ՍՈՒՐԲ ԳԱՐՇԱՊԱՐԻԴ ՀԱՄԲՈՅՐ ՄԱՏՈՒՑԱՆՈՂ՝
ԲԱՂՏԱՍԱՐ ԱԻԱԳԵԱՆՑ*

*1895 ամի, 18ն Յուլիսի
Ղզլչախչախ գեղջ*

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 59)

**ՆՈՐԻՆ ՎԵՆԵՊԵՆՈՒԹԵԼՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՉԻ Ը.
ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

**ՄՇՈՅ ԳԸԻՆՈՒ ԲՈՒԼՆԵՈՒԹԵՅ ԼԶԵՅ ԳԻՒՂԻ ԲՆԸԿԻԶ ՀՈՒՓՈՒՄԷ
ՄԿՐՏՉԵԼՆԷ**

Ամենախոնարհ խնդիր

Բարեգո՛ւթ Հայր,

Խոնարհ աղախինս հայրութեանդ ոտքը ընկած աղաչում եմ՝ այց առնէք որբեւայրւոյս եւ չորեսին դասերացս: Որբ եւ անօգնական՝ բոլորն

մատաղահաս, որոց մէկն անդամալուծ, իսկ մէկն՝ *թուփալ*⁴⁶⁴, այս կողմ այն կողմ մուրալով հազիւ թէ կարողացել եմ նոցա պահպանել: Պաշտելի՛ Հայրիկ, ողորմացէ՛ք թշուառ աղախնոյս, հրամայէ՛ք որոց անկէ տալ մեզ ի թիւս չքաւորաց ողորմութիւն, որով ապրեցնելով իմ որբուկներս *որհնաբան*⁴⁶⁵ լինինք պաշտելի Հայրութեանդ կենաց երկարութեան:

*ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱՂԱԽԻՆ ՈՐԲԵՒԱՅՐԻ՝
ՀՌԻՓՍԻՄԷ ՄԿՐՏՁԵԱՆ*

*1896, Ապրիլ 15
ՅԱԼԻԲԵԿԼՈՒ*

⁴⁶⁴ կաղ

⁴⁶⁵ օրհնաբան

ԽԱՐԱԲԱՇՀԱՐ ԳԻՒՂ/ՀԱՅԿԱՇԷՆ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ÖRENKENT)

Մովսէս Խորենացու հաղորդած տեղեկութիւնների համաձայն հայոց նախահայր Հայկ նահապետը հաստատուել էր Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Հարք կոչուող դաշտում⁴⁶⁶, որտեղ եւ հիմնել էր Հայկաշէնը⁴⁶⁷. «Հայկաշէն: Առաջին գիւղ յաշխարհիս Հայոց՝ յետ ցրուելոյ անտի ազգաց, զոր շինեաց Հայկ, եւ անուանեաց յիւր անուն»⁴⁶⁸: Արաբ մատենագիրները, Մանձկերտ գիւղաքաղաքի հետ միասին, Դոնեվանք, Եղէգակ, Հայկաշէն, Հերեան, Մանկանգոմ եւ Տողոտափ գիւղերը եւս ներառել են Հարք գաւառի մէջ⁴⁶⁹: Միւս Հայկաշէն կոչուող բնակավայրը գտնուում է Խարբերդի սահմանների մէջ⁴⁷⁰: Հայկաշէնը տեղակայուած է Բլէջան լեռան արեւելեան ստորոտում: Կարծիքներ կան, որ այն համապատասխանում է Վերին Բուլանքի Խարաբաշհար կոչուած գիւղին⁴⁷¹: Խարաբաշհար, որ թարգմանաբար նշանակում է «Աւեր քաղաք»: Ս. Կարայեանի կազմած ցուցակում այս գիւղը տառադարձուած է Խարաբաշէնը ձեւով⁴⁷²:

Բուլանք գաւառն՝ իբրեւ հայոց պատմական հայրենիքի օրրան, բացառիկ կարեւոր նշանակութիւն է ձեռք բերում հայոց համար առհասարակ:

19-րդ դարում Խարաբաշհարում իրականացուած պեղումների արդիւնքում գտնուել են ջրանցքներ, խեցեղէն այլեւայլ իրեր՝ վկայելով բնակավայրի փառաւոր անցեալի մասին⁴⁷³:

⁴⁶⁶ Սարգսյան Գ. Խ., Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» եւ սեպագրական աղբյուրները (Հայկի եւ Հայկյանների առասպելի պատմականութեան եւ զարգացման փուլերի խնդիրը). Պատմա-բանասիրական հանդես, 1992, N 2–3, էջ 36:

⁴⁶⁷ Ազգաբնակչութիւն Տոնմին Յաբեթեան, յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացոյ, Ամստերդամ, 1695, էջ 37:

⁴⁶⁸ Ինճիքեան Գ., Ստորագրութիւն իմն Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 1822, էջ 115–116:

⁴⁶⁹ Այս գիւղի մասին տե՛ս նաեւ Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Խալաթեան Բ., Վիեննա, 1919, էջ 12:

⁴⁷⁰ Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տ[եառ]ն 1784, Ըստ աւանդելոյ այլեւայլ մատենագրաց, յօրինեալ ՚ի Հայր Միքայել վ[ա]րդ[ա]պ[ետ]է Զաւէեանց Կոստանդինուպօլսեցոյ, ի Վենետիկ, հտ. Ա., էջ 160:

⁴⁷¹ Բեմսէ, Բուլանքիս կամ Հարք, էջ 7:

⁴⁷² Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 197:

⁴⁷³ Էփրիկեան Ա., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Բ., էջ 155:

Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում տեղացիներն իրենց գիւղն անուանել են Խարաբաշար, Խարաբաշէիր, Խարաբաշար, Խարաբշա-
 չար⁴⁷⁴ եւ այլ անուններով: 1928ին Քեմալական Թուրքիայում բնակավայ-
 րը հաշուառուել եւ արձանագրուել է Խարաբեշար կամ Շեհիրօրեն անունով
 (թրք. Şehirören քրդ. xarabêşar): Նախքան Հայոց մեծ եղեռնը 110 աշակերտ,
 2 ուսուցիչ⁴⁷⁵, եւ քարակերտ Ս. Աստուածածին⁴⁷⁶ անունով հարուստ եւ
 հայաշատ այս գիւղն ամբողջութեամբ հայաթափուած է: Բնակավայրն այ-
 սօր կոչւում է Էօրէնքենթ (Örenkent)⁴⁷⁷:

Պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն 1912ին տեղի
 հայ բնակչութիւնը հաշւում էր 572 մարդ⁴⁷⁸ (80 տուն⁴⁷⁹): Ս. Կարայեանի
 կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Խարաբաշար գիւղն ունէր
 77 հայ ընտանիք՝ 606 բնակչով⁴⁸⁰:

(ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 39)

**ՆՈՐԻՆ ՎԷՆՎԵՆՈՒԹ[ԵՆ] ԾԱՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԵՐԻ
 ԿԵՐՈՒՂԻՈՍԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԱՅՈՅ Տ[ԵՆՈՒՆ] Տ[ԵՆՈՒՆ]
 ՄԿՐՏԶԻ ՍՐԲԵՋՆԵՍՈՒՐԻ ՀԱՅՐԵՊԶՏԻ**

**ՏԵՃԿԵՍՏԵՆՈՒ ԲՈՒԼԱՆԼՈՒԹ ԽԵՐԵՐԵՅ-ՇՀԵՐ ԳԻՒԼԵՅԻ
 ՍԷՆԷԿ Ը[ՍՏՈՒԸ]ԾԱՏՐԵՆԵՅ ԵՒ ԲԵՂՏԵՍԸ ՍԵՐԴՈՒՆ[Ը]ՆԵՅ**

Ամենախոնարհ ինդիր

Պաշտելի՛ Հայրիկ,

Սորանից երեք տարի առաջ, երբ տաճկահայերիս վիճակը դարձաւ ան-
 տանելի, մի կերպ իւրաքանչիւրս ընտանիքի մի-մի մասը թողեցինք հայրե-
 նիքում, միւս մասը՝ փախանք եկանք այս կողմը, եւ մնացինք Շիրակայ գա-
 ւառում Միրվանջուղ գիւղում, ուր ապրում էինք ամենանեղ դրութ[եամ]բ:

⁴⁷⁴ Տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 165, նամակագիր՝ Առաֆել Յակոբեան, ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 154, նամակագիր՝ Սահակ Աստուածատրեան:

⁴⁷⁵ Վերապրածների վկայություններ..., էջ 161–162:

⁴⁷⁶ <https://www.houshamadyan.org/>, Պոլսանքիսի ֆազա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

⁴⁷⁷ <https://nisanyanmap.com/?y=%C3%96renkent&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁴⁷⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁴⁷⁹ Թեղիկ, Գողգոթա, էջ 100:

⁴⁸⁰ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

Իսկ այս աշնանը Միրվանջուղից եկանք Միրբար?: Ապրում էինք մշակագործութեամբ: Իսկ այժմ, որ բոլորովիմբ դադարած է մշակագործութիւնը, սաստիկ կարիք ենք զգում հացի եւ հագուստի, որից մինչեւ ցա[յ]ժմ բաժին չէ հասած մէջ՝ թէ Վեհափառութեանդ կողմից եւ թէ՝ տեղւոյս բարեգործական ընկերութեան կողմից: Ուստի ամենախոնարհաբար խնդրում ենք. բարեհաճեցէք ի թիւս միւս գաղթականաց եւ մե՛զ օգնութիւն հասցրէք ազգային առատ նուիրատուութիւնից, որից մինչ ցարդ զրկուած ենք մնացել:

Վեհափա՛ռ Տէր, մեզնից առաջինը Սահակ Ա[ստուա]ծատրեանը ունի ուրտեղ ութն *նաֆար*⁴⁸¹, իսկ հայրենիքում թողած են կինս եւ երկու որդիս, եւ երկրորդը՝ Բաղտասար Սարգոյե[ան]ը՝ ունիմ այստեղ *իրէք նաֆար*, իսկ այնտեղ թողած՝ չորս հոգի, այն է՝ հայրս, եղբայրս եւ երկու զաւակնէր, որոց մասին տակաւին հաստատ լուր չունինք, եւ չգիտենք ուրուք կը խնդանա՞ն, եւ ուրու՞ք մեռած ին, եւ կամ ինչպէ՞ս են ապրում...

Միով բանիւ արդէն մնացածները մնացին եւ ոչինչ չենք կարող անել առ այժմ: Միայն թէ այստեղ գտնուողներիս համար խնդրում ենք ամենախոնարհաբար հոգ տանել հագուստի եւ հացի վերաբերմամբ, որպէսզի ապրենք եւ օրհնենք պաշտելի Հայրիկիդ կե[ան]քը յաւիտեանս:

Մնամք սպասող Ձեր մեծ շնորհացը:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅՔԴ՝

ՍԱՀԱԿ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՐԵԱՆ ԵՒ ԲԱՂՏԱՍԱՐ ՍԱՐԴՈՅԵԱՆ

⁴⁸¹ անձ, շունչ

ԽՕՇԳԵԱԼԴԻ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(HOŞGELDİ)

1870-ական թուականներին Ներքին Բուլանըքի հայաշատ գիւղերից մէկն էլ Խօշգեալդին էր: Այն ընկած էր Վարդ գետի ձախ ափին, Ներքին Բուլանըքի (նահիլէ) վարչական կենտրոն համարուող Լիզ ավանից եօթը կմ հիւսիս-արեւմուտք: Գիւղն ունէր սեւ սրբատաշ քարերով շինուած մէկ եկեղեցի՝ Ս. Աստուածածին: 1871ին Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով այստեղ կառուցուել էր մէկ դպրոց, որն ունէր 25 աշակերտ⁴⁸² եւ մէկ ուսուցիչ՝ Գասպար Միրզոյեան⁴⁸³:

Մ. Խրիմեանի ֆոնդում արձանագրուած նամակներում տեղացիները գիւղն անուանել են Խօշգալդի, Խօշգյալդի, Խոշկեալտի, Խօշկէլտի, Հոշկելտի⁴⁸⁴: Ռիչարդ Կիպերտի քարտէզում այն նշուած է Chosh Geldi ձեւով⁴⁸⁵: Ընդարձակ Օրացոյցի 1903ի համարում բնակավայրը նշուած է Խոշկերտ ձեւով⁴⁸⁶: Այլ աղբիւրներում հանդիպել ենք նաեւ Խօշգալտ, Խոշկելտ տարբերակներին⁴⁸⁷:

1928ին Քեմալական Թուրքիայում գիւղն արձանագրուել է Հոշ գեալդի (Hoch queldi) ձեւով⁴⁸⁸: Այսօր ամբողջութեամբ քրդաբնակ է եւ կոչւում է Հոշգեալդի⁴⁸⁹:

1890-ականներին Խօշգեալդիում հաշուում էր 94⁴⁹⁰ տուն հայ բնակիչ: Գիւղի հոգեւոր սպասաւորներն էին Տ. Յովհաննէս Մանուկեանը եւ Տ. Ղազար Տէր Մելքիսէթեան քահանաները⁴⁹¹: Վերջերս «Ավրորա» մարդասիրական

⁴⁸² Սասունի Կ., 2013, էջ 248:

⁴⁸³ Գասպար Միրզոյեանի մասին «Դրօշակ» թերթը գրում է, որ նրան շատ անգամ են բանտարկել, սակայն նա լինելով հարուստ մարդ, կարողանում էր ամէն անգամ վճարել 50–60 ոսկի կաշառք եւ ազատուել: Այնքան նրան բանտարկեցին, որ ի վերջոյ սնանկացաւ: Վերջին անգամ իր որդու՝ Սաղաթէլի հետ բանտ ձգեցին... Նամակ Բուլանըղից, «Դրօշակ» Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1890–1897, հմր. 12, էջ 8–10:

⁴⁸⁴ Այլ նամակներ տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 248, նամակագիր՝ Մարտիրոս Առաքելեան:

⁴⁸⁵ Kiepert R., Karte von Kleinasien (24 pafta), Berlin, 1913:

⁴⁸⁶ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

⁴⁸⁷ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 4:

⁴⁸⁸ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416.

⁴⁸⁹ <https://nisanyanmap.com/?y=Dokuzp%C4%B1nar&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁴⁹⁰ Միրախուրեան Մ., նշ. աշխ., էջ 91:

⁴⁹¹ Թէոդիկ, Գողգոթա, էջ 101:

ընկերութեան կողմից յայտարարուած «100 կեանք»ի շրջանակներում ընտանեկան տոհմածառից քաղուած պատմութեան համաձայն 1915 թ. Խոջգեալդի գիւղի տիրացուն եղել է Տէր Գրիգորը⁴⁹²:

1912ին Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Խոջգեալդի գիւղում բնակւում էր 1018 հայ⁴⁹³ կամ 180 տուն⁴⁹⁴, եւ մի քանի տուն թուրք⁴⁹⁵: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Խոջգեալդի գիւղն ունէր 170 հայ ընտանիք՝ 1.428 բնակչով⁴⁹⁶:

Ինչպէս Արեւմտեան Հայաստանի միւս բնակավայրերը, Խոջգեալդիում եւս Աբդուլ Համիդ II սուլթանը իրագործեց տեղի հայութեան կոտորածն ու հարստահարումը: Այս արհաւիրքներին չզիմանալով՝ տասնեակ ընտանիքներ գաղթեցինք Արեւելեան Հայաստան, սակայն ցարական կառավարութեան պարտադրանքով նրանք վերստին ստիպուած էին վերադառնալ Արեւմտեան Հայաստան, որտեղ եւ դարձան 1915ի Օսմանեան Թուրքիայի կազմակերպած ցեղասպանութեան զոհերից:

1915ի մայիսի 2ին՝ շաբաթ օրը, քայմաքամ Ասադ բէյը Խոջգեալդիի հայ բնակչութեան կոտորածի հրաման է տալիս: Այն իրագործում են շէյխ Հազրաթի ազգական շէյխ Մասուժը՝ Զմբրանցի թուրքների մասնակցութեամբ. Զնդին, Սատին, Հայդարը եւ այլք: Քայմաքամի հրամանը բերում է թեշքիլաթ-ը մախսուսայի (առանձնայատուկ գումարտակ) անդամ Նէզէ-րը, որը գիւղ հասնելուն պէս սկսում է կոտորածը⁴⁹⁷:

1915ին Խոջգեալդի գիւղից տարբեր ապաստարանների խնամքին են յանձնուել 7–14 տարեկան 19 որբ. Գրիգորեան Կէկէլ՝ 9 տարեկան⁴⁹⁸, Յովհաննիսեան Փարէ՝ 14 տարեկան⁴⁹⁹, Աւդալեան Աթլաս՝ 12 տարեկան⁵⁰⁰, Աւդալեան Յակոբ՝ 9 տարեկան⁵⁰¹, Մարտիրոսեան Մանուշ՝ 15 տարեկան⁵⁰²,

⁴⁹² «Ավրոս» 50 կեանք, Աշոտ Վարդանեան:

⁴⁹³ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁴⁹⁴ Թէոդիկ, Գողգոթա, էջ 101:

⁴⁹⁵ <https://nisananyanmap.com/?y=Ho%C5%9Fgeldi&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁴⁹⁶ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁴⁹⁷ Մովսէսեան Ս., Բուլանդի կոտորածը, 1916 թ. Ղարաքիլիսա, «Համբաւաբեր», 1916 թ., հմր.

43, էջ 1358–1360:

⁴⁹⁸ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 3:

⁴⁹⁹ Նոյնի Յաւել. հմր. 4:

⁵⁰⁰ Նոյն տեղում:

⁵⁰¹ Նոյն տեղում:

⁵⁰² Նոյն տեղում:

Պաղտասարեան Սիրանուշ՝ 10 տարեկան (Խոշկեկտցի)⁵⁰³, Մխիթարեան Ազիզ՝ 14 տարեկան⁵⁰⁴, Յարութիւնեան Մելքոն՝ 13 տարեկան⁵⁰⁵, Գէորգեան Ներսէս՝ 11 տարեկան⁵⁰⁶, Իկիտեան Զլղաթ՝ 13 տարեկան⁵⁰⁷, Մխոյեան Սատաֆ՝ 13 տարեկան⁵⁰⁸, Ռուբինեան Աբրահամ՝ 7 տարեկան (Խոշկալդի)⁵⁰⁹, Գրիգորեան Արիստակէս՝ 14 տարեկան, Գրիգորեան Յովսէփ՝ 12 տարեկան (1916ին տեղափոխուել են Ալաշկերտի որբանոց)⁵¹⁰, Իսրայէլեան Աբրահամ՝ 14 տարեկան, Իսրայէլեան Գէօղէ/Գեօղալ⁵¹¹ 12 տարեկան⁵¹², Գրիգորեան Ռուբէն՝ 10 տարեկան⁵¹³, Յովհաննիսեան Սիսէ՝ 11 տարեկան⁵¹⁴, Սեդրաքեան Խազալ՝ 15 տարեկան⁵¹⁵:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 18)

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԸԶՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ ՊԵՏՈՒԵԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԱՅՈՑ
Տ[ԵԱ]ՈՒՆ Տ[ԵԱ]ՈՒՆ ՄԿՐՏՁԻ
ՄՇՈՒ ԽՕՇԿԵԼՏԻ ԳԻՒՂԵՅԻ ԳԵՍՊԵՐ ԸՌԵՔԷԼԵՆՅԷ
Ամենախոնարհաբար խնդիր**

Պաշտելի՛ Հայրիկ,

Աշնանէ ի վեր Վաղարշապատի գոմերի մէջ հիւանդ պառկած էի, բայց Աստուած լսեց թշուառ ծնողոյս աղաչանք եւ ինձ զօրացուց՝ գլխաւով զիս:

Եւ այս քանի օր է, որ ոտքի եմ ելած, կը պտըտիմ: Բաւական ուրախ եմ այսօր՝ Ձերդ Վեհուօթեան շնորհիւ:

⁵⁰³ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 4:

⁵⁰⁴ Նոյնի Յանել. հմր. 5:

⁵⁰⁵ Նոյն տեղում:

⁵⁰⁶ Նոյն տեղում:

⁵⁰⁷ Նոյն տեղում:

⁵⁰⁸ Նոյն տեղում:

⁵⁰⁹ Նոյն տեղում:

⁵¹⁰ Նոյնի Յանել. հմր. 40:

⁵¹¹ Նոյնի Յանել. հմր. 44:

⁵¹² Նոյնի Յանել. հմր. 41:

⁵¹³ Նոյնի Յանել. հմր. 9:

⁵¹⁴ Նոյն տեղում:

⁵¹⁵ Նոյն տեղում:

Բայց կը տեսնիմ, որ հայրենակիցներս ամէն օր խումբ-խումբ երկիր են գնում, եւ ես այստեղ մնացած նեղում եմ: Ուստի յատկապէս ասոր հ[ա]մ[ար] դիմեցի Վեհուկեանդ ոտք՝ մի թեթեւ ճանապարհածախս ընդունելու յուսով եւ կը հաւատամ, որ չեմ զրկուիր այն առատաբաշխ շնորհներէն, որով հազարաւորները ուրախացուց:

Եւ կաղաչեմ՝ ինձ՝ դժբաղդս ալ ուրախացնէք, որ փառաբանեմ ընդմիշտ Ձերին փառաւոր Անունը, թէ յայս աշխարհում եւ թէ այն:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿՆԱԾՈՒԹԵԱՄԲ ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝
ԳԱՍՊԱՐ ԱՌԱՔԷԼԵԱՆ՝ ՄՇԵՅԻ

1896, 20 Փետր[րուար]

ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 813)

Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏՐԵԱԿ ՀԱՅՐԵՊԵՏ ԵՒ ԿԵԹՈՂԻԿՈՍ ՏԵԱՌԵՆ
ՏԵՐԸՆՅ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ ԸՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՅ
ԽՆԴԻՐԻ ԲՈՒԼԱՆԵԼՅ ԽՕՇԿԵԼՏԻ ԳԻՒԼՅԻ ԳԸՄՊԸՐ ԷՅՆԵՏՈՒ
ՈՐԴԻ ՍԵՂԱԹԵԼԻ ՄԸՄԵՆ

Հայրի՛կ ջան,

Բուլանքայ Խօշկետի գիւղի Գասպար Էֆենտու որդի Սաղաթիէլ այս լման մի տարի Օսմանցու բանտերու մէջ տոչորուելէն զկնի, հազիւ կարողացաւ ազատուիլ եւ **Թեալիս**⁵¹⁶ գալ: Բայց ընդհակառակ՝ Թեալիս գալածատեն, կերթայ իր գիւղի մի տղայի քով, աղի տան կը քնանայ՝ ուրիշ ծանօթ մը չունենալով:

Մի օր այն տղա<յ>[ն], իբր թէ իւր աղայի տանից /// գողութիւն արած կը լինի եւ **պալիցէն**⁵¹⁷ կը գայ գայն բռնելու: Մեր պ[արոն] Սաղաթիէլն ալ անոր հետ մեկտեղ կը բռնուի եւ այժմ, առանց հարձուփորձի ենթարկելու, նամանաւանդ, որ կարծեօք **Բաշիբօրդ**⁵¹⁸ ալ չունի՝ բռնուած կը կենայ:

Ուստի Ձերին Սրբութեանդ առաջ արկանելով զմեզ, կը խնդրեմք Ձեր աջակցութիւն մեր դժբաղդ եղբօր վիճակի մասին:

⁵¹⁶ Հաւանաբար նկատի ունի Թիֆլիս:

⁵¹⁷ ոստիկանութիւն

⁵¹⁸ Բրբ.՝ անձնագիր:

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԼՆ ՎԵՆՎՈՐՈՒ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻՆ
ՀԱՅՐԵՊԵՏԵԼԵՆ ԳԵՀՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԵԼՆԵՒ Ի ՀԱՅՐԻԿԻՆ
ՀԱՅՈՅ**

**Ի ՏԷՐՈՒԹՄԵՆՔ ՕՍՍԵՆԵԼՆ, Ի ԳԵԼԵՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԲՈՒՂԱՆՈՒԹ
Ի ԲՆԵԿԶԷ ԽՈՇԳԵԼԴԻ ԳԵՂԱՋ ՄԵՐՏԻՐՈՍ ՄՈՒՐԵՏԵԼՆԷ**

Աղերսախառն խնդիր

Փա՛րք հազար անգամ փա՛րք ընդհանուր հայերին այն օրվանից, երբ Ձերին Վեհափառութիւն բարձրացաւ Հայրապետական գահոյն վերայ: Եւ, որպէս սրբութեամբ եւ ողորմածութեամբ անցուցեր է<յ>իք Ձերին Ս[ուր]բ կեանք մի եւ նոյն շարունակեցիք եւ օգնէցիք փողոցներում ընկած մեզ նման աղքատ Ղազարոսներուն՝ ըստ պահանձման Ս[ուր]բ գրոյն, թէ որ [տա] ողորմ[իւն] աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ: Ուրեմն ի՛մ էլ նեղութեան] եւ տաժանելի կեանքիս ժամը հասաւ:

Էլ չկարողանալով տանել, որպէս գթառատ եւ ողորմած եւ հոգեւոր Հայրիկ, կ'խոստովանիմ իմ վերայի գալած նեղութիւններս ճանապարհորդութեան ժամանակ, որով անօրէն տաճիկները **հարձակվելով**⁵¹⁹ մերս խղճալի եւ աղքատ ընտանեաց վերա[յ], մի կողմից քար խըփեցին միւս կողմից հրացանով **զարկէլով**⁵²⁰ իմ երիտասարդ քսանամեա[յ] տղային՝ վիրաւորելով մեռաւ:

Յապշտակէլով⁵²¹ տարան իմ բոլոր կարողութիւն, մինչեւ անգամ հանեցին մեր վերայի հանգերձներ: Վասն որոյ **հարկադրվելով**⁵²² եւ գիմեւով Ձերին գթառատ Վէհափառութեան, եւ համբուրելով զգարչապարս Ձերին Սրբութեան, ամենախոնարհաբար եւ աղերսախառն խնդրում եմ՝ օգնէ՛ք իմ տքնաճ եւ տառապեալ կեանքիս:

Ի 1894 ամի, 14ն Հոգտեմբերի

⁵¹⁹ Իմա՝ յարձակուելով:

⁵²⁰ Իմա՝ զարկելով:

⁵²¹ Իմա՝ յապշտակելով:

⁵²² Իմա՝ հարկադրուելով:

ԿԱՂԱՆՋ ԳԻՒՂ

Մկրտիչ Խրիմեանի ֆոնդից գտել ենք մէկ նամակ՝ գրուած Բուլանըք գաւառի Կաղանջ անունով գիւղից: Որեւէ այլ տեղեկութիւն այլ աղբիւրներից չենք կարողացել քաղել Կաղանջ անունով բնակավայրի մասին:

Ամենայն հաւանականութեամբ այն Բուլանըք գաւառի մաս կազմող փոքր գիւղակ է: Մենք յոյս ունենք, որ անտիպ նիւթերի հրապարակման արդիւնքում, գուցէ կգտնուեն յաւելեալ տեղեկութիւններ այս գիւղի առնչութեամբ եւս: Առայժմ սահմանափակում ենք եղած վաւերագրի հրապարակմամբ, բնակավայրի առանձնացմամբ՝ նշելով, որ Կաղանջ գիւղն ունեցել է 2 տուն, 15 շունչ հայ բնակիչ:

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 103, վաւ. 349)

ՆՈՐՔՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹԵԸՆ ՏԵԸՌՆ ՏԵԸՌՆ ՄԵՐՈՅ ՄԿՐՏՁԻ ՍՐԲԸՋՆԸԳՈՒՄ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ

Ամենախոնարհ խնդիր

Վեհափա՛ռ Հայր,

Մենք Բուլանղայ Կաղանջ գիւղացի գաղափարներ ենք՝ Մարգար Աստուածատուրեան, Մկրտիչ Պեշրոսեան: Վեհափառութիւնդ լաւ գիտէ մեր դրութիւնը, թէ ինչ վիճակի մէջ ենք: Փախնելով եկէլ ենք Ռուսաց տերութեան մէջ եւ այստեղ մեզ մի օգնաճան չունինք, բացի Վեհափառութիւնիցդ:

Յայտն[ի] է Վեհափառութեանդ, թէ անծանոթ երկրում ~~տ~~թուար է ընդանիք պահել. երկուսիս էլ ունինք ընդանիք՝ 15 հոգի: Ա[յ]ժմ խնդ[ր]ում ենք Վեհափառութեանդ, որ մի օգնութիւն անէք. մենք էլ Ձեր որդին ենք:

1895 ամի, Հ[ո]կտեմբերի 15

Վաղարշապատ

ԿՈՂԱԿ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(DOKUZPINAR)

Կողակը Բուլանքի հայաշատ եւ հին գիւղերից մէկն էր: Այն ընկած էր Մուշից 12 ժամ հեռաւորութեան վրայ՝ Լիզ կամ Վարդ գետի ձախ ափին: Ունէր Ս. Աստուածածին անուանով եռախորան, քարաշէն հին եկեղեցի⁵²³:

1912ին Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն գիւղում բնակւում էր 472 հայ⁵²⁴ եւ 780 քուրդ⁵²⁵: Ս. Կարայեանի կազմած ցուցակում 1914ին Կողակ գիւղն ունէր 55 տուն հայ՝ 417 բնակչով⁵²⁶:

Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում Կողակ գիւղի բնակիչներն իրենց գիւղըն անուանում են Կողակ կամ Կողադ⁵²⁷: 1928ին Քեմալական Թուրքիայում գիւղն արձանագրուել է Կողակ (Koğak) ձեւով⁵²⁸:



Յեղասպանութիւնից յետոյ այն ամբողջութեամբ հայաթափուած է: Ներկայումս կոչւում է Դոքուզփինար (Dokuzpinar): 2008ին պատմական հայկական այս գիւղը մնաց Ալփարսլան 1 (Alparslan 1) ջրամբարի ջրերի տակ⁵²⁹:

Նամակներից քաղուած տեղեկութիւնների համաձայն հայ բնակչութիւնը 1893ից սկսած ենթարկուել է տարբեր բռնութիւնների, իսկ 1895ին՝ Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածներին, որի պատճառով

⁵²³ Էփրիկեան Ս., Բնաշխարհիկ Բառարան, հտ. Բ., էջ 445, տե՛ս նաեւ Վերապրածների վկայություններ..., էջ 341:

⁵²⁴ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁵²⁵ <https://nisanyanmap.com/?y=Dokuzp%C4%B1nar&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁵²⁶ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁵²⁷ ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 78; ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 78, Գրիգոր Բահանայ Տէր Գրիգորեան, թղթ. ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 75, վկայագիր:

⁵²⁸ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 417:

⁵²⁹ <https://nisanyanmap.com/?y=Dokuzp%C4%B1nar&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

հայութեան մազապուրծ մի հատուած դիմել է փախուստի՝ գաղթելով Արեւելեան Հայաստան:

1915ի մայիսի 21ին արդէն տեղի է ունենում Կողակ գիւղի կազմակերպուած կոտորածն Օսմանեան կառավարութեան կողմից: Ականատեսի վկայութեան համաձայն կողակցիները ապաստանում են Բուլանըքի Կոփօ/Կոպօ չերքէզաբնակ գիւղում եւ բռնի թուրքացւում: Մի քանի օր անց՝ Վարդավառի օրը, տեղական կառավարչի հրամանով հաւաքում են բոլորին՝ թուրքացածներին եւս, եւ ձմէսուղ կոչուած վայրում կոտորում⁵³⁰: 1915–1916 թթ. կոտորածներից յետոյ Կողակ գիւղից ապաստարան են տեղափոխուել 8–12 տարեկան 6 որբ: Այդ որբերն են. Յակովբեան Կարապետ՝ 9 տարեկան⁵³¹, Յակովբեան Աւետիս՝ 11 տարեկան⁵³², Մուշեղեան Նահապետ՝ 10 տարեկան⁵³³, Աստուածատուրեան Հայկ՝ 10 տարեկան, Ասատուրեան Փարիշա՝ 12 տարեկան⁵³⁴, Մելիքիսեդեան Սատաֆ՝ 8 տարեկան (1916ին գտնուել է Ալաշկերտի որբանոցում)⁵³⁵:

Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում արձանագրուած նամակներից արտագրել ենք միայն մէկ օրինակ, որը, հաւաստի տեղեկութիւններ փոխանցող եւ գեղեցիկ հայերէնով շարագրուած չափազանց տխուր մի նամակի օրինակ է:

⁵³⁰ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 454, ք. 21, յղումն ըստ՝ Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, էջ 172–173:

⁵³¹ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 7:

⁵³² Նոյն տեղում:

⁵³³ Նոյնի Յաւել. հմր. 13:

⁵³⁴ Այս երկու որբերը 1916ին տեղափոխուել են Ալաշկերտի որբանոց, տե՛ս «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 40:

⁵³⁵ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 48:

**ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹԵԼՆ ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻՆ
ԼՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՁԻ ԵՒ ՊԸՇՏԵԼԻ
ՀԵՅՐԻԿԻՆ**

**Ի ԲՆԵԿՁԷ ԿՈՂԸԿ ԳԵՂՁ, ԼՁԸ-ԲՈՒԼԸՆԻ ԳԸԻԸՈՒ
ՍԵՐՈՊ ՍԸՐԳԻՍԵԼՆԷ**

Ամենախոնարհ աղերս

Ձէ ծածուկ ի խորագիտագոյն հայեցուածոց սրատես աչաց Արծույդ Վեհի, զի անփետուր ձագունքդ՝ որ ի բունս կեդրոնական Տաճկահայաստանի՝ ի կուր սողոսկող Թունաւոր օձից լինին: Գիւղն Կողակ աւատական է (չէսլ[ը]դ) անօրէն բռնակալին Սեյիդանցի Մախսոյի, որ ունի բնակութիւն իւր յԱլոյ-Ջարիգ գեղջ յԱբլբուհար լեւինս Մշոյ, որ բարդելով յիմ վերայ զանընբերելի ծանր-ծանր հասս⁵³⁶՝ զոր ի դրամ փոխարինեալ, պահանջէր յինէն տասնապատիկ յաւելուածով, ոյր սակս⁵³⁷ հանդերձ աղխիւք⁵³⁸ ստրուկ լեալ կամաց մարդախոշոչ գաղանին՝ հեծէ ի հանապազ ի տաժան վաստակս եւ ի զազիր կամս նողկալի անգտութեանց արիւնռուշտ տիրանին, զորոյ զկամացն կախեալ կայր ամենայն ինչ իմ. ոչ միայն կեղեքեալ լինէի ի ձեռաց նորա, այլ նաեւ ի յարփանեկացն⁵³⁹ նորին՝ ի հարազատ որդւոցն Մուհամետի, որք նոյնպէս զամենայն չարիս խորհէին ի գլուխ մեր:

Եւ յաւուր միում հրձիգ արկեալ այրեցին զամբարս ցորենոյ եւ զմարագս, եւ ինքեանք պար ասեալ զլափող հրով՝ դիւական կաքաւս յօրինէին: Տեսեալ տիրանին Մախսոյի, թէ այլեւս չիք յերակս իմ յարիւն ի սնունդ պժկալի⁵⁴⁰ անձին, յափշտակեաց զերկուս դստերս իմ՝ զերկոտասան ամսոյ Ֆիտանն եւ զինն ամսոյ Ալմաստն: Զահի հարեալ զայսպիսի բարբարոսութիւնն՝ հազիւ ճողոպրեալ ի ձեռոց նորա՝ եկի այսր, թող[ե]լով անդանոր զմնացուած ընչիցս:

Արդ՝ Արուսեան՝կղ Հայաստանեայց, դիմելով յոտս Սրբութեանդ՝ դողդողազին պաղատանօք հայցեմ զելս հնարիցն յարդարել, զի աղջկունքս իմ

⁵³⁶ հարկ

⁵³⁷ տուրք

⁵³⁸ ընտանիք, գերդաստան

⁵³⁹ Իմա՝ յարբանեկացն: Նկատի ունի Մուհամմեդ մարգարեի հետեւորդներին, որոնք ենթարկում էին կրօնական ճնշումներ:

⁵⁴⁰ Իմա՝ պժգալի, գարշելի, զգուելի:

դարձցին առ իս եւ իցէ ինձ աստանօր տեղի, ուր տեղից զնժդեհ գլուխն իմ վշտաբեկ առ ի հայթայթել զոգեպահից միւսոց զաւակացս, զի կեցցուք եւ օրհնեսցուք զանուն պաշտելի Հայրիկի՝ խնդրելով յէջն էիցս հողէ՛յ յերկա-
րել զարեւ կենաց պետիդ Արամեանս զարմի:

*ՍԵՐՈՊ ՍԱՐԳԻՍԵԱՆ, ՎԱՍՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԽՆԴՐԱՆՕՔՆ ՆՈՐԱՅ ԳՐԵՅԻ՝ ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ*

ի 26 Դեկտեմբերի, 1893 ամի

ի Վաղարշապատ

ԿՈՓ ԳԻՒՂԱՔԱՂԱՔ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(BULANIK)

11-րդ դարի պատմիչ Արիստակէս վարդապետ Լաստիվերտցին, անդրադառնալով սելջուկների արշաւանքներին, գրում է. «Եւ եկեալ ի քաղաքաբիւղն Հարքայ, որ կոչի Մանկան գոմ, եւ կալել զնոսա անհաւատքն...»⁵⁴¹: Որոշ հեղինակներ Մանկան գոմ կամ Մանկագոմ⁵⁴² գիւղաքաղաքը նոյնացնում են Բուլանըքի Կոփ աւանի հետ⁵⁴³:

Այս բնակավայրը յիշատակուած է 1556ին կազմուած Խնուսի լիւայի մատենանում՝ 21 տուն բնակչով, որից 8 տունը իսլամ եւ 13 տունը հայ (Cemà'at-ı Eràmine, Neferan 13)⁵⁴⁴:

Որոշ աղբիւրներում Կոփը համարուած է աւան, որոշներում՝ գիւղաքաղաք կամ գիւղ: Հ. Լինչը այն համարում է Բուլանըք գաւառի կենտրոն, աւելի շատ գիւղ, քան թէ՛ քաղաք⁵⁴⁵: Հայաշատ այս բնակավայրն ընկած էր Մուշից 78 կմ հիւսիս-արեւելք եւ Մանազկերտից 24 կմ արեւմուտք՝ Մանազկերտ-Մուշ ճանապարհին, Բլէջան լեռան հիւսիս-արեւելեան մասում, Խաչի լճից հիւսիս՝ Կոր-ջուր գետի ձախ ափին: Բանուկ Ճանապարհներով կապուած էր Մանազկերտի եւ Մուշի հետ⁵⁴⁶:

1869ին Կոփը դառնում է Բուլանըքի վարչական կենտրոն⁵⁴⁷: Այստեղ էր Մշոյ առաջնորդութեանը ենթակայ քայմաքամի նստավայրը, դատարանն ու հեռագրատունը: Կոփ աւանում հայերն ունէին նաեւ ազգային ընթերցարան⁵⁴⁸:

1871ին Կոփում Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով կառուցուել էր վարժարան, որն ունէր 55 աշակերտ, եւ մէկ ուսուցիչ՝ Յովհաննէս

⁵⁴¹ Լաստիվերտցի Արիստակէս վրդ., Պատմութիւն, (Երկրորդ տպագրութիւն), Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 87:

⁵⁴² Այս գիւղի մասին տե՛ս նաեւ Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հաւաքեց եւ թարգմանեց Խալաթեանց Բ., Վիեննա, 1919, էջ 12:

⁵⁴³ Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. III, ԵՊՀ, Երեւան, 1986, էջ 689:

⁵⁴⁴ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 77:

⁵⁴⁵ H. F. B. Lynch, Armenia, էջ 344:

⁵⁴⁶ Միրախուրեան Մ., նշ. աշխ., էջ 69:

⁵⁴⁷ Salname-i Diyarbakır Sene 1286 [1869–1870], Diyarbakır Büyükşehir Belediyesi, Diyarbakır Salnameleri I., 1999, ըստ՝ Sevan Nişanyan, Index Anatolicus.

⁵⁴⁸ Վերապրածների վկայություններ..., էջ 182–183:

Բարսեղեան⁵⁴⁹: Աւելի վաղ Կոփայ վանքում կար նաեւ 20 աշակերտանոց մէկ գիշերօթիկ⁵⁵⁰:

1879ին Միացեալ Ընկերութիւնը Կոփում բացել էր նաեւ գիւղական նախակրթարան, որն ունէր 60 աշակերտ, եւ 2 ուսուցիչ: Նախակրթարանը փակուեց 1882ին⁵⁵¹:

1908-1910 թթ. «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը» Կոփ գիւղում եւս բացում է աղջկանց վարժարան⁵⁵²:

Խրիմեան կաթողիկոսի մատենադարանեան ֆոնդում պահպանուել են Կոփից գրուած բաւական մեծ թուով նամակներ, որոնցում տեղանունը յիշատակուում է Կոփ, Կոպ, Կոբ, Կոբա-Բուլանք, Բուլանք տարբերակներով⁵⁵³: Այս տեղանունան ծագումի մասին պահպանուել է մի աւանդագրոյց. իր կտակի համաձայն Դանիէլ Ասորու մարմինը պէտք է թաղէին իր ճգնատեղիում: Սայլի վրայ դնելով բերում են եւ գիւղի մօտ սայլի կոփի կոչուած տախտակը կոտրուում է ու վայրի անունը մնում Կոփ⁵⁵⁴: «Դանիէլի մարմինը իւր Շաղիտա եւ Եպիփան աշակերտներուն ձեռքով, եւ արքունական գունդին մէջ գտնուող պաշտօնեաներու գործակցութեամբ, եւ ընկերակցութեամբ ժողովրդական բազմութեան, փոխադրուեցաւ Բառաէջ⁵⁵⁵ գղեակէն Հացեաց Դրախտ կոչուած մենարանը, որ Յուլ լեռան ստորոտը կը գտնուէր եւ Դանիէլի սեփական ճգնարանն էր: Գերեզմանը կը գտնուի այժմ Պուլանըխ գաւառը, որ է նախկին Հարք գաւառը, Կոփ գիւղի մօտ, պզտիկ ձորակի մէջ առաձին մատուռով, որուն քով շինուած է Կոփայ Ս. Դանիէլի վանքը, իւր անուան նուիրուած»⁵⁵⁶: «Մի յերեւելի գիւղորէիցն է Կոբ. յորոյ անուն

⁵⁴⁹ Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 247:

⁵⁵⁰ Սրուանձտեանց Գ. վրդ., Համով-Հոտով, էջ 101; տե՛ս նաեւ Սասունի Կ., 2013, էջ 247:

⁵⁵¹ Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 252:

⁵⁵² Հ. Եփրեմ Վ. Պօղոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Հանդէս Ամսօրեայ, ԿԹ. տարի, 1955, Յունուար-Փետրուար, թիւ 1-2, էջ 57-73, էջ 69:

⁵⁵³ Տե՛ս Խկֆ, թղթ. 103, վաւ. 108, 110, նամակագիր՝ Մանուկ Մուրատեան, ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 299, նամակագիր՝ Մովսէս Մկրտչեան, ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 17, նամակագիր՝ Աւետի որդի Մարտիրոս; ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 111, նամակագիր՝ Կարապետ Միքայէլեանց; ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 334, նամակագիր՝ Մանուկ Մարկոսեան:

⁵⁵⁴ Բենսէ, Բուլանքիս կամ Հարֆ, էջ 25:

⁵⁵⁵ Բուզանդի մօտ Բառաէջը տեղակայուած է Աղձնիք գաւառում, որ շփոթ է առաջացնում ներկայումս վայրի ճիշտ տեղը որոշելու առումով, տե՛ս Փաստոս Բուզանդ, Մատենագրութիւն նախնեաց, Պատմութիւն նախնեաց ի շորս դպրութիւնս, Վենետիկ, 1832, էջ 38:

⁵⁵⁶ Չորրորդ դարու հայ եկեղեցին, (Արտատպած «Լուսայ» հանդիսից), Թիֆլիս, 1901, էջ 33; տե՛ս նաեւ Մշոյ Գեղամ (Գեղամ Տէր-Կարապետեան), Տարօնի վանքերը. ուղեւորի յիշատակներ, Երեւան, 2003, էջ 91:

կոչի վերին մասն՝ Կոբայ Պուլանուկ⁵⁵⁷. եւ առ նմա է մենաստանն սրբոյ ծերոյն Դանիէլի, կոչեցեալ Կոբայ վանք, եւ գերեզման նորա ի մէջ եկեղեցւոյն»⁵⁵⁸:

Կոփի Ս. Դանիէլ վանքը յայտնի է նաեւ Կոփավանք, Կարմիր վանք, Կարմրոյ վանք անուններով: Վանքի կառուցման թուականն յայտնի չէ, սակայն պէտք է կարծել, որ Դ. դարի շինուածք պէտք է եղած լինի, հիմք համարելով Դանիէլ Ասորու սպանութեան ժամանակը⁵⁵⁹: Կոփավանքին կից գերեզմանոցում է թաղուած Ս. Էջմիածնի միաբան Խաչատուր վարդապետը: 1780ին այստեղ է ծնուել Զաքարիա Կոփեցին, որը 1840–1846 թթ. երուսաղէմի պատրիարքն էր⁵⁶⁰:

Մինչեւ 1915ը Բուլանքի Ս. Դանիէլ վանքը Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Մուշի փոխառաջնորդութեան նստավայրն էր, վերջին առաջնորդական փոխանորդը եւ վանահայրը Տ. Համազասպ ծ. վրդ. Վարդանեանն է եղել, որ խառնուելով գաղթականական հոսանքին ընկաւ գաղթի ճանապարհին⁵⁶¹:

Մ. Միրախորեանի փոխանցմամբ՝ Կոփում հայերն ունէին երեք եկեղեցի. Ս. Աստուածածին, որը Մ. Միրախորեանի ուղեւորութեան ընթացքին 30 տարուայ շինութիւն էր, Ս. Թուխ Մանուկ, որը նոյն շրջանում 65 տարուայ շինութիւն էր եւ Ս. Գէորգ, որ չունենալով շինութեան յստակ թուական, ըստ երեւոյթին, Մ. Միրախորեանի այցելութեան ընթացքին արդէն խոնարհուած եկեղեցի էր. «Կը վառեն մօմ, եւ ի ճրագի կը լեցնեն նուիրական տւղզէն (չատ փոքր բարչ կամ 1/2–1 օխա պարունակութիւն ունեցող սափոր) նուիրեալ ձէթ, յետոյ կը ձխեն խունկ, որոյ բուրումն պառաւ կանայք երեսնին առնելով կը խաչակնքեն եւ փառք կը տան Աստուծոյ, որ այդ մատուռիկ պահպանած է մինչեւ ց'արդ»⁵⁶²:

⁵⁵⁷ Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում մեծ թուով վաւերագրեր կան, որտեղ նշուած է Մշոյ Բուլանքի՝ նկատի ունենալով Կոփ ասանք:

⁵⁵⁸ Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն, 1864, էջ 223:

⁵⁵⁹ Բենսէ, Բուլանքի կամ Հարֆ, էջ 27:

⁵⁶⁰ Տէր-Յովհաննէսեան Ա. (Եպս.), Ժամանակագրական պատմութիւն Սուրբ Երուսաղէմի, աշխատասիրութեամբ հաւաքեաց Աստուածատուր Եպիսկոպոս Տ. Յովհաննէսեանց յառաքելական ուխտէ Սրբոյ Յակովբեանց, Երուսաղէմ, 1890, հտւ. Բ., էջ 513:

⁵⁶¹ Թէոդիկ, Դողգոթա, էջ 99–100: Մշոյ հոգեւորականների մասին տե՛ս նաեւ «Յուլարձան Ապրիլ Տասնմեկի»: Այլ մանրամասնութիւններ տե՛ս Բդէեան Ս. Է. Մ., Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 30–31; Tcharian P., The Great Loss of the Armenian Clergy during the Armenian Genocide, translated by Tamar Topjian Der-Ohannessian, Antelias, Lebanon, Armenian Church Catholicosate of Cilicia, 2009, p. 170.

⁵⁶² Միրախորեան Մ., նշ. աշխ., էջ 70:

Սրբազայրերից Բենսէն նշում է Ս. Աստուածածինը, Ս. Թուխ Մանուկն ու Ս. Ստեփաննոս անունով կիսաւեր մի մատուռ⁵⁶³:

Կոփը հարուստ էր հանքերով: Կարմրագոյն կաւի ընտիր հանք, որից պատրաստում էին թոնիր (տեղի բարբառով՝ թոնդիր), կարմրագոյն եւ ծիրանագոյն քարերի քարահանք (Ալիսու քարահանք), հանքային ջուր (Շօռգեոլ (Աղի ջուր)), որը բուժում էր մաշկային տարբեր հիւանդութիւններ (օր.՝ քոս)⁵⁶⁴:

Տեղի բնակչութեան թուաքանակին եւ կազմին անդրադառնալով՝ նշենք, որ 1877–1878 թթ. ուսւթ-թուրքական պատերազմից յետոյ Կոփ եւ տեղափոխուել զարափափախ ցեղի թուրք գաղթականներ⁵⁶⁵: Ըստ Խրիմեան կաթողիկոսի արխիւում պահուող թիւ 57 վաւերագրի 1890-ականներին Կոփն ունէր մօտ 500 տուն հայ բնակիչ. «Վեհ[ափառ] Տէր, իմ անունը Յովհաննէս է: Ես էնքան հարուստ չէի թէեւ, բայց մեր գերդաստանի անունը միշտ կը յիշուէր, ունէր տեղ մեր 500 տնաւոր գիւղի բնակիչների մէջ»⁵⁶⁶: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Կոփն ունէր 650 ընտանիք՝ 5.103 բնակչով⁵⁶⁷:

1900-ականներին Բուլանըք, Մանազկերտ եւ Խնուս գաւառներում տեղակայուած էր Համիդիէ զօրախմբի 5 զօրագունդ (կորպուս), որից Մանազկերտում՝ N 27 եւ N 28, Բուլանըքում N 30, եւ Խնուսում N 26, N 29⁵⁶⁸:

Համիդիէ գնդերի օժանդակութեամբ եւ քրդական հրոսակների մասնակցութեամբ Կոփում կազմակերպուած համիդեան կոտորածներն ամենադաժանն էին: 1895ի հոկտեմբերի մէկից մինչեւ տասներեքը Օսմանեան կառավարութիւնը մեծ թուով հոգեւորականների եւ 5–12 տարեկան մի խումբ դպրոցականների Կոփի դպրոցում սպանեց՝ գազախեղդ անելու եղանակով: Այս վայրագութիւններին յաջորդեց քաղաքի հայ բնակչութեան բռնի իսլամացումը⁵⁶⁹: Արդէն 1915ին Մուսա բէկի բանակի կողմից⁵⁷⁰ Կոփը եւ թարկուեց ցեղասպանութեան:

⁵⁶³ Բենսէ, Բուպնրիս կամ Հարֆ, էջ 24:

⁵⁶⁴ Նոյն տեղում, էջ 21–22:

⁵⁶⁵ Բադալեան Գ., նշ. աշխ., էջ VI:

⁵⁶⁶ ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 57:

⁵⁶⁷ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁵⁶⁸ Маевский В. Т., Военно-статистическое..., с. 126.

⁵⁶⁹ Charmetant P. F^x Ermeni Katliamları Raporu, 1894–1895, İstanbul'da Görevli Altı Büyükelçiliğin Ortak Hazırladığı Statistik, İstanbul, Peri yayımlar, 2012, էջ 84–85.

⁵⁷⁰ Մովսէսեան Ս., Բուլանըղի կոտորածը, Մեծ-Ղարաքիլիսա 1916 թ., «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 43, էջ 1358–1360:

Ներկայումս գիւղաքաղաքն հայաթափ է, այստեղ ապրում է բացառապէս թուրք բնակչութիւն: Պատմական Կոփն այսօր կոչւում է Բուլանըք (Bulanik)⁵⁷¹:

Կոփ քաղաքից փրկուել ու Արեւելեան Հայաստան է բերուել 17-րդ դարի «Վարդերի տան Կարմիր կող» Աւետարանը, որ ներկայիս պահւում է Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գիւղում:

1915ին Կոփ գիւղից տարբեր ապաստարանների խնամքին են յանձնուել 3–15 տարեկան 48 որբ. Մեհրեան Լուսիկ՝ 6 տարեկան⁵⁷², Յոհաննէսեան Տելբեր՝ 10 տարեկան⁵⁷³, Թորոսեան Զաքար՝ 13 տարեկան⁵⁷⁴, Տոնոյեան Մանուկ՝ 14 տարեկան⁵⁷⁵, Իգիթեան Հլղաթ, 15 տարեկան⁵⁷⁶, Թարգիմուրադեան Արտաւազդ՝ 7 տարեկան⁵⁷⁷, Յովսէփեան Աբրահամ՝ 12 տարեկան⁵⁷⁸, Յակոբեան Ազնիւ՝ 4 տարեկան⁵⁷⁹, Մարգարեան Նուարդ՝ 10 տարեկան⁵⁸⁰, Սամուէլ՝ 6 տարեկան⁵⁸¹, Աւետիսեան Բերսաբ՝ 8 տարեկան⁵⁸², Աստոյեան Ալէքսան՝ 9 տարեկան⁵⁸³, Բարսեղեան Ֆինջօ՝ 3 տարեկան⁵⁸⁴, Զաքարեան Մկրտիչ՝ 10 տարեկան⁵⁸⁵, Զաքարեան Ալէքսան՝ 8 տարեկան, Զաքարեան Սաթենիկ՝ 8 տարեկան⁵⁸⁶, Կարապետեան Գիւլնազ՝ 7 տարեկան, Կարապետեան Զիզօ՝ 14 տարեկան, Կարապետեան Նուարդ՝ 12 տարեկան, Կարապետեան Զարգանդ՝ 6 տարեկան, Կարապետեան Վիրսան՝ 11 տարեկան⁵⁸⁷, Նազարեան Ալմաստ՝ 12 տարեկան, Նազարեան Ռուբէն՝ 11 տարեկան⁵⁸⁸, Սերոբեան Ասատուր՝ 11 տարեկան⁵⁸⁹, Գասպարեան Սանդուխտ՝

⁵⁷¹ <https://www.houshamadyan.org/>, Պոլսնիքի Բագա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

⁵⁷² «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանդուած հմր. 3:

⁵⁷³ Նոյնի Յանդ. հմր. 4:

⁵⁷⁴ Նոյնի Յանդ. հմր. 5:

⁵⁷⁵ Նոյն տեղում:

⁵⁷⁶ Նոյնի Յանդ. հմր. 6:

⁵⁷⁷ Նոյնի Յանդ. հմր. 7:

⁵⁷⁸ Նոյն տեղում:

⁵⁷⁹ Նոյնի Յանդ. հմր. 14:

⁵⁸⁰ Նոյնի Յանդ. հմր. 15:

⁵⁸¹ Նոյնի Յանդ. հմր. 19:

⁵⁸² Նոյնի Յանդ. հմր. 20:

⁵⁸³ Նոյն տեղում:

⁵⁸⁴ Նոյն տեղում:

⁵⁸⁵ Նոյն տեղում:

⁵⁸⁶ Նոյն տեղում:

⁵⁸⁷ Նոյն տեղում:

⁵⁸⁸ Նոյն տեղում:

⁵⁸⁹ Նոյն տեղում:

11 տարեկան⁵⁹⁰, Մխիթարեան Ռեհան՝ 10 տարեկան⁵⁹¹, Բարբարեան Սաթենիկ՝ 11 տարեկան⁵⁹², Գրիգոր՝ 14 տարեկան⁵⁹³, Ղազարեան Հայկ՝ 8 տարեկան⁵⁹⁴, Պետրոսեան Վարդան՝ 13 տարեկան⁵⁹⁵, Սիրարբի՝ 8 տարեկան⁵⁹⁶, Սայրո՝ 9 տարեկան⁵⁹⁷, Արսենեան Վարդանոյշ՝ 5 տարեկան⁵⁹⁸, Մանուկեան Աստուածատուր՝ 12 տարեկան⁵⁹⁹, Յարութիւնեան Համազասպ՝ 9 տարեկան, Յարութիւնեան Գարեգին՝ 5 տարեկան⁶⁰⁰, Բարբարեան/Բերբերեան⁶⁰¹ Սաթենիկ՝ 11 տարեկան, Բարբարեան/Բերբերեան⁶⁰² Հայկանոյշ՝ 9 տարեկան⁶⁰³, Մարտիրոսեան Յակոբ՝ 7 տարեկան⁶⁰⁴, Զաքարեան Սուվար՝ 6 տարեկան, Զաքարեան Եղօ՝ 10 տարեկան⁶⁰⁵, Մարտոյեան Վահան՝ 10 տարեկան⁶⁰⁶, Յովհաննիսեան Առաքել՝ 5 տարեկան⁶⁰⁷, Կարապետեան Սարգիս՝ 10 տարեկան⁶⁰⁸, Յարութիւնեան Փարիշան՝ 11 տարեկան⁶⁰⁹, Յովհաննիսեան Սուսեր՝ 7 տարեկան⁶¹⁰, Յովհաննիսեան Առաքել՝ 3 տարեկան⁶¹¹, Մկրտչեան Սարգիս՝ 13 տարեկան⁶¹²:

Յեղասպանութիւնից յետոյ կոփեցիների փրկուած սերունդները բնակութիւն են հաստատել Ալէքսանդրապոլում (Գիւմրի), Ղարաքիլիսայում (Վանաձոր), Համամլու (Սպիտակ), Գոշավանք գիւղերում:

⁵⁹⁰ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելում հմր. 20:

⁵⁹¹ Նոյն տեղում:

⁵⁹² Նոյնի Յաւել. հմր. 21:

⁵⁹³ Նոյն տեղում:

⁵⁹⁴ Նոյն տեղում:

⁵⁹⁵ Նոյնի Յաւել. հմր. 23:

⁵⁹⁶ Նոյն տեղում:

⁵⁹⁷ Նոյն տեղում:

⁵⁹⁸ Նոյն տեղում:

⁵⁹⁹ Նոյն տեղում:

⁶⁰⁰ Նոյնի Յաւել. հմր. 26:

⁶⁰¹ Նոյնի Յաւել. հմր. 46:

⁶⁰² Նոյն տեղում:

⁶⁰³ Նոյնի Յաւել. հմր. 45:

⁶⁰⁴ Նոյն տեղում:

⁶⁰⁵ Նոյնի Յաւել. հմր. 49:

⁶⁰⁶ Նոյնի Յաւել. հմր. 50:

⁶⁰⁷ Նոյնի Յաւել. հմր. 7:

⁶⁰⁸ Նոյնի Յաւել. հմր. 9:

⁶⁰⁹ Նոյն տեղում:

⁶¹⁰ Նոյնի Յաւել. հմր. 10:

⁶¹¹ Նոյն տեղում:

⁶¹² Նոյն տեղում:

Խորմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում կոփեցիները Հայրիկից խնդրել են հաց, հագուստ եւ այլ առաջնային խնդիրներ լուծում: Շարադրանքի մէջ գերակշռում են բարբառային, խօսակցական ձեւերը:

(ՄՄ, ԽԼՖ, ԹղԹ. 104, վաւ. 104)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԸՓԸՈՒԹ[Ե]Ն ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐ[Տ]ՉԻ
Լ/ԼՁԻՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԱՅՈՑ**

Խոնար[հ] խնդիր

Վեհափա՛ր Տէր,

Խոնար[հ]ապար կաղաչեմ օքնել ինձ՝ թշուառ չքաւորիս: Ես՝ Աւետի կին Խուտրատ Մարտիրոսեան Սիմոնեանցս, Տաճկաստանի Մշոյ գաղաւից Կոպ գողից եկածիմ *Րուսաստան՝* ճար փնտրէլու իմ մանրիկ թոռնակներիս ու հարսիս, որը տաճկի բանտում տանջվում է, իսկ մի հաշիկ որդիս *////* ոտքէրէն մեռավ տաճի⁶¹³ բանտում: Եւ մնալով տաճի բանտումըն, հարսըս եւ մանրիկ թոռնուքըս, պատճառ՝ մէկ տաճկի ասկար եկա՛վ մեր տունը, որ հիւանտ էր ու բաւականին ժամանակ ապրեց մեր տան մէջ՝ մեր *պահպանութեամբ* ու վերջը՝ մեռա՛վ: Այդ *ասկարըն*⁶¹⁴ ու Տաճկաց օրէնքը մեզնից պահանջում է 20 թուման *ասկարի* ա<յ>րեան⁶¹⁵ վարձըն: Ու *դօրաց* պա[տ]ճառով բանտարկեցին մեր *բօլօր* տընէցոնց, իսկ ես ձէր⁶¹⁶ կին էի եւ խնայեցին ինձի եւ հարձակեցին բանդից: Հազիւ ինձի հասցնելով Րուսաստան երկիրըն: Ու այս երեք օր է, որ եկածիմ ու *///* մուրամ դռնէդուռ, որ հա՛վաքիմ 20 թուման փողէն, որ տանիմ ազադիմ տաճկի բանտից իմ որդիքըս:

Կաղաչեմ Ձերդ Վեհափար[թիւ]նից օքնել իմ թշվառիս որքան կը պարհաճէք⁶¹⁷ մի կերպով կարօղանամ հասնիլ իմ որդեկերանցըս օքնութեանը: Կաղաչեմ *երէսանկալ* Ձերդ Վեհաթոռնից պաշտելի՛ Հայր չի մէրժէք իմ խնդիրս օքնել՝ ի ս[է]ր Քրիստոսի, եւ խնայել իմ *ձերութոռնս* եւ իմ չքա՛վօրութոռնս:

*ԽՈՆԱՐ[Հ] ԱՂԱԽԻՆ ԽՈՒՏՐԱՏ ՄԱՐՏԻՐՕՍԵԱՆ ՍԻՄՕՆԵԱՆՑ
ՏԱՃԿԱՍՏԱՆՑԻ ՄՇԻ ԳԱՎԱՌԻՑ ԿՈՓ ԳՈՒՂԻՑ*

96 թիւ, 1ին Հօկտեմբերի, Վաղարշապատ

⁶¹³ Նկատի ունի տանկական բանտ:

⁶¹⁴ Թրֆ.՝ զինուոր, asker:

⁶¹⁵ Իմա՝ արեան:

⁶¹⁶ Իմա՝ ծեր:

⁶¹⁷ Իմա՝ բարեհաճել:

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ
Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏԻՐ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԸՅՈՅ
Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏՁԻ**

ՊՈՒԼՆԵԸԻՈՒ ԿՈՊԸ ԸՌԷՍ ՅՈՎՀ[Ը]ՆԵԸՍ ԹՈՎՄԸՍԵԱՆՅԷ

Ամենախոնարհաբար խնդիր

Վեհափա՛ւ Հայրիկ,

Դիմեցի այսօր Վեհութեանցդ ոտք ոչ թէ ողորմութիւն հայցելու, զի մասնաւոր ողորմութիւնով անկարելի է ցաւերս դարմանուին: Հապա<յ>, մի շրջաբերական գիրը, որով թերեւս կարողանամ Ձերին հայրական բարեսրտութեան շնորհիւ կրկին կենդանանամ եւ ընտանիքս ազատեմ:

Վեհ[ափա՛ւ] Տէր, իմ անունը Յովհաննէս է: Ես էնքան հարուստ չէի թէեւ, բայց մեր գերդաստանի անունը միշտ կը յիշուէր, ունէր տեղ մեր 500 տնաւոր գիւղի բնակիչների մէջ: Մեր տունը անուն ունէր: Մեր հիւրերը բոլոր մեր շէն կեկնէին, մեր յարկի տակ կը կերակրուէին թէ՛ փաշան եւ թէ՛ Կոփին երեցներով:

Հիմայ այս տունը գոցուած է եւ երեսունի չափ ընտանիքս մոխրի վր[այ] նստած է՝ մերկ, քաղցած: Այն ամէն կարողութիւն վերջապէս կորաւ գնաց: Տաւարներուս գոմերը եւ ցորենիս ամբարները պարապ մնացին:

Երկու անգամ բռնուեցայ: Ամէն մի անգամին 50 ոսկի դուկանք տալով ազատուեցիմ: Յետոյ, երբ տեսայ, որ կորուստս անհրաժեշտ է, թողի, ընտանիքս Ա[ստուծոյ] կամաց հանձնելով՝ այս կողմ փախայ:

Եւ այս վեց ամիս էր, որ Ապարանի Խաղնաֆար գիւղ յամոթած մնացեր էի, եւ յասօր ելլելով կաղեկաղ զիս Ձերին Վեհափառութեան ոտք հասուցի:

Վեհ[ափա՛ւ] Տէր, խնդրեմ լալով ողորմածութիւնդ՝ իմ խաւար աչքերուս մի լո՛յս շնորհէք, զի Դուք էք այսօր գորութիւն ե՛ւ հոգեւոր ե՛ւ մարմնաւոր լուսատու արեւով: Անոր հ[ա]մ[ար] ծնկաչօք Ձերին գանձերով լի սրտի դռան դիմեցի: Հիւանդ եմ, պարտատէր եմ, օտար եմ, ծերացած եմ, հայ եմ եւ Ձերին վիբաւոր ոչխարներէն:

Անոր հ[ա]մ[ար] մատչելով Ձերին Ս[ր]բազնագոյն գարշապրոց դիմեցի եւ խնդրում եմ, որ իմ միակ խնդիր կատարուի, որ աղօթարար լինիմ Ձեր անգլին կենաց:

ԸՆԴՄԻՇՏ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՍԵԱՆՅ, ԿՈՊԵՅԻ

1896, 6ը, Ապրիլ

ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 103, վաւ. 22)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ ԸՄՍՏՈՒԸԾԸՆՏԻՐ
ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻԸՆՆԻ ՀԵՅՐԻԿԻՆ ԸՄԸԵՆՅՆՆԻ ՀԵՅՈՅ
ՄՇՈՅ ԲՈՒԸՆՈՒԹԻ ԳԵՒԵՌՈՒ ԿՈՊ ԳԻՒՂԻՅ
ԳԸՂԹԵԱՆ ՍԸՐԳԻՍ ՍԸՐՏԻՐՈՍԵԱՆԷ**

Աղերսանօք խնդիր

Երկու տարուց ի վեր ստիպեալ անտանելի հարստահարումէ, գաղթելով հայրենիքից, բնակւում եմ Սուրմալուայ գաւառի Փանիկ գիւղում: Բայց աւաղ գառամեալ ծերութեանս պատճառաւ անկարող եմ տասն հոգուց բաղկացած ընտանիքս կերակրել: Այդ իսկ պատճառաւ դիմում եմ Ողորմած Հորդ ոտքը եւ արտասուելով խնդրում եմ Ձերդ Վեհութեանդ գթութիւնը եւ ողորմութիւն՝ որքանով կհաճին Սրբազնասուրբ կամք բարերարիդ՝ ի մխիթարութիւն թշուառ ընտանեացս գէթ մի առ ժամանակ:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

*1895 ամիս, 21ն Յուլիսի
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ*

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 104, վաւ. 39)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ ՍԸՐԸԸԸՆԸԳՈՅՆ
ԸՄՍՏՈՒԸԾԸՆՏԻՐ ՀԵՅՐԵՊԵՏԻ ԸՄԸԵՆՅՆՆԻ ՀԵՅՈՅ
ՏԸԵԱՌՆՆԻ ՏԸԵԱՌՆՆԻ ՄԿՐՏՁԻ**

ՊՈՒԸՆԸԸՌՈՒ ԿՈՊ ԳԻՒՂԻ ԲԵԸԿԷՁ ԳՐԻԳՈՐ ՌԷՍ ՂԸՁԸՐԵԱՆՅԷ

Ամենախոնարհաբար աղերս

Վեհափա՛ռ, պաշտելի՛ Հայրիկ,

Երէկ տեղս հասայ եւ այսօր աճապարեցի Վեհութեանդ ոտք գիւ ձգել եւ կաղաչեմ, որ ինձ՝ նուաստիս, անձամբ Ձերին Ս[ուրբ] ներկայութեանն արժանացնէք, որ ունիմ քանի խօսքեր բերանացի Վեհութեանդ յայտնելու:

Ասոր հ[ա]մ[ար] յատկապէս կաղաչեմ, որ ժամ առաջ մեզ կանչէք, որ յայտնեմ: Ապա թէ չէք յօժարիր մեր խնդիրը լսելու, պէտք է որ հրամայէք Վեհարանիդ շեմքի վր[այ] գիւ գոհել, որ ալ անհնար է ապրել:

Նաեւ ունիմ վեց ընկերներ եւս, որ իմ նոյն երկու ամսեայ բանտարկութեն[էն] առաջ թողած եմ Ախլքալակու *չաստ*, Ուշաւէր գիւղ, /// անձ Մուշեղեան Տէր Գրիգորի տուն, որ այժմ չը գիտեմ թէ ուր են: Եւ նուաստս, այստեղէն ետ դառնալունս պիտի հետեւիմ, որ նորայ գտնեմ:

Այսքան կաղաչեմ՝ երեսիս Ս[ուր]բ ոտքդ դրած, որ լսէք իր միակ փափազն եւ շուտով ետ դառնամ այնտեղ ուրտեղէն որ ելած եմ:

*ՄՆԱՄՔ ԶԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԱՆԳԻՆ ԿԵՆԱՅ ԱՂՕԹԱՐԱՐ՝
ԳՐԻԳՈՐ ՌԷՍ Ղ[Ա]ԶԱՐԵԱՆ*

*1896, 28 Մարտ
ի Վաղարշապատ*

(ՄՄ, ԽկՖ, [թղթ. 102, վաւ. 769])

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԱՌՈՒԹԵԱՆ Տ[ԵՆՈՒՆ] Տ[ԵՆՈՒՆ] ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԸՆԵԿՈՅՆ ԿԵԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵԸՆ ՀԸՅՈՑ**

**Ի ՄԵՐԳԵՐ ԳԵՍՊԵՐ ԵՒ Ի ՅԵՐՈՒԹԻՆ
ԿԻՐԵԿՈՍԸՐԵՐՈՅԵԱՆ**

Ամենախոնարհ խնդիր

Վեհ[ափառ], Սրբազնագո՛յն Հայրապետ,

Նուաստքս Մշոյ Պոլկանըգ գաւառի Կոփ գիւղէն եւ Բարոյեանց գերդաստանէն եմք: Կ'ըղաձամք գալ եւ մատչիլ ի համբոյր Աստուածարեալ Աջոյն Սրբոյ Օծութեան Զերում, եւ յոյս ունեմք, թէ պիտի արժանաւորեմք վայելել սոյն մեծ շնորհէն Հայրական:

Հա՛յր Վեհափառ, ըստ յայտնութեան ներփակ վկայագրոյն, անցեալ 1893 ամի դեկտեմբեր ամիսէն սկսեալ մեր գերդաստանն մատնեալ է մի դառն եւ դժնդակ փորձութեան: Մինչ զի տակաւին ցարդ չորս այր եւ մի կին՝ հանդերձ մանկամբ կը տառապին Մշոյ բանտին մէջ՝ քաղցած, ծարաւ, լքեալ եւ անօգնական: Նոյն քաղաքի հանուր իսլամութիւնն զինուած է իրենց դէմ եւ կը ջանայ, եթէ հնար լինի, ի կախաղան հանել տալ զամենեւին: Մինչ միւս կողմէ, տեղական կառավարութիւնն, բաւական ապացոյց ի ձեռին չունենալով, կը պահանջէ 350 օսմ[անեան] ոսկի՝ մեր սոյն բանտարկեալներն արձակելու համար: Բայց մեր գերդաստանն իւր մնացեալ բանտարկելոց ազատութեան համար այնքան մեծ ծախքեր ունեցաւ եւ այն

աստիճան աղքատացաւ, որ կարող չէ հայթայթել այսօր գէթ 350 օսմ[անեան] դաճեկան:

Ուստի ամէն կողմէ ճարահատ կը դիմեմք Վեհափառութեան Ձերութ:

Ո՛ր Հայրի՛կդ Հայոց, եւ կաղաչեմք շնորհել մեզ նոյն դրամական օգնութիւնն՝ յազատութիւն մեր բանտարկելոց:

Յոյս մեծ ունենալով մեր խոնարհ խնդրոյս կատարման, պատիւ ունեմք մնալ ընդմիշտ Մեծի Վեհափառութեան Ձերութ ամենախոնարհ ծառայք եւ որդիք՝

Ն. ՅԱՐՈՒԹԻԻՆ, Ն. ՄԱՐԳԱՐ,
Կ. ԲԱՐՈՅԵԱՆՅ, Գ. ԲԱՐՈՅԵԱՆՅ

1894 Դեկտեմբեր 9,
ի Ս[ուրբ] Էջմիածին

ՀԱՄԱՁԱՇԵՑԻՍ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(SARIPINAR)

Համազաչեյի գիւղը գտնւում էր Կոփից տասնհինգ կմ հիւսիս-արեւմուտք՝ Զեռնակ լեռների լանջին: Ունէր մէկ հնաշէն ու քարաշէն մատուռ՝ Ս. Թուխ Մանուկ⁶¹⁸: Հայոց ցեղասպանութիւնից առաջ այստեղ են քահանայագործել Տէր Յովհաննէս եւ Տէր Գաբրիէլ քահանաները⁶¹⁹:

Համազաչեյիցի վերապրողների վկայութիւնների համաձայն գիւղն ունեցել է չորս Աւետարան, 10 սենեականոց երկյարկանի դպրոց, երկու ուսուցիչ, 170 աշակերտ, Միսաք Իսոյեանի ջանքերով կառուցուած գրադարան, որտեղ 1915ի դրութեամբ հաւաքուած էր 1000 կտոր գիրք⁶²⁰:

1870–1871 թթ. Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով՝ Համազաչեյում բացուել էր մէկ դպրոց, որն ունէր 40 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ Մինաս Տէր Յարութիւնեան⁶²¹:

Խրիմեանի ֆոնդում պահպանուած, մեծամասամբ, բարբառախառն նամակներում գիւղը յիշուած է Համազաչեյ, Համձաչեյի տարբերակներով:

Գիւղի եկեղեցու եւ անուան վերաբերեալ պահպանուել է այս հետաքրքրական ավանդազրոյցը, որ դեռեւս անցեալ դարի 60-ական թուականներին պատմւում էր վերաբնակիչների կողմից: Համազայ անունով շէյխի վեցամեայ տղան իր ընկերների հետ ուզում է Աստուածաշունչ ուսանել: Երբ այս մասին իմանում է հայրը, սպանում է որդուն ու մարմինը յանձնում հայերին: Բուլանքի հայերը սրբացրել են մանկանը ու նրա անունով կառուցել եկեղեցիներ, որոնք կոչւում են Ս. Թուխ Մանուկ:

Ս. Թուխմանուկի եկեղեցիներում հայերը խունկ էին ծխում եւ կանթեղներ վառում ի յարգանս փոքրիկ սրբի⁶²²:

Համազաչեյի գիւղը 1895–1896ին ենթարկւում է Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածներին, որոնց ընթացքում հայերից խլում են նրանց ունեցուածքը եւ ստիպում թողնել տունն ու հեռանալ: Այս տեղեկութիւններով են լցուած Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակները,

⁶¹⁸ Ընդարձակ Օրացոյց, 1903, էջ 338; Բենսէ, Բուլանք կամ Հարֆ, էջ 29:

⁶¹⁹ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁶²⁰ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 447, թթ. 20–24, յղումն ըստ՝ Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, էջ 186–188:

⁶²¹ Սասունի Կ., 2013, էջ 247:

⁶²² Ազգագրական հանդէս, Գիրք ե., էջ 25–26:

որոնք ստոյգ ձեռով ներկայացնում են հարստահարումն ու կոտորածը: Տանջանքներին չդիմանալով, զոհեր տալով ու երեխաներ կորցնելով՝ տեղի հայութիւնը դիմում է փախուստի՝ հաստատուելով Արեւելեան Հայաստանում կամ Ռուսաստանում: Ցարական կառավարութեան պարտադրանքով, սակայն, 1897–1898ից սկսած, նրանց ստիպում են ետ վերադառնալ: Այս անգամ արդէն հայերը առաւել դժնդակ դրութեան մէջ են յայտնւում, քանի որ այլեւս չունէին ո՛չ տուն եւ ո՛չ հող: Այս ամէնը արդէն Օսմանեան իշխանութիւնները խել եւ յանձնել էին մեծամասամբ չերփէզ գաղթականներին⁶²³:

1909ի մի տեղեկագրի համաձայն գիւղն ունէր 65 տուն հայ եւ 3 տուն չերփէզ, իսկ դրանից 20 տարի առաջ 190 տուն հայ: Միւսները գաղթեցին ու փախան...⁶²⁴. «20 տարի առաջ, գեղիս հայ ժողովուրդը ունէր 1200 կտոր արտ-չայիր, 4 արօտավայր, 15 կաղամբանոց, 3 ջրաղաց, 180 մարագ, 120 գոմ, 200 կալ՝ իսկ այսօր (1909 փետր. 24)՝ հազիւ 600 արտ, 9 կաղամբանոց, 1 ջրաղաց, 15 մարագ, 16 կալ-գոմ, իսկ մնացածները այրուած, քանդուած եւ գրաւեալ»⁶²⁵:

– Ունէինք 250 գոմէշի լուծք եւ գութան, 400 մարագ, 1300 կով, 1700 ոչխար, 150 ձի, իսկ ա՞յժմ, 16 լուծք եւ 312 ոչխար, տաւար եւն.:

– Մեր հողերէն 4800 արտավար, 6 կաղամբանոց, 120 դէզ խոտի մարգագետին եւ ջրաղաց գրաւած են Սիմօ գեղի Չերփէզները:

– Գիւղիս 41 կտոր արտ եւ չայիր Զրաաթ պանգային գրաւ.

– Աշիրէթներու, Չերփեզներու ձեռամբ հետզհետէ բռնի խլուած են մեզմէ 1015 ոչխար, դրամ՝ 19,300 դրշ., գոմէշ՝ 83, եզ-կով 206, ձի՝ 27, հազարաւոր քիլէ⁶²⁶ ցորեն եւ խոտի բարտոցներ:

– Սպանեալք 22, առեւանգեալք՝ 11, բանտարկեալք՝ 15 եւն.:

– Կաշառք խլուած մէմուրներէ իբր 16,900 դրշ.:

– Շրջակայ քիւրտերէ եւն. յափշտակուած արտեր, չայիրներ իբր 210:

– Պետական տուրքէ մնացորդ պարտքը՝ 80,000 դրուշ»⁶²⁷:

1915ին՝ Համբարձման տօնի օրը, Համզաշեխի վրայ են յարձակուում քրդական հրոսակներն ու համիդիէ զօրագնդերը՝ առաջին օրն իսկ սպանելով

⁶²³ Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 8, 43:

⁶²⁴ Նոյն տեղում, էջ 23:

⁶²⁵ Նոյն տեղում, էջ 8:

⁶²⁶ Քառակուսի փայտէ աման, որը Օսմանեան շրջանում գործածում էին հատիկաւոր բոյսերը չափելու, կշռելու համար: Մէկ ֆիլէն մօտաւորապէս հաւասար էր 25 կգ:

⁶²⁷ Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 23:

400 տղամարդու: Ականատեսի պատմածի համաձայն Համգաշխրհի բնակիչները Շիրվանշեխի հայութեան հետ ապաստանում են Սիմօ կոչուող չերքէզաբնակ գիւղում, որտեղ ըստ վերապրողի՝ օգնում ու պաշտպանում են իրենց: 40 օր անց, Վարդավառի տօնին, քրդերը չերքէզներին ստիպում են նրանց յանձնել իրենց մօտ եղող հայերին, հակառակ դէպքում սպառնալով նրանց եւս կոտորել⁶²⁸:

1915ին Համգաշխրհ ամբողջութեամբ դատարկուեց: Բնակիչներից միայն քչերը ազատուելով հաստատուեցին Արեւելեան Հայաստանում: 1916ին լոյս տեսած «Համբաւաբեր» թերթի յաւելուած բաժնում Համգաշխրհ գիւղից գտնուել է ըմբամէնը 4 որբի անուն, որոնք տեղափոխուել են այլեւայլ ապաստարաններ: Այդ որբերն են Աւագեան Արուսեակ՝ 8 տարեկան, Աւագեան Քերիմ՝ 9 տարեկան⁶²⁹, Մանուկեան Բէզօ՝ 18 տարեկան⁶³⁰, Յովսէփեան Ազնիւ՝ 8 տարեկան⁶³¹:

1912ին Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Համգաշխրհ գիւղում բնակուում էր 1299 հայ⁶³², իսկ Թէոդիկի հաշուումների համաձայն՝ հայութեան թիւը կազմում էր 80 տուն⁶³³: Ս. Կարայեանի կազմած ցուցակում 1914ի դրութեամբ Համգաշխրհ գիւղն ունէր 150 հայ ընտանիք՝ 1050 բնակչով⁶³⁴:

1928ին Քեմալական Թուրքիայում այս տեղավայրը արձանագրուեց Համգաշեհ անունով (Hamza cheyh)⁶³⁵: Ներկայումս գիւղն ամբողջութեամբ քրդաբնակ է եւ կոչւում է Սարըփընար (Sarıpınar)⁶³⁶:

⁶²⁸ Հայոց Ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, հտ. Բ., էջ 186–188:

⁶²⁹ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 9:

⁶³⁰ Նոյնի Յաւել. հմր. 48:

⁶³¹ Նոյնի Յաւել. հմր. 49:

⁶³² Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁶³³ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁶³⁴ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁶³⁵ TC, Dahiliye Vekaleti, Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928, էջ 416:

⁶³⁶ <https://nisanyanmap.com/?y=Sar%C4%B1p%C4%B1nar&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 103, վավ. 105)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԼՆ ԵՆՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐՈՒՐ
ԿԵԹՈՒՂՈՍՈՒ ԸՄԼԵՆՅՆՆ ԼԵՅՈՑ ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ
ՄԵՐՏԶԻ ՄՐԵԼՋՆԵՍՈՒՐԲ ԼԵՅՐԵՊԻՏԻ**

ՄՇՈՒ ԳԵՒԵՆԻ ԼԵՄԶԵՇԵԻ ԳԻՒՂԻ ԲԵԼԿԻՉ ԶԵՆՈՑ ՍԵՐՈՎԲԵԱՆ

Ամենախոնարհ խնդիր

Ողորմած Հայրիկ,

Արդէն Տաճկաստանի այժմեան դրութիւնը քաջ յայտնի է Վեհափառութեանդ. թէ ինչ է անցնում եւ ինչ զոհեր են գնում տաճկաց եւ քրթերի սրերին, որոց մէջ էր եւ իմ ամուսին Գէորգը, որ երկու տարիի չափ անյայտացած է: Զգիտեմ՝ սպանուե՞ր է, թէ՛ կենդանի է: Իսկ ես՝ թշուառս, ընկնելով քրթերի ձեռք, հազիւ հաս ազատուեցայ եւ մի կերպ գաղտնի կերպով մը փախայ-եկայ Ալաշկերտ գիւղը՝ Յարութ[իւն] Յովհաննէս[եան]ի տունը, որին խնդրելով՝ հետս առած ահա մի ամիս է, որ անցել ենք այս կողմ եւ այս երկու օր է, որ Վաղարշապատ եմք:

Թէեւ ցանկանում էի ողորմած Հորդ Ս[ուր]բ աջը համբուրելով անձամբ յայտնէի ցաւերս, որպէս զի փոքր-ինչ փարատուէր վիշտերս, բայց չկարողացայ ներկայանալ:

Ուստի այս խնդրագրովս դիմում եմ պաշտելի Հայրիկիդ ոտքը եւ աղաչում եմ՝ փոքր ինչ ողորմութեամբ լինի բաժին հանէք ինձ՝ մերկութիւնս ծածկելու եւ ապրելու մինչեւ Աստուծոյ ողորմութեան հասնելը՝ ինձ նման բոլոր թշուառներին:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱՂԱԽԻՆՆ ԶԱՆՈՑ ՍԵՐՈՎԲԵԱՆ

Ի 24ն Օգոստոսի, 1895 ամի

Ի Վաղարշապատ

(ՄՄ, ԽկՖ, ԹղԹ. 101, վաւ. 585)⁶³⁷

**ՆՈՐԻՆ ՎԵՀԼՅ ՓԼՈՌՈՒԹԻՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻՉԻ
Լ. ՍՐԲԵՋԸՆԳՈՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆ ՀԵՅՈՅ
ՏԸՆԿԵԼՅՈՒՆՆԵՐ ՄՇՈՅ ԲՈՒԼՆՈՒԹԻ ԳԵՎԼՈՒ ՀԸՄՁԵՅՇԻ
ԳՈՒՂԻ ԲԸՆԵԿԻՉ Ս[Ը]ՀԵՅ ԿԼՐԵՅՊԵՏԷՆ**

Կազալարութեն⁶³⁸ եւ տաճկայց բարբարոսութիւնն մեր յարնիք⁶³⁹ թող
տըվիք փախչիլով դէպի Ռուսաստան եկիք: Իմ յերիս⁶⁴⁰ մեռալ: Իմ ծիրունի մայր
եւ մենք մնցիք⁶⁴¹ յեգ⁶⁴² հոգի՝ ոջլտոց մենչը: //⁶⁴³ յիմայ Առմիտլու գուղին մէջի
պալիմ յիմայոնոք: Մենք անճար մնալով դէպի քոյ վեհայիառութիւնին եկիք, որ
մեզի համ[ա]ր ձ[ե]ռք⁶⁴⁴ բռնիս քոյ գիտութ[եամ]բ չ[ա]տ պաշտելի Հայրիկ:

ՈՐԴԻԱԿԱՆ ԱՄԵՆԱԽՈՆԱՐ[Ն] Ս[Ա]ՀԱԿ ԿԱՐԱՅՊԵՏԷՆ

1895, 17 Յուլիս

⁶³⁷ Այս վաւերագրի մէջ բարբառային ձեւերի եւ սխալագրութիւնների մեծաքանակ լինելու հանգամանքով պայմանաւորուած՝ ամբողջը շեղել ենք:

⁶³⁸ Հաւանաբար նկատի ունի կառավարութիւն:

⁶³⁹ Իմա՝ հայրենիք:

⁶⁴⁰ Հաւանաբար հայր բառը նկատի ունի:

⁶⁴¹ մնացինք

⁶⁴² Իմա՝ յէգ:

⁶⁴³ Այստեղ բաց ենք թողել անընթեռնելի մէկ ամբողջ նախադասութիւն:

⁶⁴⁴ Մեզ ձեռք մեկնել, օգնել:

(ՄՄ, ԽԿՖ, [թղթ. 103, վաւ. 53)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՆՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻՉ Ը.
ԿԸԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՅ**

**ԽՈՆԵՐՀԸԲԵՐ ԽՆԴԻՐ ՊՈԽԼԵՆԽՈՅ ՀԸՄՉԸՇԵՐ ԳԻՒՂԸՅԻ
ԸՍԸՏՈՒՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԵՒ ՍԵՐՈՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ**

Բարերա՛ր Տէր,

Ինն<ը> ամիսէ ի վեր ռուսական հողին մէջ դեքերելէ յետոյ, ընտանյօք կայանք առինք յԱլեքսանդրաքօլ, ուր մեր ընտանեկան դրութիւն դառն կացութեան ենթարկուած լինելով, ըստ ամենայնի ապրուստէ զրկուած լինելով, մեծ յուսով, խղճահար՝ Հօրդ կը դիմենք խնդրելով գլխութեան մի շնորհ[հ] անսուղ⁶⁴⁵ վիճակի մէջ մնացած զաւակաց վերայ:

*ՄՆԱՄՔ ԽՆ ԴՐԱՆԱՅՍ ՏՈԿԱՅՈՂ՝
ԱՍԱՏՈՒՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ԵՒ ՍԵՐՈՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ*

1895, 23 Յուլիս

Ս[ուրբ] էջմիածին

⁶⁴⁵ անօթի

ՄԵՋԻԹԼՈՒ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(MESCITLI)

Մէջիթլու գիւղը գտնւում էր Կոփ ավանից հինգ կմ դէպի արեւելք: Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում տեղացիները գիւղն անւանել են Մաջիթլու⁶⁴⁶, Մէջիթլու, Մաճուլու, Մաշտլու ձևերով: 1970-ական թուականներին ՀՀ ԳԱԱ Լեզուի ինստիտուտի բարբառագիտութեան բաժնի կազմակերպած դաշտային ուսումնասիրութիւնների համաձայն մեջիթլեցիներից ոմանք իրենց գիւղն անուանել են նաեւ Մաղտըլու կամ Մուշտլու⁶⁴⁷: Բենսէի մօտ հանդիպել ենք նաեւ Մաշտլու տարբերակին⁶⁴⁸: Տարածուած են եղել գիւղանուան Մեջիթլու, Մաճիթլու, Մաչիտլու, Մաշտի, Մաջիդլու, Մեճիտլու, Մեջետլու, Մեջիթլի, Մեջիտլու, Մեջիդլու, Մեսջիդլի, Մաշտլուոց⁶⁴⁹, Մալթլու (Maltlu)⁶⁵⁰ տարբերակները:

Օսմանեան ռազմական քարտէզում տեղավայրը նշուած է Մեսջիդլի (Mesdjidli)⁶⁵¹, որը պահպանուեց նաեւ Քեմալական Թուրքիայի՝ ամբողջութեամբ թուրքաբնակ⁶⁵² Մեջիթլու գիւղում⁶⁵³:

Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով 1871ին այստեղ բացուել էր դպրոց, որն ունէր 25 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ տէր Կարապետ քահանայ⁶⁵⁴:

Վերապրողների վկայութիւնների համաձայն՝ գիւղում պահուել է երկու ձեռագիր Աւետարան՝ «Շէկ Աւետարան» եւ «Գէնճէ Աւետարան»: Ամենայն հաւանականութեամբ նշուած Աւետարանները չեն փրկուել, քանի որ վերապրողի վկայութեան համաձայն բռնի տեղահանութեան ընթացքին քրդերը եւ համիդիէ զօրաջոկատները տները նախ թալանել էին ապա՝ հրդեհել⁶⁵⁵:

⁶⁴⁶ ՄՄ, ԽԿՖ, քղթ. 104, վա. 445, նամակագիրներ՝ Մանուկ Յարութիւնեան, Ալմաստ Յարութիւնեան:

⁶⁴⁷ Հայկական ժողովրդական հեփիաքներ, կազմողներ՝ Հակոբյան Ն., Սահակյան Ա., Երեւան, 1980, էջ 275:

⁶⁴⁸ Բենսէ, Բուլանլի կամ Հարֆ գաւառ, էջ 30:

⁶⁴⁹ Գործածուած է սեռական հոլովով:

⁶⁵⁰ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁶⁵¹ Erkân-i Harbiye-i Umumiye ...:

⁶⁵² <https://nisanyanmap.com/?y=%C3%9C%C3%A7tepe&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁶⁵³ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928, էջ 416:

⁶⁵⁴ Սասունի Վ., 2013, էջ 247:

⁶⁵⁵ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 441, քթ. 9–12, ըստ՝ Հայոց Ցեղասպանություն..., էջ 191–193:

Իբրեւ պատերազմական տուրք հայերը Օսմանեան կառավարութեանն են վճարել «840 ոչխար, 1400 քիլէ ցորեն, 630 քիլէ գարի, 700 սայլ ցան ու յարդ, 270 փուտ իւղ, 60 փուտ բուրդ, 40 ճոպան, 67 ձեռք անկողին, 240 թաղիք, 2000 զոյգ գուլպայ եւ տրեխ. 1070 զոյգ ձեռնոց, 890 թեռ, 2070 փուտ բլղուր, 56 սայլ՝ իրենց եզներով: Բացի այդ, գտնուելով Կոփ-Մանազկերտ ճանապարհի վրայ, ամէն օր կերակրել են 150ից աւելի զինուորները»⁶⁵⁶:

Նախքան Հայոց մեծ եղեռնը Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Մէջիթլու (Maltlu) գիւղում բնակւում էր 195 տուն⁶⁵⁷ կամ 850 հայ⁶⁵⁸: Նրանցից Արեւելեան Հայաստան են հասնում միայն 35 տուն մէջիթլեցի: Մնացածները մասին որեւէ տեղեկութիւն յայտնի չէ: Փրկուածները հաստատուել են Մոլլա-Ղասիմ (ներկայիս Զովունի) եւ յարակից այլ գիւղերում⁶⁵⁹: 1916ի մայիս ամսին Մէջիթլու են փորձել վերադառնալ մօտ 20 փախստական հայ⁶⁶⁰:

Մէջիթլուում է ծնուել բանաստեղծ եւ արձակագիր Վահան Արմենակի Գրիգորեանը (1905–1989), որ տարբեր որբանոցներում լինելով 1920ին մէկ անգամ էլ գերեզմարւում է Ալէքսանդրապոլ ներխուժած թուրքական զօրքերի կողմից⁶⁶¹:

Մեծ եղեռնից մազապուրծ փրկուած միայն մէկ հայ որբ է արձանադրուած «Համբաւաբեր» թերթի յաւելուածում՝ հինգամեայ Նազիկ Հայրապետեանը⁶⁶²:

⁶⁵⁶ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 441, թթ. 9–12, ըստ՝ Հայոց Ցեղասպանություն..., էջ 191–193:

⁶⁵⁷ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁶⁵⁸ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁶⁵⁹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 441, թթ. 9–12:

⁶⁶⁰ Նոյն տեղում:

⁶⁶¹ Հայկական Սովետական հանրագիտարան, հտ. 3, էջ 227:

⁶⁶² «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 23:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 37)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹՅԱՆ ՍՐԲԵԼՁԱՆԵԳՈՅՆ
ԿԼԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ ՊԵՏՈՒԵԿԵՆ ՀԵՅՐԵՊԵՏԻ ԸՄԼԵՆԵՅՆ ՀԱՅՈՅ
ՏԵԼԵՌՆ ՏԵԼԵՌՆ ՄԿՐՏՁԻ
ՊՈՒԼԵՆԸԻՈՒ ՄԼՁԻԹՎՈՒ ԳԻՒՂԵՅԻ ՆԵՊԻ ՊՐԷՀԻՄԵՆՅԷ**

Խոնարհական խնդիր

Ա[ստուա]ծընտի՛ր Հովուապետ,

Մեր խոնարհական խնդրազարկին Վեհափառութեանցդ ներկայացնելէ 12-
օրն անցաւ, որոց պատասխանին դեռ անձկանօք կսպասիմք:

Վեհ[ափա՛ռ] Տէր, մեր խնդրանք ուրիշ ակնկալութեան հ[ա]մ[ա]ր չէ, եւ
ոչ ալ դրամի օգնութեան: Մեր հայցուածը հոգեւոր է: Ես՝ նուաստ[ս], ինչ-
պէս մի առ մի յիշած եմ նախորդ խնդրազարկս, հեռու ճանապարհէ դիմե-
ցիմք, եկամք՝ ձմերնային բոլոր նեղութիւն[իւ]ն ոչի՛նչ համարելով, միա՛յն թէ
Ս[ուրբ] Երրորդութիւն անուամբ մկրտէ՛ք, եւ Ձերին Քրիստոնէական
ճշմարիտ հաւատոյ Առաքելական Ս[ուրբ] Եկեղեցւոյ որդի կանչուելու
բաղդ ունենամ, եւ՝ փրկուիմ:

Ուստի այսօր հասուցած եմ զիս Ձերին Վեհափառութեան ոտք. միա՛յն
թէ մկրտուիմ՝ բաւական է, որով անմիջապէս կը հաւատամ. մկրտուելովը
հոգով փրկուած եմ:

Ապա թէ ոչ՝ Ձերդ Ս[րբ]բազան ներկայութեան զիս արժանացնելով
քննեցէ՛ք... եւ ըստ այն՝ մկրտէ՛ք:

Եթէ արժանի եմ՝ եղիցի...

Թէ ոչ՝ թո՛յլ տուք մեզ դառ ի սրտի հեռանալ:

*ՄՆԱՄՔ ՁԵՐԴ ՎԵՀՈՒԹԵԱՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԿԵՆԱՅ
ԱՆԱՐԺԱՆ ԱՂՕԹԱՐԱՐ Ա[ՆԱՐԺԱՆ] Ծ[ԱՌԱՅ] ՆԱՊԻ*

Եր. Մարտ, 1896

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՈՒԹԵԱՆ Տ[ԵԼ]ՈՒՆ Տ[ԵԼ]ՈՒՆ ՄԿՐՏԻՉ
ԸԶԳԵՍԷՐ ԵՒ ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ**

ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԸՅՈՅ

ՊՈՒԼԵՆԸԻՈՒ ՄԸՋԻԹՂՈՒ ԳԻՒՂԻ ԳԵՂԹԵԱՆԵՐ

ԱՅՆ Է՛

ՄԱՐԳԱՐ ԳԵՈՐԳԵԱՆ (7 ՇՈՒՆՉ):

ՄԵԼԻՔ ՄԻՆԱՍԵԱՆ (6 ՇՈՒՆՉ):

ՍԱՐԳԻՍ ԱՍՊԱՏՈՒՐԵԱՆ (6 ՇՈՒՆՉ):

ԽԱԶՕ ՅԱԿՈԲԵԱՆ (8 ՇՈՒՆՉ):

ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ 27 ՇՈՒՆՉ

ՎԵՀԱՓԱՎՈՒ ՀԱՅՐԻԿ,

Այս վեց ամիսէն աւելի է, որ Աղէքսանդրապօլս մէջ կը բնակինք: Եթէ անդէն Ձերին վեհօրէն հրամայէր Կառնեայ Թագա գիւղ, բայց այնտեղի օղը մեր տղեքներու վ[ե]ր[ա]յ չեկա՛ւ: Վասնզի սկսան հիւանդանալ: Անոր հ[ա]մ[ա]ր եկանք այստեղ: Իսկ այս տեղիս, Վեհ[ա]փա՛ւ տէր, քաղաք է. ի՞նչ արհեստ բանացնենք, որ մեր ընտանեաց ապրուստը ըստ ամ[ենայն]ի հոգալէն յետոյ, մեր հոտած տներու վարձք տանք: Այդ անհնար է, չենք կարօղ:

Վեհ[ա]փա՛ւ Տէր, խորհեցանք առ այս, որ չենք կարող մի տեղ փոխադրուիլ, եթէ Ձերին Վեհափառութեան հրամանով չը լինի՝ ինչպէս առաջ: Զի Դուք էք մեր հոգեւոր հովուապետ եւ մեր ազատարար Մովսէս: Ձերին Վեհափառութեան շնորհն է, որ կապրինք եւ ազատ շունչ կառնինք երեկ եւ այսօր եւ յաւիտեան:

Անոր հ[ա]մ[ա]ր դիմեցինք Վեհօրէնդ՝ իմացնելու մեր այս դառն նիւթական անապահովութեան հ[ա]մ[ա]ր կրած անձուկն: Դուք գիտէք վասն զի Ձեզ ենք ///՝ մեզ այսօր մի ապահով գիւղ խրկէք, որ կարօղ լինինք ապրել, եւ ժողովուրդ բանիմաց մարդիկ լինին: Եթէ Շիրակայ գաւառի գիւղերէն կամենամ ամէն մի գիւղը 20-30 տուն գաղթական լեցուած է, ուստի կը խնդրեմք, որ Կառնուայ գիւղերու վ[ե]ր[ա] բաժանում ընէ[ք]՝ գեթ այս ձմեռ գլուխ հանէն[ք], վասն զի ո՛չ մի ապրուստ չունինք:

Ամենախորին ակնածութեամբ մատչիմ համբոյր աջոյդ վեհօրէն:

Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ]՝ ՄԱՐԳԱՐ ԵՒ ԸՆԿԵՐՔ

**ՎԵՀԵՓԸՌՈՒ ՏԷՐ ԽՄ,
Ս [ՈՒՐԲ] ԳԵՐՇԱՊԵՐԵՅԴ ՄԵՏՉԻՄ ՀԵՄԴՈՒՐ**

Արդէն մեր երկիր ի՞նչ դրուծեալն մէջ է, եւ ի՞նչ յարստահարութիւններ կայ. Վեհափառութեանդ յայտնի է: Միըստմիոջէ գրելս յաւելորդ է: Միմիեան նոյն յարստահարութիւն մեր վրայ հասնելով, զմեզ ալ 2 անգամ կողոպտէցին, եւ նոյն պատճառաւ երկու ձեռքս **սաղըթուաւ**⁶⁶³:

Վասն զի ձիում հ[ա]մ[ա]ր երեկոյե[ա]ն ժամանակին մեր տան վրայ եկան: Իմ անջա ազատելու հ[ա]մ[ա]ր փախայ, որ ուրիշ գիւղ մը էրթամ: Բուքի սաստկութենէն մոլորէցա[յ], գիշեր դուրս մնացի, ձեռքերս մռսաւ:

Դատարան գնացի՝ բողոք տուի: Ասոր վր[ա]յ քուրտեր սաստիկ բորբոքուեցան, թէ մեր վր[ա]յ բողոք կուտաս: Ըսկսէցին մեր յետեւէն ինալ⁶⁶⁴:

Օր մ[ը], երկու, երեք, ամէն օր գիշեր մեր տուն կուգա[յ]ին: Չը կրցանք դիմանալ: Վէրուցի⁶⁶⁵ մեր երախաներ՝ այս կողմ եկայ: Հիմա Բէրնա⁶⁶⁶ գիւղ կու մնամ: Ամուսին չունիմ: Միան հինգ հատ մանր երախա[յ] ունիմ: Ես ալ դիմէցի Վեհափառութեանդ, թէ օգնու[թիւն]ի կու կարօտիմ:

ՄԱՃՏԼՈՒ ԳԻՒՂԱՅԻ

⁶⁶³ Sakat, քրք., անկեալ, այստեղ՝ անդամալոյծ դառնալ:

⁶⁶⁴ Բրբ.՝ ընկնել:

⁶⁶⁵ Բրբ.՝ վերցնել:

⁶⁶⁶ Բէրնա, Բէռնա, Բեռնա՝ գիւղ Այրարատի Վանանդ (Կարս) գաւառի մէջ:

ՄԵՐՊԱՐ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ÜÇTEPE)

Հայաբնակ Մերպար գիւղը ընկած էր ձորի մէջ՝ Կոփ աւանի մերձակայքում: Շրջակայ բլուրների վրայ պահպանուած էին մնացել հին բերդերի մնացորդներ: Տեղական աւանդազրոյցների համաձայն այս բերդերը պատկանել էին երկու եղբայրների, որոնք, լինելով հայ իշխաններ, հիմնել էին այսՀայաբնակ գիւղը: Աւագ եղբօր՝ Միհրդատի (Միտրդատ) անունով էլ գիւղը կոչուել էր Մերպար⁶⁶⁷:

Անցեալ դարի 60-ական թուականներին արուած ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ այստեղ կան ուրարտական շրջանից մնացած հարուստ արձանագրութիւններ⁶⁶⁸:

1556ի Խնուսի լիւայի գրանցամատեանում այս բնակավայրը նշուած է էմիր-բար (Emir-bar) եւ Ռըբաթ (Ռըբաթ) տարբերակներով՝ որպէս 15 շունչ ունեցող, զուտ Հայաբնակ գիւղ⁶⁶⁹: Օսմանեան աղբիւրներում հանդիպել ենք նաեւ էյմիրբար, Միրբար, Լեբար, իսկ հայերէն աղբիւրներում Միրզար⁶⁷⁰, Միթիպար⁶⁷¹ տարբերակներին⁶⁷²: Ինչ վերաբերում է 1914ի ռազմական քարտեզին, այստեղ այն նշուած է Միրբար (Mirbar) ձեւով⁶⁷³: Այս անուանումը պահպանուեց նաեւ Քեմալական թուրքիայում⁶⁷⁴: Այժմ բնակավայրն անուանափոխուած է, կրում է Իւշթեփէ (Üçtepe) թուրքական անունը եւ ամբողջութեամբ քրդաբնակ է⁶⁷⁵:

Մերպար գիւղում Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով 1871ին բացուել էր դպրոց, որն ունէր 20 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ Յարութիւն

⁶⁶⁷ Բաղայան Գ., Արեւմտյան Հայաստանի Պատմաժողովրդական նկարագիրը Մեծ եղեռնի Նախօրեին, «Վէմ», համահայկական հանդես Բ. (ԺԳ) տարի, թիվ 3 (35), հոկտ-սեպտեմբեր, 2016, էջ IX:

⁶⁶⁸ Burney C. A., Urartian Fortresses and Towns in the Van Region, Anatolian Studies, 1957, Vol. 7 (1957), էջ 40, 43:

⁶⁶⁹ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 16:

⁶⁷⁰ Նամակ Բոլանդղից, «Դրօշակ», հմր. 12, էջ 9:

⁶⁷¹ Թէդիկ, Գողգոթա, էջ 100:

⁶⁷² 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 34:

⁶⁷³ Erkân-i Harbiye-i Umumiye...:

⁶⁷⁴ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416:

⁶⁷⁵ <https://nisanyanmap.com/?y=%C3%9C%C3%A7tepe&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

Տ. Կիրակոսեան⁶⁷⁶: Գիւղում գործում էր Ս. Ստեփանոս անուանով մէկ եկեղեցի⁶⁷⁷:

Պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն նախքան Հայոց մեծ եղեռնը այստեղ ապրում էր 472 հայ⁶⁷⁸: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Մերպար գիւղն ունէր 50 հայ ընտանիք՝ 772 բնակչով⁶⁷⁹:

Մեծ եղեռնի հետեւանքով որբացած եւ տարբեր ապաստարանների խնամքին են յանձնուել մերպարցի 3 որբ. 5 տարեկան Զողան⁶⁸⁰, 6 տարեկան Խաչէեան Սինամը⁶⁸¹ եւ 15 տարեկան Տոնոյեան Արշակը⁶⁸²:

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 102, վաւ. 682)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՌՈՒԹԵԱՆ ՆԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԵԱՐԻ ԵՒ
ԸՆԳՎԵՆՈՒՐ ՀԵՅՐԵՊԵՏ ԼՄԵՆԱՅՆ ՀԵՅՈՅ ՏՆԵՂՈՒՆ
ՏՆԵՂՈՒՆ ՄԿՐՏԻՉ ՍՐԴԵԼՋՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ
ՊՈՒԼԵՆԸԻՒՄ ՄԵՐՊԵՐ ԳԻՒԴԻ ԲԵԼԿԻՉ ՄԵՆՈՒԿ ՄԵԴՈՆԵՆՅԷ
Յաւալի աղերս**

Վեհափա՛ռ Հայրապետ,

Երեկ Վաղարշապատ գիւղս հասնելուս պէս, այսօր աճապարեցի Ձերի Վեհափառութեանն ոտք գիւն] ձգել:

Տէ՛ր Վեհ[ափառ], եթէ սոյն վերջի քանի տարուան կրած բնական աղէտները մի առ մի թէ պատմեմ, կարծեմ գրչի կարողութենէ վեր է: Միայն սա կասեմ, որ այսօր աղքատաց շարքին ամենաթշուառ ես ինքս եմ: Վ[ա]սն զի ինչ որ ունէինք՝ բոլոր քուրդ տարաւ, եւ անով չը բաւականացաւ: Այսօր հետեւէս ինկած զիս մահացնելու կաշխատին: Անոր հ[ա]մ[ար] թողեր եմ 12 թշուառ գերիներ՝ ի տան սոված: Եւ զիս այս կողմը ձգեցի ո[ր]պ[ես] թէ ազատուիմ:

Մեծ եղբայրս երեք տարի առաջ Կարս բռնուեցաւ եւ իրեն ընկերներով ազգին զոհ եղաւ, որ այժմ Սիպիրն է:

⁶⁷⁶ Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 247:

⁶⁷⁷ <https://www.houshamadyan.org/>, Պոպանըխի ֆազա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

⁶⁷⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁶⁷⁹ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁶⁸⁰ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 19:

⁶⁸¹ Նոյնի Յաւել. հմր. 27:

⁶⁸² Նոյնի Յաւել. հմր. 41:

Իսկ հայրս ն[ո]րա ետեւէն եկած է այս կողմ: Եւ հիմայ չը գիտեմ ո՞ղջ է, թէ՛ մեռած:

Ասոնց ընտանիքը 12 *նաֆարի* կը հասնի: Պարտատէրերը, անտիէն մնացած թէ հող եւ թէ անասնեղէն, բոլոր խլեցին առին:

Վեհ[ափա՛ռ] Տէր, երեսանկեալ կաղաչեմ մի խնամ տարէք մեր այն ողորեւիկներուն, որպէսզի այն մօտալուտ պատուհասներէն թերեւս ազատուինք, որ աչքերնիս իմ ճանապարհին յառած կսպասին դարձիս...

Օգնեցէ՛ք... կաղաչե՛մ, գթառա՛տ Հայր:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿԵԱԾՈՒԹ[ԵԱՄԲ] ՄԱՏՁԻՄ

ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱՐԴՕԵԱՆՅ

1894 – 18 Օգոս[տոս]

ի Վաղարշապատ ի Ս[ուր]բ Էջմիածին

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 101, վաւ. 152)

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԼՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻԶ

ՍՐԵԸՋՆԸԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԸՅՈՅ

Խնդիր

Առ ողորմա՛ծ Հայրիկ,

Արդէն Վեհափառութիւնդ քաջ գիտէ Տաճկահա՛խաստանի ցաւալի վիճակ, զորս հազարաւորներ զոհ գնացին ի փառս ուղղափառ ս[ուր]բ հաւատոյն, զոր եւ ես՝ մեղսամածս, հազի՛ւ թէ գերծայ նոյն վիճակէն՝ անց կենալով ի Ռուսիայ, որ այժմ Հայթաղ ըստած գիւղում բնակում եմ հանդերձ եօթն ընտանեօք:

Ո՛չ հաց, ո՛չ վառելիք, ո՛չ տեղաշոր եւ ո՛չ հագուստ, որոնցմէ բոլորովին զուրկ եմ: Վասն որոյ երես անկեալ աղաչեմ յիշեալ տառապելոց մասին զանց չառնէք, որովհետեւ բառական⁶⁸³ գերդաստանի տ[է]ր [եմ] եւ չունիմ ոչ ոք աշխատող եւ ութանասունամեա[յ] ծեր [եմ]: Ոչ կարող եմ աշխատել եւ ոչ մի կերպով ձգտել աստ եւ անդ: Տարակոյս չկայ՝ պիտի չմոռանայ Ձեր ազգասիրական հոգին իւր անճար տառապեալքն, որոնք կարօտ են Ձերդ առատ ողորմութեան:

*ՄՆԱՄՔ ՁԵՐԴ ՅԱՆԿԱԼԻ ԿԵՆԱՅ ԱՂՈԹՈՂ ԵՒ Վ[Ա]ՍՆ
ՄԵՐ ԱՊԱԻԷՆ՝ ՊՈՒԼԱՆԸԽ ԳԱԻԱՌԻ ՄԵՐՊԱՐ ԳԻՒՂԻ
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՎՏԱԼ՝ ՅԵՏՆԵԱԼ ԹՇՈՒԱՌ*

1897, Մ[այ]րտ 20

⁶⁸³ Իմա՝ բաւական:

ՄԱԼԱՔԵԱՆԴԻ ԳԻՒՂ/ՁՈՐԱԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(MOLLAKENT)

Մոլաֆանդ, Մոլլաքեանտ, Մոլլաքենդ, Մոլլա-Քենդ, Մալաքանդ, Մալաքեանտ անուններով յայտնի գիւղն ընկած է Լիզ աւանի հարաւարեւելեան կողմը, Նազիկ լճից մօտ 11 կմ հիւսիս-արեւմուտք: Այս բնակավայրը ձորի մէջ տեղակայուած լինելու պատճառով կոչուել է նաեւ Ձորագիւղ (Դէրէքէնթ): Գիւղում գործել է Ս. Յակոբ անունով եկեղեցի⁶⁸⁴:

Օսմանեան կառավարութեան վարած հակահայկական քաղաքականութեան արդիւնքում Ձորագիւղում տիրապետող են դառնում քուրդ ազդեցիկ չէյխերն ու մոլլաները, որոնք ձեռք բերելով կայսրական կալուածաթղթեր (էվգաֆի հիւսնայիլ գոչանի) գիւղն անուանել են Մոլլա-քենտ, իբրեւ մոլլայի գիւղ⁶⁸⁵: «Էվգաֆի-գոչաններով» գրաւուած եւ անւանափոխուած հայկական գիւղերի թիւը բաւական մեծ է⁶⁸⁶:

Արեւմտեան Հայաստանի բուն հայկական բնակավայրերի թուրքերէն անուանումները գալիս են տիրապետող այս չէյխերի ձեռքն անցած կայսերական կալուածագրերից, որոնք նրանք հայթայթում էին զանազան կեղծ ու պատիր ձեւերով⁶⁸⁷:

Մկրտիչ Խրիմեանին ուղղուած նամակներում տեղացիներն իրենց գիւղն անուանել են Մոլլաքեանդ⁶⁸⁸, Մալաքանդ, Մոլլաքյանդ, Մոլաֆանդ անուններով: 1916ի ռազմական քարտէզում գիւղը նշուել է Մոլլաքենդ (Mollakend) ձեւով⁶⁸⁹, որը պահպանուեց նաեւ Քեմալական թուրքիսում (Molla quend)⁶⁹⁰:

1894–1895 թթ. արդուլհամիդեան կոտորածների հետեւանքով մալաքեանդցիները, միւս գիւղերի հայութեան պէս, սկսում են կամաց-կամաց գաղթել շրջակայ գաւառներ, ումանք՝ դէպի Կովկաս⁶⁹¹: Ինչպէս վերեւում

⁶⁸⁴ Մանասեան Գ., Բուլանըղի կոտորածը, «Համբաւբեր», 1917 թ., հմր. 6, էջ 142–143:

⁶⁸⁵ Նոյն տեղում:

⁶⁸⁶ Նոյն տեղում:

⁶⁸⁷ Նոյն տեղում:

⁶⁸⁸ ՄՄ, Խկֆ, թղթ. 102, վաւ. 593, նամակագիր՝ Մեկիֆ Եղիազարով:

⁶⁸⁹ Erkân-i Harbiye-i Umumiye....:

⁶⁹⁰ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 417:

⁶⁹¹ Մանասեան Գ., Բուլանըղի կոտորածը, էջ 142–143:

նշեցինք, սա տեղի էր ունենում մինչեւ 1915ը շարունակուող հարստահարութեան հետեւանքով, որն արտայայտուում էր յատկապէս հողերի բռնագրաւումով:

Հողային յափշտակութեան ձեւերը իրենց բազմազանութեան հետ մէկ-տեղ բաժանուում էին մի քանի խմբի. Ա) մուրհակաւոր, սալաֆով կամ մարաբայութեամբ (առեւտուրի վատ տարբերակներ), Բ) ապօրինի իւմուհաբէրներով (ստացագիր) կամ չինծու մուրհակներով, որի ժամանակ հողն առգրաւում էին նոյնիսկ տիրոջ բացակայութեան ընթացքում⁶⁹²: Սա իրականացուում էր հիմնականում եղած վկայաթղթերի զանգուածային կեղծման ճանապարհով:

Այս ձեւով հողային յափշտակումներ տեղի ունեցան նաեւ Մալաքեանդ գիւղի մէջ եւս: Հասնանլը Սիւլէմանի Յուսուֆ աղան՝ 80 ոսկիով իւրացնում է Ռէս Յարէ Պետրոսեանի 1000 ոսկի գնահատուած հողերը՝ կեղծ կնիքներ պատրաստել տալով: Ապա նոյն ձեւով խլում է նաեւ նրա անասունները⁶⁹³:

Յափշտակումները յատկապէս մեծ թափ էին ստացել 1895–1896ի համիդեան կոտորածների ընթացքում: Այս քաղաքականութեան արդիւնքում հայերն ի վիճակի չլինելով մնալու իրենց երկրում՝ սկսում են գաղթել: Ըստ տարբեր աղբիւրների 1915ի Մեծ եղեռնից առաջ գիւղում կար 31–37⁶⁹⁴ տուն (253⁶⁹⁵–318 անձ) հայ եւ 150 տուն քուրդ բնակչութիւն, որոնք ոչ միայն գրաւել էին վաղ գաղթածների տները, օջախն ու այգին, այլեւ մեծ իշխանութիւն ունէին մնացեալ հայ բնակչութեան վրայ⁶⁹⁶:

Գիւղի կոտորածների մասին տեղեկութիւնները մեզ է հասել տեղաբնիկ, ականատես Ղազար Մանուկեանի վկայութեամբ: Լիզ գիւղի սոսկալի կոտորածը տեսնելով Ալազեազ գիւղի թուով 30 քուրդ Կօթոյի եւ Սալմանի իծալոյ անունով անձանց գլխաւորութեամբ գալիս են գիւղ: Հաւաքում են հայ բնակչութեանը, մարդկանց կահ-կարասին ու տանում Ալազեազ, որպէսզի ազատեն կոտորածից: Երբ այս մասին տեղեկանում է Աբրիի շէյխ Սլէն եւ մալաքեանդցի շէյխ Ֆէթուլլահը անմիջապէս բողոքագրերով դիմում են բանակի հրամանատար հաջի Համտի փաշային՝ Ալազեազում ապաստանած հայերին կոտորելու հրաման ստանալու պահանջով⁶⁹⁷:

⁶⁹² Տէր Կարապետեան Գ., Հողային հարցը..., էջ 8:

⁶⁹³ Նոյն տեղում, էջ 9:

⁶⁹⁴ Առապետ, Բուլանըկ, հմր. 214:

⁶⁹⁵ Մարտիրոսեան Ն., նշ. աշխ.:

⁶⁹⁶ Մանասեան Գ., Բուլանըկի կոտորածը, էջ 142–143:

⁶⁹⁷ Նոյն տեղում:

Փաշան Ալադեազ է ուղարկում Ֆէթուլլահ չաուշին՝ 15 ժանդարմի (իմա՝ թեչքիլաթ-մախսուսայի ջարդարար, Վ. Ս.) ուղեկցությամբ, որոնք տանջանքների ենթարկելով այս մարդկանց՝ սպանում են: Այս գիւղից ազատում է միայն 51 ծեր կին ու երեխայ, որոնք ապաստանել էին զանազան գիւղերում⁶⁹⁸:

Մեծ եղեռնից առաջ մալաքեանդի հայերն ունէին 318 բնակիչ, 367 եզ, գոմէշ, մատակ եւ այլ մեծ եղջերաւոր անասուններ, 369 ոչխար, 19 ձի եւ էշ, 9253 կօտ հորումած ցորեն եւ այլ հացահատիկ, մէկ փայտաշէն եկեղեցի, մէկ դպրոց, մէկ ձիթհանք եւ 5 ջրաղաց, 4560 կօտ սերմ պարունակող ընդարձակ եւ բերրի վարելահող, որոնք բոլորն էլ մնացին քրդերին⁶⁹⁹:

Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Մալաքեանդ գիւղն ունէր 70 հայ ընտանիք՝ 457 բնակչով⁷⁰⁰:

Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում պահուող նամակներում նկարագրուած են 1895–1896 թթ. Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածներն ու արհաւիրքները, անտանելի կացութիւնն ու գաղթելու համամանքները:

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 103, վաւ. 21)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՌՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԶԻ
ՍՐԲԸՋԵԱԳՈՅՆ ԿԼԹՈՂԻԿՈՍԻՆ ԼՄԵՆԱՅՆ ՀԸՅՈՅ ԵՒ
ԾԵՅՐԵԱԳՈՅՆ ՊԵՏՐԵԱԳԻ ՆԵԽԼՄԵԾԵՐ ԸԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
ԷՋՄԵԾՆԵՒ**

**ՄՇՈՒ ՆԵՀԵՆԳԻ ՄՈՒՀՀՔԵՆԳԻ ԳԻԴԴԻ ԾԽԵՏԵՐ ՅՈՎՀԵՆՆԷՍ
ԲԵՀԵՆԵՅ Տ[Է]Ր ՊԵՏՐՈՍԵԱՆԵՅ**

Խնդիր

Ինչպէս յայտնի է Վեհ Օծութեանդ, ասպատակուելով քրտերից եւ համէտեայ զօրքերից, թողինք տուն, տեղ եւ կալուած, հազիւ կարողացանք Գաղտնի փախչելով Ռուսաստան՝ ազատուել: Այժմ անդաստական թափառում ենք՝ խեղճ, մոլոր, քաղցած եւ մէկ կտոր չոր հացի կարօտ:

⁶⁹⁸ Մանասեան Գ., Բուլանդի կոտորածը, էջ 142–143:

⁶⁹⁹ Նոյն տեղում:

⁷⁰⁰ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

Վեհափա՛ռ Տէր, թէեւ բազմիցս աշխատեցայ մի կերպ գնալ հայրենիք, որպէսզի մի կերպ կարողանայի գոնեայ տունս ձեռք բերել, բայց եւ այնպէս մեծամեծ դժուարութիւնների հանդիպեցայ եւ մինչեւ անգամ այդ մասին երբ եկայ Կարին՝ փաշին բողոքելու, քրտերն, հետամուտ լինելով ինձ, կամենում էին սպանել. թողի փախայ դարձեալ Ռուսաստան: Այժմս բնակւում եմ Շիրակայ Քորակտարայ գիւղում: Գերդաստանս բաղկացած է 28 շնչից. մեծամասնութիւնն երեխայ են:

Ինչպէս յայտնի է Օծութեանդ, մեզ նմանների թիւն շատացել է, տուրք ողորմութիւնն նուազել են, մնացած ենք խեղճ, աւուր պարէնի կարօտ:

Ուստի աղերսելով պաղատում եմ՝ ս[ուրբ] գարշապարդ համբուրելով՝ ի նկատի ունենաք իմ տառապեալ եւ թշուառ գերդաստանի դրութիւնն, առնէք տնօրէնութիւն: Եթէ հնար է, ճանապարհածախսս տաք, գնամ հայրենիք, կամ թէ չէ մի որ եւ իցէ տեղ նշանակէք քահանայապօրծութիւն անելու, որպէս զի կարողանամ գերդաստանս կառավարել:

ՏէՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏէՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*Ի 11ն Յուլիսի, 1895 ամի
յԱխալքալակ*

(ՄՄ, ԽԿՖ, [Թղթ. 102, վաւ. 689])

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹԻՒՆ ՏԵ[ՄՈՒ]Ն ՏԵ[ՄՈՒ]Ն ՄԿՐՏԻՉ
Ս[Ր]ԲԸԶՆԵԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ ԼՄ[ԵՆԸՅՆ] ՀԸՅՈՅ
ՊՈԽԸՆԸՂՈՒ ՄԼԼԵՔԸՆԴ ԳԻՂԻ ԲՆԸԿԻՉ ԳԸԶՊԸՐ ՄԸՆՈՒԿԸՆԷ:**

Խոնարհական խնդիր

Պաշտելի՛ Հայրիկ,

Նուաաստ, որ 45 տարեկան հասակը մտած եմ, աչքի լուսէ տկար անձ մ'եմ:

Ունիմ անհաշիւ պարտք, որ կարծեմ 30–40 ոսկիէն աւելի է: Թէեւ հողերն բոլոր պատանդ դրի, դարձեալ 10–15 ոսկի կը մնայ: Ուրիշ բնութե[ա]ն բարիքներէ զուրկ եմ, վ[ա]սնզի բռնի բոլոր յափշտակեցին: Վերջապէս ստիպուեցայ 9 գերիները թողուլ այնտեղ եւ փախչել: Ուստի այսօր ն[րան]ք այնտեղ մերկ, ծարաւ նստած, իսկ ես՝ այս կողմ՝ անտուն, քաղցած յօտարութե[ա]ն թափառեմ:

Վեհ[ափա՛ռ] Տէր, կաղաչեմ երեսանկեալ՝ նայէք ի մեր թշուառութեան, մեզ մի խնամք, մի մարդասիրական օգնութեան ձեռք կարկառէք, որ թողումք, գնամք այն հողին վրայ]՝ ուրկէ որ ելանք:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԱԿՆԱԾ[ՈՒԹԵԱՄ]Բ ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ՝
Ն[ՈՒԱՍՏ] Ծ[ԱՌԱՅ] ԳԱԶՊԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

1894, 15 թոստոս

ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պատ

ՆՈՐԱԴԻ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(NURETTIN)

Նորադի բնակավայրի տեղագրությունը ե՛լ աղբիւրներում, ե՛լ Մ. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում հակասական է⁷⁰¹: Արխիւում հանդիպել ենք երկու նամակի, որոնցից մէկը գրուած է Բուլանք գաւառի Նորադի⁷⁰², միւսը՝ Մանազկերտի Նորադին գիւղից⁷⁰³:

Մեզ հանդիպած միւս աղբիւրը Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի 1903 թ. «Ընդարձակ Օրացոյցն» է, որտեղ Բուլանք գաւառի եկեղեցիները բաժնում հանդիպում ենք Նորաշէն անունով գիւղ՝ Ս. Ստեփանոս եկեղեցով⁷⁰⁴: Հակուած ենք կարծելու, որ Նորաշէնը վաւերագրում մեզ հանդիպած Նորադին գիւղը կարող է լինել:

Կ. Սասունում⁷⁰⁵ եւ Թէոդիկի մօտ⁷⁰⁶ սակայն Նորադինը (Նորատին) ընդգրկուած է Մանազկերտի շրջանի մէջ:

Հիմք ընդունելով Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակը, ինչպէս նաեւ նոյնացնելով Նորադին/Նորաշէն գիւղերը, Բուլանք գաւառի մէջ ենք ներառում նաեւ Նորադին գիւղը, հաւանական համարելով, որ նոյն անունով գիւղեր եղել են երկու հարեւան գաւառներում էլ:

Ինչ խօսք, այս առումով չափազանց կարեւորում ենք տեղացիների վաւերագիր նամակները՝ ճշգրտելու համար վարչական առումով գիւղերի այս կամ այն գաւառին պատկանելու խնդիրը, եւ գիւղանունների ցանկերի առաւել ամբողջական եւ ստոյգ ներկայացնելու պահանջը, որն էլ սոյն հետազօտութեան մէջ մեր առջեւ դրուած գլխաւոր նպատակներից մէկն է եղել:

⁷⁰¹ Տե՛ս Հայաստանի եւ Հարակից շրջանների բառարան; Վերապրածների վկայություններ..., հտ. 2; **Բադալյան, Գ.**, Արեւմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին, մաս վեցերորդ; Բիթլիսի նահանգի հյուսիսային, արեւելյան եւ արեւմտյան գավառները, «Վէմ» համահայկական հանդես, Լ. (ԺԴ) տարի, թիւ 3 (55), հուլիս-սեպտեմբեր, 2016, հավելված, էջ XVIII; Պոլսանրգցի Կարապետ, «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 26:

⁷⁰² ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 244:

⁷⁰³ Նոյնի վաւ. 313:

⁷⁰⁴ «Ընդարձակ Օրացոյց» Սուրբ Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, տոմար, զանազան գիտելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ, Կ. Պոլիս, 1903, էջ 338:

⁷⁰⁵ Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 319:

⁷⁰⁶ Թէոդիկ, Գողգոթա, էջ 102:

Թիֆլիսի «Մշակ» թերթի փոխանցմամբ Առաջին աշխարհամարտից առաջ Բուլանըք գաւառի մաս կազմող Նորադին գիւղն ունէր 150 տուն հայ բնակիչ⁷⁰⁷: Հայոց մեծ եղեռնի ընթացքում այս գիւղից որեւէ հայ չի փրկուել⁷⁰⁸: Մենք ունենք միայն 3 որբի մասին տեղեկութիւն, որոնք հաստատուել են տարբեր ապաստարաններում: Այդ որբերն են. Զուլհակեան Ազատ՝ 5 տարեկան⁷⁰⁹, Զուլհակեան Սէյրան՝ 7 տարեկան⁷¹⁰, Զուլհակեան Սադաֆ՝ 12 տարեկան⁷¹¹:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 101, վաւ. 244)

ԽՆԴԻՐ ՆՈՐԻՆ ՀԸՅՐԸՊԵՏԻ ՍՐԲԸՋԸՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԸՄՖՆԸՅՆ ՀԸՅՈՅ

Մենք ի ներքոյ էջմիածնու գաւառի Տոխս գիւղի բնակիչներս ունենք վերաբնակեալ **գաղտական** <գաղտական> հայ ի Բուլանուլս գաւառի Նորատին գիւղացի: Իսկ կան մի տուն եօթը նափար, որ լինում են//// Ու ունի **որդիկ**՝ երից տղայք ու երկու աղջիկ փոքր, եւ կինն վախճանեալ: Եւ ունի առաջի որդի վեց տարեկան: Կամի ամուսնացնէլ, որովհետեւ չի կարողանում կառավարվել՝ ըստ պատճառաւ **երէխաօյց** փոքրութեանը: Այլ կամի ամուսնանալ: Այդ մասին եւ կամին օգնութիւն ձեզանից, ինչպէս չքաւորութիւն ունէնալով կը խնդրէն ողորմութիւն՝ այլ համարեայ ազատել ամէնայն մի **ազտէցութիւնից**:

ԱՌ ՈՐ ՍՏՈՐԱԳՐԵՄ՝ ՍԱՐԳԻՍ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ,
ՏՈԽՍ ԳԻՒՂԱՅԻ

Ի [18]97 ամի, 4 Մարտի
Լեւոն Յակոբեան

⁷⁰⁷ Ասրպետ, Բուլանըկ, հմր. 213:

⁷⁰⁸ Նոյնի հմր. 214:

⁷⁰⁹ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 25:

⁷¹⁰ Նոյն տեղում:

⁷¹¹ Նոյն տեղում:

(ՄՄ, ԽԿՖ, [թղթ. 102, վաւ. 591])

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԼՈՒԹԵԱՆ Ը[ՍՏՈՒԸ]ՆԸՆՏԻՐ ԿԼԹՈՒՂԱԿՈՍԻ
ԵՒ ՆԵՅՐԸԳՈՅՆ ՊԸՏՐԻԸՐԹԻ ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԸՅՈՅ
Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻՉ ՀԸՅՐԻԿԻՆ
ՄՇՈՅ ՆԸՀԸՆԳԻ ԲՈՒԸՆՈՒԹԻ, ՆՈՐԸԳԻ ԳԻՂԸՅԻ ԳԷՈՐԳ
ԳԸՄՊԸՐԵԸՆԷ**

Աղերսանօք խնդիր

Վեհափա՛ն Տէր,

Անցեալ տարի մեր գիւղի մէջ մէկ թուրք հարիւրապետ պաշտօնեայ ի
զուր ամբաստանելով եղբօրս վրայ, բանտարկել տուաւ ամբողջ մէկ տարի:
Այժմ արձակուած, բայց կիսամեռ տանն ընկած է: Մեր գերդաստանը բոլո-
րովին թալանուելով յիշեալ թուրքի ձեռամբ, 23 հոգին այժմ թշուառ դրու-
թ[եան] կան:

Ուստի դիմելով յոտա Վեհ[ափառ] տէրութեանդ՝ աղաչում եմ եւ
խնդրում եմ գթութիւն եւ ողորմութիւն, որքանով կբարեհաճին Սուրբ
կամք Վեհափառութեանդ:

1894 ամի, 18, Փետրուարի

ի Վաղարշապատ

ՇԵԽ ՅԱԿՈՒԲ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(GÜLLÜOVA)

Շեխ Յաղուբ գիւղը հիմնադրուել էր մօտաւորապէս 1750-ական թուականներին, Բաղրկան Սաֆար անունով տիգրանակերտցի մի հայի կողմից: 25 ջրաղացներով չէն ու հարուստ մի գիւղ էր⁷¹², որոնք գիշերուզօր աշխատում էին Խաչի լճից հոսող քչփչան վտակով⁷¹³:

Ձուտ հայ բնակչութիւն ունեցող այս գիւղն ընկած էր Կոփի հարաւարեւելեան մասում՝ Խաչի լճի հիւսիսարեւելեան ափի մօտ, Կոր-ջուր կամ Քոռ-ջուր գետի աջ ափին:

Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում գաղթականներն իրենց գիւղն անուանել են Շէխ Եաղուպ, Շէյխեաղուպ, Շէխաղուբ, Շեխ Եաղուպ, Շաղուբ անուններով⁷¹⁴:

Իւլանդացի աշխարհագրագէտ Հ. Լինչն այս բնակավայրն անուանում է Շէյխ Յակուբ (Sheikh Yakub) եւ նկարագրում որպէս նախկինում բարեկեցիկ, հարուստ հայկական գիւղ, որ ցաւօք իր այցելութեան ընթացքին ծայրայեղ աղքատութեան մէջ էր⁷¹⁵:

1928ին Քեմալական Թուրքիայում բնակավայրն հաշուառուեց ու արձանագրուեց Շէյխ Եակուբ (Cheih Yakob) անունով⁷¹⁶: Ներկայումս ամբողջութեամբ հայաթափուած է եւ կոչւում է Գիւլլիւօվա (Güllüova)⁷¹⁷:

Նախքան Հայոց մեծ եղեռնը այստեղ գործում էին երկու եկեղեցիներ Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ⁷¹⁸: Համաձայն Հայաստանի ազգային արխիւում պահուող նիւթերի, գիւղի եկեղեցին կոչուել է Ս. Թուխ Մանուկ, իսկ նախքան Հայոց մեծ եղեռնը տեղիս ծառայող հոգեւորականն էր Տէր Յովսէփը, իսկ Ս. Գէորգ եկեղեցու⁷¹⁹ ծառայող քահանան Տէր Դանիէլն էր, որը սպանուեց գաղթի ճանապարհին⁷²⁰:

⁷¹² Վերապրածների վկայություններ..., էջ 200–201:

⁷¹³ Բենսէ, Բուլանրիս կամ Հարֆ, էջ 25:

⁷¹⁴ ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 97; ՄՄ, խկֆ, թղթ. 104, վաւ. 75:

⁷¹⁵ H. F. B. Lynch, Armenia, v. 2, էջ 344:

⁷¹⁶ Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz..., էջ 416:

⁷¹⁷ <https://nisanyanmap.com/?y=G%3C3%BCII%C3%BCova&lv=&t=&u=1&ua=5>

⁷¹⁸ <https://www.houshamadyan.org/>, Պուլանրիսի ֆազա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

⁷¹⁹ Վերապրածների վկայություններ..., էջ 200–201:

⁷²⁰ Նոյն տեղում, էջ 198–200:

Գիւղը հարուստ էր ե՛ւ նիւթապէս ե՛ւ հոգեւոր մշակոյթով: Աղութի Մեւքոն, Տէր Յովան, Տօնի Յակոբ, Տէր Վարդան, Տէր Ղազար, սրանք այն շեխաղուբցիներն էին, որոնց տներում պահւում էր ընտանեկան հնարժէք, ձեռագիր Աւետարաններ, որոնք բոլորն էլ այժմ կորսուած են համարւում⁷²¹:

Մշոյ Ս. Առաքելոց վանքի ձեռագրացոյցակի համաձայն Շեխ Յաղուբ գիւղն ունեցել է երկու ձեռագիր Աւետարան (1681 թ., 1750 թ.)⁷²²:

19-րդ դարի երկրորդ կէսից գիւղում գործել է 2 դպրոց:

Ջնայած Մ. Միրախորեանը գրում է, թէ տեղիս Աւետարանական համայնքի հետեւորդները մի քանի տուն էին, սակայն աղբիւրների, ինչպէս նաեւ Հայաստանի ազգային արխիւի նիւթերի համադրմամբ պէտք է նշենք, որ 1869–1870ին այստեղ հիմնուել էր ամերիկեան ներդրումով երկսեռ վարժարան⁷²³՝ հայ Աւետարանական եկեղեցու հետեւորդների համար⁷²⁴, որն ունէր 60 աշակերտ: Սա յստակ թիւ է Աւետարանական համայնքի հետեւորդների թուի ճշգրտման համար:

Տեղիս միւս դպրոցն ունէր 100 աշակերտ եւ երկու ուսուցիչ՝ տարեկան 50 օսմանեան ոսկի բիւջէով⁷²⁵:

1915ի յուլիս 28ին Միրզա բէկի որդի Մուսա բէկը, Միրզա աղայի որդի Խալըֆ աղան, Այազ բէկի որդի Եոսսուֆ բէկը եւ Դարա բէկի որդի Խալըտ բէկը առաջնորդում են քուրդ ամբոխին եւ համիդիէ զօրքին դէպի Շեխ Յաղուբ եւ Կոփ: Գիւղը հերոսաբար դիմադրում է՝ մէկ օրում, սակայն, տալով 120 զոհ: Ժողովուրդը նահանջում է դէպի Մանազկերտ՝ դէպի ռուսական զօրք: Վախը սրտում, սովահար մինչեւ Կովկաս հասնելու ճանապարհին են մնում 250 շեխաղուբցի⁷²⁶:

1895–96 թթ. Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածների ընթացքն ու հետեւանքները շարադրուած են շեխաղուբցիների՝ Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում: Դրանցում աննկարագրելի դաժան իրականութեան մէջ ապրելու, ընտանիք պահելու եւ զաւակներ մեծացնելու կամքն է. «Միւս կողմէն երեկ եղբօրս որդիէն նամակ առայ, որ կինը ձեռքէն առեր թըրքացրեր են: Ինքն ալ վիրաւոր, իր երեք որդիով եկած

⁷²¹ Վերապրածների վկայութիւններ..., էջ 198–200:

⁷²² Մուրատեան Ս. Ա., Մարախրոսեան Ն., Յուցակ Ձեռագրաց..., էջ 220:

⁷²³ Esenkal Ebru, Yabancı Ülkeler Tarafından Osmanlı Coğrafyasında Açılan Okullar, 2007, էջ 18:

⁷²⁴ Վերապրածների վկայութիւններ..., էջ 198–200:

⁷²⁵ Նոյն տեղում:

⁷²⁶ Նոյն տեղում, էջ 200–201:

ինկած է Կարսի Փալատրուան գիւղ եւ ինձ իմաց է տուած, որ շուտով հասնիմ, տեսնիւք ինչպէս պիտի լինի մեր ճար...»⁷²⁷:

Մեծ եղեռնից առաջ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Շեխ Յաղուբ գիւղում բնակւում էր 1200 անձ⁷²⁸ կամ 200 տուն հայ⁷²⁹: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Շեխաղուբ գիւղն ունէր 200 հայ ընտանիք՝ 1.200 բնակչով⁷³⁰:

Թիֆլիսի «Նպաստամատոյց» ընկերութեան որբանոցի փախստական հայ որբերի մէջ կային շեխաղուբցի մի քանի որբ. Բաղդասարեան Արմենուհի՝ 12 տարեկան⁷³¹, Բաղդասարեան Գեղանոյ՝ 8 տարեկան⁷³², Եւնիկէ՝ 12 տարեկան⁷³³, Սապրօ՝ 11 տարեկան⁷³⁴, Յովհաննիսեան Ազիզ՝ 8 տարեկան⁷³⁵, Գալոյեան Մուշեղ՝ 10 տարեկան⁷³⁶, Մանուկեան Անգին՝ 10 տարեկան⁷³⁷, Մանուկեան Յովհաննէս՝ 8 տարեկան⁷³⁸, Մուրադեան Մխիթար՝ 14 տարեկան, Մուրադեան Ազնիւ՝ 16 տարեկան, Մուրադեան Զոհրաբ՝ 6 տարեկան, Մուրադեան Յովհաննէս՝ 1 տարեկան⁷³⁹ եւ այլք:

Շեխաղուբցիներին փրկուածները հաստատուել են էջմիածնի շրջակայ գիւղերում⁷⁴⁰, Դաշբուռում, Դարաչիչակում (Ծաղկածոր) եւ Աղբաբայում⁷⁴¹, Ալէքսանդրապոլում, Բամբակաձորում եւ այլուր:

⁷²⁷ ՄՄ, ԽԼՖ, թղթ. 104, վաւ. 74:

⁷²⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁷²⁹ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁷³⁰ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁷³¹ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յուլիոսի 19:

⁷³² Նոյն տեղում:

⁷³³ Նոյն տեղում:

⁷³⁴ Նոյն տեղում:

⁷³⁵ Նոյնի Յուլի. հմր. 23:

⁷³⁶ Նոյնի Յուլի. հմր. 26:

⁷³⁷ Նոյն տեղում:

⁷³⁸ Նոյն տեղում:

⁷³⁹ Նոյն տեղում:

⁷⁴⁰ Վերապրածների վկայություններ..., էջ 198–200:

⁷⁴¹ Ամասիան Կարսի մարզից Հայաստանին մնացած միակ մասն է:

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԵՈՒԹԵԱՆ Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏԻՉ
ՍՐԲԸՋՆԸԳՈՅՆ ԿԼԹՈՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԸՅՈՅ**

Ի ՍԸՀԵԿ ՔԸՀԸՆԵՆՅԷ ՊՕՂՕՍԵԱՆ

Ամենախոնարհ խնդիր

Վեհ[ափա՛ռ] Սրբազնագո՛յն Հայրիկ,

Նուստս՝ բնիկ Մշոյ Պուլանըգ գաւառի Շէյխեաղուպ գիւղէն եմ: Ես տասներկու տարիէ հետէ, ընտանեօք գաղթած, կը բնակէի ի Խաստուր գիւղն Բագրեւանդայ: Սակայն անդ չկարենալով տասն հոգիէ բաղկացած ընտանեացս օրական ապրուստն հոգալ, դառն աղքատութենէ ստիպեալ, իբր երկու ամիս առաջ փոխադրուեցայ ի Պայպուրտ գիւղն Կարուց:

Հա՛յր Վեհափառ, իմացայ հաստատապէս եւ անձամբ իսկ գնացի, տեսայ, որ Կարուց վիճակի Սոկիթու եւ Զորղան հայ գիւղօրայք չունին քահանայ: Այնպէս որ, եկեղեցիք փակ մնացեր են, եւ մերձակայ Բայխարայ գիւղի միակ քահանայի ձեռամբ կը հովուին: Յիշեալ անքահանայ գիւղօրէից ժողովուրդք սիրով ընդունեցին զիս իրենց մէջ մնալու եւ քահանայագործելու, բայց Կարուց Արթ[անապատիւ] յաջորդն եւ Հոգեւոր կառավարութիւնն չհաւանեցան եւ առաջարկեցին ինձ դիմել Ձեր Վեհափառութեան եւ հրամանագիր ստանալ:

Ուստի կը խնդրեմ Ձեր Հայրութիւնէն, որ գթալով ընտանեացս դառն եւ չքաւոր վիճակին վրայ՝ գէթ մինչ ի գարուն նոյն գիւղօրէից միոյն մէջ քահանայագործելու համար հարկաւոր հրամանն բարեհաճիք շնորհ բերել:

Մատչելով ի համբոյր սուրբ Աջոյն Ա[ստուա]ծարեալ Հօրդ հասարակաց:

ՊԱՏԻՒ ՈՒՆԻՄ ՄՆԱԼ ԅԱԻՏՏ ՄԵԾԻ ՎԵՀԱՓԱՌՈՒԹ[ԵԱՆ]

ՁԵՐՈՒՄ Խ[ՈՆԱՐՀ] ՈՐԴԻ

1894, Դեկտ[ե]մ[բերի] 11

Ի Ս[ուրբ] էջմիածին

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 49)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԼՈՒԹԵԼՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՁԻ
ՍՐԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԿԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐՈՒԼՐԳԻ
ԵՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ**

**ՊՈԿԼՆՈՒԹԻ ՇԵԽԱՂՈՒԹ ԳԻՒՂԵՅԻ ՎԵՐԳԵՆ ՍԻՄՕՆԵԼՆԻՅ
(ՌԵԸՕ ՄԻԷԻ ԵՂԲՕՐՈՐԴԻՆ)**

Խոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ Տէր,

Հրամանաւ Սուրբ Հօրդ Ալիբեկլու գիւղի հասարակութիւնն իմ գերդաստանս ընդունեց անցեալ սեպտեմբերի 21ին եւ մինչ այսօր մեզ կապահաւնեն: Նոյն ամսում կինս որդէծնութեան պատճառաւ մահացաւ:

Այն օրից ես ոչ մի աշխատանքի չեմ կարողանում գնալ: Երեք որդոյս մատաղահաս լինելու պատճառաւ մայրակորոյս որդիքս ինձ փոխանակ մօր կսիրեն եւ մէկ ըսպէ ինձնէ չէն բաժնուի, որ աշխատանքի գնալով մերկութիւններս կարողանամ ծածկել:

Ուստի համբուրելով Ս[ուրբ] Ոտքդ կաղաչեմ, որ օգնես թշուառներիս:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՈՐԴԻՒՄ ՎԱՐԴԱՆ ՍԻՄՕՆԵԱՆ

ի 10ն Ապրիլի, 1896 ամի

ՅԱԼԻԲԵԿԼՈՒ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 74)

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԼՆ Ս[Ր]ԲԸՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՁԻ**

**ՊՈԿԼՆԵԼՈՒ ՇԵԽ ԵԼՂՈՒՊ ԳԻՒՂԵՅԻ
Մ[Ե]ՀՏ[ԵՍ]Ի ԵՐԲ[Ե]ՀԵՄ ՄԵՐԳԵՐԵՆՅԷ**

Խոնարհական խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Այս երեք անգամ կը լինի, որ խնդրազրուս ոտէդ կը համբուրեմ, բայց չստացայ մի պատասխան: Այս երեք շաբաթէն աւելի է, որ կսպասեմ տեղս:

Շորէս ծախեցի՝ կերայ: Պատերի տակեր եւ վանքի դռներ պառկուկ՝ կսպասեմ: Ոտքիս չարուկս վերջացաւ, աչքս վեհարանիդ պաղուհան միշտ կը նայի, բայց բան մը չեմ լսեր:

Միւս կողմէն երեկ եղբօրս որդիէն նամակ առայ, որ կինը ձեռքէն առեր՝ թըրքացրեր են: Ինքն ալ վիրաւոր իր երեք որդիով եկած ինկած է Կարսի Փալտրուան գիւղ, եւ ինձ իմաց է տուած, որ շուտով հասնիմ, տեսնենք ինչպէ՞ս պիտի լինի մեր ճար:

Վեհ[ափա՛ւ] Տէր, ի սէր Աստուծոյ, մի այցելութիւն, մի ճար արէք թշուառ ծերոյս, որ գնամ... :

*ՄՆԱՄ ԶԵՐԴ ՀԱՅՐԱԿԱՆ ԿԵՆԱՅ ԱՂՕԹՈՂ ԵՒ Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ]՝
Մ[ԱՀՏԵՍԻ] ԱԲՐԱՀԱՄ Մ[Ա]ՐԳ[Ա]ՐԵ[Ա]Ն*

1896, Մայիս 26

Ի Վ[ա]ղ[ա]րշապ[ա]տ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 75)

**ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԸԶՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ
ԼՄ[ԵՆԵՅՆ] ՀՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԶԻ
ՊՈՒԼԸՆԻԻ ՀԵԽԵԸՂՈՒՊ ԳԻՒՂԸՅԻ**

Խոնարհաբար խնդիր

Պաշտե՛լի Հայրիկ,

Բաւական ժամանակ է տեղս եմ եկած, բայց ուր որ գնացի ձախորդութիւն, հիւանդութիւն, թշուառութիւն զիս հալածեց: Եւ ահա վեց ամսեայ հիւանդութենէն նոր ոտք ելած կը շարժեմ՝ սոված եւ թափառական: Ունէի մի քանի կոպեկ ձեռիս այն ալ անցեալները գողացան եւ կը տեսնեմ ոչ մի գործի չեմ պէտք գալի, զի աչքերս կը մթագնին, ոտներս կը դողայ եւ ուր գնալս բնաւ չը գիտեմ:

Վեհ[ափա՛ւ] Տէր, այս տեսակ մի նեղութեան մէջ եմ, մի բարերար չունիմ ծերութեան հասակիս մէջ. ամէն թշուառութիւն զիս պատեց: Այսպէս ամեն բանի կարօտ մնացած եմ: Կը գնամ մինչ վանքի խոհարանի դուռը՝ կերակուրների հոտով կշտացած՝ ետ կը դառնամ:

Ահա ծերութեանս մէջ պատահած անտէր վիճակիս դրութիւն մը, որ այն աստիճան հասցրեց ինձ: Ի՞նչ լաւ կը լինէր, եթէ հասնէր ինձ մահ եւ ազատէր...

Ուստի կաղաչեմ Ձերին Վեհափառութեան՝ ինձ մի շնորհ, մի օգնութեան ձեռք մեկնէք այս նեղ ժամուս, որ երկինք Ա[ստուա]ծ եւ յերկրի՝ Ձերդ Վեհափառութեանն եմ յուսացեր, եկեր եմ:

*ՈՐՈՎ ՄՆԱՄ ԸՆԴՄԻՇՏ ՁԵՐԴ ԱՆԳԻՆ ԿԵՆԱՅ ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ ԱՂՕԹԱՐԱՐ
ԵՒ ՇՆՈՐՀԱՅ ՍՊԱՍՈՂ՝ ՄՇԵՑԻ ԱԲՐԱՀԱՄ ՄԱՐԳԱՐԵՆՑ*

1896, Մայիս 11

ի Վաղարշապատ

ՇԻՐՎԱՆՇԵՆԻ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(ADIVAR)

Շիրվանշեխ հայաբնակ գիւղն ընկած էր Կոփից տասնհինգ կմ դէպի հիւսիս-արեւմուտք: Արածանի եւ Խնուս գետերի միացման գօտում գըտնուելու շնորհիւ գիւղն ունէր կանաչ ու փարթամ բուսականութիւն: Տարբեր ուսումնասիրողների եւ բնիկ շիրվանշեխցիների վկայմամբ բնակավայրը Բուլանըք հարթավայրի ամենամեծ եւ հայաշատ գիւղերից էր, որն ունէր Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ անուններով երկու գողտրիկ սրբավայրեր⁷⁴²: Մշոյ Ս. Առաքելոց վանքի ձեռագրացուցակի համաձայն Շիրվանշեխ գիւղում եղել է երեք ձեռագիր Աւետարան (1471 թ., 1509 թ., 1566 թ.) եւ մէկ ձեռագիր Շարակնոց (1606)⁷⁴³:

Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով 1871ին այստեղ բացուել էր դպրոց, որն ունէր 50 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ Յովակիմ Աստուածատուրեան⁷⁴⁴: Մեծ եղեռնից առաջ գիւղում կար գիւղական համայնքի ծախսերով պահուող 90 աշակերտանոց մէկ դպրոց⁷⁴⁵:

1915 թ. գիւղի ծխատէր քահանան էր տէր Միքայէլ Տէր Սամուէլեանը, որ հետագայում ապաստանել էր Արագզեղ (Կարսի մարզ) գիւղում⁷⁴⁶:

Հայաստանի ազգային արխիւում պահուող Շիրվանշեխի ծխատէր քահանայի վկայութեան համաձայն Մեծ եղեռնից առաջ իր հովուութեան ներքոյ կար 180 տուն հայ՝ 2000 շունչ ազգաբնակչութեամբ⁷⁴⁷: Նոյն քահանայի ձեռամբ փրկուել եւ Արեւելահայաստան է տեղափոխուել գիւղի ձեռագիր «Ծաղիկ» կոչուող Աւետարանը⁷⁴⁸:

1912ին Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Շիրվանշեխ գիւղում բնակուում էր 1300 անձ⁷⁴⁹ կամ 150 տուն հայ⁷⁵⁰: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Շիրվանշեխ գիւղն ունէր 150 հայ ընտանիք՝ 1.050 բնակչով⁷⁵¹:

⁷⁴² Վերապրածների վկայություններ..., էջ 201–203:

⁷⁴³ Մուրատեան Ս. Ա., Մարտիրոսեան Ն., Ցուցակ Ձեռագրաց..., էջ 220:

⁷⁴⁴ Սասունի Կ., Պատմություն..., 2013, էջ 247:

⁷⁴⁵ Վերապրածների վկայություններ..., էջ 201–203:

⁷⁴⁶ Նոյն տեղում, էջ 206–208:

⁷⁴⁷ Նոյն տեղում:

⁷⁴⁸ Նոյն տեղում:

⁷⁴⁹ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁷⁵⁰ Թէղիկ, Գողգոթա, էջ 100:

⁷⁵¹ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի ֆոնդի նամակներում բնիկ շիրվան-
շեխներն իրենց գիւղն անուանել են Շիրվանշէխ, Շիրվանշէյխ, Շէրվան-
Շէխ անուններով: Այլ աղբիւրներում յանդիպել ենք նաեւ Շէյվանշէյխ
տարբերակի⁷⁵²:

1914ի ռազմական քարտէզներում գիւղն արձանագրուել է Շիրվան-
շէյխ (Sirvanşeyh) անունով⁷⁵³: Այսօր այս բնակավայրը հայաթափուած է եւ
կոչւում է Ադըվար (Adivar)⁷⁵⁴:

1914ից սկսած գիւղից պարբերաբար գինուորագրութեան պատրուա-
կով սկսում են տեղահանել տղամարդկանց: Ապա օրինական ու ոչ օրինա-
կան հարկահաւաքութեամբ հարստահարում ու թալանում են գիւղացիու-
թեանը: Քիչ աւելի ուշ՝ ռուսական զօրքի կողմից Ալաշկերտի գրաւումին
յաջորդում է Ալաշկերտի՝ 50 տուն իսլամ գաղթականութեան վերաբնակե-
ցումը Շիրվանշէխ գիւղում⁷⁵⁵:

Շիրվանշէխ գիւղի հայ բնակչութեան կոտորածը սկսուեց 1915 թ. ապ-
րիլի 27ին: Ռուսական զօրքի յաղթանակով պայմանաւորուած թուրքական
համիդէ հեծելազունը դիմում է փախուստի: Նահանջի ճանապարհին
նրանք մտնում են Շիրվանշէխ գիւղ, թալանում այն ու սպանում բնակչու-
թեանը: Նրանց է միանում նաեւ Ալաշկերտում տեղակայւած 85 տուն մու-
հաջիր բնակչութիւնը: Տեսնելով այս արհաւիրքը՝ Շիրվանշէխի բնակչու-
թիւնը Համզաշէխի հայութեան հետ փախուստի է դիմում դէպի մօտակայ
Սիմօ կոչուած չերքէզական գիւղ՝ յոյս ունենալով այնտեղ որոշ ժամանակ
ապաստան գտնել եւ անցնել Մանազկերտ⁷⁵⁶:

Ականատեսը պատմում է, որ չերքէզները օգնել են իրենց դրացի հա-
յերին, սակայն կառավարութիւնը այդ իմանալով, Լիզից անմիջապէս այն-
տեղ է ուղարկում մի գունդ ոստիկան՝ հայերին հաւաքելու եւ կառավա-
րութեանը յանձնելու խիստ կարդագրութեամբ⁷⁵⁷:

Հայերի խումբը, որ բերուեց Սիմօ գիւղից, կոտորուում է Քարաաղըլ
գիւղում՝ Արածանիի կամրջի վրայ: Ականատեսի վկայութեամբ այդ օրը

⁷⁵² «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 26:

⁷⁵³ Erkân-i Harbiye-i Umumiye...:

⁷⁵⁴ <https://nisanyanmap.com/?y=Ad%C4%B1var&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5>

⁷⁵⁵ Վերապրածների վկայություններ..., էջ 204–205:

⁷⁵⁶ Աւմեմակ, Շերվանշէխի կոտորածը, «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 17, էջ 406–407; տե՛ս նաեւ
Մովսէսեան Ս., Պոլսանդգի կոտորածն ու գաղթը, «Աշխատանք», 1916 թ., հմր. 26, էջ 1–2:

⁷⁵⁷ Աւմեմակ, Շերվանշէխի կոտորածը, «Համբաւաբեր», 1917 թ., հմր. 17, էջ 406–407:

սպանուել է Շիրվանշեխ եւ Համզաշեխ գիւղերի շուրջ 400 տղամարդ, իսկ կանայք ու աղջիկները մեծ մասամբ գերուել են⁷⁵⁸:

Այս գիւղից փրկուածները թիւը կազմում է մօտ 200 մարդ, որոնք բնակութիւն են հաստատել Ալէքսանդրապոլ, Արազ (Կարսի մարզ), Ճալէն, Բաբրուլու (Ալէքսանդրապոլի գաւառ) գիւղերում: 1916ի ապրիլին մի խումբ հայեր որոշում են վերադառնալ եւ փնտրել իրենց կորած հարազատներին: Վերադարձողները գտնում են իրենց քոյրերին եւ դուստրերին՝ քուրդ եւ թուրք ընտանիքներում՝ իսլամացած: Սակայն նրանց վերադարձնել երբեք այլեւս չի յաջողում⁷⁵⁹:

Յեղասպանութեան ընթացքում Շիրվանշեխ գիւղից որբերի մի խումբ է փրկուել, որոնք հաստատուել են այլեւայլ ապաստարաններում: Այդ որբերն են. Վարդանեան Փէփօն՝ 18 տարեկան, Վարդանեան Նանօն՝ 16 տարեկան, Վարդանեան Զանանը՝ 15 տարեկան, Վարդանեան Սամուէլը՝ 6 տարեկան⁷⁶⁰, Մանուկեան Հայկը՝ 7 տարեկան. Մանուկեան Հրաչեայն՝ 5 տարեկան⁷⁶¹, Յարթինեան Զիջօն՝ 17 տարեկան, Յարթինեան Զանօն՝ 12 տարեկան⁷⁶², Վարդանեան Ալմաստն՝ 11 տարեկան⁷⁶³:

Խրիմեանի Ֆոնդում պահուող վաւերագրերում շիրվանշեխցիների պարզ ու բարբառախառն խօսքն է, Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած ջարդերի ու զրկանքների հետեւանքները՝ հայրենազրկման ու որդեզրկման ցաւը:

⁷⁵⁸ Աւմեմակ, *Շիրվանշեխի կոտորածը*, «Համբաւբեր», 1917 թ., հմր. 17, էջ 406–407:

⁷⁵⁹ Վերապրածների վկայություններ..., էջ 206:

⁷⁶⁰ «Համբաւբեր», թերթ, 1916 թ., Յաւելուած հմր. 26:

⁷⁶¹ Նոյնի Յաւել. հմր. 27:

⁷⁶² Նոյն տեղում:

⁷⁶³ Նոյնի Յաւել. հմր. 45:

ՇԵՐՎԱՆՇԵԽՅԻ ՆԱՏՈՅԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Ի՞մ նատուս էր Շերվանշեխյի
Երեք ամիս ֆէրար էր մնացի,
Որ մըն ալ մոռցեր ելեր դացի.
Օ՛յ օ՛յ օ՛յ, կաքաւ նատուս:

Կրակ բնկաւ դոմեր վառան,
Կաքաւ նատուս մէջէն թռաւ.
Օ՛յ օ՛յ օ՛յ կաքաւ նատուս:

Քրդեր եկան աղբրութենով,
Ղնատոն բրոնին խարնութենով.
Օ՛յ օ՛յ օ՛յ կաքաւ նատուս:

Քրդեր եկան քրիվաութենով,
Ղնատոն սպաննին դուշմնութենով.
Օ՛յ օ՛յ օ՛յ կաքաւ նատուս:

Մայրիկ նրսակը թունտրայ չբրթին,
Հայրիկ նրսակը չէմքի մբրթին
Քրդեր բրոնին Ղնատոն բրթին,
Օ՛յ օ՛յ օ՛յ կաքաւ նատուս:

Ի՞մ նատուս էր ալաշ մալաշ,
Մըր արտու մէջ փրոին զիւր լաշ.
Օ՛յ օ՛յ օ՛յ, կաքաւ նատուս:

Հաւաքեց՝ Լ. ՊՕՂՈՍԵԱՆ

Կարապետեան Ք., Երզարան «Տարօն», Տարօնի անցեալ
բանաստեղծութիւնները, հերոսներու նկարները եւ ժողովրդական անտիպ
երգերը, ինչպէս նաեւ սիրերգեր եւ պարերգեր, 1930, էջ 95:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 543)

**ՎԷՀԱՓԸՌ ՀԱՅՐԻԿ,
ԸՄԵՆԵԸՆ ՀԱՅՈՅ ՏԵԼՈՒՆ ՏԵԼՈՒՆ ՄԿՐՏԻՉ ԿԼՏՈՒՂԻԿՈՍ
ԽՆԹԻՐՔ**

ՍԻՄՐՆ ՍԵԽԵԿՈՎ, ԲԼԸՆՈՒԹՅՈՒ ՇԻՐՎԸՆՇԻՄՈՒ ԳԻՒՂԻՅ

Իմ ջոջ տղեն գնացել է Թիֆլիզ: Այնտեղ մեռել է: Ես մնացել եմ անտէր-անտիրական: Իմ տղէքս մնացեր են անտեր 6 **Ջանով**: Ես **օղլուշաղ**⁷⁶⁴ չունիմ իմ վրեւ հոգայ: Ես այստեղ մնացել եմ խեղճ, **մօլօր**: Ես այստեղ հաց ցրվելուն հոս չեմ եղել: Կը խնդրեմ Հայրի՛կ, քեզանի<ի>ց Քո անտեր մնացա՞յ զաւակներին շնօր[հ]ես ինչ որ քո սրտիցդ կանցնի:

ՎԷՀԱՓԸՌ ՀԱՅՐԻԿ՝ ԱՄԵՆ<ե>ԱՆ ՀԱՅՈՅ

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 103, վաւ. 38)

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅ ՕԾՈՒԹԵԸՆ ՎԷՀԱՓԸՌ ՀԱՅՐԸՊԵՏԻ
ԸՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՅ**

ՅԸԿՈՒ ՄԻՆԸՍԵԸՆԻ ԽՈՆԸՐՀ ԽՆԳԻՐՆ Է

Ձեր ամենախոնարհ ծառա<յ>ն Բուլանդի Շիրվանշէյիս գիւղի բնակիչներէն Յակոբ Մինասեանս, հայրենիքէս Կարս գաղթելով, տարի ու կէս է, որ կը բնակիմ Բաղդադ գիւղը: Ունիմ երկու որդի, որք Տփիսիս կը գտնուին այժմ, բայց հազիւ կրունան իւրեանց օրապահիկը ճարել, իսկ ես, այժմ մարմնով խիստ տկար լինելով, անկարող եմ հոգալ տասն եւ երկու հոգիէ բաղկացած թշուառ ընտանիքս:

Ա՛րդ, գիմելով Ձերդ Վեհափառութեան՝ պաղատանօք, սոյն արգահատելի վիճակիս սփոփում մը կը խնդրեմ: Հայրենիք վերադառնալու միակ յոյս թողած եմ Ձեր բազմագուլթ կարեկցութեան:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ՅԱԿՈԲ ՄԻՆԱՍԵԱՆ

1895 Յուլիս 24

ի Ս[ուրբ] էջմիածին

⁷⁶⁴ կին, ընտանիք

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 24)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԼՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ
ԵՒ ՊԵՏՈՒԿԱՆ ՀԱՅՐԵՊԵՏԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԱՅՈՅ
Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԶԻ**

**ՄՇՈՒ ՊՈՒԼԵՆՈՒ ՇԷՐՎԵՆ-ՇԷՐ ԳԻՒՂԻ ԳԵՂԹԵԱՆ
ՆՈՒՊՕ ՄԿՈՏԵՉԵՆՅԷ ԵՒ ԵՐԿՈՒ ՈՐԲ ՊԵՏԱՆԻՆԵՐԷ՝
ՄԵՆՈՒԿ ՅՈՎՀԵՆՆԷՍԵԱՆ [Է], ՄԿՐՏԻՉ ԴԸՋԵՐԵՆՅԷ**

Ամենախոնարհ խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Խոնարհ աղախինդ երկու տող խնդրագրովս կը դիմեմ Վեհափառութեանցդ ոտք եւ կաղաչեմ լալով, ինձ՝ նուաստիս, մի օգնութիւն տւէ՞ք, զի ոչ թէ ես միայն եմ, այլեւ ունիմ գիւղը ու թ ընտանիք եւս, որ Հիմամ-Շահ-լու⁷⁶⁵ կը սպասին, որոց յոյսը միմիայն յԱ[ստու]ծոյ եւ ի Ձերին Վեհափառութեան վր[այ] են դրեր: Զի ամէն ժամ Ձերին քաղցր կենաց երկարութեան կաղօթեն ընդմիշտ:

Նմանապէս վերեւ յիշած երկու որբեր, որ միոյն աչքերը վատատես է, եւ ունի հինգ ընտանիք, իսկ փոքր «Մկրտիչ»՝ ունի չորս: Եւ այս պահուս մեր բոլոր գերիները յիշեալ գիւղի մէջ ծրարուած մնացած են: Ամէն բանի կարօտ: Վասնզի այն տեսակ թշուառութեան մէջ եմք, որ բնաւ վերջ չունի...

Ուստի կաղաչեմք Վեհ[ափա՛ռ] Տէր, մեր սոյն թշուառ գերիներուն վր[այ] մի մարգասիրական ակնարկ մ'դարձրէ՞ք, որ ապրիմք, ապա թէ ոչ՝ մեռած եմք արդէն: Մնամք Ձերին Վեհութեան անգին կենաց աղօթարար:

ԽՈՆԱՐՀ ԱՂԱԽԻՆ՝ ՆՈՒՊԱՐ ԵՒ ԵՐԿՈՒ ՈՐԲԵՐ

22ն Փետր[ուար], 1896

ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

⁷⁶⁵ Իմամշանլու՝ գիւղ Այրարատի Ոստան (Էջմիածին) գաւառում, **Էփրիկեան Ս.**, Բնաշխարհիկ Բառարան, հտ. Բ., էջ 68: 1935ից կոչում է Մխչեան:

ՊԱԳՐԱՆ ԳԻՒՂ

(NURETTİN)

Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսի Փոնդուս գտնուել է մէկ վաւերագիր՝ գրուած Բուլանք գաւառի Պագրան անունով գիւղից: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Կայսերական Գերմանիան մեծ աշխատանք էր կատարում աշխարհագրական այն շրջաններում, որտեղ նպատակ ունէր ծաւալուելու հնարաւոր պատերազմի ընթացքում: Մասնագէտները լրջօրէն սկսեցին ուսումնասիրել Օսմանեան կայսրութեան տարածքը եւ մանրամասնօրէն այն քարտէզագրեցին: Նմանատիպ աշխատանքներ էր իրականացնում նաեւ Յարական Ռուսաստանը եւ Օսմանեան Թուրքիան:

Ահա այդ նպատակով պատրաստուած գերմանական ռազմական քարտէզում Բուլանք գաւառի Լաթար (էլմաքայա) գիւղից 1.6 կմ դէպի հիւսիս-արեւելք նշուած է Բեքիրան/Bekiran անունով մի բնակավայր: Որեւէ հեղինակի մօտ առայժմ մենք չենք հանդիպել Բուլանք գաւառի մէջ ընդգրկուած Պագրան կամ Բեքիրան անունով գիւղի, փոխարէնը՝ տարբեր հեղինակների մօտ հանդիպում ենք Բագրան ձեւով նշուած մի գիւղանուն, այն էլ՝ ընդգրկուած Մանագլերտ գաւառի սահմաններից ներս:

Ինչ վերաբերում է Բագրան կամ Բագարան կոչուող բնակավայրին, հայ մատենագրութեան մէջ ունենք տեղագրութեան երկու նկարագրութիւն. Առաջինը Բագրան կամ Բագարան ձեւով, որը կառուցուել էր Երւանդաշատ քաղաքից դէպի հիւսիս, Ախուրեան գետի վրայ՝ իբրեւ թագաւորանիստ⁷⁶⁶ քաղաք:

Երկրորդ Բագարանի մասին Մովսէս Խորենացին նշում է Միւս Բագարան ձեւով՝ տեղագրելով այն Կոգովիտ գաւառում⁷⁶⁷:

Մենք հակուած ենք նոյնացնելու Մկրտիչ Ա. Խրիմեանին ուղղուած նամակում եղած Պագրան գիւղը վերը տեղադրուած քարտէզի Բեքիրան/Bekiran բնակավայրի հետ: Ինչպէս երեւում է այս քարտէզից Պագրան գիւղը Մանագլերտի սահմանից դուրս է: Այն ընկած է Եկմալ եւ Լաթար գիւղերի միջեւ: Որոշ աղբիւրների համաձայն Եկմալ գիւղը եւս ընդգրկուած

⁷⁶⁶ Բագարանը յիշատակուած է երբեմն Բաղափ, երբեմն՝ թագաւորանիստ Բաղափ, երբեմն Կաան, երբեմն էլ Բաղափազիւղ, տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Ստորագրութիւն, 1822, էջ 394–395:

⁷⁶⁷ Բագարանի տեղագրութեան մանրամասն ֆնոտիւնը դուրս է սոյն ուսումնասիրութեան սահմաններից:

է Բուլանըք գաւառի կազմում⁷⁶⁸: Խրիմեանին ուղղուած նամակների մէջ եկմալը որպէս Բուլանըքին պատկանող գիւղ առայժմ որեւէ վաւերագիր չենք գտել: Ուստի գերծ կմնանք եկմալ գիւղի մասին որեւէ դիտարկում կատարելուց: Սակայն յստակ է, որ ո՛չ եկմալը եւ ոչ էլ Բեքիրան/Պագրանը ընդգրկուած չեն Մանազկերտի գաւառի մէջ:

Պագրան (Բագրան, Բաքերան, Փեգրան) գիւղը ներկայումս Համապատասխանում է Նուրեթթին գիւղին:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ, 103, վաւ. 246)

**ՆՈՐԻՆ ՎԵՆՓԵՆՈՒԹ [ԵՆ] ԵՆՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԵՐԳ ԵՒ
ԸՆԳՆԵՆՈՒՐ ՀԵՅՐԵՊԵՏ ԼՄ [ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՅ Տ [ԵՆՈՒՆ]
Տ [ԵՆՈՒՆ] ՄԱՐՏՁԻ Ս [Ր]ԲԵԶԵՆԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻՈՍ
ՊՈՒԼՆԵՐԻ ԳԵԳՐԵՆ ԳԻՒՂԻ ԳԵՂԵԿԵՆ ՊԵՏՈ ՍԵՐԳԻՍԵ [Ե]ՆՅԷ**

Խնդիր

Հայրի՛կ Վեհափառ,

Նուաստիս ընտանիք կը բաղկանայ վեց անհատներից, որ եկած եմք անցեալ աշնանէ: Կը բնակիմք Ռուսի Բասեն Պաշ գիւղ: Թէեւ ունէի մի որդի, բայց ճանապարհին, երբ քրդերը մեր վրայ յարձակեցան եւ թալանեցին, որդիս այն ժամանակէ ի վեր կորած է: Եւ շատ փնտրելէն յետոյ՝ չըկարացանք գտնել:

Իսկ ես ութսուն հինգ տարեկան եմ: Եւ 20 ոսկիէն աւելի պարտք ունիմ: Ի՞նչ կերպ ընեմ: Ապրիլ եւ ընտանիք ապրեցնել դժուար է: Աչքերուս լոյսը կորած է, գորութիւնս վերջացած:

Տեսնելով նոյն անտանելի դրութիւն], առանց համբերութեան ճանապարհ ինկայ Ձերին Վեհութեան ոտք դիմելու եւ ցաւերս յայտնելու:

Եւ այս վեց օր է, որ ճանապարհ գալով Հասայ Ս[ուր]բ Աթոռս:

Վեհ[ափա՛ռ] Հայրիկ, իմ ցաւերը անթիւ են եւ չեմ կարող գրով յայտնել: Այսքան կաղաչեմ. իմ սոյն թշուառ ընտանեաց մի դ[ա]րման շնորհէք, զի ոչ թէ աղքատ եմ եւ պանդուխտ, այլ անտէր եւ թշուառագոյն:

*ԱՄԵՆԱԽՈՐԻՆ ԱԿՆԱԾՈՒԹ[ԵԱՄ]Բ ՄԱՏՁԻՄ ՀԱՄԲՈՅՐ ՈՐԴԻԱԿԱՆ
ՊԵՏՈ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ*

1895, Սեպ[տեմբեր] 23

ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

⁷⁶⁸ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

ՌՈՍՏԱՄ-ԳԵՏԻԿ ԳԻՒՂ

(ROSTAMGEDİK)

Հայոց ՌՄԽԹ (1800) թուականին, Բայազետի Մահմուդ փաշան զօրք է ժողովում՝ Մշոյ երկիր գնալու համար: Մուրադ փաշան էլ իր հերթին զօրք է հաւաքում ու գնում նրան ընդառաջ. «Պուլանուխայ Ռըստամկէտուկ գիւղ կհանդիպին մէկ մէկու...»⁷⁶⁹:



Ռոստամ-Գետիկ, Ռեսդամգեդիկ, Ռըստամկէտուկ, Ռոստամգեդուկ, Ռոստամկետուկ, Ռստամգեդուկ, Խրիստամ-քատուկ անուններով յայտնի այս գիւղը տարբեր սկզբնաղբիւրների եւ ուսումնասիրութիւնների մէջ ներառուած է երբեմն Մանագկերտ, երբեմն՝ Բուլանըք գաւառի բնակավայրերի շարքում:

Խրիմեան կաթողիկոսին հասցէագրուած նամակներում եւս գիւղն ընդգրկուած է երբեմն Բուլանըք, երբեմն՝ Մանագկերտ գաւառների կազմում: Ինչպէս տեսանք մանր մատենագրութիւնից մէջբերւած հատուածից, Ռըստամկէտուկ բնակավայրը ընդգրկուած է եղել Բուլանըք գաւառի մէջ: Տեղանունը Ռոստամգիւրուկ տարբերակով, իբրեւ Բուլանըք գաւառի գիւղ, ներկայացուած է նաեւ Ընդարձակ օրացոյցի 1903ի հատորի մէջ, եկեղեցին՝ Ս. Կարապետ⁷⁷⁰:

Այս գիւղը Բուլանըքի շրջանի մէջ է ներառուած նաեւ Index Anatolicus-ում⁷⁷¹: Իբրեւ Բուլանըք գաւառին պատկանող գիւղ յիշուած է նաեւ «Դրօշակ» թերթի Մշոյ տեղեկագրերից մէկում՝ Թոտամ-Գետուկ անունով⁷⁷²:

⁷⁶⁹ Աղանէանց Գիւտ Ա. ֆհնյ., Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ., Մանր մատենագիրք ԺԵ-ԺԹ դար, Թիֆլիս, 1912, էջ 512:

⁷⁷⁰ «Ընդարձակ Օրացոյց», 1903, էջ 338:

⁷⁷¹ <https://nisanyanmap.com/?yer=25728&haritasi=r%C3%BCstemgedik>

⁷⁷² Նամակ Բուլանըղից, «Դրօշակ» Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1890–1897, հմր. 12, էջ 8–10, Pdf. էջ 250–252:

1928ին Քեմալական Թուրքիայում այս տեղանունն արձանագրուեց Ռուսթեմգեդիկ ձևով (Rüstemgedik)⁷⁷³:

Ներկայումս գիւղն ընդգրկուած է Մանազկերտի շրջանի մէջ: Մեծ եղեռնի տարիներին այս բնակավայրից միայն մէկ երեխայ է տեղափոխուել որբանոց-ապաստարան, Ռուստամիէտ գիւղի բնակիչ՝ ութամեայ Սարգըսեան խաթունը⁷⁷⁴:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 710)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹԵԱՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԱՐՏԻՉ Ը.
ԿԼԹՈՒՂԻԿՈՍ ԼՄՆԵԼՅՆ ՀՆՅՈՅ
ԽՈՆԵՐՀԵՐԸ ԽՆԴԻՐ ՌԶԿՕ ՍԼՈՅԵԱՆԷ
(ՊՈՒԼԸՆԽԵՅ ՌՍԸՄ ԿԻՐՈՒԿ ԳԻՂԻՅ)**

Աստուածաբեա՛լ Հայրապետ,

Նուաստս ընտանեօքս դիմեցի Ձերդ Վեհափառութեան եւ յայտնեցի, որ յօժարակամ դառնալու եմք լուսաւորչական քրիստոնեայ եւ թէ սիրով ընդգրկած եմք զայն: Ձեր Վեհափառութեան կարգադրութեամբ այն օրէն ցարդ զետեղուեցայ Եղուար[դ] գիւղն, որպէս զի մինչեւ նաճանգապետի կարգադրութիւնը հասնելը՝ նոյն գիւղը մնամ:

Այն օրէն ցարդ կսպասիմ: Այժմ կինս մահամերձ հիւանդ է: Քահանայք եկեղեցական արարողութիւն չեն կատարեր՝ մկրտուած չլինելուն:

Այժմ յերես անկեալ Ձեր կարգադրութիւնը կը խնդրեմ: Շնո՛րհ արէք հրամայելու, որ մկրտուի եւ եկեղեցական օրինօք հաղորդուի, որպէս զի անհաղորդ չմեռնի:

Կը սպասիմ Ձերդ կարգադրութեան:

ԽՆ ԴՐԱՆԱՅՍ ՄՊԱՍՈՂ՝ ՌԶԿՕ ՍԼՈՅԵԱՆ

1894, Հոկ[տեմբերի] 28

Վաղարշապատ

⁷⁷³ Նամակ Բուլանըղից, «Դրօշակ» Հայ Յեղափոխական Դաշնակցութեան օրգան, 1890–1897, հմր. 12, էջ 8–10, Pdf. էջ 250–252:

⁷⁷⁴ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 25:

(ՄՄ, ԽԿՖ, [թղթ. 101. վաւ. 121)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԼՈՒԹԻՒՆ Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻՉ Ը.
ՍՐԲԸՋՆԵԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

**ՊՈԽԼՆՈՒԹ ԽՐԻՍՏԵԱ ՔԵՏՈՒՔ ԳԻՒՂԻՅ ՄԿՐՏԻՉ
ՅԼՐՈՒԹԻՒՆԵՆԵՒ**

Խոնարհ խնդիրն է

Վեհափա՛ռ Տէր,

Ծառանիդ Պուլանուխի Խրիստամ Քատուք գիւղի գաղթականներէն լինելով, արդէն Ձեզ յայտնի եղած խժոժութեանց պատճառաւ հազիւ հազ կարողացանք Օսմանեան կատաղի կառավարութեան անգութ ճիրաններէն ազատուիլ եւ ինքզինքնիս ձգել բարեխնամ ռուս մեծագոր ինքնակալութեան հովանոյն ներքեւ, եւ մի քիչ ազատ շունչ քաշել՝ իջեւանելով Բալուքարիս գիւղ՝ չորս անձէ բաղկացած ընտանիքովս հանդերձ:

Ինչպէս որ Ձերին Վեհափառութեան յայտնի է, այժմ՝ այս ձմեռ եղանակին, ինչ կը քաշեն Հայաստանի այլ եւ այլ կողմերէն գաղթող գաղթականներ, եւ որոնք սփռփիչ մը չունենալով, բացի Ձերին Վեհափառութենէդ, որ այսպիսի տագնապելի վիճակի մէջ հայ ազգութեան սփռփիչ դարձաք:

Ուստի նուաստ ծառանիդ եւս իբրեւ գաղթական եկած եմ առ ոտս Ձեր, որպէսզի ինձի եւս մի քանի ռուբլի ճանապարհածախք եւ մի քանի կտոր լաթ շնորհելով, որպէսզի կարողանամ այս ձմեռ եղանակին մէջ իմ ընտանեաց ցուրտէն պատսպարել եւ օրական պարէն հայթայթել, որով Ձեր անգին կենաց միշտ աղօթող կը լինիմք:

ՄՆԱՄ ՁԵՐ Ս[ՈՒՐԲ] ԱՋ ՀԱՄԲՈՒՐՈՂ՝

ՄԿՐՏԻՉ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՅ

[18]97 Յունուվար 13/25

ՓԻՕՆՔԻ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(YEMIŞEN)

Ըստ 1556ի Խնուսի գաւառի մանրամասն տեղեկագրի, Բլէջան գաւառակի (իմա՝ Ներքին Բուլանք, Վ. Ս.) կազմում Աբրի եւ Փիօնք (բնագրում՝ *Piyonk*, 11 տուն բնակիչ⁷⁷⁵) գիւղերը՝ Քեօշմիր, Քեշիր եւ Քըղվանք (*kiğvank՝ Գեղվանք*) արտերի հետ միասին վճարել են 1.753 աքչա հարկ⁷⁷⁶:

Կոփ աւանից 17 կմ հարաւ-արեւմուտք, իսկ Աբրի գիւղից հիւսիս ընկած Փիօնք գիւղը 1890-ական թուականներին Ներքին Բուլանքի շէն ու հայաշատ բնակավայրերից էր: Գիւղի 90 տուն բնակչութիւնից 60ը հայեր էին:

«Փիօնք՝ Պուլանըզի ամենահին գեղերէն մէկն է: Նախապատմական դարերուց ի վեր՝ էնիկ շինուած է Հացեաց եկեղեցական թեմին է՛ն արգասաբեր հողերու սրտին վրայ: Գետնէն վեր ցցուած պզտիկ ու կլորակ հողազանգուած մը կը գրկէ Փիօնքի շինական խրճիթներու ամբողջութիւնն, որ հազիւ կը բաղկանայ յիսուն-վաթսուն տներէ ու տնակներէ: Ռամիկ ու Դմիլի գեղ մը չէ: Նահապետական շէնք ու սարուածք կան հոն. օճախ տներ՝ խանութան, հազարաչէն առիքով, նախշուն սներով՝ բակ ու բակդըռնով, որոնց մէջ զետեղուած են քրտնաթոր գեղջուկի բուխերիքներ, սրահն ու մառանն, ախոռները, ամառուած սաքունները, ցանոց ամբարանոցը, Աստուածաշէն թոնիրները, որք միշտ կը ծխան, կը մխան ու օրհնուկ հացը կը պատրաստեն դատկանին, մշակին, որբին, աղքատին, եկին, բնիկին...»⁷⁷⁷:

Գիւղն առատ էր աղբիւրներով, որոնք, միախառնուելով Մալաքեանդ գիւղից սկիզբ առնող սառնորակ ակունքներին, կազմում էին վտակներ՝ ջրառատ դարձնելով Վարդ գետը, որի ջրերով աշխատում էին բազմաթիւ ջրաղացներ, ոռոգւում էին արտեր, իսկ հոսելով դէպի արեւմուտք՝ թափւում էին Արածանի գետի մէջ:

Գիւղում դպրոց չկար: Այստեղ կառուցուած էր միայն գեղեցիկ ու կոկիկ մէկ եկեղեցի՝ Ս. Գէորգ⁷⁷⁸, որ գրուած էր Տ. Ռաֆայէլ քահանայի սպասաւորութեան ներքոյ⁷⁷⁹: «Իր բոլորսած խաչքարերով կը հսկէ գօրաւոր եւ հրաշագործ ժամտունը, հազար տարեկան եկեղեցին՝ հոյակապ, կամարչէն,

⁷⁷⁵ 294 Numaralı Hınıs Livâsi..., էջ 86:

⁷⁷⁶ Նոյն տեղում, էջ 7:

⁷⁷⁷ Տէր Կարապետեան Գ., Տարօնի աշխարհը, էջ 102:

⁷⁷⁸ Միքայիլեան Մ., նշ. աշխ., էջ 89:

⁷⁷⁹ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

իր խնկելի խորանով: Հասարակ ժամտուն մը մի՛ նկատէք: Ուխտելի, պատկառելի սրբահովան տաճար մը, որու ծոցը կը հանգչին արագահաս, լուսաթթախ Թուխմանուկներ»⁷⁸⁰:

Մաշտոցեան Մատենադարանում պահուող խրմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում տեղացիներն իրենց բնակավայրն անուանել են Փիոնիկ, Փիոնկայ, Փիօնք, Փիօնգ, Բիոնք, Պիոնգ⁷⁸¹ տարբերակներով: Այլ աղբիւրներում հանդիպել ենք նաեւ Փիօնկայ⁷⁸², Փէօնգ, Յենիշէն (Yenişen)⁷⁸³ ձեւերին⁷⁸⁴:

1928ին Քեմալական Թուրքիայում այս բնակավայրն արձանագրուեց Փիյոնք (Piyonk) անունով: Ներկայումս ամբողջութեամբ հայաթափուած է: Այստեղ ապրում են հիմնականում քրդեր, իսկ բնակավայրն անուանափոխուած է Յեմիշէն (Yemişen)⁷⁸⁵:

1912ին Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Փիօնք գիւղում բնակուում էր 457 հայ⁷⁸⁶ կամ 70 տուն⁷⁸⁷: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Փիօնք գիւղն ունէր 66 հայ ընտանիք՝ 572 բնակչով⁷⁸⁸:

Ըստ Գարեգին վրդ. Սրուանձտեանցի աշակերտ եւ Մշոյ երեսփոխան Գեղամ Տէր-Կարապետեանի՝ Փիօնք գիւղում է պահուել Հէյրոյենց տան Կարմիր Աւետարանը⁷⁸⁹:

Փիօնք գիւղի կոտորածներն սկսուեցին 1915 թ. ապրիլին՝ շարունակուելով մինչեւ յունիսի 28ը⁷⁹⁰: Բնակչութիւնն ամբողջութեամբ զոհ գնաց Թուրքական իշխանութիւնների կազմակերպած Մեծ եղեռնին:

Արեւելեան Հայաստան հասած փիօնքցի որբերը ընդամէնը երկուսն են եղել. Գարեգին Գասպարեան՝ 13 տարեկան⁷⁹¹, Հաբէղ Միսաքեան՝ 12 տարեկան⁷⁹²:

⁷⁸⁰ Տէր Կարապետեան Գ., Տարօնի աշխարհը, էջ 103:

⁷⁸¹ ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 55:

⁷⁸² Նամակ Բուլանըղից, «Դրօշակ», հմր. 12, էջ 9:

⁷⁸³ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 197.

⁷⁸⁴ Թէոփիկ, Գողգոթա, էջ 100:

⁷⁸⁵ <https://nisanyanmap.com/?y=yemi%C5%9Fen&lv=&t=Bulan%C4%B1k&u=1&ua=5.>

⁷⁸⁶ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁷⁸⁷ Թէոփիկ, Գողգոթա, էջ 100:

⁷⁸⁸ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁷⁸⁹ Տէր Կարապետեան Գ., Տարօնի աշխարհը, էջ 104:

⁷⁹⁰ Մովսէսեան Ս., Բուլանըղի կոտորածը, «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 43, էջ 1358–1360:

⁷⁹¹ «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 5:

⁷⁹² Նոյն տեղում:

(ՄՄ, ԽԿՖ, ԹԴԹ. 104, վաւ. 382)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՐԵԳՈՅՆ ԿԵԹՈՒՂԻՈՍԻ
ԸՄԼԵՆՅՈՒՆՆԵՐՆԵՐԻ ՎԵՐՈՒՄԻՆ ՏՆԵՐԻՆ ՄԿՐՏԻ
ՍՐԲԸՆԵՍՈՒՐԻ ՎԵՐՐԵՊԵՏԻ**

1. ԸՐՃԵՇՈՒ ԶՈՒՏԳԵԼԻ ԳԻՒՂՅԻ ԳՐԻԳՈՐ ՓՈԽՆԵԼՆԷ
2. ԲՈՒԼՆԵԼՈՒԹԵՅ ՓԻՌՆԻԿ ԳԻՒՂՅԻ ՄՈՎՍԷՍ ՎԼԲԻՆԵԼՆԷ
3. ՄԵՆԳԵՍԵՐՅԻ ԲԵՆԿՈՅ ՎԼԲԻՆԵԼՆԷ

Ամենախոնարհաբար խնդիր

Պաշտելի՛ Հայրիկ,

Ահա մէկ ամիս է, ինչ մենք երկրից փախել-եկել ենք այս գիւղ, որ ապ-
րում ենք Վաղարշապատում՝ բարեպաշտ ժողովրդից օգնութեամբ եւ մա-
սամբ մեր մշակադործութեամբ օրական մի քանի դուռուշ առնելով:

Բայց տեսնում ենք, որ արդեն ձմեռը եկել է, եւ մշակադործութիւնը
դադարել: Իսկ մեր դրութիւնը անորոշ եւ անտանելի է:

Վասն որոյ ստիպուեցինք այս խնդրազրույց դիմել Վեհափառ Հայրիկիդ,
եւ դարչապարզ համբուրելով խնդրել մի արժանաւոր տնօրէնութեամբ մեզ
այս ձմեռ գոնէ ապրեցնելու այստեղ՝ մեր ընտանիքով, ինչպէս որ կբարե-
հաճի Ձեր Վեհափառութիւնը թէ հացի եւ թէ հագուստի մասին հոգալու:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՆԵՐԴ՝ ԳՐԻԳՈՐ ՓՈԽՆԵԱՆ՝ 7 Ն[Ա]Յ[Ա]Ր
ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ՝ 10 Ն[Ա]Յ[Ա]Ր
ԲԱՆԿՈՅ ՀԱՐԴՈՅԵԱՆ՝ 6 Ն[Ա]Յ[Ա]Ր

(ՄՄ, ԽԿՖ, ԹԴԹ. 104, վաւ. 55)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՈՒԹԵԱՆ ՏՆԵՐԻՆ ՏՆԵՐԻՆ ՄԿՐՏԻ Ե.
ՍՐԲԸՆԵՍՈՒՐՆԵՐ ԿԵԹՈՒՂԻՈՍԻ ԸՄԼԵՆՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՈՒՄԻՆ**

**ՄՇՈՅ ԳԵՒԸՈՒ ԲՈՒԼՆԵՈՒՒ ՓԻՌՆԵՅ ԳԻՒՂԻ
ԸՐՐԵՎՄ ՄՆԵՅԼԵՆԵԼՆԷ**

Ամենախոնարհ խնդիր

Բարեգո՛ւթ Հայր,

Այս մի ամիս է, որ հիւանդութեան մահճի մէջ ընկած կը տառապիմ եւ

իմ չորս հոգուց բաղկացած ընտանիքս նօթի ու ծարաւ կեցած [է]:

Մենք այս ձմեռ բնակւում էինք Ալիբէկլու գիւղում: Շնորհակալ եմ նորանցից որ ամեն կերպ մեզ օգնելով ապրեցրին մինչեւ հիմայ:

Պաշտելի՛ Հայրիկ, հիմայ, որովհետեւ նորանց միջոցն է, այլեւս չէն կարողանում օգնել: Եւ ես տկար եւ առանց աշխատանաց դիմում եմ Հայրութեանդ եւ աղաչում որպէսզի հրամայէք [նրանց] որոց անկէ՝ տալ մեզ գոնէ մի ամսուայ հացազին, որ կարողանանք ապրիլ՝ մինչեւ աշխատանք առնելով ապրինք: Այժմ անաշխատանք եւ տկար, ով է մեզ համար մտածող, եթէ ոչ պաշտելի հայրութիւնդ, որով մնամք երախտապարտ եւ ակնկալու Մեծի շնորհաց պաշտելի Հայրութեանդ:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ԱԲՐԱՀԱՄ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

1896 Ապրիլ 15

յԱլիբէկլու

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 101, վաւ. 10)

ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Ը[ՍՏՈՒԸ]ԾԵՐԵԱԼ ԿԵԹՈՒՂՅԱՆՍԻ
ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԱՅՈՅ Տ[ԵՆՈՒՆ] Տ[ԵՆՈՒՆ] ՄԿՐՏԻԶ ՀԱՅՐԻԿԻՆ
ՄՇՈՅ ԲԱՆՈՒԹ ԳԵՒԵՌՈՒ ՓԻՇԵԳ ԳԻՂՅԱՅ ԳԵՂԹԵԱՆ
ԸԲՐԱՀԱՄԷ ԲՕԶԵՐԵԱՆԷ

Աղերսանօք խնդիր

Վեհափա՛ն Տէր,

Ահա երկու ամիս է, որ իմ գերդաստանեայցս հետ, որ թւով հինգ հոգի եմք, բնակւում եմ Սուրմալուա Ալիդամարլու գիւղում՝ անտէր, անօգնական, մերկ եւ թշուառ դրու[թեամբ]: Ուստի յոտս անկեալ բազում ողորմ չօրդ հասարակաց, եւ մեր վր[այ] գլխալ կաղաչեմ: Բարեհաճիք յայսմ ձմեռ ժ[ա]մ[անա]կին ի մահուանէ փրկել, այն է՝ շուտափոյթ տնօրինել հայցեմք՝ ուր կցանկայ ս[ուր]բ կամք Ձերոյին Վեհափառութեան կարգադրել մեր թշուառացս հ[ա]մ[ա]ր բնակութ[իւն]:

1893 ամի, յ30 Դէկտեմբերի

ՓՐԿԱՇԷՆ/ՔՐԿԱՇԷՆ ԳԻՒՂ (ՆԵՐՔԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(OĞLAKKAYA)

Նախքան Հայոց մեծ եղեռնը Լիզից հարավ-արեւմուտք ընկած Փրկաշենը Բուլանըքի հայաշատ գիւղերից մէկն էր: Տարբեր աղբիւրների փոխանցմամբ 1890–1915 թթ. ընթացքում այստեղ եղել է մինչեւ 100 տուն հայ բնակչութիւն⁷⁹³:

Մեզ հասած սկզբնաղբիւրների համաձայն բնակավայրը կոչուել է Փրկաշեն, Բրկաշեն, Բրգայ-Շէն⁷⁹⁴, Թրքաշեն⁷⁹⁵: Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում հանդիպել ենք Փրկաշեն եւ Փրքաշեն տարբերակներին⁷⁹⁶:

Օսմանեան շրջանում կազմուած տեղեկագրերում գիւղանունը արձանագրուած է *Pürkashen* ձեւով, որ ինքնին տալով տեղանունան մէկ այլ տարբերակ՝ Բիւրքաշեն (հազար շէն ունեցող) խօսում է բնակավայրի գոտտ հայկական լինելու մասին⁷⁹⁷: Ինչ վերաբերում է Կ. Սասունու եւ Ա-Դօի նշած Թրքաշեն տարբերակին ամենայն հաւանականութեամբ պէտք է համարել վրիպակ⁷⁹⁸:

Քեմալական Թուրքիայում՝ 1928ին գիւղն հաշուառուել եւ արձանագրուել է Փրկաշեն անունով (*Prkashen*)⁷⁹⁹: Ներկայումս ամբողջութեամբ բնակեցուած է քրդերով եւ կոչոււմ է *Oğlakçaya* (*Oğlakkaya*)⁸⁰⁰:

20-րդ դարասկզբին Վերին Բուլանըքի Փրկաշեն գիւղում հայերն ունէին մէկ ուսումնարան, վեց ջրաղաց եւ մէկ քարաշէն եկեղեցի՝ Ս. Աստուածածին⁸⁰¹ Տ. Խաչատուր եւ Տ. Յարութիւն քահանաների սպասաւորութեամբ⁸⁰²:

⁷⁹³ Այլ վիճակագրութիւններ տե՛ս Kévorkian R., *The Armenian Genocide, A Complete History...*, էջ 350; Մարտիրոսեան Ն., Վան-Տոսպ: Աւարպետ, Բուլանըք, Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁷⁹⁴ Միրախուրեան Մ., նշ. աշխ., էջ 93:

⁷⁹⁵ Ա.Դօ, էջ 147:

⁷⁹⁶ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 344:

⁷⁹⁷ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 19:

⁷⁹⁸ Սասունի Կ., Պատմութիւն Տւրօնի..., 1957, էջ 355:

⁷⁹⁹ TC, Dahiliye Vekaleti, Son Taksimatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928:

⁸⁰⁰ <https://www.houshamadyan.org/>, Պոպանըխի ֆազա, ճեղ. Մարտիրոսեան Տ.:

⁸⁰¹ Վերապրածների վկայություններ..., էջ 149–150:

⁸⁰² Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

1912ին Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Փրկաչէն գիւղում բնակւում էր 38⁸⁰³ տուն հայ: Թէոդիկը Հայոց տների քանակը հասցնում է 60ի⁸⁰⁴: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Փրկաչէն գիւղն ունէր 50 հայ ընտանիք՝ 350 բնակչով⁸⁰⁵:

Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում փրկաչէնցիների նամակները բաւական մեծ թիւ են կազմում, որն էլ վկայում է Մեծ եղեռնից առաջ տեղի հոծ հայկական բնակչութեան գոյութեան փաստը, որ չնայած շարունակական հարստահարումներին, ունէր նիւթական մեծ կարողութիւն. 500 գոմէշ ու մատակ, 600 կով ու եզ, 1647 ոչխար ու այծ, 400 մեղրի փեթակ եւ այլն⁸⁰⁶:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի յայտարարութիւնից յետոյ Բաղէշի եւ շրջակայքի հայութեան վիճակը դարձաւ պարզապէս անտանելի: Զիբրանցի ու այլ աշիրէթներ, որոնք համիդիէ գնդերի համագգեստ հագած, խմբերով մտնում էին Մեղրագետի աջ ափին սփռուած հայկական գիւղերը, կամայական բռնազրաւումներ ու անսասնձ թալան էին կազմակերպում: Այս ամենին աւելանում է նաեւ զինուորագրութեան հրամանը⁸⁰⁷:

Կառավարութիւնը նախ զինուորագրում է հայութեանը, ապա, համիդիէ գնդերը կենտրոնացնելով Բաղէշի մէջ, անիշխանութեան պայմաններում թալանի ու կոտորածի մատնում հայ խաղաղ գիւղացիութեանը: Բաղէշի նահանգի կոտորածը գլխաւորեց Աբդուլհալիքը (Ռէնտա), որ հետագային՝ Քեմալական Թուրքիայում ոչ միայն դարձաւ Յինանսների նախարար, այլեւ պաշտպանութեան նախարար եւ խորհրդարանի նախագահ⁸⁰⁸:

Փրկաչէն գիւղի կոտորածը տեղի ունեցաւ 1915ի մայիսի 1ին՝ ուրբաթ օրը, վաղ առաւօտեան: Կոտորածի հրամանը տուեց քայմաքամ Ասադ բէյը, իսկ այն իրագործեց չէյի Հազրաթի ազգական չէյի Մասումը՝ տեղացի քրդերի օգնութեամբ⁸⁰⁹:

⁸⁰³ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁸⁰⁴ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁸⁰⁵ Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁸⁰⁶ Վերապրածների վկայություններ..., էջ 149–150:

⁸⁰⁷ Մաժակ, Բաղէշի կոտորածը, Աշխատանք, քերթ, Երեւան, 1916 թ., հմր. 28:

⁸⁰⁸ Փափագեան Վ., Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը, «Վէմ», Հանդէս մշակոյթի եւ պատմութեան, Փարիզ, 1936, էջ 68–86:
<https://www.biyografya.com/biyografi/19527>

⁸⁰⁹ Մովսէսեան Ս., Բուլանդի կոտորածը, «Համբաւաբեր», 1916 թ., հմր. 43, էջ 1358–1360:

Վկայութիւնների համաձայն Փրկաշէնի 570 բնակչից գրեթէ բոլորը սպանուել են⁸¹⁰: Մաղապուրծ փրկուել եւ Արեւելեան Հայաստան են հասել տասնամեայ Տօնոյեան Մկրտիչը⁸¹¹ եւ Տօնոյեան Սեդան՝ 8 տարեկան⁸¹², հինգամեայ Մուշէեան Բերսօն/Քերսօ⁸¹³ եւ յոթամեայ Սարգսեան Մարգարը, որոնք 1916ին տեղափոխուել են Ալաշկերտի որբանոց⁸¹⁴:

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 56)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Ս[Ր]ԲԸՋՆԵԳՈՅՆ
Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏԻՐ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԵՅՈՑ
Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏՁԻ
ՊՈՒԼՆԵԼԻՈՒ ՓՐԿԸՀԷՆ ԳԻՒՂԻ ԳԵՂԹԵԱՆ ԹՈՐՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ
ԽՈՆԱՐՀԱՔԱՐ ԽՆԴԻՐ**

Վեհափա՛ռ Հայրիկ,

Լողալ չգիտցող անօգնական մարդու նման ինկած եմ այսօր աշխարհային այն փոթորկալից ծով: Ատոր հ[ա]մ[ար] տկար ձայնս առ Ձերին Վեհ[ու]թեան] կը բարձրացնեմ: Օգնէ՛ ինձ եւ որբերուս: Մի դ[ա]րման եւ մի օգնութ[եամբ] հասէ՛ք մեզ, ո՛վ գթութեան Հայր:

Վեհափա՛ռ Տէր, ունիմ չորս մատաղ որբեր, որ աշնանէ ի վեր եկած վանուցս պլանում կապրիմք: Մեծապէս շնորհակալ եմք ողորմածասրտութենէ Ձերմէ, որ այս ձմեռս մեզ՝ որբերովս, պահեցիք: Իսկ հիմայ կը ստիպեն ինձ գնալ, եւ չգիտեմ՝ թէ ո՞ւր գնամ, եւ որո՞ւ տամ այս մեր չորս անմայր որբեր, որոց մեծը 10 տարեկան է: Ոչխար չեն, որ պահ տամ, ատոր հ[ա]մ[ար] կապուած եմ եւ չեմ կարեր բաժանուիլ, գործերու գնալ եւ մուրալ եւս չեմ կարող:

Ուստի կը խնդրեմ, կաղաչեմ երեսանկեալ՝ կ[ա]մ ինձ մի շրջաբերական գիր մը շնորհէք, կամ մի ճանապարհածախս, որ թողում-գնամ հայրենիք:

Թերեւս ազատուինք այս անտանելի դժբաղդութ[եան]էն:

Որ միշտ եւ յաւիտեան Ձերին Հայրական քաղցր կենաց աղօթարար լինեմք:

Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ] ԹՈՐՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

Ապ[րիլ] 10, 1896

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

⁸¹⁰ Վերապրածների վկայություններ..., էջ 149–150:

⁸¹¹ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Ֆաւելուած հմր. 23:

⁸¹² Նոյն տեղում:

⁸¹³ Նոյնի Ֆաւել. հմր. 40:

⁸¹⁴ Նոյնի Ֆաւել. հմր. 27:

**ՎԵՀԸՓԸՌՌ ՏԵԸՌՆ ՏԵԸՌՆ ՄԿՐՏԻՉ ԿԸԹՈՂԻԿՈՍ
ԸՄՆԵԸՅՆ ՀԸՅՈՅ Ի Ս. ԷՋՄԻՆՈՒՆ**

Գթառա՛տ Հայրիկ,

Ստորագրեալս՝ Պուլանգ գաւառի Փրքաշէն գիւղացիս, անցեալ տարի մեր կողմ պատահած հացի թանկութեան պատճառաւ կինս մեռնելով, երեք մանչ զաւակ եւ մէկ աղջիկ որբ մնացին: Ես ալ չ'կրնալով նոցա ապրուստն հայթհայթել, այնպէս անճար մնալով, փոքր որդիս երկիր թողլով, միւս երեք զաւակունքս առած՝ այս կողմ անցայ՝ ամենատանջանքով: Եւ այժմ այստեղն ալ որդիքս չեն թողուր, որ գնամ աշխատեմ եւ բերեմ գիրենք պահպանեմ: Եւ ուրիշ մարդ ալ չունիմ, որ զանոնք նոցա քով թողլով դիմեմ աշխատութեան:

Այսպէս մի տարի լման է, որ առած ասդին-անդին ման կուգամ ու ճարելով-մուրալով հազիւ կը կարողանամ սովամահէն պաշտպանիլ:

Բայց չունին ոտնաման, չունին եւս հագնելու զգեստ: Նոցա պատըսպարան՝ միայն իմ գիրկն է:

Այսպէս թափառելով մէկ օր մը լեռան գլուխ ցուրտէն կամ ջուրէն պիտի մեռնին: Եւ եթէ տանելու ըլլամ՝ մի գիւղ կամ մի տուն, երկու կամ երեք օր կը պահպանին, ապա դուրս կը վռնտեն, ինչն որ տղոցս ձեռքէն ոչինչ աշխատանք չէլլէ եւ ինձանից չեն բաժնուիր եւ այնպէս վզովս ինկած գիշեր եւ ցորեկ մօր նման շալկած՝ ման կուգամ:

Հայրիկ, այժմ երկու մանջ զաւակունքս առնելով դիմեցի Վեհափառութեանդ, եւ համբուրելով զարշապարդ կը խնդրիմ եւ կը պաղատիմ, որ գթառատ ձեռքդ կարկառեա ամենաթշուառ ծառայիդ եւ զաւակացս, որ նոցա ուսանելու լաւ միջոցն է: Բարեհաճիս ընդունել հովանեացդ տակ, որ թէեւ աշխարհային հարստութենէ զուրկ եմք, գոնէ ա[ստուա]ծային գիտութ[եամբ] եւ շնորհօք զուրկ չ'գտնուինք:

Որ եմք հանապազ աղօթող առ բարձրեալն Ա[ստուա]ծ թանկագին կենացդ:

ՄՆԱՄ ՀՀՈՒ ԶԱԽԱԿ ՔՈՅ ԹՈՐՈՍ ՅՈՒՍէՓԵԱՆ

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 744)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏԻՐ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ
ՀԵՅՐԵՊԵՏԻ ԵՒ ՈՂՈՐՄԸԾ ՀԵՅՐԻԿԻՆ ԸՄԵՆԸՅՆ ՀԵՅՈՅ
ԲԸՆՆՈՒԹԸՅ ՓՐԿԸՇԸՆ ԳԻՒՂԻՅ, ԳԸՂԹԸԿԸՆ ԹՈՐՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԷ**

Աղերսանօք խնդիր

Ողորմած Տէր,

Երեք մատաղահաս զաւակներիս անճարութեան մասին 20 օր առաջ յայտնելով Վեհափառութեանդ՝ անմիջապէս ի գուր շարժելով ուղարկեցիք Օշական գիւղն: Բայց այնտեղ էլ, հազիւ մի քանի օր հաց գտայ երեսայոցս:

Ստիպեալ դարձեալ առի՝ վերա<յ>դարձայ: Այս 10 օր է՝ Ս[ուրբ] Աթոռոյդ *պլանումն* անօթի եւ բոլորովին անխնամ ապրում եմք, բայց այն եւս կիսնայեն մեզի՝ թշուառներիս, արտաքսելով անտի:

Արդ, ողորմած Հօրդ գթութիւնը եւ ողորմածութիւնը խնդրելով, կը դիմեմք Սուրբ Հօրդ գարշապարը: Բարեհաճիք մի պատուարան որոշել իմ անմայր զաւակացս, որ ինքս միջոց ունենամ մշակութեամբ հայթայթել օրական ցամաք հաց գոնիայ: Որով երախտապարտ կացուցանելով զմեզ՝ օրհնելով պիտի օրհնեմք անգին կեանքը Վեհ[ափառ] բարերարիդ:

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅԹ ԹՈՐՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

1894 թի, 17ն նոյեմբերի,

ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ

ՔԱՐԱԱՂԸԼ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(KARAAĞIL)

Քարաաղըլ գիւղը գտնւում է Կոփ աւանից 16 կմ հիւսիս-արեւմուտք՝ Արածանի (Մուրադ) գետի աջ ափին: Դատելով նամակների մեծ քանակից՝ Քարաաղըլ գիւղը պէտք է համարել Բուլանըք գաւառի հայաշատ գիւղերից մէկը: Խրիմեան կաթողիկոսի ֆոնդում 1893–1896 թթ. ընկած ժամանակահատուածում նամակների թիւն անցնում է 5 տասնեակը: Տեղացիներն իրենց գիւղն անուանում են Գարաղըլ⁸¹⁵, Խարախլոյ, Խարախըլ⁸¹⁶, Կարաղըլ, Ղարաուլ, Ղարաղլու⁸¹⁷, Ղարաուլ, Ղաղլ, Ղարայ դալ, Ղարաղըլ, Ղարաղլ, Քարա-աղըլ, Քարաղել, Քարաղըլ, Ղարաղլու⁸¹⁸: 1916ից մինչ օրս գիւղը կոչւում է Քարաաղըլ (Karaağıl): Քրդերն այն անուանում են Քերեգիլ⁸¹⁹:

Տեղանունն առաջացել է քարա/սեւ եւ աղըլ/գոմ բառերի միացումից: Այսպիսի տեղանունակազմական ձեւեր հայերէնում շատ ունենք, ինչպէս օրինակ Ատոմունգոմ, Ամրագոմ, Խորգոմ եւ այլն: Կ. Սասունու մօտ գիւղը յիշուած է Գարագել ձեւով⁸²⁰:

Քարաաղըլ կամ Խարախլոյ գիւղն ունէր մէկ եկեղեցի՝ Ս. Մինաս⁸²¹, որը տեղացիների վկայմամբ 1915 թ. 400-ամեայ հին կառոյց լինելով, ունէր 75 ոսկի արծողութեամբ մագաղաթեայ Աստուածաշունչ⁸²²: Գիւղում գործում էր 150 աշակերտանոց երկու դպրոց, կային բազմաթիւ ջրաղացներ ու ձիթհանքեր⁸²³:

⁸¹⁵ Ներսիսյան Մ., 1965 թ., էջ 88; Թեղիկ, Գողգոթա, էջ 100:

⁸¹⁶ Պուլանըքցի Կարապետ, «Համբարաբեր», 1916 թ., հմր. 26:

⁸¹⁷ ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 264, նամակագիր՝ Յովսէփ Տէր Յարութիւնեան, ՄՄ, Խկֆ, թղթ. 105, վաւ. 63, նամակագիր՝ Կօկո Աւագեան; ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 17, նամակագիր՝ Մանէ Դաւթեանց; Ղարդու ձեւով հանդիպել ենք 103/45 վաւերագրում; Խարաղի ձեւով տե՛ս թղթ. 103, վաւ. 86ում, նամակագիր՝ Գասպար Յարեան, Խարաղի գող, 1895 թ.; Ղարաուլ ձեւով, տե՛ս թղթ. 103, վաւ. 93ում, նամակագիրներ՝ Ապտալի Պողոսեան, Պետօ Սօսեան, Օսանէ Բարսեղեան; Փուլանիսյա Ղաղ ձեւով տե՛ս ՄՄ, Խկֆ, թղթ. 103, վաւ. 252:

⁸¹⁸ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելուած հմր. 48:

⁸¹⁹ <https://nisanyanmap.com/?y=Karaa%C4%9F%C4%B1&lv=&t=Bulan%C4%B1&u=1&ua=5>

⁸²⁰ Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի, 1957, էջ 355:

⁸²¹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 452, թթ. 9–11:

⁸²² Վերապրածների վկայություններ..., էջ 168–170:

⁸²³ Վերապրածների վկայություններ..., էջ 168–170:

1895ին գիւղը ենթարկուել է Աբդուլ Համիդ II կոտորածներին, տեղահանուել է բնակչութիւնը, հարստահարուել ու զրկուել ունեցուածքից:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից յետոյ այստեղ սկսում են բնակութիւն հաստատել Կովկասից գաղթած օսեր:

Քարաաղըլ գիւղի կոտորածը կազմակերպուել է 1915ի ապրիլի 29ին: Քուրդ Ջերբանի Սադի աղայի 90 ձիաւորները, իսաիդ աղա Բախոյի 75 ձիաւորները, բիզուեցի Մուրադ աղա իսաիդ-օղլուն՝ 35 ձիաւորով յարձակում են Քարաաղըլ գիւղի վրայ⁸²⁴: Մէկ օր առաջ՝ ապրիլի 28ին, քուրդ ցեղապետերը գիւղից տանում են 475 զոյգ եզ, բոլոր կովերը, ոչխարներն ու մատակները: Թիֆլիսի Մշակ թերթի փոխանցմամբ Յեղասպանութիւնից առաջ այստեղ եղել է 191 հայկական տուն՝ 1550 բնակչով, որից սպանուել են 575ը, իսկ 975 անձ գիւղի ծխատէր քահանայ Տէր Յարութիւն Բօյաճեանի առաջնորդութեամբ կազմակերպել են յամառ ինքնապաշտպանութիւն⁸²⁵:

Գաղթից յետոյ քարաաղեցիներին փրկուած բեկորները բնակութիւն են հաստատել իսապու (Ղափլի⁸²⁶՝ Արթիկի շրջանի գիւղերից), Բաշ-Շիրակ, Ճզխլար (Կարսի մարզի՝ Աղբաբայի շրջան), իսանուալ, եւ այլ գիւղերում:

Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակներում տեղացիներից ցան է բողոքն ու գանգատը հարստահարութեան, կրօնափոխութեան, զրկանքների ու զաւակների յափշտակութեան մասին, որին այլեւս չգիմանալով՝ նրանք վերցրել են գաղթականութեան ցուպն ու դիմել դէպի Արեւելեան Հայաստան:

Սակայն այստեղ նրանք հարկադրուած եղան ապրել առանց ծածկ ու տանիք, հանապազօրեայ հացի կարօտ, ուստի խնդրանքներից զատ նամակները կարծես թէ բողոք ու սրտի ցասում են արտայայտում. «Մեր քաղցածութիւնը միշտեց աչքերիս լոյսը, չկարողացա[յ] լիովին խոսքերս պարզել գրչին, որ մատուցանէի Սրբոյդ հայրութեանդ»⁸²⁷:

Թշուառութեան մէջ, ապագայի հանդէպ ունեցած տարակարծութեամբ լցուած՝ գաղթականները, յաճախ հայոց Հայրիկի խնամքին են յանձնել զաւակներին՝ իբրեւ ապագայի ամենաճշգրիտ որոշում. «Վեհափառ տէր, ես Բուլանուղ Ղարաղլ գուղից եկածիմ, ու բէրէլով հէր իրէք որբիս սա թշուառութեանըս պատճառով, խոնարապար կաղաչիմ Ձերդ Վեհափառութան՝ վէրցնէք իմ թշվառ գավակներիս Ձերդ որբախնամ հովանաորութան տակ,

⁸²⁴ Ատրպեա, Բուլանրկ, հմր. 213:

⁸²⁵ Նոյն տեղում:

⁸²⁶ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ., 440, քթ. 27–30, ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 452, քթ. 9–11:

⁸²⁷ ՄՄ, Խկֆ, քղթ. 104, վաւ. 20:

որ աբայգաին մի լուիս ճարած լինին իրանց: Խոնարապար կաղաչիմ պաշտելի Հայր չի մէռօժէք իմ խնդիրը ու ապակային օքնագան լինիք իմ թշվառիկ որբկերանցը»⁸²⁸:

Հայոց մեծ եղեռնից առաջ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերի համաձայն Քարաաղըլ գիւղում բնակւում էր 1312 բնակիչ⁸²⁹: Թէոդիկի հաշւումների համաձայն հայութեան թիւը կազմել է 160 տուն⁸³⁰: Ս. Կարայեանի կազմած ցուցակի համաձայն 1914ի դրութեամբ Քարաաղըլ գիւղն ունէր 85 հայ ընտանիք՝ 595 բնակչով⁸³¹:

Մեծ եղեռնի արհաիրքներից փրկուել եւ տարբեր որբանոց-ապաստարաններ է տեղափոխուել միայն մէկ որբ՝ տասնամեայ Մանուկեան Մուշեղը, որը 1916ին գտնուել է Ալաշկերտի որբանոցում⁸³²:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 104, վաւ. 20)

ՆՈՐԻՆ ՏԵՆՈՒՆ ՏԵՆՈՒՆ ՎԵՀԵՓԵՌ ԿԵԹՈՒՂԻՍՈՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԵԼԾՆԵԼ [Յ]

ԲՆԵԿ [ԻԶ] ՄՈՒՇԸԼ [Յ] ԳԵՆԵՌԱԿ ԳՈՒՂԱՆՂՈՒ ՍԵՀՄԵՆԻ
Ի ԳԻՒՂՆ ԴԵՐԵՂԼ ՔԵԶ ԾԵՌՈՒՅ ՄԿՐՏԻԶ ԸՍՏԵՏՈՒՐԵԼՆՅ

Ամենախոնարհաբար խնդիր

Սուրբ Հոյրդ մերում Աստուածածնա[յ] երեսանկեալ համբուրում ենք Սուրբ աշդ, աղերսալի արտասառք առաջի Աստուծոյ, եւ զթառատ Սուրբ Հօ<յ>րն մերում: Բացատրում ենք մերում ցաւալի վիշտ այնմ, որ յայտնի լինելով ամբողջ երկրիս էութիւնն եւ պատուհասն, մեզ տիրելով ձեռամբն Տաճկա[յ] քիւրդերից, որ սեփակալեցին մեր ամենայն ինչ իրերն: Բացի մեր ունեցեալ իրերից: Ենչարկեցին տանջանաց՝ ստիպելով մեզ կրօնափոխութեան: Եւ մենք, չ'զիմանալով քիւրդերի առաջարկութեանը, առանք մեզ հետ մեր գերդաստանն, զաւակներով, գիշեր ու մթին ժամանակ, 1894 ամի մայիս ամսոյ մէջ, ճանապարհորդեցինք բարեխնամ Ռուսեայի երկրում՝ Ձերին Սրբոյդ Հայրական գթութեանդ հովանաւորութեան տակ պաշտպանելու կրօնն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերում:

⁸²⁸ ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 104, վաւ. 97:

⁸²⁹ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350:

⁸³⁰ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁸³¹ Karayan S.Y., M.D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁸³² «Համբաւաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յաւելոսած հմր. 48:

Բնակուեցինք մի առ ժամանակ Ծալկա[յ] սահմանում՝ Ղուշջի գեղը՝ բաղկացած քառասուն եւ եօթն անձանցից: Այժմույս գըտնըվում ենք Ղուշ-ջի գեղը տասն եւ երկու անձ, իսկ Ախլքալակա[յ] սահմանում՝ Տամալագեղը՝ տասն եւ ութ անձ, Խանտոգեղը՝ ութ անձ Օրճա գեղը, Վաչիան գեղը՝ ինն անձ: Այնպէս որ, ամբողջ երկու ամիս չենք կարող մի տեղ բնակուիլ, որով Հասարակութիւնը կարծիք է ունենում մեր վերայ, թէ ժամանակին կարող է[ն] սեփականել մեր արտերից:

Թափառում ենք մինչ ի ցայսօր օտարութեան մէջ՝ զրկուած լինելով մեր հայրական հողից, նաեւ մեր ունեցած կալածքից: Գիշեր եւ ցերեկ ակն եւ հառաչանք անելով, մեծերս եւ փոքրերս թափում ենք ամեն մի ժամ դառն արտասուք՝ ի դէմ առաջի Աստուծոյ եւ Ձերին Սրբութեանդ դէմ:

Արդ, անկեալ աղաչում ենք՝ խնա[յ]ել մեր գերդաստանեաց եւ երեխանց ցաւալի վշտերն ու վէրքերն, որ կարող էք փարատել ի դէմ առողջութեան:

Ուստի մեր երկրի բնակիչ հայերի վշտերն ու վէրքերն յայտնի լինելով Ձերին Սրբութեանը՝ սպասում ենք օգնութեան՝ ազատելու մեզ քաղծածու-թիւնից⁸³³: Եւ ի՞նչ լինելու է մեր վերջը, որ այժմուս մնում ենք խորին լուռութեան մէջ: Սպասում ենք Սրբոյդ օգնութեանը:

Ախ, Հայրի՛կ Զան, Հայրի՛կ,

Մեր ամեն մի խոսքերին առ Ձերին սրբութեանդ դէմ թափում ենք մի-մի բուռ արտասուք: Դժուարին կարողացանք այսքանը թերթիս մէջ բացատ-րել, որով մտաբերելով մեր արտերն, եզներն, տան կայք-կարասի՛ւն, մեր քաղցածութիւնը՝ մթնեց աչքերիս լոյսն, չ'կարողացա[յ] լիովին խոսքերս պարզել զրչին, որ մատուցանէի Սրբոյդ Հայրութեանդ: Վերջի բացառու-թեանս թուլացած սրտերովս ընկնում ենք երեսանկեալ Սրբոյդ առջեւն եւ համբուրում ենք Սուրբ աջդ ջերմեռանդ սրտով ու արցունք թափելով, որ չ'խնա[յ]ել մեզնից սուրբ օրհնութիւնդ՝ ականատես խեղճ ու մոլոր, պան-դուխտ, քաղցած ծառաներիդ:

Ուստի ո՞ւմ դիմենք մեր վիշտն ու քաղցածութիւնն, եթէ ոչ Սրբոյն Հօյրն մերում, որով կարող ես բժշկել եւ արձաճել:

*ՄԿՐՏԻՉ ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆՅ, ՎԱՃԱՆԵԱՅ ԳԻԻՅՈՒՂ ԳԸ ՄԸՆԱՄ
1895 ամի, Յուլիս ամսոյ 11ին*

⁸³³ Այս նոյն նամակում հեղինակը բաղցածութիւն բառը գործածել է երկու անգամ: Առաջին անգամ՝ *քաղծածութիւն* եւ երկրորդ անգամ՝ *քաղցածութիւն*: Նմանօրինակ դէպքերում նամակ-ները արտագրել ենք նոյնութեամբ:

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 104, վաւ. 97)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՆՈՒԹՅԱՆ ՏԻՎՈՒՆ ՏԻՎՈՒՆ ՄԿՐՏԻՉ
ԸՐԼՁԻՆ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅԻ ՀԵՅՈՅ**

Խոնար[Հ] Խնդիր

Վէհափա՛ր Տէր, ես Բուլանուղ Ղարաղլ *գուղից եկածիմ*, ու *բէրէլով* հէր *իրէք* որբիս սա թշվառութե[ն]անըս պատճառով, Խոնար[Հ]ապար կաղաչիմ Ձերդ Վէհ<Հ>ափառութե[ն]ան՝ վերցնէք իմ թշվար զափակնէրիս Ձերդ որբութան⁸³⁴ հովանաորութե[ն]ան տակ ու աթա<յ>գա[յ]ին մի լուհա ճարած լինին իրանց:

Խոնար[Հ]ապար կաղաչիմ պաշտելի Հա[յ]<ի>ր չի մէռժէք իմ Խնդիրըս ու ապակային օքնութան *տված* լինիք իմ թշվառիկ որբկերանցըս:

*ՄՆԱՄ ԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ՝ ԶԱՄԻՄ ՔՈՉՈՅԵԱՆՅ
ԲՈՒԼԱՆՈՒՂ ԳԱԻԱՌԻՅ, ՂԱՐԱՅ ՂԱԼ ԳՈՒՂԻՅ*

96 թիւ, 20ն Սեպտեմբեր

(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 103, վաւ. 93)

**ՆՈՐԻՆ ՎԵՎՓԵՆՈՒԹԵԱՆ ԸՄՏՈՒԸ]ԾԵՐԵԱԼ ՀԵՅՐԵՊԵՏԻՆ
ՄԵՐՈՅ Տ[ԵԱՌԵՆ] Տ[ԵԱՌԵՆ] ՄԿՐՏԻՉ Ը. ՍՐԲԸՆԵԳՈՅՆ
ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ**

**Ի ԲՆԵԿՉԵՅ ՂԵՐԵՈՒԼ ԳԵՂՁ ԲՈՒԼԱՆՈՒՆ ԴԸՁԵՅԻ,
ՏԵՃԿԸՀԵՅԸՍՏԵՆԻ ԸՊՏԵԱԼԻ ՊՈՂՈՍԵԱՆ [Է],
ՊԷՏՕ ՍՕՍԵԱՆԷ ԵՒ ՕՍԵՆԷ ԲԵՐՍԵՂԵԱՆ [Է]⁸³⁵**

Աղերս

Ի թիւս թշուառ գաղթականաց տարաբաղդ հայուն Տաճկա-Հայաստանի, որք յանցելումն ամի, յոգի ապաստան, տարազրեցան ի մայրենի ծոցոյն առ Ռուսահայս:

⁸³⁴ Իմա՝ որբախնամ:

⁸³⁵ Նամակի սկզբնամասում ունենք Բարսեղեան, իսկ վերջնամասում Բարսեխեան: Մենք արտագրել ենք նոյնությամբ:

Մեք երիւք ընտանեօք՝ հոգիք քսան եւ երեք, թողաք զհայրենի շէնս ի յաւերակ եւ մազապուր զերծաք աստ՝ ի գիւղն Դահարլի՝ վիճակին՝ Աղէքսանդրապօլոյ:

Բազումք ի մերոց գաղթականացս զչորաբեկն հաց պարէնի ի մուրացկանութեան չայթայթեն, իսկ մեք, զայդ վաստակեմք դառն մշակութեամբ զամս այս ողջոյն՝ աննպաստ օրավարձիւք, որով սպառեցան զօրութիւնք ոգոցս եւ սիրտք մեր գալարեցան ի սովոյ:

Ձեզ եւ մեզ ոչ յուստիքէ նպաստ օգնութեան, թէպէտ չ'ուրանամք զայս խնամ ժողովրդեանն Դահարլի գեղջ, որք ոչ խնայեն ի մասնէ կերակրոց իւրեանց, երբեմն մասն Ս[ուրբ] բաժին մատակարարել որդւոց մերոց: Սակայն այդուհանգերձ զի՛նչ կեանք գերեվարելոյս ի պանդխտութեան, եթէ ոչ՝ սով ընդ մերկութեան, վիշտք ընդ կարօտոյ հայրենեաց՝ հալին եւ մաշին անձինք մեր, եւ ցաւք, որպէս ձէթ անցին ընդ ոսկերս մեր:

Առ Ձեզ դիմեմք, ա՛ռ բազմավի՛շտ Հայրիկիդ՝ թշուառացեալ որդոցս ձեռն մատուցանել, եթէ հնար է, առ յօգնութիւն բազմակարօտ ընտանեացս, աղաչեմք:

ԱՊՏԱԼ ՊՕՂ[ՈՍ]Ե[Ա]Ն,
ՊԷՏՕ ՍՕՍԵ[Ա]Ն,
ՅՕՀԱՆ ԲԱՐՍԵՆԵ[Ա]Ն

13ն Յուլիսի, 1895 ամի
Ի գ[իւղ] Դահարլու

(ՄՄ, ԽԿՖ, թղթ. 103, վաւ. 258)

ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԸՌՈՒԹ[ԵԼ]Ն Տ[ԵԼՈՒՆ] Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԶԻ
Ս[Ր]ԲԸԶԵԼԳ[ՈՅ]Ն ԵՒ Ը[ՍՏՈՒԸ]ԾԸՆՏԻՐ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ
ԸՄ[ԵՆԸՅՆ] ՀԸՅՈՅ

ՄՇՈՒ ՊՈՒԼՆԸԴԻ ԽԸՐԸԽԸՅ ԳԻՂԴ ԵՐԿՈՒ ՏՆՎՈՐ ԳԸՂԹԵԿԸՆ
ՈՐԲԵԻՇՅՐԲԵՆՐ

1. ԵԱՂՈՒՇ՞ ՄԿՐՏԻԶ[ԵԱՆ] – 5 ՀՈԳԻ
2. ԵԱԼՏՈՒՍ՞ Մ[Ա]ՐՏԻՐՈՍ[ԵԱՆ] – 6 ՀՈԳԻ

Խոնարհ խնդիր

Վեհափա՛ռ Հայրիկ,

Երկուքս ալ անայր եմք այս երկու տարի կը լինի: Վ[ա]սնդի մեր գլխաւորները քուրտերը սպանեցին: Մենք ալ վախէ թողիմք այս կողմ եկամք:

Վ[ա]սնդի ամէն ունեցածնիս տարան: Բան չը թողուցին. ո՛չ մալ, ո՛չ ապ-
րանք: Ընտանիքնիս, որ բոլորը գրէթէ աղջիկ անհատներէ կը բաղկանայ...

Ես՝ Եպտոս աղ[ա]խինդ, որ մի ինն տարեկան որդի ունիմ, եւ նա է ինձ
չըջեցնող, որ աստ բերաւ աւանակաւ⁸³⁶: Զի ոտք չունիմ, որ քալիմ, ձեռքերս
ալ քամին⁸³⁶ բռներ է: Դարձած իմ կորչ⁸³⁷: Ի՞նչ ընեմ: Այստեղի մարդիկ
մեզանէ տան վարձք են ուզում: Մենք ապրուստ չունինք, վարձք ո՞ր տե-
ղէն վճարեմք: Մի դ[ա]րման տուէք մեզ:

Հայրի՛կ, ի սէր Ք[րիստո]ս[ի] մեզ մի գրկիր քոյին առատ-առատ շնորհ-
ներէն: Զի քոյ հոգեւոր որդիքներն իմք:

*ՀԱՄԲՈՅՐ Ի ԱՄ[ԵՆԱ]ԲԱՇԽ ԱԶՈՅԴ ԶԵՐԻՆ ՎԵՀՈՒԹԵԱՆՑ՝
ՄՆԱՄ ԽՈՆԱՐՀ ԵՒ ԱՆՊԱՇՏՊԱՆ ԱՂԱԽԻՆ ԶԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ՝
ԵԱՂՈՒՇ ԵՒ ԵԱԼՏՈՒՍ*

*1895, 30 Սեպ[տեմբեր]
Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]տ*

(ՄՄ, ԽԿՖ, Թղթ. 102, վաւ. 620)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԸՌՈՒԹ[Ի]Ն ԾԱՅՐԸԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐԳ ԵՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԸՊԵՏ ԱՄ[ԵՆԱՅՆ] ՀԱՅՈՑ Տ[ԵԼՈՒՆ]
Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏԻՉ ՍՐԲԸՋՆԸԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍ
ՊՈՒԼՆԵԼԻԻ ԿԵՐԸ-ԸՂԸԼ ԳԻՒԸՅԻ ՆԵՏՕ ՏՕՆՕԵՆՅԷ**

Ցաւալի աղերս

Հայրի՛կդ Վեհափառ,

Այս քանի օր կը լինի, որ տեղս եկած իմ, եւ ոչ մի հայ սրտակից ինձ չը
պատահեց, որ հարցընէ, թէ դու ո՞վ ես եւ կ[ա]մ ի՞նչ պատճառաւ տեղս եկած
ես, եւ այլն:

Վեհափառ Տէր, ես ունիմ 11 ընտանիք, բոլորն ալ գրէթէ անթեւ ձա-
գուկներ: Զը կրնալով համբերել քրթական հարստահարութեանց՝ թողի
ամէքը այնպ[է]ս՝ երեսի վր[այ], եկած իմ առ ոտս Զերդ Վեհափառութեան.
մի օգնութիւն եւ մարդասիրական շնորհաց փափագանօք:

⁸³⁶ հողացաւ, ոսկրացաւ

⁸³⁷ Կորչ, տե՛ս կորչ, կարի՛ն: Կամարաձեւ, թեփուած, ծուռ: Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէնի բա-
ցատրական բառարան, Թէհրան, 1982, հտ. 2 Զ-Կ, էջ. 479:

Վեհ[ափա՛ռ] Տէր, չեմ կարող պատմել մեր թշուառ ընտանեաց ցաւալի կեանք, վ[ա]սնդի մերկութիւն, քաղցածութիւն, նեղութիւն, հալածանք անտանելի են:

Գալով հողային եւ կարողութեան մասին, որ բնաւ չունիմք եւ մարմնական կարողութիւնէ զուրկ:

Այսպէ[ն]ս՝ յուսալիւր փափագանօք Ձերին ոտք կը դիմիմ եւ կը խնդրիմ, որ մեզի ալ անմասն չը հանէք, վ[ա]սնդի յոյժ նեղեալ եւ վշտագնեալ եմք:

ՄՆԱՄՔ ՁԵՐԻՆ ՎԵՀ[ԱՓԱՌՈՒԹԵԱՆ] ԱՆԲԱԺԱՆ ԵՒ ՀՈԳԵԿԱՆ⁸³⁸

ՆԱՏՕ ՏՕՆ[ՕԵԱՆ]Յ

23 Մարտ, 1894

Ի Վաղարշապատ

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 102, վաւ. 805)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԸՓԸՌՈՒԹԻՒՆ, ԾԵՅՐԸԳՈՅՆ ՊԼՏՐԻԸՐԻ
ԿԸՐՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԸՅՈՑ
Տ[ԵԸՌՆ] Տ[ԵԸՌՆ] ՄԿՐՏՁԻ Ը.**

**ՄՇՈՒ ԲՈՒԼԸՆԻ ԽԵՐԸՂԱ ԳԻՒԼԸՅԻ Ս[Ը]ՀԸԿ ՏԷՐ
ԿԸՐԸՊԵՏԵԸՆՅԷՆ**

Խոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ տէր,

Ես՝ լինելով ի յարգանդի բուն Մուշ Բուլանխ Խարաղըլ գիւղի բնակիչ, եւ իմ գերդաստանս բաղկանում է թուով 16 հոգուց: Չնայելով, խնամաշնորհ Տէր, իմ հայրը յիսուն տարեկան տէրտէր է, եւ տաճիկներին են մատնէ հօրս: Տաճիկները բանտարկել են, չեն թողում, որ եկեղեցի գնայ, իսկ հօրեղբորս՝ մեր ոչխար[ի] հօտի մէջ սպանել են, եւ բոլոր հօտը յափշտակել են: Իսկ մենք մնացել ենք անտէր ու քաղցած: Ուստի այժմ ամենազթառատ Հօրդ խնամոցը խոնարհաբար հայտնում եմ. կամ ինձ ողորմացէ՛ք, կամ մէկ թու[խտ] տուէք ինձ՝ ման գամ ես, փող ժողովիմ, տանիմ իմ երեխանց պահիմպահականիմ:

*ՁԵՐՈՒՄ ՎԵՀԱԲԱՌՈՒԹԵԱՆ ՄՐԲՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱԽՈՆԱՐ[Հ] ԾԱՌԱՅ՝ Ս[Ա]ՀԱԿ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ*

⁸³⁸ Իմա՝ հոգեզաւակ: Հոգեկան ձեւով մի քանի անգամ հանդիպել ենք մաւ Նայ ժողովրդական հեփիաթներում, օր. *Թագաւորի տղեն ընդունեց Գելվենի մարդուն հոկեզան ախպեր* (արտագրել ենք պահպանելով բնագրի ուղղագրութիւնը), տե՛ս Նայ ժողովրդական հեփիաթներ, խմբ. կոլեկիա՝ **Առաքելյան Բ. Ն.** եւ ուրիշներ, Երեւան, 1984, հտ. 12, էջ 596:

**ՆՈՐԻՆ ՎԵՀԷՓԼՈՒԹԵԼՆ Ս[Ր]ԲԸԶՆԵԳՈՅՆ ԿԼԹՈՒՂԻԿՈՍԻ
ԸՄ[ԵՆԵՅՆ] ՀԸՅՈՅ Տ[ԵԼՈՒՆ] ՄԿՐՏՁԻ**

1. ՊՈՒԼՆԵԼԻՈՒ ԽԵՐԵՂԸ ԳԻՒՂԻ ԿՕԿՕ ԸՌԵԳԵԼՆ [Է]
2. ՄՇՈՒ ՕՐԿՆՈՅ ԳԻՒՂԸՅԻ ՄԻԻԹԵՐ ՄԼՆՈՒԿԵԼՆՅԷ

Ամենախոնարհաբար խնդիր

Վեհափա՛ռ Տէր,

Խոնարհ երկու ծառաներդ եւս համարեայ թէ մի տարուան ծնունդ եմք,
թէեւ որոշ գիւղի մարդիկ, բայց ցաւերնիս գրէթէ միեւնոյնն է:

Նուաստ Կօկօ ծառադ, որ իրեք ընտանիքս թողեր իմ մեր գիւղը, անձս
ազատելու հ[ա]մ[ար] փախեր իմ: Բայց հիմայ ո՛րքան փոշմաներ իմ: Երանի
թէ այնտեղ մեռնէի, քան այս չարչարանք: Եկած իմ, բայց ինչ կարօղ է անել
75 տարին հասած ծերունին: Մուրալու եւս չիմ սովոր եւ միտս դրեր իմ
Ձերին աղօթիւքներ[ով] ընտանեաց մօտ պիտի գնամ: Ոտիս մէկ կայ, բայց
ձեռքս՝ չկայ:

Գալով մեր ընկեր Մխիթար եղբօրս, որ նա ալ երկու փոքր /// որդիքներ
ունի, կիներ հետն ա, իսկ միւսը՝ Շօրակալ Փալտրուան գիւղ հիւանդ ինկած
է: Նորայ դրութիւն շատ ցաւալի է... Աչքերէն վար կը թափէ արտասուք
ինքնին:

Վեհ[ափառ] Տէ՛ր, երկուքս ալ 75 տարուան մօտ եմք: Մեր ցաւերը չէ
գրի առնուիր. Բայց միայն կը խնդրեմք, որ մեզ չը գրկէք Ձերին հայրական
չնորհներէն: Մնամք Ձերին հայրական կենաց երկարութ[եան] եւ բ[ա]րօ-
րութ[եան] աղօթարար:

Խ[ՈՆԱՐՀ] Ծ[ԱՌԱՅ]՝ ԿՕԿՕ ... ՄԽԻԹԱՐ ...

Մայիս 19, 1896

Ի Վ[ա]ղ[ա]րշ[ա]պ[ա]

**ԿԼԵՐՈՒՅ ՆԵՀԵՆԳԻ, ԶԼԵՐԻՇԼԵՏ⁸³⁹ ԳԵՒԵՆՈՒ ՓՈՒՐԻ-ՓԵՐԿԻՏ⁸⁴⁰
ԳԻՒՂԻ ՀԵՍԵՐԵԿՈՒԹԵԼՆ ԿՈՂՄԷՆ ՕՍՄԵՆԵԼՆ ՀՊԵՏԵԿ
ԲՈՒԼԵՆԳ ԳԵՒԵՆՈՒ ՂԵՐԵՂԼ ԳԻՒՂԻ ԲՆԵԿԻԶ
ՅԵԿՈՎԲ ՍԵՐԳԻՍԵԼՆԻՆ**

Վկայական

ՏՈՒՄԵՆ այս ի գիւղական հասարակութենէ Փոքր-Փարկիտ գեղջ՝ վերոյ յիշեալ առնն յայնմ, զի նա ի բազում ճնշմանէ այլազգւոյն (որ ի տես Ձերդ Վեհափառութեան եղեն) /// կարող եղեւ ամիս ի Տէրս հանդերձ ընտանեօք (որք են 7 անձինք նորահաս մանկունք) ոտք դնել ի սահմանս Նորին Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաց: Յորում թափառեալ եկն եհաս ի գիւղս Փոքր-Փարկիտ: Ի խնամատարութեան մերս դրացեաց ողորմածագոյն անձնաւորութեանց կենցաղավարի մինչ ցարդ:

Ուստի առ ի բազմութիւն ընտանեաց՝ չեղեւ բաւական ի մէնջ, ոյր սակս տուաք զայս վկայաթերթս յիշելոյն, զի կարասցէ սովաւ շնորհ գտնել առաջի Ձերդ ազգասէր Վեհափառութեան՝ յուսալով, թէ կարէ ձեռք ճարել կերակուր քաղցեալ ընտանեաց իւրոյ, որք ազատելով ի սովամահութենէ՝ անդադար աղօթելոց են առ Հայրն ամենից՝ յաղագս երկարութեան կենաց Ձերոյ Հայրութեան:

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՑ ՄԵՐՈՅ ՍՏՈՐԱԳՐԵՄՔ ԵՒ ՏԱՄՔ ՎԱԻԵՐԱՑՈՒՑԱՆԵԼ ՏԱՆՈՒՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ:

1. Զաքար Տէր-Ղազարեանց
2. Մխիթար Զաքարեան
3. Աւետիս Յարութիւնեան
4. Մովսէս Պողոսեան


⁸³⁹ Ըստ Ղեւոնդ Ալիշանի, Զարիշատը Արտաշեսեանների օրօք եղել է արհայական ամուսնալիք, որ կառուցուել էր Արտաշես Ա թագաւորի օրօք եւ նրա հօր՝ Զարեհի անունով կոչուել Զարեհաշատ, իսկ հետագայում ձեւափոխուելով դարձել Զարիշատ: Պատմագրութեան մէջ քաղաքը յիշատակում է նաեւ Զարեհաշատ, Զարիշատ անուններով: Մովսէս Խորենացին Զարիշատը յիշատակում է «Զարիշատ Վանանդայ» ձեւով՝ Տուրքերեան նահանգի Աղիովիտ գաւառի Զարիշատից տարբերելու համար: Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1843, էջ 266:

⁸⁴⁰ Բարեք Փոքր, Պարգեւ Ներքին, Պարգեւ Փոքր, Պարկեւ Փոքր, Փակիրք Փոքր, Փարգեւ Ներքին, Փարկիտ Փոքր, Փերկիք Ներքին, Փերկիք Փոքր: Գիւղ Կարսի մարզի, Կարսի շրջանում, Մեծ Փարգեւ գիւղից հս.:

5. Յովհան[ն]էս Գասպարեան
6. Գրիգոր Աղամեան
7. Խաչօ Ստեփանեան
8. Վալադ Զալոյեան
9. Թորոս Գրիգորեան
10. Մարքար Բողոյեան

ՏԱՆՈՒՏԵՐ ՓՈՔՐ-ՓԱՐԿԻՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ՝ ՎԱՐԴԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆՑ
ԵՐԵՍՓՈԽԱՆ ՓՈՔՐ-ՓԱՐԿԻՏ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱԾԱ]ԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝
ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑ

1894 ԱՄԻ Տ[ԵԱՌ]Ն, 15Ն ՅՈՒՆՎԱՐԻ
ՓՈՔՐ-ՓԱՐԿԻՏ



(ՄՄ, ԽԿՖ, ԹղԹ. 103, վաւ. 45)

ՆՈՐԻՆ ՎԵ՛ՀՓԵՆՈՒԹԵԱՆ ԸՍՏՈՒԸՆԵՐԵԱԼ ՀԵՅՐԸՊԵՏԻ ԵՒ
ՍՐԲԸԶՆԵԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ ԸՄԵՆԸՅՆ ՀԵՅՈՅ
Տ[ԵԱՌՆ] Տ[ԵԱՌՆ] ՄԿՐՏՉԻ
Ի ՄՇԵՅԻՐ ՊՈՒԼԵՆՈՒԻ ՂԱՐԱՂԱՌԻ ԳԵՂԱՍՏԱՆԻ ՄԷՐՈՎԻԷ
ՅԵՐՈՒԹԻՒՆԵԱՆ [Է]

Ամենախոնարհ խնդիր

Վեհափա՛ն Տէր,

Ամբողջ աշխարհի[ն] յայտնի է, թէ Մշեցիքս ինչպիսի նեղութիւններ, ինչպիսի հալածանքներ, որպիսի չարչարանքներ եւ սպանութիւններ քաշեցինք կեանքերուս մէջ բարբարոս քրտերու ձեռօք, որ շատ տժուար է գրի առնել եւ նկարագրել: Շատերս, տեսնելով, որ կեանքերէս պիտի զրկուինք եւ այլեւս անհնար է դիմանալ: Ես եւս, իմ բազմամարդ թշուառ եւ ողորմելի ընտանեացս հետ, որ կը բաղկանայ տասն եւ ինն հոգուց, թողնելով

ամենայն ինչ. տուն-տեղ եւ ամենայն կարողութիւն, հոգիներս ազատելու համար գաղթեցինք եկանք յԱխալցխայ: Գնացինք մօտ յԱխալցխաու Տամալայ գիւղն, որ մի օգնութիւն գտնենք: Տեսնելով տամալեցի գիւղացիներ մեր դառն, ցաւալի վիճակը, մեր մերկութիւնը, որքան եւ իցէ մեզ ողորմեցան եւ նորանց ողորմութիւններով մինչ ցարդ կապրինք: Եւ այս մասին կը վկայէն բոլոր գիւղացիներ:

Վեհափառ Տէր, այս ամենը ամենախոնարհաբար յայտնելով ամենաողորմած բոլոր հայոց ազգի Հայրիկիդ, երեսն անկեալ եւ արտասուելի աչօք կաղերսեմ՝ համբուրելով գարշապարդ՝ մի խնամք եւ ողորմութիւն անելու թշուառիս, որ մնացած եմք ներկայիս խեղճ եւ ողորմելի եւ սոված:

ՍԷՐՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՅ,

ԱՆՔՐԱՔԻՏՈՒԹԵԱՆՅ /// ԽՆԴՐԱՆՕՔ ԸՍՏՈՐԱԳՐԵՅԻ ՊՈՂՈՍ ՏԷՐ ///

Ի 4ն Յուլիսի, 1895 ամի

յԱխալցխայ

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 103, վաւ. 11)

Վկայագիր

18 յուլիս, 1895 ամի, մեք՝ ի ներքոյ սորին ստորագրողք, Աղէքսանդրապօլի վիճակի Դահարլի գիւղի բնակիչքս, տալիս եմք սոյն վկայագիրը Տաճկահայաստանի Ղարաղըլ գիւղի բնակչաց Ապտալ Պօղոսեանին, Պետոյ Սուքիասե[ան]ին, Օհան Բարսեղեանին, այն պատճառաւ, որ սոքա յիրաւի անցեալ տարում, ընտանիքով, որոնց թիւն է քսան ու երեք, գաղթեցին մեր գիւղը՝ ամենաողորմելի միճակի մէջ եւ սոքա այն անձինքն [են], որոնք ներկայ օրերումս Աղէքսանդրապօլում խնդրագիր մատուցին Նորին Վեհափառութեան ազգիս Հայրիկին՝ նպաստ խնդրելով, որի ստուգութեան համար ստորագրում ենք՝

ԱՐՍԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆ ՅՕՀԱՆԷՍԵԱՆ,

ԱԻԵՏԻՍ ՅՕՀԱՆԷՍԵԱՆ, ԳՐԵՅԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ,

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՄԿՐՏԻՉ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ,

ԱԼԷՔՍԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԿՐՏԻՉ ԳԱԼՍԵԱՆ, ՍԱՐՔԻՍ ԼՕՍԷՔԵԱՆ

ԿԱՐ[Ա]ՊԵՏ Տ[Է]Ր ԹՈՒՄԱՆԵԱՆ, ԱԼԷՔՍԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԳԱԼՈՒՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳՐԵՅԻ ՄԿՐՏԻՉ ՄԱԴՈՅԵԱՆՍ,

ՕԳՆԱԿԱՆ ԹԱԹԷՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅԱԿՈՐ Ք[Ա]Հ[Ա]Ն[ԱՅ] Տ[Է]Ր ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԴԱԻԹ Ք[Ա]Հ[Ա]Ն[ԱՅ] Տ[Է]Ր ՍԱՀԱԿԵԱՆ

Dear Mother
 I have just
 received your
 letter of the
 10th inst. and
 am glad to
 hear from
 you. I am
 well and hope
 this finds you
 the same. I
 am writing you
 now. I am
 your affectionate
 son
 J. H. [Signature]

87-29

11

[illegible]

44 pages & fragments

Wetland

$\frac{1}{4}$ -inch Sheet of metal 7ft x 2 ft

January 11

Warne-pp-e-8. S-w-e-n-f-w-e

Weges Weges

W. J. Davis, 1877-1878

St. Louis, Mo. 1897

1913. 4/26/13
unoff. conf. 4/26/13

Prüfungstag 17. Jan. 1891

auf zwei Spigen.

Where your good people

They are!

Agnes's father's name is Agnes's father's name.

349th Air Refueling Wing



ՔԱՔԱՌԼՈՒ ԳԻՒՂ (ՎԵՐԻՆ ԲՈՒԼԱՆԸՔ)

(KIRKGÖZE)

Վերին Բուլանըքի Քաքաուլու հայաշատ գիւղը գտնուում էր Նազիկ լճից հիւսիս-արեւմուտք: Այս բնակավայրը հնագոյններից մէկն է: Այն նշուած է նաեւ 1556ին կազմուած Խնուսի լիւայի մանրամասն տեղեկագրում՝ *Kekrelü* ձեւով⁸⁴¹:

Խրիմեան Հայրիկին ուղղուած նամակներում քաքաուլեցիներն իրենց գիւղն անուանել են Կաքաուլու⁸⁴², Կաքաուլու, Կեկելի (Kekeli)⁸⁴³, Կեկերլու, Քաքաուլու, Քեքերլի, Քեաքաուլու, Քակարլու, Քյաֆյարլու, Թազարլու, Թագաուլու, Թաքեարլու, Թաքիաուլու, Թաքարլու⁸⁴⁴, Գաքաուլու⁸⁴⁵: Այլ աղբիւրներում հանդիպել ենք նաեւ Քաքաուլու⁸⁴⁶, Քէքէրլու⁸⁴⁷, Քեակաուլի⁸⁴⁸, Քեաքուլու⁸⁴⁹, Խարախլու⁸⁵⁰ ձեւերին:

Նախքան Հայոց ցեղասպանութիւնը հայաշատ այս գիւղն ունէր մէկ եկեղեցի՝ Ս. Գէորգ, որը տեղացիների վկայմամբ 1915ին մօտ 100 տարուայ մի շինութիւն էր: Եկեղեցու հոգեւոր սպասաւորները երկուսն էին: Տէր Յակովբ քահանայ Գալստեանի վկայմամբ իր հօտը բաղկացած էր 200 ծխից, որոնք հաւատով պահում էին «Յազըչու», «Ս. Ստեփանոսի» եւ «Կարմիր կող» Աւետարանները: Այս ձեռագրերը Յովհաննէս Զաքարեանի, Զաքար Յակոբեանի եւ Ճազօ Տէրտէրեանի ձեռամբ, բարեբախտաբար, հրաշքով փոխադրուել են Արեւելեան Հայաստան⁸⁵¹:

⁸⁴¹ 294 Numaralı Hınıs Livâsı..., էջ 17:

⁸⁴² ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 105, նամակագիր՝ Եղիազար Յակոբեան:

⁸⁴³ H. F. B. Lynch, Armenia: Travels and Studies, volume 2, էջ 343; Kiepert R., Karte von Kleinasien (24 pafta), Berlin, 1913:

⁸⁴⁴ ՄՄ, Խկֆ, վաւ. 255: Նամակագիր՝ Բուլանուխայ Թաքարլուվայ բնակիչ՝ Կարապետ Սաֆարեան:

⁸⁴⁵ ՄՄ, Խկֆ, թղթ. 104, վաւ. 73, նամակագիր՝ Բաղդասար Մելքոնեանց: Թափարլու ձեւով տե՛ս թղթ. 103, վաւ. 329, նամակագիր՝ Բաղդասար Միմասեան:

⁸⁴⁶ Նամակ Բուլանըքից, «Դրօշակ», հմր. 12, էջ 9:

⁸⁴⁷ Թէոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁸⁴⁸ «Համբարաբեր», Թիֆլիս, 1916 թ., Յանգուած հմր. 26:

⁸⁴⁹ Նոյնի Յանգ. հմր. 27:

⁸⁵⁰ Նոյնի Յանգ. հմր. 40:

⁸⁵¹ Վերապրածների վկայություններ..., էջ 213–214: Մշոյ Սուրբ Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից ձեռագրացուցակի համաձայն Քաֆաուլու գիւղում եղել է երկու Աւետարան՝ գրուած 1300 եւ 1302 թուականներին, տե՛ս Մուրատեան Ս. Ա., Մարտիրոսեան Ն., Յուցակ Ձեռագրաց..., էջ 220:

1871ին Գարեգին վրդ. Սրուանձտեանցի ջանքերով գիւղում բացւում է առաջին դպրոցը: Այդ շրջանում դպրոցն ունէր 36 աշակերտ եւ մէկ ուսուցիչ՝ Գալուստ Ղազարոսեան ⁸⁵²: Մեծ եղեռնից առաջ արդէն գիւղում գործում էր շուրջ 100 աշակերտանոց ծխական դպրոց, որի բիւջէն կազմում էր 30 օսմանեան ոսկի ⁸⁵³:

Նախքան Առաջին աշխարհամարտը Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի, Թէոդիկի եւ այլոց հաշուումների համաձայն Քաքաուլու գիւղում բնակւել է մօտ 1306 հայ ⁸⁵⁴ (190 տուն ⁸⁵⁵):

1915–1916ին Օսմանեան կառավարութեան հրամանով նախ գինւորագրւում են մօտ 70 տղամարդիկ, որոնք, գրեթէ բոլորն էլ սպանուեցին ⁸⁵⁶, հետագայում Քաքաուլուի հայ բնակչութիւնն ամբողջութեամբ ենթարկուեց Ցեղասպանութեան: Արեւելեան Հայաստան հասան ընդամէնը մի քանի տասնեակի հասնող քաքաուլեցիներ, որոնք բնակութիւն հաստատեցին Հայաստանի տարբեր շրջաններում ⁸⁵⁷:

1928ին Քեմալական Թուրքիայում գիւղն արձանագրուեց Քեքելի (Kekeli) անունով ⁸⁵⁸: Ներկայումս այն ամբողջութեամբ քրդաբնակ է եւ կոչւում է Քրքզէօզէ (Kırkgöze) ⁸⁵⁹:

Խրիմեանին ուղղուած նամակներում նկարագրուած են 1895–96 թթ. Աբդուլ Համիդ II սուլթանի կազմակերպած կոտորածների պատճառով ծանր կացութեան մէջ յայտնուած քաքաուլեցիների վիճակը. աղքատութիւն, սով, հիւանդութիւն, զաւակների կորուստ:

Կարծիքներ կան, թէ Արեւմտեան Հայաստանից գաղթելու պատճառներից են եղել բարեկեցիկ ապրելու ձգտումը: Սակայն այս նամակներին բնոյթն ու բովանդակութեան քննութիւնը բացառում են այս կարծիքը: «Մենք եօթը անձինքս մնում էինք Թաքարու գիւղում: Մեզ ուզում էին սպանեն: Մենք գիշերն փախանք–եկանք Ալաշկերտ...» ⁸⁶⁰, «Քուրդ բարբարոսաց սպանութիւնից ազատուելով, որովհետեւ, բացի բոլորովին թալանուելուց, տղայիս մեռուցին, եւ ես էլ հազիւ փախայ՝ միայն իմ աջ

⁸⁵² Սասունի Կ., Պատմութիւն..., 2013, էջ 247:

⁸⁵³ Վերապրածների վկայություններ..., էջ 213–214:

⁸⁵⁴ Kévorkian R., The Armenian Genocide, A Complete History..., էջ 350; Karayan S. Y., M. D., Armenians in Ottoman Turkey, էջ 195:

⁸⁵⁵ Թեոդիկ, Գողգոթա, էջ 100:

⁸⁵⁶ Վերապրածների վկայություններ..., էջ 213–214:

⁸⁵⁷ Նոյն տեղում, էջ 217–219:

⁸⁵⁸ TC, Dahiliye Vekaleti, Son Teşkilatı Mülkiyede Köylerimiz Adları. Ankara 1928:

⁸⁵⁹ <https://www.houshamadyan.org/>, Պոլսաբնիկի ֆազա, հեղ. Մարտիրոսեան Տ.:

⁸⁶⁰ ՄՄ, Խկֆ, թղթ. 101, վաւ. 255, մամակագիր՝ Բոլանքի, Թաֆարլու (բնագրում՝ Թաֆարլուվա) գիւղի բնակիչ Կարապետ Սաֆարեան:

ձեռքի մատները կորսնցնելով...»⁸⁶¹, «Վեհափառ տէր, ներկայ սովատան-
ջութիւնը մեզ, 10 հոգի եմք, ամէն օր քաղցեալ մահ է սպառնում, վ[ասն]
ո[րո]յ աղաչեմք արտասուօք, ողորմել մեզ, բարեհաճել մեզ փրկութիւն
սովից, որ քաղցու կմեռնիմք...»⁸⁶², «Զիմ եղբօր որդի Պօղոսն սպանեցին
չորս որբուկ զաւակներ Ալաշկերտն մնացին: Ես փախայ: Եւ Սարգիսին
բոլոր ունեցածներն ալ թալանեցին»...⁸⁶³:

*Մշոյ Բուլանք գաւառի Քաքառու գիւղից փրկուել եւ որբախնամ
ապաստարան են տեղափոխուել ընդամէնը 9 որբ, որից մէկը՝ 1916ին
գտնուել է Ալաշկերտի որբանոցում: Այդ որբերն են. Մուրադեան Յովհան-
նէս՝ 2 տարեկան⁸⁶⁴, Մանուկեան Հլղաթ՝ 7 տարեկան, Մանուկեան Զօցօ՝ 9
տարեկան, Միսեան Նուշօ՝ 11 տարեկան, Միսեան Նուրադ՝ 7 տարեկան⁸⁶⁵,
Մանուկեան Մուշեղ՝ 10 տարեկան (1916ին տեղափոխուել է Ալաշկերտի
որբանոց)⁸⁶⁶, Արշակեան Սահակ՝ 12 տարեկան, Արշակեան Աբրահամ՝ 12
տարեկան, Աւետիսեան Գարեգին՝ 9 տարեկան⁸⁶⁷:*

(ՄՄ, Խկֆ, Թղթ. 101, վաւ. 558)

**ՆՈՐԻՆ ՎԵՀԵՓԵՌՈՒԹԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԸԶԳԵՍԻՐ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ
ԼՄԵՆԵՅՆ ՀԵՅՈՅ, ԾԵՅՐԵԳՈՅՆ ՊԵՏՐԻԱՐԻԻ, ՀԵՄԸԶԳԵՅԻՆ
ՆԵՒԼՄԵԾԵՐ ԸԹՈՌՈՅՍ ԸՐԵՐԵՏԵԱՆ ԸՌԵՔԷԼԿԵՆ ՄԵՅՐ
ԸԹՈՌՈՅՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԸԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԵԼԾՆԻ**

**ԼՄԵՆԵՒՈՆԵՐ [Հ]ԵՐԵՐ ԽՆԴԻՐ
ԲԵՂՏԵ [ՄԵ]ՐԷ ՄԵՐԿՈՍԵԱՆ ՄՈՒՂՆԻ ՇԼՀՆԵԶԵՐՅ
